Universitäts- und Landesbibliothek Bonn

Grigori Kat'oġikosi Tġay kač'ec'eloy namakani

Grigor <Tġa>

Venetik, 1865

urn:nbn:de:hbz:5:1-12370

Gaussen 3007

ԸՆՏԻՐ ՄԱՏԵՆԱԳԻՐՔ

ԳՐԻԳՈՐ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՏՂԱՅ
ՆԵՐՍԷՍ ԼԱՄԲՐՈՆԱՑԻ

Գ 3007

ԳՐԻԳՈՐԻ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՏՂԱՅ ԿՈՉԵՑԵԼՈՑ

ՆԱՄԱԿԱՆԻ

Ի ՎԵՆԵՏԻԿ
Ի ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐ
1865

3007

ՏԵԱՌՆ
ԳՐԻԳՈՐԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՆԱՄԱԿԱՆԻ

ՊԱՏԱՍԽԱՆԻ

Թուղթոյն վերտառեալն Գրիգորի Տուտէորդւոյն կոչեցելոյ 'ի մայրաքաղաքն Հալէպայ, գրեալ 'ի Տէր Գրիգոր կաթողիկոսէ Հայոց, յեղբօրորդւոյ սրբոց կաթողիկոսացն Գրիգորիսի և Ներսիսի, որ մականուանութեամբ Տղայ անուանի։

ԱՐԳՈՅ *և պատուական յամենայն մասունս բարեաց, որ ըստ աստուածային նախախնամօղ մատակարարութեան բաշխեցաւ 'ի բոլոր սեռ իմանալի և զգալի բնութեանց,* առաջին և նախամեծարն յընտրելեացն՝ վերագոյն և գերաշխարհիկ, և պայծառագունացն գլխաւոր տեսանի խրատ: Սա որ անկելոցն ընդ ինքեամբ ախորժակաց մակացու, և բարձրայօնակ գահերիցութեամբ ընդ անհամեմատն աստիճանեալ դասու, և զօրութեամբ յառաջ խաղալով պաշտի յառանձնականսըն: Զկնի և 'ի նիւթեղէնսն, ուստի առին զարգանալ բազմատեղն հանճարոյն տեսակք· 'ի բանական և 'ի գործնական արհեստս զընդհանուրս շարժելով, ոչ միայն զկելոյն պաճարանս, այլ և առ գիտութիւնս էիցն, և անհուն հմտութեանց հասու գոլ բաւականացեալք իբրև պատշէն իմն և ճաճանչ անեղին զօրութեանն կաթեցեալ յարարածս:

Ըստ առաջնոյն՝ յաստուածայինն իմաստակացն ընկալեալ՝ 'ի տրուչութենէ Հոգւոյն, որպէս յորդորէ զգեաւաբոյս մանկունսն ընդունել 'ի ծերագունից հարցն զայս աստուածայինն և գերահրաշ պարգևս. Լո՛ւր որդեակ, ասէ, խրատու հօր քոյ, և ա՛ռ ընկալ զնա պսակ շնորհաց 'ի գլուխ քո. և ամբարշտութիւն մեծ ծանոյց զայն անգոսնողացն զխրատ։ Զնոյն և նախամեծար մարգարէն՝ հայր սորին՝ խնդրէր, խրատիլ յարգարոյն ողորմութեամբ, և մի՛ բարկութեամբ։ Եւ Պաւղոս յետ դառնագոյն արբմանն 'ի տհաս տիոց և յանգիտութենէ, յետոյ պտուղ խաղաղութեան պարգևեալ ասէ՝ որք նովաւ կրթեցան անձամբ 'ի Ճշմարտագունիցն առեալ։ Յաղագս որոյ բնաւորեալ եմ 'ի խրատուէ ոչ խուսափել, և յանդիմանչէ ոչ հրաժարել. և հաստատեալ եմ թէ առանց սոցա ոչ ինչ գոյ ինձ լինել կարողութիւն հասանելոյ արժանեացն. մանաւանդ զթագաւորականն և զարքունի, զի մի՛ իբրև զչամըքելոցն 'ի հնազանդութիւն՝ կրեցեմ պատիժս. այլ արտաքոյ մահու և կորստեան գտանիցիմ։ Վասն զի ուսաք կրկին ստանալ ծնօղս, զմինն կելոյ, և զմիւսն բարւոք կելոյ· և ծանեաք զատանձնական յատկութիւն խրատուց յիմաստնոց ոմանց արտայայտեալ և ծանուցեալ, ասէ· Խրատ է բան բացասութեամբ գլխաւորեալ, յորդորելով յինչ, և կամ հրաժարեցուցանելով: Եւ խրատուս ոմն է բացասական, որպէս՝ Պէտք են ընչից · և ոմն հրաժարական, որպէս՝ Ոչ է պարտ զամենայն գիշերն քունել · և ոմն յորդորական, որպէս՝ Պարտ է յաղքատութենէ փախչել· և ոմն պարզ, Մի հաւ քաջ· և ոմն շարալծեալ, Ոչ է բարուք բազմիշխանութիւն, մի իշխան եղիցի · և ոմն առաւելահրաշ, Ոչ ինչ տկարագոյն երկիր սնուցանէ քան ըզմարդ: Արդ զանազանութիւն խրատուց զայս իսկ ծանեաք, և զշահ օգտութեանն որ'ի սոցանէ՝ ոչ անգիտացաք · ըստ նմին և զանգոսնողացն պատիժս:

Իսկ զառ 'ի ձէնջ այժմու գըրեալքս ոչ այսպէս իմացաք բան խրատական իբրև 'ի ծերագոյն հօրէ, և 'ի ճշմարիտ սիրողէ հեզ մտօք և հանդարտ հոգւով, որովք Ճանաչի տեղի բնակութեան, և հանգստեան տեառն և Հօր և Հոգւոյ: Այլ զքոյս ծանեաք հաւատի, զի յաղմկեալ մտաց էր, և ամբոխեալ հոգւոյ, որ և այսոքիկ չարին Ճանաչին մտաւունք և կիրճք դադարման: Վասն զի ոչ խրատական էր, այլ հրամայողական. ո՛չ խաղաղարար, այլ խռովարար. ո՛չ ուղղադատ, այլ թշնամանաւէր. ո՛չ իրաւացի, այլ սուտակապաս մտօք. ո՛չ ըստ կանոնական դատողութեանն, այլ ըստ հացկատակացնբանից փաղաքշելով իբրև զանգէտս ոմանս զտունդ դաւանութեան յոգունց՝ հանդերձ իմաստուն բնակչօք. յորոց մինչև ցըգլուխ երևելով ՚ի միջի դոցա այր փառացի, և շքեղ իբրև զպարսկականն զայն հաւ սիգալով՝ և զբանս անպէտս և անուղղայս կարկատելով գրչաւորութեամբ իբրև զորգէտ և տուանց դպրութեան: Կարծէօ և զմեզ այսպիսիս ոմանս գոլ. և չզանգիտեմ յերկնահանգէտ աթոռոյս և աթոռակալէս և որք զգուշաւ լիցեն պարահայեացք ոմանք, անգիտացեալ զանձնդ և որ 'ի քեզ լիցեն հոգետուր պարգևք : Եւ գտանիս պատժապարտ ընդ անարգողացն զծնօղս իւրեանց· որ թէ 'ի կամակար մտաց, և 'ի ճշմարիտ գիտութենէ ածար յայս, հայեաց յանձն քո, 'ի քեզ ինքն հայեաց · զքեզ ծանիր · ուստի ոչ գոյ այլ ինչ մեծութիւն քան զծանօթութիւն անձին, որպէս ուսաք յիմաստնոց : Իսկ եթէ յոչգիտութենէ անձին, և 'ի զբաղեալ մտաց, հաւանիմ և ես · զի որոյ աչք և տեսութիւն 'ի գլխոյն իցէ, և առ գլուխն, ընդ խաւար ոչ գնայ՝ գայթակղելով և բախելով 'ի կոշտից ճանապարհին · և առ այս դարձեալ պարտիս նայել 'ի քեզ ինքն : Իսկ եթէ այսոքիկ ո՛չ իցեն պատճառք եղելոց իրաց, ապա յայտնի տարացոյց տայք, եթէ հեռի էք յամենայն գիտութ̃է հին և նոր կտակարանաց · մանաւանդ թէ և աստուածագիր սուրբ հաւատոյս կանոնական սահմանքն ոչ գտանին'ի միջի ձեր· և ոչ ներգործեն սահմանեալ դեղօքն իբրև զճարտարս 'ի բժշկաց՝ զոմանս խարելով, և զոմանս կտրելով, և զայլս ոմանս կակղագոյն սպեղանեօք բժշկելով· զոր եթէ լուեալ էիր աստուածաւանդ տառիցն, եթէ Զիշխան ժողովրդեան քո մի՛ հայհոյեսցես, ապա թէ յանդգնիս՝ մահու վախճանեսցիս, կարծեմ թէ ոչ հրամայէիր մեզ անկանել, ուստի Տէր ետ զվերանստելն· և այն առաջի ռամկաց, և անքնին մօք, և առանց կանոնական հրամանաց և դատավճռի· կամ յափշտակելով քեզ ինքեան զայս վիճակ ոխրաբար, և կամ հնալ առանց գլխոյ և առաջնորդի, և երևել վատթարագոյն քան զքաղս, և զխորդս, և զաքաղաղս, առանց դիտի և ձայնատուի ննջել և արածել· հնալով զօր առանց զօրավարի, և քաղաք առանց քաղաքապետի և օրէնսդրի· զոր և ոչ յարտաքնոցն ոք պատշաճ վարկաւ՝ զայս իր յանդգնութեան համարելով ։ Որպէս և առ աթենական կաճառս իմաստակաց Սողոն ոմն օրէնսդիր, հաւասարապէս և Լիկուրգոս օրէնսդիր լակեդեմոնական ազին ։ Եւ ոչ 'ի հնագունիցն միայն, այլ արդէն և 'ի նորակերտս իրի հանդէս պարտիմք ունել 'ի յաւէժ գովելեացն աստուածայնոյ քաղաքիս այս քաղաքապետ, որ բաւական լինի լնուլ զայս քաղաք բիւրապատիկ պայծառութեանցն հանդիսիւք, հասարակական կարգադրութեամբ բանական և գործնական արուեստի աստուածահաճոյ և անարատ կրօնիւք զբոլորից ընթացս անարատ պահելով ուղիղ և անյեղ վարչութեանն երասանակօք․ որով ծաղկի արդարութիւն՝ առոռնեալ զմոլաբոյս ախտն անիրաւութեան․ սուզանին կուրացուցանող կաշառք․ փայլեն անաչառ ճառագայթք․ ընկրկի ստութեանն յաւակնութիւն․ յառաջեն ռահք ճշմարտութեան․ և այս ահա քաջայայտ է, զի իր որ առանց խնամոց է՝ աղարտի ։

Պարտ է ունել զառաջին գոյացուցիչն, որով կատարեալ ամբողջ պահին ամենայն մասունք բարւոյ. որպէս տուն ունի պատճառ զշինօղն, նաւագործութիւնն՝ զնաւաստին, անդրի՝ զքաջահմուտ արուեստաւորն : Ուստի և 'ի սկըզբանն սակս այսորիկ նախապատեթուի կենդանասերել զմարդն՝ արի դատողութեամբ յաղթահարել զըստգտանելեացն խրոխտ. որ թէպէտ և բազմահոգակ իմն թուի առ կարծիս, այլ յուսալի է յընտրաւոր դէմս սկզբամբ բնաշարժեալ 'ի կարգս աստուածային պատուիրանապահութեան համարովք մինչև 'ի յանկումն՝ զհամապատուաց վարկ անմոլար և ճշմարտագոյն ստանալով 'ի գլուխ, և չունել յանձն զխոնջականս քան ըզհեշտալիս պատրաստ առ 'ի բազմաց որդւոց օգտութիւն, ոչ զարտաքուստ պատիւս, և ոչ զներանեաց դիւրութիւնս :

Արդ եթէ զառ 'ի մէնջն այսպէս լուար, և հաստատեցեր 'ի

ճշմարտագունից ոմանց, որով
վկայեցեր մելանաւ 'ի գրութեն
ձեռին քո, այժմ ընդէր հրամայե
մեզ անկանել և լռել։ Ապա թ
այլապէս խորհիս առ կարծիս մ
տացդ, և առ փոփոխ բնաւորակա
նիդ, ոչ լինել մեզ ըստ նմանու
թեան առաջնոցն, յորոց ընկա
լաքն և տեսաք. կամ թէ փոխե
ցաք ինչ անտես առնելով զոր '
նոցանէն և յայլոց իսկ սրբոցն ըն
կալաք, լուաք և առաք նորաձև
ինչ առնելով անձնահաճ կամօք
այդ մի ինչ անկցի 'ի սիրտ քո։

Ծանիր կարծեցեալ սիրելի, զ
յառաջ ընդհանուր բարեփառու
թեան պարունակող ճանաչիւ
սուրբ և երկնահանգէտ աթոռս. և
այժմ առաւել ևս հրաշափառ աս
տուածային և մարդկային. անըստ
գտանելի արգասաւորութեամբ
յօրացեալ յերկակայս կենցաղոյ
խնդամիտ փափկութեամբ։ Զայս
ոչ կամաւ յափշտակեալ ցաւալից
մտաց ծնունդ. մի կարծեսցի ա
նուղղայ երևել ինչ իբր թէ երկուց

ընդակցութիւն սուղաւէից կարօտելի գոլ։ Այլ թէ առցի կանգնել գերապարծս իշխանութիւն 'ի վերայ քո աստուածայնովքն, ապա ունիս տեսանել բառացի շրջաբերութեամբ հարստացեալս զմեզ առ քոյդ աղքատ մտածութիւն. որովք լիցի քեզ աղաւաղել իբրև զաւաղաբեր սուրհանդակ հակակայիւք 'ի բարւոյն ընկճեալ՝ անձեռնհաս կանգնել զլքումն քո, միայն անօգտակ զղջմամբ 'ի չպխտելի ապաշաւանացն գնիցես մասին. և գտանիցես պարտեալ առ թշնամանաւէր կամս քո ներհակացն հանդիպմամբ ։ Վասն զի գտանես զաս ուրեմն բուժօղ առաջնորդ ունել զայսր աստուածային քաղաքի շինութիւն յարագուարձ բերկրանօք. և եթէ դու ըստ առաջին հաւանականացն կամիս գտանել պատճառ անկման և գլորման, ապա պսակ պայծառութեան և յաղթութեան պարծանք ։ Եւ եթէ այդր խորխատումն մահաթոյն և ամօթալի գասալքութիւն կարծես, ապա յոյս խնդա-

ցուցանող, անհոգ փառաբանու-
թիւն և բարձրայօնակ ամբու-
թիւն: Ապա թէ ընդդիմակքն ըղ
բոլոր զախորժելեացն քոյ բերե
հանդանակ, ուրեմն բարեհամբա
ճոխութիւն հաւասար նմին ունել
զհեշտալին. զոր ոչ արհամարհա-
նաց անկ վարկանելի է զցնծաւէ-
տութեանս համբարակ, և զպերա-
պանծ շնորհ առ ամենայն բարե-
փառութեանն հանդիսիւք. զի ե-
թէ 'ի զուա տան՝ ոչէոք են խնա-
մածողի, քանզի եւ յոգնախում
հօտոյս. և եթէ 'ի սակաւ ժողով-
ռամկաց ոխտայանան տեսուչք և
վերատեսուչք, որչափ եւ առաւել
աստուածային մայրաքաղաքիս. և
թէ ոմն շահի եւ առ ճշմարիտ
խրատու, քանզի եւ հաշակուռ
հրահանգաւէտութիւն յոգուոց
յորում զեւան յընդհանուր ախե-
զերս բոլոր տեսակք բարեաց և
չարեաց. դու զիա՞րդ հրամայես
մեզ այժմ անկանել և լռել: Զոր
եթէ անխոստովանէր մտօք ըստ աս-
տուածայնոյն յուզմանց նայեցես

յայս երկնահանդէս աթոռոյ դիտաւորութիւն, և յորոց քաղաքավարի, գտանիցես զսա անփորձ ի բանից, և 'ի չարագոյն յուզմանց՝ պարփակեալ աչօքն անեղծն անդրդուելի ամրութեամբ. և անըստգտանելի ընդդէմ նախանձոտ կամաց, գիտելի Տեառն յառաջ քան զլինելն յարգանդ սրբեալ, և նախ քան զծնանելն մարգարէ, ո՛չ անարգ, այլ ընդունելի և յիւրում տան, և 'ի բոլոր սեռս. որ և 'ի բացայայտեալ բարեփառութեանս պատուոյ, փախստական եղեն ծանրատաղտուկ հնազանդութեանն լծկանք. և ազատութեանն բերկրանք զհասարակացն փարատեցին տխրութիւն՝ յաւելուածով և յագմամբ ըղձակերտ ելանել 'ի յապառնին անըստգտանելի հրճուանացն խնդութեամբ անդայթ և յարազուարճ յառաջելով զկենցաղին հոլովս. որով երանելապէս խոստովանեալ ճանաչի բարեհամբաւ գաւազան ըստ հաւասարութեան հնագունացն, յանդգնիմ ասել թէ ես առաւել, ըստ մակեդոնականին Աղէքսանդրի, և ըստ մերումս հռչակելոյն Սողոմոնի · որք յերկաքանչիւր մասին առատացեալք· միոյն զԱղէքսանդրայն ունել եռանդնոտ խընամածութիւն, և միւսոյն յԵրուսաղէմ ջերմագոյն շինողութեան ըղհանդէս · ըստ առակաւոր խրատական ձայնին ընդհանուր հնչմամբ՝ զյարդականն բացատրելով բան հանճարեղին՝ խակապէս և ստուգաբար ստանալ զբազմութեան առաջնորդութիւն: Եւ այս առ 'ի ձէնջ ոչ է ծածկեալ իւիք, թէ ոչ անձնահաճ կամօք և ոչ զօշաքաղութեամբ բռնազբօսեալ ձեռնամուխ եղաք և ածաք յայս սպասաւորութիւն և սարսափելի պատիւ: Զոր եթէ կարծեսցէ ոք մոխամորդակ և չարակնող մտօք, և ոչ ճշմարիտ, այլ 'ի կամելոյն Տեառն, և 'ի տուչութենէ Հոգւոյն, և 'ի բոլոր խոկ սեռախ յօժարամիտ կամաց, մանաւանդ թէ և 'ի ձեր խակ · հաստատեալ 'ի վերայ անշարժ վիմին հաստանոյ, և պատրաստեալ կամ՝ դէմ յանդիման, զի ամենայն որ ոք հարցի ընդ մեզ ընդ այս, խորտակեսցի և փշրեսցի, և յոյր վերայ անկցի, հոսեսցէ զնա իբրև զփոշի։

Եւ արդ՝ իր, որ այսքանեօք տոհմականութեամբ առլցեալ՝ երևելեօք և աներևութիւք առանձինն էր հաստատակաց երկնի և երկրի համանգամայն ուրախարար, զանբաղդատելի երջանկութեան երթեալ տարաւ անուն, ո՞վ ոք սմա զընդդէմն ինչ՝ և ոչ զհաւանականն յերեսս բերիցէ խոստովանութիւն. և դուք զառաջինն հրամայեցիք մեզ, եթէ գիշեր է և երեկոյ, և ՚ի վերջինս նկատել և լսել։

Արդ զի՞նչ առ այս. ո՞չ հերկեսցուք և ո՞չ սերմանեսցուք. ո՞չ զնաւելոյն առաջ կալցուք զգործ. լռեսցէ՞ և խրախճար պատերազմողին յօժարութիւն։ Այլ ո՛ն անդր, մի՛թէ ո՞չ ունիցիմք վստահութիւն ՚ի միոյն ամբարել զբազմաբեղուն արմտիս. նա զի և նաւազին հեռաստանեայ և անդնդային բերովքն ո՞չ լնու զբաղմաժողով խըռնճոյլն փափագ։ Գուպարայաղթ նահատակք ընդ նիզակաճօճ խրախուսանացն զօրաւորագոյն քարգաւաճանացն՝ ո՞չ ժառանգեն մեծ ապարանս։ Ապա յայտ եւս է եթէ 'ի զուր վաստակեցաւ Պաւղոս, և 'ի զուր և ունայն նաւակոծեցաւ, և մնավաստակ եղև 'ի յորքմանէ հնգից քառասնիցն՝ 'ի հարկանողացն ընկալեալ. մնոտի էր յոյս նորա 'ի ձաղանս կատականացն և 'ի քարկոծմանն։ Ի զուր աշխատեցաւ և Պետրոս, և ոչ ուղղեցան ոտք նորա 'ի գնացս՝ ընդ որ խորհեցաւ և արար։ Ընդունայն են քարոզութիւնք նոցա. ընդունայն ապա և խաչն, և որ 'ի վերայ նորա, զի ոչ եղև խաղաղութիւն վարդապետաց, այլ խռովութիւն և աղմուկ։ Եւ սուտ էին խոստմունք նորա առ Պետրոս, թէ և 'ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ, և դրունք դժոխոց զնա մի՛ յաղթահարեսցեն։ Արդ յաղթահարեցաւ և կորեաւ. զի ոչ է եկեղեցի, այլ այր աւազակաց. ո՛չ է մկըրտութիւն 'ի Թողութիւն մեղաց, այլ միայն 'ի լուացումն ջրոյ։ Արդ ուրախ լեր Պիղատոս, ցնծացէք և դուք դասք քահանայապետաց՝ Աննա և Կայիափա, վասն զի ո՛չ սպանէք տէր, այլ մոլորեցուցիչ. ո՛չ խաչեցէք Աստուած, այլ գող և աւազակ և խռովարար. ո՛չ հովիւ քաջ, այլ վարատող ոչխարաց։ Սուտ է որդին որոտման, և իրաւ է որդին Տուտեայ։ Եթէ այն այր աւազակաց, աւազակապետ Քրիստոս. եթէ այն մոլորութեան տեղ, մոլորեցուցիչ Քրիստոս. եթէ այն տեղի կորստեան՝ կորուսիչ Քրիստոս. զինա հանապազ քարոզի անդանօր. և նորայն ծաղկէ ծննդականութիւն, և հաւատ և յիշատակ անուան նորա. կատարի յարաժամ անարիւն զենումն 'ի Թողութիւն մեղաց հաւատով մերձեցելոցն և ընդունողացն։ Իսկ եթէ ոք լրբենի դիմօք և մոլեգնեալ ախտիւ յանդգնի կոչել զնա այր աւազակաց, 'ի յաստուածախօս

տառէցն յանդիմանեալ կշտամ
բեմք զայնպիսին, և 'ի բաց վարեմ
իբրև զԹշնամի Աստուծոյ և եկե
ղեցւոյ նորա. և փոխանակ այնո
րիկ անուանեմք զնա լեառն սուրբ
և քաղաք Աստուծոյ կենդանւոյ հա
ւասար վերնոյն Երուսաղէմի, հար
նարան անմահ փեսային Քրիստո
սի, շինեալ իմաստուԹեամն Հօր
Ճշմարիտ պատկերին Յիսուսի. մայ
ծննդական որդւոց արքայուԹեան
կերակրիչ և դարմանիչ առատա
գոյն կերակրովք արժանաւորաց
անարժանից, որպէս և բնուԹեամ
քաղցր՝ շնորհաց և ապաշնորհաց
և զարեգակն ցօղախառն հեղու
վերայ արդարոց և մեղաւորաց
լուսաւորելով և զովացուցանելո
'ի տապախառն միգէ չարին:

Այլ զի գրեցէք, Թէ անիծեա
տումարն երկաբնակին Լևոնի. հա
ցանեմ աստանօր Թէ զինչ է տու
մարդ, և զինչ է երկաբնակդ
նուն. հայերէն, Թէ յունարէն,
Թէ պարսկական դենիւ և ուսման
ըստ դաւանիդ բերման: Լևոն

անդանօր բնակեցաւ յերկրուս․ և կամ զի՞նչ այն երկուքն էին, կենդանի՞ք եթէ անկենդանիք․ հոգեղէ՞նք եթէ մարմնեղէնք։

Լևոն հռոմայեցի էր ազգաւ և գահերէցութեամբ․ և 'ի Հռոմ երկուք լուսաւորք են աշխարհի՝ Պետրոս և Պաւղոս, 'ի նոսա զիա՞րդ բնակէր Լևոն, կամ որո՞վ օրինակաւ։ Իսկ եթէ նոքա 'ի նա բնակեցան աստուածային զօրութեամբն և Հոգւովն՝ կարելի է․ այլ ոչ աղարտելի։ Եւ եթէ յայն սակս է անխծեալ, կարծեմ թէ և նոցայն դամբարան՝ է այր աւազակաց․ և որ 'ի նմայն են հանգուցեալ՝ գողք և աւազակք․ և այս լուտ առ 'ի ձէնջ բանի։

Իսկ տումարին անուն 'ի մերասեր ազին լեզու, թուի թէ զհամարողականն դնէ թիւ, և զժամանակագրականն, և զնորա առ այս չունիմք իրք․ թուի թէ և ոչ և որ նոցայն են։ Իսկ առ այս Անանիա և Անդրէաս՝ բազմավէպ գրութեամբ ճառեցին․ յաւելո՞ւք և զնոսա յանէծս ։ Թուի թէ այս 'ի վաղնջուց հետէ, որպէս պատմէ նոյն ինքն Անանիա յաղագս անբարեսէր ագգին՝ տրտնջմամբ, առ որս ոչ պատուի գիտութիւն, այլ անձնահաճ կամք ։

Այլ զի ընդ բազում բանս ձեր կարկատուն և ստայօդս անցի, և նայեցայ ուշիմ մտօք, և ոչ տեսի 'ի նոսա ծաղկելի և անուշահամ պտուղ, ոչ արդիւնաւորեցաւ առ մեզ. քանզի յեռանդնոտ և 'ի փայլակնացեալ սրտէ յառաջ բերի մեճաբանութիւն և կռիւ, որպէս և վկայէ Ճշմարիտ բանն տէրունի, եթէ Յաւելուածոյ սրտի խօսի բերանն ։ Եւ այն՝ եթէ ոչ գոյ հրաման գլխոյն և առաջնորդին ժողովառնել եպիսկոպոսաց և վարդապետաց, և պարապել աստուածայնոց բանից քննութեանց, շահել և շահեցուցանել զնոսա, և ոչ սահմանեն զայն կանոնադիր հրամանքն, այլ 'ի հեռաստանէ հաւատալ ըստ առ որ Թումայի բանին. վա՜շ ծերունի ծնողիդ, ոչ իմ, այլ որ հարազաութեամբ բերէ զնմանութիւն հօրդ ։

Դարձեալ այլ ինչ անպիտան գտաք շարագրեալ 'ի բանս ձեր, սեփհականելով զձեզ ինքն ճշմարիտ անտես տանն Աստուծոյ · և հաւասարեցէք զնոսա այլոց ոմանց խոտելոց, որ կոչեցաւ գայլ · վասն զի գայլաբար օձտեաց զհօտն Քրիստոսի, և այսու նմանեցաւ Պետրոսի վիմին հաւատոյ · վասն զի և նա գայլ գոլով օձտօղ հօտին Քրիստոսի, յաւելլէք զնա և կրկին քաղաքաց քաղաքացի անտիոքացի աղէքսանդրացի · և զԴէոսկորոս հաւասար Քրիստոսի փրկիչ ժողովըրդեանս Հայոց արեամբ և խաչիւ · և առ այս՝ վա՜շ, և առաւել վա՜շ ։ Թուի ինձ սատանօր եթէ վերահասու իցես ամենայն ժամանակագրաց և պատմութեանց ։

Իսկ ես ոչ եմ փրկեալ արեամբ Դէոսկորոսի, այլ միոյն Քրիստոսի· և ոչ եմ օձտեալ 'ի գայլէն Պետրոսէ, այլ 'ի ճշմարիտ հովուէն փրկեալ'ի գայլէն, և ժողովեալ'ի խաղաղարար փարախ քաջ հովուին· զի այսպիսի հրաժեշտ սիրոյ վաղուրեմն 'ի տէրունական Ճշմարիտ տուաւ բանէն մարդկային բնութեանս, եթէ Այսպիսի սէր ոչ ոք կալցի, զի զանձն իւր դիցէ 'ի վերայ բարեկամաց՝ ըստ անպարտականին յանցանաց՝ զայլոց ուրուք պարտս հատուցանել· զի ոչ գոյ մարդ արդար առաջի Աստուծոյ։

Դարձեալ շարունակեալ 'ի բանս ձեր, զի անուանեցէք զնոսա Նեստորիսք, և հաւանեալ Եւտիքի դիւաբերանի, և օտարացեալք 'ի սրբոցն, և յաստուածազգեստից արանց· որով պարսաքարել զնոսա պարտ վարկայք· և թէ էր, և լինէր հնար՝ նոցին սրով հատանել զգլուխս նոցա· և այս բռնաբար թշնամութիւն 'ի վաղո՞ւց հետէ գտանիւր 'ի նոսա, եթէ այժմ 'ի սկզբան գրոյս մերոյ բուսաւ առ քոյդ միտս։ Կարծեմ թէ այսու ոչ աշակերտիս Պաւղոսի, որ ասէ թէ, Խնդրեմք զի ամենայն մարդիկ կեցցեն, և 'ի գիտութիւն Ճշմարտութեան եկեսցեն։ Նոյն դարձեալ՝ եթէ Կամիմ զի լինէր ամենայն ոք իբրև զիս. և դարձեալ՝ թէ խնդրէի նզով լինել 'ի Քրիստոսէ վասն ըստ մարմնոյ ազգատոհմին իմոյ։ Արդ ապա դու զի՞ խնդրես սպանանել. մարդ է՝ արարած Աստուծոյ, և թէ մոլորեալ է, դարձո. եթէ վիրաւորեալ է, սպեղանեօք պատեա. Քրիստոսի լեր աշակերտ, և մի՛ Սաւուղի. Դաւիթ՝ թէ և աստուածահայր, բայց օրինօքն՝ և ոչ Քրիստոսիւ, որ ծանր գրեաց և զհայեն 'ի Բերսաբէ։ Մի՛ 'ի կարծ դատեսցին, և մի՛ ըստ մտաց քոց յանդիմանեսցին. չեն նեստորականք, և ոչ եւտիքականք՝ հակառակօք բերեալ առանձինս։ Այլ եթէ ոք յանդգնի և անձնահաճ կամօք ըստ մտաց դատի զնոսա յայս, անէծքն որ 'ի նոցանէ ընդդէմ պղծոցն այնոցիկ՝ 'ի գլուխ նորա կուտեսցին։

Գտաք դարձեալ 'ի գիրս, զի բազում անգամ պարծանս գրեր անձին քում, և խոստացար ճառել յաղագս անճառ միաւորութեան

Բանին և մարմնոյն· և թէ ո՛րպէս եկին առ միմեանս անշփոթելի բնութեամբ և կրիւք· և յետ բազում խոստմանց յանդ և յաւարտ հաներ միով բանիւ՝ արկանելով զանձնդ 'ի խորս կորստեան աղիտացն և անհաւատիցն, ուրանալով բովանդակ զմարդկայինս բնութիւն, և յոչէութիւն փոխելով: Որ թէ և կամիս ձեռնարկել՝ դքոյդ կարկատելով հերձուած և տկարաբանութիւն, անկարելի մնաս· առնլով աստանօր ստութեանդ քո վկայ զմեծն Մովսէս: Սնոտի այլաբանութիւն՝ օտար և որիշ յամենայն գիտնոց· կարծելով եթէ մեք եբրայեցերէն ոչ գիտեմք, և կամ թէ ոչ իմանամք եթէ զո՞ւմ արդեօք բանս 'ի բանաստեղծաց պատրուակես ընդ Մովսեսիւ: Եթէ մոլորեալ ես՝ առ յինէն ընկալ· վասն զի իմաստասէր ոմն յունական՝ Արիստոտէլ անուն ստագիրացի ազգաւ 'ի Քաղքիդ գաւառէ, յորժամ էառ 'ի պատմել զբնութիւն արարածոցս տարորիշ փաղառութեամբ բաժանելով տասն ստորոգութեցն բայիւք, յաղագս գոյացութեան, յաղագս կենդանութեան, յաղագս քանակի, որակի և որակութեանց և այլն, յանձն, 'ի ձև, 'ի տեսակ, 'ի քանակ, և յորակ, յընթակայ, և 'ի նենթակայում, բայց ոչ զմարդկայինս ուրացաւ բնութիւն • այլ զաստուածայինն ջանաց փոխարկել յանձն՝ յաղագըս անօսրութեանն • և զի թափանցանց ունի ընդ ամենայն էքս • որպէս սոյն Արիստոտէլ, և Գենարքոս՝ անգոյ ասացին զանձն • զոր և ոմանք յեկեղեցականաց այժմ ջանան կարկատել՝ ոչ բնութեամբ միանալ բանին Աստուծոյ ընդ մարմին, այլ անձնաւորութեամբ • և վկայ զայն իսկ զԱրիստոտէլ ունելով, զի թերևս այսու կարասցեն 'ի մի բնութեանն բան ածել զնա հարկաւորաբար • որպէս և դու այժմ ջանաս զմարմնոյն ուրանալ և կորուսանել բնութիւն, և նոքա զաստուածութեանն • որովք կարծեմ թէ և երկոքեանդ սխալէք 'ի ճշմարտութեանն պողոտայէ։ Աւ որ յանդիմանէ զքեզ երջանիկ և սուրբ վարդապետն Յովհաննէս իմաստասէր և ուղղատես՝ասէ.Փախչիս 'ի բնութեանդ անուանէ, ընդնմին և յերկուցդ ասելոյ, և ո՛չ գիտես եթէ մարմին ասելով՝ յերկոսին 'ի ներքս ըմբռնիս, յորոց փախչիսդ։ Արդ զնոյն՝ որովք բարեպաշտելդ կարծես, հակառակ ընդդէմ քեզ եդից։ Զմարմինն՝ մարմին Բանին ասելով, և զԲանն ասացեալ մարմին ունել, զի՞նչ այլ ի՞նչ թուիցիս ասել՝ եթէ ոչ կրկին։ Եւ դարձեալ զԲանն 'ի հօրէ ասելով՝ զհօրն ասցես նմա ըզբնութիւն. իսկ զմարմինն 'ի մարդկանէ ասելով, զո՞ր ունել ասես նմա բնութիւն, եթէ ոչ զմարդկան։ Բայց կարծեմ թէ կամիս և ոչ մարմին Քրիստոսի ասել, զի թէ զմարմինն ճշմարտութեամբ խոստովանէիր ունել Քրիստոսի, և զայն 'ի մարդկանէ և մարդկային, զնոյն և բնութիւն մարդկային ոչ արդեօք խղճէիր ասել։ Քանզի նոյն է մարդկային մարմին ունել Քրիստոսի, և բնութիւն մարդկային․ և զի Քրիստոս առանց միաւորութեանն ոչ ասի Քրիստոս Յիսուս, այլ Աստուած բան, որպէս և սուրբն Բասիլիոս ասէ․ Զի թէ ասիցէ ոք զմարմինն բնութիւն Բանին, և զԲանն բնութիւն մարմնոյն, ամբարշտութեամբ լի են այսպէս ասացեալքն։ Իսկ եթէ զմի և զնոյն Քրիստոս յերկուց խոստովանեսցիս ասել բնութեանց, այսինքն աստուածային և մարդկային, ընդէ՞ր արդեօք զարհուրիս, և զայրանաս, և այլանդակ և հայհոյիչ շարադրութեամբ զբարեպաշտաց պղտորես զլսելիս։ Քանզի ասես, որ 'ի Հօրէ գոյացեալ անձնն էր, նոյն անձնաւորեալ 'ի սուրբ կուսէն․ և որ 'ի Հօրէ բնութիւնն էր, նոյն բնաւորեալ եղև յարգանդի կուսին․ և սակայն գոհութիւն Աստուծոյ, որ յայտնէ զխորս խաւարի, և հանէ 'ի լոյս զստուերս մահու։ Արդ զիա՞րդ անձնաւորեցաւ 'ի կուսին՝ անձն Որդւոյ․ Թողում զիւր գոյութիւնն՝

յայլում գոլու գոյութեան, որպէս Պանդորոսն ասէ, եթէ յիւրումն նմանելով զերևութականն միայն զձևն զինքեամբ արկու, առաջօք և ձևով և եթ ցուցեալ զմերն 'ի կուսէ. որպէս Նեստորեան երկրորդ յիմարաբար բարբառի ասելով. Խոստովանիմ զբանն Աստուած յարգանդի կուսին կերպացեալ, ապաւորեալ 'ի պատկեր և 'ի ձև մարդոյ եղեալ. այլ ոչ եթէ յարարածականն բնութենէն ինչ յինքն խառնեաց. քանզի անխառն է աստուածութիւնն և անյօդ:

Տեսանես, որպէս համաձայնք առ միմեանս գտանին յամբարշտելդ. դու ասես, 'ի Հօրէ անձնն որդւոյ անձնաւորեցաւ 'ի կուսէն. և նա ասէ, ոչ ինչ խառնեաց 'ի կուսէն յանխառն աստուածութիւնն: Եւ եթէ ոչ գոյութիւն ինչ անձնաւոր զմերս 'ի կուսէ ընդ ինքեան միաւորեաց բանն, զիա՞րդ ինքն զինքն մարդ և որդի մարդոյ անուանեաց. զիա՞րդ և ապա երևեալ խանձարրապատեցաւ, և կաթնաբոյծ եղանիւր. և տռ կատարելութիւն'ի վեր ընթանայր աճմամբ հասակի՝ ըստ մեծին Աթանասի ուղղափառ դաւանութեան. Որքան ինքն, ասէ, հրամայեաց՝ զբնութիւնն յինքն կատարելով ընկալաւ որքան կամեցաւ. այս է ծննդեանն 'ի կնոջէ, աճման հասակի, ամաց թուոյ, աշխատութեան, ծարաւոյ, և քաղցոյ, և քնոյ, և տրտմութեան, և մահու, և յարութեան: Այսոքիկ ամենեքեան՝ նմանութիւնք և երևոյթք թուեցին քեզ եղեալքն 'ի Քրիստոսէ, թէ ճշմարտութիւն: Ապա եթէ է ճշմարտութիւն, որպէս և է իսկ, քանզի անհնար է անսուտն Աստուծոյ ստութեամբ իւիք կեղծաւորել 'ի գործս իւր, զիա՞րդ իշխես ասել զաներևոյթ և զանմարմին անձն որդւոյ մարմնաձևապէս անձնանալ յարգանդի կուսին, եթէ ոչ զկատարեալ մեր բնութիւնս 'ի կնոջէ յինքն ընկալեալ, ընդ ինքեան միաւորեաց բանն Աստուած առաքեալ 'ի Հօրէ:

Եթէ այդպէս ասեմք, ասեն, երկուս լինիմք ասացեալ դէմս, և երկուս բնութիւնս: Դարձեալ փախչելով 'ի սնոտի երկիւղէ՝ 'ի մեծագոյնն անկանիս չար: Եթէ յերկուց ըստ բնութեան ոչ կամիս ասել զմինն, կարի յոյժ չարաչար ըստ բնութեան զմին գտանիս ասացեալ բնութիւն: Այլ անմարմին բնութիւն աստուածային Բանին՝ զմարմնական բնութիւն 'ի կուսէն ընկալեալ ընդ ինքեան միաւորեաց· որ է ըստ բնութեան յերկուց՝ աստուածային և մարդկային· իսկ ըստ միաւորութեան՝ մի: Զի եթէ այս երկուք գեղեցկագոյն հաւատոյ ոտիւք առ ճշմարտութիւնն 'ի վեր կանգնեալ ոչ հաստատիս, առ ո՛ր և յենուցուս առ մինն 'ի նոցանէ՝ կաղ գտանիս առ խոստովանութիւն ճշմարտութեան: Այլ կատարեալ՝ ըստ իւրաքանչիւրոցն դիտելով զերկուսն, ըստ միաւորութեան՝ մի կատարեալ, մի դէմ, և մի որդի Աստուծոյ խոստովանելով որպէս սուրբն Բասիլիոս ասէ· Երկուց գոյացութեանց կատարելոց միաւորութիւն:

Արդ յայտնապէս հրատարակեցար յաստուածային բանիցս դիտաւորութեանց՝ արտաքոյ գոլ քեզ ճշմարտութեան ճանապարհին, յՆուալքին և 'ի Պանդորոսին անկեալ ախտ, հիւանդ և հերձուած չար։ Յաղագս որոյ խորհըրդակից լինիմ քեզ երբեւ ճշմարիտ բարեկամ՝ զգուշանալ անձին, և խրատել աստուածաւանդ տառիցն սրբախօսութեամբ՝ սթափել յայդպիսի մտածութեանց։ Եթէ զԱթանաս սուրբ քեզ սեփհականեցեր, առ ընկալ 'ի ձեռս զգիր նորա, և ուշիմ մտօք ընթերցիր 'ի սկզբանէ մինչև ցկատարումն. մանաւանդ զբանն՝ որ յաղագս Որդւոյ յայտնութեան և մարմնաւորութեանն գրեալ է այսպէս. Որք զտէր մեր Յիսուս Քրիստոս ոչ յԱստուծոյ և 'ի մարդոյ մի խոստովանին, որպէս և գրեալ է յաւետարանին՝ յԱդամայ և յԱստուծոյ, ասասցեն, զիա՞րդ որ'ի կերպարանս Աստուծոյ է Աստուած՝ առեալ զկերպարանս ծառայի կարծեցին, կամ զբանն՝ մարմին եղև և բնակեաց ՚ի մեզ՝ իմացան · քանզի որ ասաց թէ Բանն մարմին եղև, ասաց թէ ինքն զանձն իւր ետ վասն մեր · արդեօք որպէս բանին փոփոխո՞ւմն կրեալ ՚ի մարմնոյ փոխադրութիւն· կամ որպէս ցուցումն ինչ արարեալ մարդկայնոյս կերպի, որպէս այլք ՚ի հերձուածողացն մոլորեալք ասեն ։

Դարձեալ քանզի ամենեցունց յառաջագոյն ասացելոց հերձուածողացդ հաղորդք եղէք, անհաւատ եղեալք միաւորութեանն, և ընդդիմաբանեալք ըմանն, ՚ի բաց բարձումն տարեալ եղէք զանջատման միաւորութիւն պատճառելով· քանզի որպէս անջատողքն մոլեգնեցան, և չփոթողքն մոլորեցան, այսպէս և ՚ի բաց բարձողքն կորեան · ճշմարիտ եղեալ տնօրէնութիւնն, և ճշմարտութիւնն երևեալ, և շնորհին վկայեալ ։ Դարձեալ ըստ առաքելական հրամանին վկայութեան՝ այսպէս յաւելու · որպէս գոլ ՚ի հեթանոսաց ժառանգակիցըս և մարմնակիցս Քրիստոսի, զի և մարդ իցէ՝ Աստուած ճշմարիտ, և Աստուած իցէ՝ մարդ ճշմարիտ. ոչ մարդոյ առ Աստուած գոլով, որպէս և դուք զրպարտեալ ասէք, հեգնելով զքրիստոնէիցն զխորհուրդս: Աստուծոյ միածնի հաճեցեալ զլրումն աստուածութեան իւրոյ զսկզբնատպին մարդոյ զստեղծուած և արարած նոր յարուցանել ինքեամբ, և անլոյծ միաւորութեամբն. զի յաղագս մարդկան իրակութիւն չարչարանօք և մահուամբ և յարութեամբ զփրկութիւն մարդկան գործեալ:

Դարձեալ՝ արդ զի մարդ Քրիստոս ոչ ապրեցուցանէ զաշխարհ՝ եղեալ մարդ, որ և քաջայայտ է եթէ որով բնութեամբ գործեցան մեղքն, նովին բնութեամբ եղեն յաւելուած շնորհին. զի Աստուած եղեալ մարդ՝ մնալով Աստուած. զի և մարդ եղեալ Աստուած հաւատասցի, որպէս մարդ գոլով Քրիստոս Աստուած է. զի Աստուած գոլով եղև մարդ՝ և ապրեցուցանէ զհաւատացեալն՝ մարդոյ կերպիւ ։ Դարձեալ՝ իսկ եթէ զայս այսպէս խորհել ախորժէք, զի՞նչ է՚ի ձեռն մարգարէիցն խոստումն, կամ աւետարանչացն ազգաբանութիւն, կամ առաքելոյն վկայութիւն, կամ մօրն Մարիամայ տեսիլն, կամ հասակին աճումն, կամ ըստ ամենայնի ախտակցութեանցն ցուցումն, կամ անուանն յառաջ ածումն․ կամ թէ Որդին Աստուծոյ որդի մարդոյ եղև, և կամ Մարդն Յիսուս Քրիստոս, որ ետ զանձն վասն մեր, կամ թէ Պարտ է որդւոյ մարդոյ բազում չարչարանս կրել և սպանանիլ և յերիր աւուր յառնել՚ի մեռելոց ։

Դարձեալ՝ զի՞արդ ասէք եթէ Աստուած՚ի ձեռն մարմնոյ չարչարեցաւ և յարեաւ․ քանզի թէ Աստուած բանն չարչարի, չարչարելի ասէք զհայր և զմխիթարիչն՝ միոյ գոլով անուան և միոյ աստուածային բնութեան։ Եւ յասացելոցս յայսցանէ է տեսանել զձերդ մտածութիւն՝ որպէս ոչ երկիւղածից Աստուծոյ, և ոչ հաւանելոյ աստուածայնոց գրոց։ Մովսէս գրէ, եթէ Աստուած մեր հուր ծախիչ է․ իսկ վասն մարմնով գալստեան նորա, մարգարէ յեղբարց յարուցէ ձեզ տէր զտէրն, և զկենդանութիւնն զփայտէ կախեալ, որպէս զի լիցէ մարմնոյն տեառն 'ի կեանս մեր եղելոյ։

Դարձեալ և տէրն զչարչարանս 'ի վերայ որդւոյ մարդոյ կացուցանէ՝ ցուցանելով զըստ մարմնոյն։ Իսկ յաղագս աստուածութեանն իւրոյ՝ Ես և Հայր մի եմք, և ոչ ոք գիտէ զՈրդի թէ ո՛ է՝ բայց միայն Հայր։ Եւ ոչ ուրեք արիւն Աստուծոյ դաւանեցին գիրք, կամ Աստուած 'ի ձեռն մարմնոյ չարչարեալ և յարուցեալ։ Արիանոսացն է այսպիսի իմն յանդգնութիւն․ վասն զի ոչ Աստուած Ճշմարիտ զՈրդին Աստուծոյ խոստովանին։ Իսկ գիրք սուրբք 'ի մարմնի Աստուծոյ, և մարմնոյ Աստուծոյ մարդ եղեալ, արիւն և չարչարանս և յարութիւն քարոզեն՝ մարմնոյ Աստուծոյ յարութիւն'ի մեռելոց եղեալ։

Դարձեալ այլ ասիցէք, զիա՞րդ զտէրն փառաց'ի խաչ հանին։ Այլ ոչ զԲանն խաչեցին, մի՛ լիցի. այլ զԲանն արհամարհեցին, զմարմին բանին 'ի խաչին բեւեռեալ. քանզի Աստուած էր որ արհամարհեցաւ. մարմնոյ Աստուծոյ և հոգւոյ չարչարանքն և յարութիւնն եղև. վասն այսորիկ ասէր ցՀրեայսն տէրն. Լուծէք զտաճարս զայս, և զերիս աւուրս յարուցից զսա. որպէս ասէ մարգարէն. Փոխանակ զի 'ի մահ վարեցաւ անձն նորա, և ոչ ինքն Բանն։ Եւ Յոհաննէս ասէ, Եւ նա զանձն իւր եդ վասն մեր։

Դարձեալ ասեն Ներհակքն. և եղեցի խոցումն մարմնոյն, իսկ չարչարանքն Բանին. վասն այսորիկ Աստուած չարչարելի ասէք, և հետեւաբար ինքեան բարբառիք յաւէտ համաձայնաբար արիանոսացն. քանզի զայս նոքա օրինադրեն։ Եղիցի և 'ի մեռելոց Բանն յարուցեալ ըստ ձեզ. քանզի հարկ է ուրեմն 'ի դժոխոց զսկիզբն յարութեանն առնուլ, զի կատարեալ լիցէ յարութիւնն և մահու լուծումն, և որոց անդն հոգւոց՝ արձակումն։ Իսկ եթէ զայսոսիկ բանն կրեաց, ո՞ւր է անփոփոխութիւնն և անայլայլութիւն Բանին։ Ո՞ւր են և այնոքիկ որ զամենայն կիրս չարչարանացն՝ Աստուծոյ Բանին վերաձայնեն։ Կարծեմ թէ այսու բանիւս հաւասարապատիւք գտանին Արիոսի չարափառութեանն և Պանդորոսի այլայլութեանն։

Եւ ապա դարձեալ հարցանեն․ ո՞վ է որ չարչարեցաւն, ո՞վ է որ խաչեցաւն, Աստուա՞ծ՝ եթէ մարդ․ զի եթէ ասիցէ Աստուած, հայհոյութեան յառաջ բերի բանս՝ ըստ ամբարիշտ հերձուածողացն․ իսկ եթէ ասիցէ մարդ՝ հրէական դարձեալ կարծեօք վարեսցի․ վասն այսորիկ գիրք սուրբք աստուածապատմաբար՝ 'ի Հօրէ քարոզեն ըզԲանն, և զնոյն՝ 'ի յետին ժամանակս մարդ ծնեալ 'ի կուսէն։ Եւ կամ մարմնոյն նորա չափաւորութիւն առնուլ ձեռնարկէն․ և ո՛րչափ, կա՛մ զիա՞րդ արտաքոյ կրոց ասել յանդըգնին․ քանզի այսոքիւք մտածութեամբք՝ լպրծեցան 'ի հերձուածողացն մտածութիւնս ։

Արդ ա՛ռ ընկալ զբանս սրբոյն Աթանասի առանց երկբայութե՟, ընկալ և հաւատա, եթէ զնա քեզ համարիս․ զի ո՛րչափ փաստաբանեալ յայտնի ասայ զատարացոյց այսր աստուածայնն իրի․ զոր եթէ անգիտացար երբեմն, և կա՛մ թէ ոչ եղեր ճշմարիտ վերահասու, զղջանալ ունիս ապաշաւանօք․ զի ոչ ըստ քոյն ընտրելոյ ճշմարիտ աստուածաբանեցեր, այլ կարի օտար և հեռագոյն ։ Ապա թէ առ այս ոչ զիջանիս հաւանական մտօք, կարծեմ թէ բանիւ միայն բերիս առ հաղորդութիւն սրբոյս աստուածազգեստի ։

Իսկ յաղագս մարմնոյս բնութեան յատուկ զոր ասացէք ոչ ունել մարդոյս բնութիւն, պարտիք յաստուածախօս տառիցս վկայութենէ հաւատարմանալ, զոր յայտնի առնեմք աստանօր։ Սուրբ աստուածաբանն Գրիգոր գրէ ՚ի դամբանական ճառին Բարսղի սրբոյն ասելով· Յաղագս սուր բնութեան յաստուածայինս ոչ էր կարօտ քաջալերիլ յումեքէ։ Դարձեալ ՚ի ճառին որ յաղագս Կեսարոսի եղբօրն է ասացեալ, գրէ՝ թէ յաղագս սուր բնութեան իւրոյ առ ուսմունս աստուածայինս՝ յաղթահարեաց զամենայն հասակակիցս իւր։ Դարձեալ այլուր ասէ· բնութիւնք մեծամեծք և սուրք՝ են պատճառք տրտմութեան։ Դարձեալ ՚ի Կեսարոսի ճառին, Զարմանայի· ասէ, զի մեծ բնութեամբն իւրով զիջանէր առ խոնարհս։ Սուրբն Գրիգոր Նիւսացին գրէ ՚ի ճառս Ներբողականս, որ առ Նախավկայն Ստեփանոս· Եթէ աստանօր և Հոգին սուրբ ՚ի մեծաբանութիւնն Ստեփաննոսի տանիլ եղև։ Գրէ և սուրբն Կիւրեղ աղեքսանդրացի ՚ի ճառին, որ թէ մի է Քրիստոս· Անշփոթ մնացին բընութիւնքն, որ են առանձինք, որպէս ՚ի միաւորութեան հոգւոյ և մարմնոյ մերոյ՝ առանձնական բնութիւնքն միաւորին: Դարձեալ Յովհան ոսկեբերան գրէ ՚ի հինգերորդ ճառն, որ յառաջին Թուղթն Կորնթացւոց. Մի՛թէ սոքա ամենեքեանք ո՛չ համարին աշակերտք. քանզի բնութիւնք երկխուղածք առաւել գիտեն յիմարել:

Դարձեալ ՚ի բովանդակ երգս մեր և ՚ի պաշտամունս, և ՚ի կարգաւորութիւնս աղօթից, որպէս ասէ. Արարեր զգիշերն ՚ի հանգիստ քնոյ տկարացեալ բնութեանս մերոյ. և թէ Մերով բնութեամբ բարձար ՚ի վերայ խաչին. և այլն ամենայն հին և նոր կտակարանքս ոչ ուրացան զմերս բնութիւն, և տան ուրէք տարացոյց ծածկութեան. դու զիա՞րդ այսոցիկ ամենեցուն ընդդէմ կռուիս փաստաբան վկայութեամբ, յորմէ պարտիս հրաժարել և ՚ի բաց կալ ՚ի կեղակարծ մտածութենէդ՝ աստուածայնովքս յանդիմանեալ: Ապա թէ ոչ՝ հատանիս սոքօք յորոշումն չնչոյ, որպէս և այլ մոլորեալքն. վասն զի այսոքիկ ամենեքեան մարմնաւորք էին, և մարմնով շրջեցան և երևեցան, և ոչ առաչօք · և գոյր սոցա բնութիւն որպէս և այլոցս։

Ծանեաք և որ ինչ յաղագս հարցմանն մեր էր առ՚ի ձէնջ բանք դիմադրականք և խրատականք · զի գրեցիք եթէ այս հարցմունք առանին պարտին լինել ծածուկք և անյայտք, մանկանց առ ծերս խորհըրդաբար և ծերոց առ իրեարս, և ոչ համաշխարհական թղթովք։ Եւ զայս որդին որոտման ոչ արար և կամ պատուիրեաց մեզ · այլ մեծաբարբառ հնչմամբ ՚ի վերուստ որոտաց զոր ՚ի հոգւոյն Աստուծոյ ընկալաւ և ասաց, թէ Բանն մարմին եղև և բնակեաց ՚ի մեզ։ Եւ այլուր եթէ՝ Ձեռք մեր շօշափեցին ՚ի վերայ բանին կենաց ։ Եւ այլուր, եթէ Հայր իմ մեծ է քան զիս ։ Եւ այլուր, թէ Ես և Հայր իմ մի եմք ։ Եւ այլուր թէ Հայր իմ և ձեր · և Աստուած իմ, և Աստուած ձեր ։ Եւ այլուր, եթէ Որ ետես զիս՝ ետես զՀայր ։ Եւ այլ ուր՝ թէ Գոհանամ՛ զքէն զի լուար ինձ: Եւ այլուր՝ թէ Ամենայն ինչ որ 'ի Հօրէ, այն իմ է. և զգործան՝ զոր Հայր գործէ և ես գործեմ: Արդ մի՛թէ այսոքիկ ամենեքեան հակառա՞կք և այլևայլք և անմիաբանք իրերաց ստացան և գրեցան: Եւ այս հերձուած չար մտածութեանց, և կարծիք 'ի հոգին Աստուծոյ տայ զհայհոյութիւն, թշնամութեան հոգի՝ և ոչ խաղաղութեան զնա կարդալով. քա՛ւ և մի՛ լիցի: Եւ յաղագս ծածկելոյ անյայտութեամբ զաստուածախօս պատգամս, և զդաւանութիւն ճշմարիտ հաւատոյս քրիստոնէից՝ յայլ ումեքէ ոչ լուաք 'ի սրբոցն. բայց միայն 'ի շանց և 'ի խոզից հրաժարեցոյց աստուածային բանն: Իսկ զայս մեծաբարբառ ընթեռնուլ և ձայնել ուսաք յամենայն եկեղեցիս քրիստոնէից, և 'ի նստիլ 'ի տան, և 'ի գնալ 'ի ճանապարհի, իբրև զաւետաւոր պատգամս: Այդ հեթանոսացն է մասն առասպելաց և աղճատանաց՝ որպէս պիւթագորացին այն կին զգործիս խորոյ բանին ճաշակեալ առ յայտնութիւն առականացն ծածկելոց, երեւեցաւ ընդ հաւանական նահատակս: Իսկ մերս Ճշմարտութե՟ նահատակք ոչ այսպէս· այլ յայտնի եւ բարձր քարոզութեամբ 'ի ժողովս եւ 'ի գուեհս եւ 'ի քաղաքս: Որ եւ առ այս ըստ օրինի Ճշմարիտ բարեկամի խորհրդակցեմ՛ քեզ՝ ընթեռնուլ եւ քննել զգիրս, եւ հաւասար գոլ սրբոցն եւ աստուածազգեստից յամենայն ձայնս գրոց, 'ի բանն, 'ի տեսութիւնն, 'ի տեղին, յընդդիմակն, եւ առ որս ասեն. զի մի հատակոտոր ընդդիմակք եւ անմիաբանք երեւեսցին քեզ· եւ զրկեալ գտանիցիս 'ի Ճշմարտութեան Ճանապարհէն, եւ պատժապարտ յարդարադատ ատենին՝ զբարւոք գըրեալսն չարաչար մեկնելովն: Վասն զի ունին նկատել եւ հայել գեղապանծքն եւ չքեղքն 'ի Ճշմարտախօս բանս իւրեանց. եւ թէ ոչ այնպէս՝ դատախազք լինին քեզ իբրեւ զՀոգին Աստուծոյ թշնամանողի:

Ունիս քեզ վարդապետս զբանս սրբոցն, զորս յիշատակեցեր 'ի վկայութիւն միութեան բնութեանցն. ընդունելիք են և աստուածահաճոյք, և առ'ի յինէն երկրպագեալք և խոստովանեալք: Եւ զոր այժմ յայտ արարեալ առաջի եդաք ձեզ 'ի նոցայոցն բանից, ոչ ընդդէմ նոցա և հակառակ խօսեցաք. այլ առ քոյդ տկար մտածութիւն եդաք, զի զգուշասցիս, և յամենայն լրութիւնս աստուածաշունչ գրոց, զորս վկայս քեզ կարգեցեր. և 'ի մի միաբանութիւն ածեալ կացուսցես անհակառակս և անկռիւս. սրտիւ հաւատալ, և բերանով խոստովանել. որպէս և ես հաւատամ և խոստովանիմ ըստ սրբոյն Աթանասի. Աստուած և որդի Աստուծոյ, և որդի մարդոյ, 'ի մի բնութիւն Բանին մարմնացելոյ: Եւ ըստ սրբոյն Երինոսի, Եկն որդին Աստուծոյ և զգեցաւ մարմին անմեկնելի և անորիշ ըստ կրից և ներգործութեանց միութեն, ոչ որիշ և ոչ այլ և այլ, այլ նոյն մի:

Դարձեալ ըստ Աթանասի. Իսկ եթէ Բանին մարմին, քանզի Բանն մարմին եղև և բնակեաց 'ի մեզ, հարկ է և զմարմնոյն չարչարանս ասել նմա, որոյ մարմինն է: Դարձեալ և զոր առ Յուլիոս ասէ. Ընդունիմք և հաւատամք, ոչ մարդ էր զոր ծնաւ Մարիամ, և ոչ զոր Հրեայքն խաչեցին. Աստուած ծնեալն 'ի կնոջէ, և Աստուած խաչեալն 'ի Հրէից: Նոյնպէս և զԳրիգորի սքանչելագործին, և զՊրոկղի երանելւոյն, և զԵփրեմի երանելւոյն և Ճգնաւորին. զմերոյ սրբոյ Լուսաւորչին, զԳրիգորի աստուածաբանի, և զայլոց սուրբ և աստուածընկալ հարցս, զորս յիշատակեցեր գրչութ՟բ, և որ այլք համանմանք սոցա և հաւասարք, ընդունիմք և հաւատամք սրտիւ, և վերնոցն գաւակից և աթոռակից գոչեմք, և 'ի բանս նոցա կապեալ եմք անխզելի առասանօք հաւատոյ. յԱստուածն և 'ի մարդն, 'ի միութիւնն, յերկուութիւնն, 'ի կամքն, 'ի ներգործութիւնն, 'ի կիրսն, մինչև ցյոլով մի նշանախեցի ոչ պակասեցուցանեմք, և ոչ առաւելումք 'ի շարէ շինմանն : Զորս ընդունին սոքա 'ի դաւանողացըն ընդունիմ և ես, և զորս որոշէնն` որոշեմ և նզովեմ: ԶՔաղկեդոն ոչ գիտեմ, և ոչ զԼևոն ճանաչեմ. իսկ եթէ բարիք են` անձանց և ժողովըրդեանն, և եթէ չարք` անձանց և ժողովըրդեանն : Զօրէնան նորա ոչ գիտեմ, և դատող մեղաց նորա ոչ լինիմ 'ի վկայութենէ այլոց : Յայս միայն եմ հաստատեալ, զի որ առ մեզ այժմ խօսակցին, եթէ գտցեն յայսց սրբոց դաւանութիւն և հաւատ յաստուածաշունչ գրոց վըկայութենէ, ընդունիմք իբրև զեղբարս իւրաքանչիւր կարգօք և կրօնիւք. և թէ սխալեալք են` ընդունիմք զզղջումն. ապա թէ ոչ` աղօթեմք վասն դարձին իբրև զկարեկից անձն, որպէս ուսաք և 'ի վերայ թշնամեացն աղօթել: Հաւատափոխք ոչ լինիմք ըստ քոյդ տարակարծ մտաց, զախտս իւրաքանչիւր անձանց առ ընկերն տեսանելով:

Իսկ որ յաղագս Հաղբատայ և

Անեցւոյն առ 'ի ձէնջ բան մեղադրական, և անմտութեան խնդիրք զօշաքաղ մտօք՝ արկանել զմեզ ընդ լծով ծառայութեան ձեր առանց մատենագրի, ոչ ինչ հոգալ յարևելս, ոչ լսել զբան 'ի մերոց, ոչ տալ միւռոն և ձեռնադրութիւն: Եւ զայս մինչև ցայս վայր կամեցաք յօժարամիտ կամօք, և յառաջեցուցաք 'ի գործ. վասն զի ծանեաք եթէ Աստուածք իցէք, կամ որդիք Բարձրելոյն: Նա ոչ այսպէս. այլ իբրև զմարդիկ մեռանիք, և իբրև զմի յիշխանաց անկանիք:

Արդ յայսմհետէ լռեալ դադարեսցէ քոյն առ 'ի մէնջ գիր և բան, մինչև լռեալ դադարեսցես 'ի հպարտութեան ախտէդ: Քեզ զի՞նչ գոյ հաղորդութիւն առ Հաղբատ. այն մեր է սեփհական, և տեղի յիշատակի. եթէ կայ՝ մեզ կեայ. և եթէ մեռանի, մեզ մեռանի. եթէ զայն տամք, ոչ վասն ումեք, և եթէ յայլոց են՝ խափանեմք, ոչ յումեքէ նեղիմք:

Իսկ ընդ այս կարի յոյժ զարմանամք, զի մեր գիր և բան՚ի դէմս ամենեցուն գրեցան, որպէս և ՚ի քոյդ. և դու յայլոց ընկերակցաց քոց՚ի բաց կացեր իբրև զքաջ մենամարտիկ ոք, և զայս պատուական և պիտանի նամակ՚ի քո անուն ձայնեցեր: Այս գոհութիւն Աստուծոյ մեծապէս, զի դոքա ոչ գտան համախոհ այսմ պատուատուն հերձուածոյս, այլ կան մնան ՚ի ճշմարտութեանն աւանդ, խոստովանութեամբ սրբոց և աստուածազգեստից հարցն. որոց փառացն արժանասցին ՚ի Քրիստոսէ Աստուծոյ մերմէ, որում փառք յաւիտեանս. Ամէն:

ՆՈՐԻՆ

ԳՐԻԳՈՐԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

Պատասխանի վարդապետացն Հայոց հիւսիսային կողմանց ։

ԶՄԱԿԱԳՐԵԱԼ բանս քրիստոսազգեցից արանց սպասաւորաց բանի՝ ընթերցաք աշխատասէր մըտօք. և ծանեաք զոր 'ի սմա բան և էր, և խորհուրդ բանի, մեք և որ ընդ մեզ են սրբոց ժողովք. առ որս պատասխանեցաք փոքր ինչ ընդ որ առ մեզ են ազդմունք յարտաքուստ, և խորհուրդք 'ի սրտից ։ Յայտնապէս հրատարակեաց յաստուածախօս պատգամս իւր 'ի ժամանակս զգեցման մարմնոյ Ճշմարիտ սիրողն Յիսուս, որոց շնորհեցաւ ը̅ ունել, եթէ Պատուիրան Նոր տամ ձեզ, զի սիրեսջիք զմիմեանս, զի այսու ծանիցեն զձեզ ինձ աշակերտս լինել։ Որպէս և առ օրինականն ասաց՝ եթէ յայս երկուս 'ի մի շարայարեալ պատուիրանս՝ ամենայն օրէնք և մարգարէք կապեալ են և կախեալ անխզելի։ Եւ եթէ՝ որպէս ես ձեզ արարի, և դուք միմեանց պարտիք առնել, և զանձինսդ ևս դնել 'ի վերայ միմեանց։

Զայն Ճշմարիտ պատուիրան հաստատեցին հետևողքն Տեառն և խաղաղարարքն տիեզերաց՝ ըստ չափոյ պարգևելոյ նոցա 'ի վերուստ· որպէս և յաւել ումն 'ի նոցանէ և ասաց, եթէ Աստուած սէր է, և որ կայ 'ի սէրն՝ բնակեալ է յԱստուած, և Աստուած 'ի նմա բնակէ· և թէ՝ Սիրելիք սիրեսցուք զմիմեանս, զի սէր յԱստուծոյ է։ Դնէ և անօթն ընտրութեան Պաւղոս՝ գլուխ և լրումն օրինացն զսէրն· սիրել ոչ միայն զսիրելիս, այլ և զթըշնամիս· տալ քաղցելոց հաց, և ծարաւելոցն ջուր· լուծանել զԱկն ընդ ական, և զատամն ընդ ատաման· գնալ ընդ վարողսն, և տալ ընդ շապկին և զփակեղն 'ի պէտս խնդրողին, թերևս զեղբարս շահեսցուք. և գտցուք ճշմարիտ տնտեսք և մատակարարք բանին՝ տալ 'ի ժամու զկերակուրն, և արկանել զտաղանդն 'ի սեղանաւորսն, ըստ կամաց պահանջողին տոկոսեօք։

Զոր մեր լուեալ զայսոսիկ և որ սոցին նման, և աշակերտեալ ըստ չափոյ կարողութեան մերոյ, ճշմարիտ սիրով ջանամք նկրտիմք ոչ միայն անձին հաճոյ լինել, այլ և ընկերին 'ի պէտս շինութեան բազմաց, եթէ տացէ տէր սերմն և հաց՝ ըստ նախատես բնութեանն վկայեցելոյ. և սակս այսորիկ աքնիմք և հոգամք, ըստ նմին և աղօթեմք՝ ոչ միայն 'ի վերայ եղբարց անդամոց ճշմարիտ գլխոյն, այլ և 'ի վերայ թշնամեաց և հակառակաց գլխոյն և անդամոցս. և առ Հայր կարդամք եթէ թող սոցա, զի ոչ գիտեն զինչ գործեն։ Գնեմք ծունր և աղաղակեմք 'ի ձայն բարձր առ յայտնեալ մեզ ճշմարիտ աստուածութիւնն, եթէ Տէր մի՛ համարիր սոցա զայս մեղս. և ջանամք աճել զգօղն զարձեալ 'ի գլխան, ուստի արտաքսեցաւ վասն պատճառին․ և 'ի զըրկողացն կացուցանել ճշմարիտ վըկայս որդւութեանն Աստուծոյ․ ունել և զղջացողն՝ զգօն, և զխաղաղարար կռուողն՝ 'ի պէտս տեառն անօթ ընտրութե․ լինել ընդ Հրեայսն՝ Հրեայ և խաչեցող, և ընդ անօրէնսն՝ հռոմայեցի անօրէն և կռապաշտ․ ոչ անձին հաճութեամբ, այլ 'ի պէտս բազմաց զի ապրեսցին։

Յորժամ և մեք զայս աւանդ պատուիրանի առաք, եթէ ի Քրիստոս Յիսուս չէք խտիր, ոչ Հրեայ, ոչ հեթանոս, ոչ ծառայ, և ոչ ազատ, զի ոչ թլփատութիւն և ոչ անթըլփատութիւն, այլ նոր արարած․ և որ միանգամ՝ այսմ կանոնի միաբան լինին, խաղաղութիւնն Աստուծոյ 'ի վերայ նոցա և ողորմութիւն․ մի Քրիստոս, մի մկրտութիւն, և մի եկեղեցի, զոր ոչ Պաւղոս, այլ որ ինքեամբ ընդ մեզ խօսէր յայտնեաց մեզ։ Զայս և ոչ ուստեք լուաք եթէ պատուիրեաց մեզ ոք 'ի սըրբոցն եթէ այլ Քրիստոս էր որ յաղագս Հայոց եկն, և այլ որ յաղագս Հոռոմոց, և այլ որ յաղագս Փռանկաց, հակառակք միմեանց, այլևայլ պատուիրանք, ասել զմիմեանս և նախատել. անիծանել և հայհոյել և խոտան համարել։ Եւ այսու աղագաւ համարձակեցաք գրել առ նոսա խաղաղական գիր 'ի խնդիր սիրոյ՝ սկսեալ ոչ առ 'ի մէնջ, այլ 'ի մերոց սրբոց նախնեաց. զոր թէ այլ ումեք առ 'ի ձէնջ ոչ է գիտելի այդ, 'ի Վարդանայ չէ անտեղեակ թէ ո՛րքան 'ի վաղուց հետէ էր սկսեալ, և ո՛րչափ և քանի՞ էր 'ի նոցանէ առ այս խընդիրք յայտարարութեանց յայտնել և կատարել։ Նախ երկուց բնութեանցդ բան, և կամաց և ներգործութեանց. երկրորդ, ընդունելոյ զժողովն Քաղկեդոնի, և զնորայն տումարս. երրորդ, 'ի սուրբ խորհուրդն ջուր խառնել և խմոր 'ի կեր արկանել. չորրորդ, առնել զմիւռոնն սուրբ 'ի պտղոյ ձիթենւոյ. հինգերորդ, բառնալ զխաչեցարն 'ի սըրբասացութենէն. վեցերորդ, լուծանել զպահս առաջաւորին. եօթներորդ, առնուլ զհրաման կաթողիկոսութեանն 'ի Թագաւորէն. ութերորդ, հաւասարել ընդ նոսա տօնիւ ծննդեանն: Եւ այսմ ամենայնի հակառակ և դիմամարտ ես էի յառաջին. և իմս գրով և բանիւ հազիւ ուրեմն ածի յայդ, զի անուանեցին զմեզ եղբարս զրպարտեալս 'ի միմեանց. և վկայեցին եթէ ծանեաք յերգս ձեր և յօրհնութիւնս՝ որ է շարականքդ, որ առ Աստուած զճշմարիտ հաւատոյ ձերոյ ուղղափառ դաւանութիւն. և զամենայն խնդիրս լուծին և զհայցուածս իւրեանց: Բազում և այլ բանս խաղաղութեան և սիրոյ գրեցին և խօսեցան:

Վասն որոյ գրեցէքն եթէ այս շարամանեալ ունի ընդ ինքեան զաղանդն Նեստորի, և զչարութիւննորա. առ որս ասելի է, եթէ մեք ուստի՞ ծանեաք զՆեստոր և զաղանդ իւր չար: Ի Սահակինն խօսեցաւ, եթէ 'ի Հաղբատ հրատարակեցաւ. եթէ 'ի մայրաքաղաքն մեր Անի առաջնո՞րդ կարգեցաւ և այնու խոտեցաւ։ Նոցա էր և ՚ի նոցանէն ել և ՚ի նոցանէ խոտեցաւ ևնզովեցաւ ևնզովի մինչև ՚ի վախճան. և յայլ ումեքէ ոչ բռնադատին խոտել զնա, բայց եթէ յանձանց և ՚ի գիտութենէ իւրեանց։ Մեք յանուն Եւտիքի, Տիմոթէոսի և Դէոսկորոսի զիա՞րդ կոչիմք, և անուանեմք զնոսա սուրբս, և ՚ի բանս նոցա կապիմք իբրև յերկաթ։ Ազգակի՞ցք եմք նոցա բանիւ, եթէ գաւառակիցք քաղաքաւ. հարազա՞տ ըստ մարմնոյ, եթէ ծնունդք ըստ հոգւոյ։

Առ մեզ մի՛ լիցին խոտելիք մերն սուրբ լուսաւորիչք և հարք. այլ պատուելիք և պաշտելիք, սուրբն Գրիգորիոս և զարմն իւր սուրբ. սուրբն Ներսէս և Սահակ, և որ ըստ նոցայն յատակքն և Ճշմարտախոհքն, և նոցայն քարոզեսցի քաջութիւն յեկեղեցիս մեր, և յաղագս նոցա բանակռուեսցուք եթէ գոցին հակառակք։ Որ նոցայն են՝ իւրեանց է գիտելի լաւութիւն և վատութիւն նոցա։

Ածցուք 'ի մէջ և զայնոսիկ՝ որք նոցա են, և մեզ քաջ տեղեակք և յայտնիք, զսուրբ և զաստուածազգեաց հարսն, և զսուրբ բանս նոցա. զսուրբն Աթանաս, և զսուրբն Գրիգոր Նիւսեայ, և զմիւս Գրիգոր աստուածաբանն, և զսուրբն Բասիլիոս, և զբերան ոսկի սուրբն Յովհան: Մինթէ այսոքիկ 'ի նոցանէ խոտեցա՞ն, և առ 'ի մէնջ պատուեցան. մինթէ ո՞չ ընթեռնուն յարաժամ 'ի սրբոյն Աթանասէ ըզգրեալսն, զոր յաղագս անչփոթ խառնմանն յատուկ և կատարեալ բնութեանցն գրէ ասելով. Ի նմանութենէ Տեառն որ առ մեզ՝ մեծ է օգուտն, զի և մեք նմանեսցուք առ նա. քանզի թէ ոչ ինքն էր նըմանեալ առ մարդիկ, պարտ էր 'ի նմանութիւնս մեր իջելոյն՝ ըստ այսմ մանաւանդ նմանիլ, ըստ որում փոխադրութեան էաք կարօտ ըստ ախտից, զի զայսոսիկ յանախտութիւն փոխեալ կացուսցէ: Եւ մի՛ ոք անհաւատ լիցի յաղագս ախտիցն լսելով՝ համարեալ փոփոխել աստուածութեանն. այլ առեալ 'ի նմա ախտք 'ի մարմնական և յանձնական շարժութենէ ածցէ զմտաւ և առեալ և պարտեալ. քանզի վասն այսորիկ առեալ եղև, զի յաղթեսցի. և վասն այսորիկ յաղթեցաւ, զի ամենայն մարդկայինն բնութիւն ըստ ազգակցութեան բարեգործեսցի. քանզի անտի սկսեալք փոխակերպիմք ամենեքեան, յախտացելոց անախտք, և 'ի մեռելոց կենդանիք կազմեալք: Արդ մի՛ ոք ամբոխեսցի յանհաւատութիւն, եթէ ասէ Աստուած գոլով Տէրն միանգամայն և մարդ՝ Այժմ անձն իմ խռովեալ է: Քանզի այս լինէր աստուածութեանն թողացուցեալ մարմնոյն ամբոխել, կարող գոլ աստուածութեամբն 'ի բաց մերժել զխռովութիւնն, այլ ոչ կամեցեալ, զի մի՛ զնմանութիւնն որ առ մեզ՝ լուծցէ: Այսպիսի ինչ է իմանալ և յորոց առ մեզս իրաց, որպէս զի խառնեալ մեղր առ ջուր՝ ոչ միայն փոխադրի, այլ ջուրն յաւելու, և որ 'ի կարգին է:

Ասեմք, եթէ անգիտանան և ըղհարցմունս Արիանոսին և Քաղկեդոնին, և զպատասխանիսն սըրբոյս· և թէ որպէս և քանի՛ գեղեցկայարմար բանիւք բաժանէ և միաւորէ 'ի կիրս մարդկայնոյն և աստուածայնոյն՝ խոնարհագոյն և բարձրագոյն։ Հաւատալի լիցի մեզ և այս՝ եթէ բանք սուրբ հօրն Գրիգորի Նիւսեայ զանխուլ են 'ի նոցանէ և ոչ են ընթերցեալ, և յարկեղս գրոց ամբարեալ զսուրբ բանս նորա, և ընթեռնուն՝ առանց միջնորդի և միաբարբառ խօսիւք զմիաւորութիւն անձին առ մարմին· և զյաւելումն և զպակասութիւնէութեանն յէութենէ՝ Պերփերիոսի իմաստնոյ վկայութեամբ· և կամ այլ բովանդակ բանք նորա անյայտք են 'ի նոցանէ, և ոչ ընթեռնուն զգերեզմանական ասացեալ Ճառս որ 'ի վերայ Տեառն, թէ զո՞վ խընդրեաց Յովսէփ 'ի Պիղատոսէ, և կամ վասն ո՞ր աղաչէր և աղերսանօք խնդրէր, և կամ զո՞վ պատեաց անշնչացեալ և եդ 'ի գերեզմանի։

Եւ կամ ո՞րպէս դարձեալ 'ի դիմաց հրեշտակին աւետարանէ կանանցն՝ առեալ զբանս նորա, թէ Յարեաւ որպէս ասացն, ստուգեաց ըստ սովորութեան իւրոյ զճշմարտութիւնն· և զոր բանիւ յառաջ ասաց, զայս և գործովք կատարեաց, և անմահ աստուածութիւն նորա անմահ մնաց· և 'ի ժամանակի մահկանացու մարմինն նորա մարմնական աչօք զքուն մահու յանձն էառ, և անկեալ որպէս զաւիւծ՝ ննջեաց թագաւորապէս, և զարթուցեալ յարեաւ, և եղեալ անդուստ որպէս Աստուծոյ իսկ վայել էր, և որ 'ի կարգին:

Ածեմք զմտաւ ահաւասիկ, եթէ անլուր են նոքա 'ի բանից սըրբոյն Գրիգորի աստուածաբանի· ո՞չ ընթեռնուն իւրական բանիւն յաւուր տօնի ծննդեանն Քրիստոսի զառ 'ի նմանէ խօսեցեալ զաստուածաբանական ձայն, եթէ Քրիստոս ծնեալ լինի, և Քրիստոս յերկնից և 'ի մարմնի և 'ի կուսէ և 'ի վերայ երկրի· և զի 'ի ցնծութիւն կոչէ զարարածս յաղագս երկնաւորին, և ապա երկրաւորիս. անմայր յառաջնումն, անհայր յերկրորդումն, լուծանելով զօրէնս բնութեանն, որով ծնաւ մեզ մանուկ, և տուաւ մեզ որդի. անմարմինն մարմնացեալ, և բանն թանձրացեալ, և անտեսանելին երևեալ և եկեալ 'ի շօշափումն, և անժամանակն ըսկիզբն առեալ ժամանակի. և որ յառաջն որդի էր ծոցածին, այժմ որդի եղև կուսածին. օծեալ և փըրկիչ, և 'ի Հօրէ անբաժանելի, որպէս երէկ՝ նոյն և այսօր և յաւիտեանս յաւիտենից: Որք ոչ հաւատացին զգեցման մարմնոյն՝ գայթակղեցին. և որք 'ի մարմնոյն տըկարացան՝ ծիծաղեցին. իսկ որք թերակատար մտօք ջատագովք լինելին նորասքանչ գործոյն՝ լեզուագաբեցին, յանհուն անդունդս լըղալով: Վասն զի եղև նոր զարմանք. և երևեցաւ Աստուած մարդ ծնընդեամբ, որ էրն և միշտ էն, և որում գեր 'ի վերոյ էր մարդկայնոյս բանի և պատճառի գոլն, յաղագս մեր եղև, և'ի վերջին ժամանակի. որ է ինքն Աստուծոյ Բանն նախ քան զյաւիտեանս, աներևոյթն, անհասանելին, անմարմինն, 'ի սկզբանն սկիզբն, 'ի լուսոյն լոյս, աղբիւր կենաց և անմահութեան, կերպարան սկզբնատպին, այսինքն նման ծնողին՝ չարժեցեալ ծննդեամբ 'ի Հօրէ, և կնքեալ 'ի բազմորդութենէ. ոչ փոխեալ 'ի նմանութենէ Հօր, և ոչ արտասահման եղեալ բան, յիւր ստեղծեալ կերպարանն գայ, զգենլով մարմին և հոգի, զի սրբեսցէ և մաքրեսցէ զնմանակիցն իւր կերպարան՝ աստուածային խառնմամբն:

Յոր հայեցեալ երանելիս զարմանայ հիացմամբ և ասէ. Ո՛վ նոր խառնմանս, ո՛վ սքանչելի խառնուածոյս: Իսկ զրպարտողքն և դաւինքն համարս անուն յաստուածութենէն, և լինին սոսկ զզուելի խորհրդոյս այսորիկ, և խաւարին առ Ճշմարիտ լոյսն, և յիմարանան յիմաստս աստուածայինս, ստգտանելով զբարի և զաստուածավայելուչ գործս Աստուծոյ, համարելով փոքր զյաղագս մեր նուաստացեալն, զի տացէ զառողջութիւն ախտացելոյ բնութեանս, և հանցէ 'ի վեր զկամս անասնացեալս մեղօք: Քանզի առաքեցաւ, այլ երբեք զմարդ, զի կրկին էր· որով և վաստակեցաւ, և երկեաւ, և արտասուեաց, քաղցեաւ և ծարաւեցաւ օրինօք մարմնոյն· և եթէ երբեք զԱստուած, զի՞նչ այս, զի ամենայնիւ զկամս Հօր պարտ էր կատարել· յաղագս որոյ և մատնեալ ասի, զի մի՛ թուեսցի ընդդէմ Աստուծոյ· յորս ոմանք գայթակղին 'ի բարձրագոյնսն և 'ի խոնարհագոյնսն· միացուցանեն և ժողովեն չարաչար, և կամ բաժանեն հատանեն անաստուածաբար: Սոցա բաժանել պարտ էր, և նոցա միաւորել:

Եւ զիա՞րդ բազումս յերկարեցից զբանս· միթէ չորեքեան գիրք սորա որ առ մեզ, ո՞չ բովանդակին առ նոսա, և այլ ևս յոլովագոյն ճառք՝ միթէ զանխլացա՞ւ 'ի նոցանէ աստցեալ բանն՝ եթէ Աստուած խաչեալ, արեգակն խաւարեալ: Եւ կամ ապաւաղեցի՞ն զմիւս բանն, եթէ Որդին Աստուծոյ, և չարչարանք և մահ Աստուծոյ: Զորս մեր 'ի ձեռն առեալ զինիմք ընդդէմ նոցա 'ի պատերազմ, հարկանելով յաջ և յահեակ. զոր իմաստնոց և բարեպաշտից անձանց՝ ոչ վայել է յաստուածաշունչ գիրս զմիոյ բանէ բուռն հարկանել, և զայլովքն զանց առնել. և կամ հայհոյել 'ի լուրս բանին, և զմիտս ոչ քննել. այլ սաղմոսել հոգւով և մտօք, և քննել զգիրս աշխատասէր մտօք ուսաք. զի առանց սիրոյ՝ հնչումն է պղնձոյ, և ընչումն սրնգի: Հաւատալի՞ է մեզ եթէ բարձին 'ի միջոյ իւրեանց զբանս սրբոյն Բարսղի, և զաստուածաբանական ճառս նորա, ընդ նմին և զմեկնութիւնս սըրբոյն Յովհաննու ոսկեբերանին հին և նոր կտակարանացն. և կամ թէ հաւատաբանութիւնն Կիւրղի աղեքսանդրացւոյ, և գիրք պարապմանցն. և կամ հաւատոյ խոստովանութիւն սուրբ ժողովոյն Նիկիոյ` կորուսեա՞լ եղեւ յինքեանց․ և կամ թէ մեզ աւանդեցին, և ինքեանք թափո՞ւր մնացին: Եւ կամ թէ քանի՞ ամբարեալ ունին առ ինքեանս բանս գիտութեան գրով և անգիր, որով և մայր անուանեցան գիտութեան, և յոմանց ներհակաց` ճարտարք Յունաց: Եւ կամ թէ քանի՞ հերձուածողս հրատարակեցին` և բարձին 'ի միջոյ ըզգաղձն և զորոմն, հատանելով և 'ի բաց խլելով աստուածային սրովն:

Արդ եթէ զայսպիսի մեծ և զողջոյն ազգ, յորոց միջի ճոխանայ գիտութիւն և պայծառանայ եկեղեցի Աստուծոյ` պարտիմք մոլարս և ապէտս կոչել, և սնոտի զյոյս նոցա 'ի բանս և 'ի գործս, հաւանիմ և ես․ վասն զի Հայ եմ ճշմարիտ և աներկբայ սրտիւ: Ապա եթէ եղբարք եմք համաշունչք, և միոյ որովայնի ծնունդք, և միոյ ստեանց դիեցիկք, և միոյ ճշմարիտ գլխոյ անդամք, և այսու աղագաւ եղբայրական սիրով կոչեն զմեզ 'ի խազաղութիւն, պարտիմք զհետ գնալ տիրապէս և յօժարամիտ կամօք: Վասն զի զայս պատուէր առաք. և զայն ոչ իբրև զգտեալս 'ի կորստենէ, և կամ իբրև զդարձեալս 'ի մեղանաց և 'ի սխալմանէ, այլ իբրև զհեռացեալ եղբարք գաւառաւ և ժամանակաւ. որ և զայս թշնամութիւն գործեաց բնութիւն հնացեալ սովորութեամբ՝ ոխակալութիւնն. զմիջնորմն ցանկոյն քակել, և զկրձիմն 'ի բաց բառնալ՝ եթէ գոյ հնար, և մի՛ անիծանիլ յեղբարց, այլ օրհնիլ, շահել և շահեցուցանել զնոսա. քննել զխնամն, և հայիլ յօգուտն. զի իմաստնոցն աչք 'ի գլուխ իւրեանց է, ասաց իմաստունն, և որք կամին կուրանան, անձանց բերեն զմեղադրանս:

Արդ յստակ մտօք և աներկեան սրտիւ հայիլ արժան է մեզ 'ի բանս յայս. զի եթէ իցէ երկուց ոմանց ընթանալ ընդ մի ճանապարհ, լիցի՞ հնար միոյն մոլար լինել, և միւսոյն ուղղորդ. եթէ ոչ արդ ուղեկիցս զմեզ արժան է իմանալ, և ճանապարհ՝ զբանս աստուածաշունչ գրոց, և առաջնորդ զբանս սուրբս, զոր վերոյ գրեցաք: Զոր այսու թշնամութիւն՝ որով վարեցաք, հարկ լինի մեզ զմի ոք 'ի սոցանէ սուտ կացուցանել, կամ զբանս, կամ զասողս բանիցն, և կամ զընդունողս՝ եթէ ոչ են համաշունչք· և կամ թէ զիա՛րդ ոչ խօսեցան, և կամ թէ մի ոք առ 'ի մէնջ զբարուք գրեալն չարաչար ընթեռնու:

Եւ արդ հաւատարմացաք 'ի սրբոց արանց, եթէ 'ի բանս աստուածաշունչ գրոց անմիաբանութիւն ամենևին ոչ գտանի, և ոչ հատակոտոր ինչ և դար և կոճատ, այլ միաբան և միախորհուրդ 'ի հոգւոյն Աստուծոյ խօսեցեալ և շարայարեալ, և հիւսեալ առ միմեանս գեղեցիկ յարմարութեամբ· երբեմն ըստ ժամու պիտոյիցն ընդդէմ ներհակացն բաժանելով, և երբեմն ժողովելով· այլ երբեմն տալով զնուաստագոյնն մարմնոյն և զբարձրագոյնն Աստուծոյ: Ոչ գթեցան 'ի բաժանելն յատկութեամբ և կրիւք, և ոչ խոտեցան 'ի միացուցանելն և 'ի ժողովելն։ Եւ յաղագս աստղացն չունիմք ինչ ասել, վասն զի սուրբք են և սրբոց համապատիւք, և ընդունակք Հոգւոյն։ Իսկ յաղագս նոցա՝ վասն որոյ բանս է, յայտնի է ստուգապէս, զի ակն են աղբեր, և ամենայնն առ 'ի նոցանէ տեսանի բըղխեալ ջուր գիտութեան։ Արդ եթէ գոյ հնար՝ յայն դառնագոյն լինել ջրոյն, և 'ի հեռանալն միջոցաւ և լեղուօք՝ քաղցրագոյն և անուշահամ լինել, ապա պարտիմք զգուշացուցանել զնոսա իբրև զմոլորեալ եղբարս, և յիւրեանց ջրոյ քաղցրահամութենէ զովացուցանել· զի ընտիր մշակք երևեսցուք բանին՝ զեղբարսն շահելով։

Այլ զի գրեցէքն, եթէ յաղագս անշփոթ միաւորութեանն այլ ինչ իցէ բան՝ Աստուծոյ է գիտելի, հաւատամ և ես· զի որում լի են երկինք և երկիր փառօքն, և քննիչ է խորհրդոց և երիկամանց, զիւրն բնութիւն ոչ անգիտանայ։ Իսկ զայս այլ ոք 'ի սրբոց և յաստուածազգեստից արանցն ոչ պարտ վարկան գիտողին թողուլ· այլ զԱստուած գիտել և ճանաչել ճըշմարիտ վարկան, և սակս այսորիկ զմարմինս իւրեանց 'ի խաչ հանէին կարեօք կենցաղոյս· օտարացան 'ի տանց և 'ի ստացուածոց կարեւորաց՝ հաստատելով զհիմունս իւրեանց 'ի վերայ հաստատուն և անշարժ վիմի· և գտանելով երկիր բարւոք և պարարտ՝ Աստուծոյ տալով զպտուղ երեսնաւոր, վաթսնաւոր և հարիւրաւոր։ Եւ զայս ոչ միայն մերովքս և Քրիստոսի ծառայիցս հաւատարմացաք, այլ և առ արտաքնովքն, և այնոցիկ որք բնութեանց եղեն քննիչք, թէ որչափ և քանի աշխատեցին զանձն և զմարմին 'ի գիւտ անծանօթ բնութեան։ Արդ եթէ մեզ զլաւէն պարտ վարկանիք, ոչ ընդդիմանամք· զի դըրեալ է թէ զխրատ ամբարիշտք անգոսնեն։

Այլ զի գրեցէքն բաւական ունել զհարցն աւանդ, և այնր աւանդասպահ զիս տացէք լինել. և շնորհ ունիմ բարւոք վկայութեան ձերոյ: Այլ հարցանեմք եղբայրաբար սիրով, եթէ զո՞րս 'ի սրբոց հարցն գնէք աստանօր, զի զայս պատուիրան աւանդեցին մեզ՝ հակառակասէր լինել և կռուող, միոյ գլխոյ անդամք ելով՝ ասել ձեռաց ցոտն, թէ չես ինձ պիտոյ, և չես աստէն յիմոյս մարմնոյ: Եւ կամ միոյ մօր որդւք՝ հակառակ գտանել իրերաց և անիծանել զմիմեանս. և ասել ցծնողսն՝ թէ ընդէ՞ր երկնեցէք և ծնայք զիս: Եւ կամ միոյ հովուի հօտ՝ բաժանել յերկուս և յառնել 'ի վերայ միմեանց, և խածատել զիրեարս, և կոչել միոյն զմիւսն գայլս և յափշտակողս. մկրտիլ յայլ Քրիստոս՝ հակառակ միմեանց և օտարք համարել 'ի հաղորդութենէ, որով Ճանաչի ժամանակս այս երկրորդ կուապաշտութիւն:

Արդ եթէ առաջին հայր սուրբ կոչելի է մեզ զմերն սուրբ Լուսաւորիչ և խոստովանող քահանայապետն Գրիգորիոս, պարտիմք ըդմտաւ ածել եթէ նա վճարեցա՞ւ այսու օրինօք, թէ ոչ· արժանաւոր անձն սրբութեամբ և ճգնութբ̅ գտանի՞ յազգս երկրածնաց իբրև զնա, թէ ոչ։ Մ՞իթէ բաւական համարեցա՞ւ զայս անձին իւրում՝ կամ զերկան, կամ զչարչարանն բազմապատիկ, կամ զբանտարգելութիւնն բազմօրեայ ՚ի խոր վիրապին և ՚ի մէջ թունաւորացն, կամ զհրեշտակին սրբոյ բնակցութիւնն, կամ զբազմապատիկ շնորհսն պարգևեալ նմա ՚ի վերայ տանս Հայոց։ Մ՞իթէ ամբարտաւանեցա՞ւ այսու ամենայնիւ, և կամ բաւական համարեցա՞ւ անձին իւրում զայս ՚ի պատիւ աստիճանի, և կամ թէ ո՞չ խոնարհ սրտիւ և աներկբայ մտօք եառ յանձն գնալ ՚ի Կեսարիա, և դարձեալ ՚ի Հռոմ, և առնուլ ձեռնադրութիւն ՚ի սրբոյն Սեղբեստրոսէ· և կամ թէ իւրքն ամենայն ո՞չ կացին ՚ի նոյն միաբանութեան սէր։ Եւ ո՞չ չոգաւ Արիստակէս ՚ի սուրբ ժողովն Նիկիոյ· և կամ թէ մեր սուրբն Ներսէս ո՞չ վարեցաւ այսու օրինակաւ, և ո՛չ գտաւ առ մեծին Թէոդոսիւ 'ի Կոստանդինուպօլիս՝ 'ի վանուցին հոգեմարտին Մակեդոնի, հաղորդ սոցա և համախորհուրդ: Եւ կամ մերն Սահակ սուրբ հայրապետ՝ ո՛չ եղև գրով ձեռին իւրոյ հաղորդ սուրբ ժողովոյն Եփեսոսի. և կամ թէ խոտա՞ն համարեցաւ զսոսա և մինչև 'ի ժողովն՝ որ 'ի Քաղկեդոն եղև առ Մարկիանոսիւ և Վաղենտինիանոսիւ: Արդ քննելի է, եթէ ո՞ ոք 'ի մերոց սրբոց հարցն հանդիպեցաւ անդ. և կամ յումմէ՞ արդեօք տեղեկացաք զնոցայն աղանդ, և զմերս ճըշմարտութիւն. և կամ ո՞րով լեզուաւ ուսոյց և ետ մեզ Դէոսկորոս սուրբ, և Տիմոթէոս կուզն, և Պետրոս գայլն: Մի՞թէ Անեցի՞ք էին սոքա և Զորոյգետացի՞ք, կամ Վաղարշապատեցի՞ք և Դըւնեցի՞ք, կամ հայադաւա՞նք լեզուաւ և ազգաւ: Խնդրեմք, եթէ զի՞արդ այնչափ կապեցաք 'ի բանս սոցա, և վասն որո՞յ իրիք ուղղութեան՝ աղաչեմ զձեզ՝ եթէ 'ի մէնջ զանխլացաւ, խելամուտ առնել զմեզ սիրով:

Դարձեալ թէ այսքիկ վերոյգրեալ սուրբ հարքս այսպէս՝ և որք զհետ նոցա, խնդրելի է եթէ յետ այսորիկ ո՞վ ոք ՚ի հարցն սրբոց յայսոսիկ գրգռեցաւ: Եթէ զՅովհաննէս ասեմք զԻմաստասէրն՝ որ և աթոռակալ սրբոյ աթոռոյս, և նա այսոցիկ հետևեցաւ շաւղաց և ուղղափառութեան. և մերն այլ սուրբ նախնիք զնորայն ընկալան խոստովանութիւն, և ձեռնագրեցին անխախտելի մնալ գիրս, Գրիգոր Վկայասէր և Բարսեղ հետևող նորին, և միւս Գրիգորիս և Ներսէս մերս հարք. և է յարկեղս գրոց մերոց ընկալեալ ՚ի նոցանէ: Ի մի երես և ՚ի մի բան զազգ մի ողջոյն անմարթ է գտանել:

Եւ մեք յայն սակս խնդիր արարաք ձերոց իմաստախոհ անձանց, զի ՚ի միաբան նստեալ, և բերան առ բերան խօսեցեալ, լուծցուք զխընդիրս սոցա. կամ շահեսցուք և կամ շահեցուսցուք զեղբարս, և կամ զթշնամիս՝ թէ ասելի է: Այլ ՚ի բանս նոցա ոչ կապեցաք փառասէր և անձնիշխան կամօք, որպէս կարծեցիք․ ապա զոր առժամայն պարտ վարկաք, գրեցաք Նոցա սակաւուք՝ զոր 'ի մերոցն ընկալաք և գտաւ առ մեզ․ և զայն առ 'ի ձէնջ ընկալաք համարձակութիւն, զհետ մերոյն Ստեփանոսի գրով և բանիւ հաւանել մերումն ։ Վասն որոյ վերջին գրեալքս՝ կարծիս ետուն մեզ եթէ 'ի պատրանս գրեցան առաջինքն, և ոչ 'ի բոլոր սրտէ․ և վասն այսորիկ հարկ եղև մեզ յայտնել ձեզ 'ի ձեռն գրոյ և զայժմու գրեալքս, և ոչ առաքեալ․ զի թերևս լուծցէ զկարծիս մտաց ձերոց, և զմերս հաստատեսցէ Ճշմարիտ հայութիւն, և զհամաձայնութիւն ձեզ ։

Այլ զի գրեցէքն՝ եթէ յերեկոյացեալն եմք ժամու, թողումք գնալ առ իւրաքանչիւր դատաւոր․ և այս բան ոչ թուեցաւ մեզ իբրև կատարելոց մտաց ասացեալ ։ Երեկոյացեալ ժամ առ Աստուած և առ արարածս դնել, և դադարումն առնուլ յաստուածաշունչ գրոց քննութենէ, և որ 'ի նոսա բարեացն են մասունք, և լուծումն առնել սիրոյ և խաղաղութեան, և այլ և այլ դատաւորս կոչել իւրաքանչիւր. կարծեմ եթէ տէրունեան առակաւոր բան յանդիմանէ զձեզ առ այս, որ առ մշակս այգւոյն, և վարձատրութիւն առատապարգև տուողին, որ հաւասարապարգև առնի առաւօտեանքն և հասարակօրեայքն և երեկոյինքն: Զի եթէ զձերդ կոչէք ժամանակ երեկոյ յաղագս ծերութեան և հասարակելոյ զաւուրդ, նա կատարեալ մտաց յոյս՝ ոչ այսպէս յերկարաձգէ զտկար բնութիւն. զի այս մինչև 'ի նմին փոփոխումն օդոյ է համարելի: Այլ պարտի ծերոյն լինել ծերութեամն 'ի ձէթ պարարտութեան, ըստ Դաւթայ և Սողոմոնի, և գլխաւորին առաքելոց, զգաստութեամբ և պարկեշտութեամբ լուսատու լինել բազմաց. և մի՛ լսել եթէ Լաւ է մանուկ իմաստուն՝ քան զծեր անմիտ: Իսկ եթէ զթիւ աւուրց կատարածի աշխարհես տայցէք երեկոյ, անմարթ է յայս նախաձեռնել. զի զոր ո՛չ հրեշտակք երկնից խմացան և ո՛չ Որդի, 'ի մարդկանէ անհետազօտելի է: Իսկ եթէ զաւուրցս չարութիւն կոչէք երեկոյ և զտէրութիւն բռնակալաց, անտեղի է և այս. զի ամենայն սրբոց և բարեպաշտից անձինք դառնագոյն ժամանակօք փորձեցան և մաքրեցան որպէս զոսկի հրով, և արդարացան: Եւ այս առ հնովքն և նորովքս. որպէս մարգարէն Եսայի, զի երբեմն աղօթէր ասելով. Ի գիշերաց կանխէ հոգի իմ առաւօտ առնել առ քեզ Աստուած, զի լոյս են հրամանք քո. և չիք 'ի նմա երեկոյ, և ոչ խաւար: Նոյնպէս և Դաւիթ ասէ յաղօթելն. Ես առ Աստուած կարդացի ընդ երեկոյս, 'ի վաղորդեան, և 'ի հասարակ աւուր: Եւ դարձեալ թէ Ի խորոց կարդացի առ քեզ: Նոյնպէս և այլք 'ի սրբոց մարգարէիցն, Ամբակում, Երեմիա և Դանիէլ. ոմն 'ի գբոյ առիւծուցն, և այլ ոմն 'ի գբոյ կապանացն աղօթէին արտասուօք և յօգւոց հանէին վասն խաղաղութե̃ ժողովըրդեանս, եթէ Մինչև յե՞րբ տէր անտես առնես և ոչ լսես ինձ. և թէ՝ Որովայն իմ ցաւի, և զգայարանք իմ ձմլին. և թէ Ո՛տայր գլխոյ իմոյ ջուր, և աչաց իմոց աղբիւրս արտասուաց, լալ զբեկումն ժողովրդեան իմոյ։ Կարծեմ թէ առայս աղէտ տարակուսի՝ զնեղութի̃ս անձանց իւրեանց ոչ ինչ համարէին։ Պարտիմք ձայնակից լինել և երից մանկանցն, և'ի բոցոյ տապոյս աղաղակել առ տէր և ասել, եթէ Օրհնեալ ես տէր Աստուած, զի արդարութեամբ և յիրաւի ածեր 'ի վերայ մեր զայս ամենայն. զի մեղաք, անօրինեցաք և ապստամբ եղաք 'ի քէն. և առաւել մեղաք, և յամօթ և նախատինք եղաք ամենայն ծառայից քոց։ Խնդրել իշխան մարգարէ մեզ և առաջնորդ. նուիրել զաղօթս սրբոց 'ի բուրվառս խնկոց անուշից, և տալ զանձն ողջակէզ ընդունելի Աստուծոյ։

Եւ 'ի նորոց չունիմ պէտս յերկարելոյ. զի որ 'ի Տեառնէն են բանք՝ ոչ զանխլանայ առ 'ի ձէնջ, թէ որպէս պարտ է լինել հովուաց և սպասաւորաց բանին։ Հովիւ քաջ, ասէ, զանձն իւր դնէ 'ի վերայ ոչխարաց. և իմաստուն անտես 'ի ժամու տայ զկերակուրն։ Եւ անմիան լսէ՝ թէ Ծառայ չար և վատ, պարտ էիր արկանել զարծաթն 'ի սեղանաւորս, լինել լոյս և աղ և ճրագ 'ի վերայ բարձր աշտանակի, և ոչ ընդ գրուանաւ։ Գրէ և սուրբ առաքեալն Պաւղոս 'ի զգուշութ͞ե մեզ, թէ Ուստի եղբարք սուրբք, երկնաւոր կոչմանն ժառանգորդք, նայեցարուք ընդ առաքեալն և ընդ քահանայապետ խոստովանութ͞ե մերոյ ընդ Յիսուս Քրիստոս, որ հաւատարիմ է արարչին իւրոյ։ Հարցանեմ աստանօր թէ ո՞ր բնութեան է արարիչ Աստուած, որ հաւատարիմ է որպէս Մովսէս ամենայն տան նորա։ Դարձեալ թէ Ունիմք քահանայապետ անցեալ ընդ երկինս զՅ͞ս զՈրդին Աստուծոյ. և այնպիսի ունիմք քահանայապետ՝

որ նստաւ ընդ աջմէ մեծութեան 'ի բարձունս, սրբութեանցն պաշտօնեայ և խորանին ճշմարտութեան, զոր Աստուած հաստատեաց, և ոչ մարդ: Զի ամենայն քահանայապետ վասն մատուցանելոյ զոհս և զպատարագս կայ· ուստի և հարկ է նմա ունել ինչ՝ զոր մատուցանիցէ: Գրէ դարձեալ և առ Տիմոթէոս, թէ Որպէս աղաչեցի զքեզ մինչ երթային 'ի Մակեդոնիա, զի պատուէր տացես ոմանց չլինել օտարուսմունս և տոհմաթիւս անչափս· զի գլուխ պատուիրանին սէր է 'ի սուրբ սրտէ և 'ի մտաց բարեաց և յանկեղծաւոր հաւատոց: Եւ այլ՝ թէ Ոչ ոք զինուորեալ ընդ կեանս աշխարհիս պատաղի՝ եթէ զօրավարին հաճոյ լինիցի: Եւ թէ մարտիկ ոք կոչեսցի, ոչ պսակի, եթէ ոչ ըստ օրինին մարտիցէ· սինդէ հեգնելումն եթէ իմացիք զոր ասեմ: Գրէ համասփիւռ և Պետրոս գլխաւորն առաքելոց՝ թէ Զերիցունս աղաչեմ իբրև զերիցակից և վկայ չարչարանացն Քրիստոսի, արածել զհաւատացեալ 'ի մեզ զհօտն Աստուծոյ, վերակացու լինել բարուք օրինակօք և անձնիշխան տէրութեամբ ձգել 'ի մեզ իբրև առասանօք բազմադիմի ախտիւք մեր․ զի երևումն իցէ հովուապետին, և փոխարէնս եմք ընդունելոց բարւոյն և չարին:

Ունիմք 'ի մեզ և զբանս սրբոյն Բարսղի, և հարցմանն պատասխանի լուեալ՝ թէ որպէս պարտ է լինել առաջնորդաց և մատուցակաց բանին: Եւ զի՞նչ ասացից․ զի յանբաւս և յանհունս հասանեն այսց բանից ձգմունք, և որք նմանք սոցա: Եւ մեր զայս ամենայն գիտելով՝ անգիտանա՞մք զանձինս՝ երեկոյ կոչելով զժամանակս, և 'ի հարցն աւանդապահութիւն վստահանալով: Եւ զայս ոչ ածեմք զմտաւ, թէ կարող է Աստուած 'ի քարանցս յայսցանէ յարուցանել որդիս Աբրահամու․ և թէ հատանելոց է տապարաւ ազդօղ բանին զամենայն ծառ որ ոչ առնէ պտուղ բարուք, և հաճոյ տնկողին: Զորս աղաչեմք մերովք սուրբ ժողովովքս՝ զարթնուլ որպէս 'ի քնոյ 'ի թմրութենէ ծուլութեանդ և յանյուսութենէդ։ Իշխանք էք և հազարապետք խորոցն Աստուծոյ, և այժմ խնդիր է 'ի մէջ հազարապետացդ՝ եթէ ոք հաւատարիմ գտցի։ Աչք էք՝ գլխոյս լուսատու, և ձեռք մարմնոյս կերակրիչք, բան և ձայն լեզուի շարժողի։ Արդ այսր պարտիք ժամանել, զի թերևս թիւրեալ իցէ գլխոյս 'ի լուսոյ պակասեալ, և կամ տկարացեալ իցէ մարմինս յոչ ունելոյն կերակրիչ և դարմանիչ ձեռս, և կամ դատարկանալ լեզուիս շարժումն՝ առանց ձայնի և անբան մնացեալ։ Գրեալ են անուանք ձեր 'ի գիրս գիտնականաց՝ ասողաց և յանդիմանողաց. պարտիք զգիրն գործով արդարացուցանել։ Սիւնք էք աստուածային տաճարին շինելոյ արեամբ Որդւոյ նորա. գիտելի է, զի 'ի բացեայ լինելով սեանցն՝ քակտի տաճարն։ Մշակք էք աստուածային այգւոյն, արդ փութապէս այսր հասէք. եթէ յամելոյ է՝ կտրեցէք, եթէ սրբելոյ՝ մաքրեցէք. զվաստակսն մի՛ համարիք յաշխատանս անձանց, զի քաղցրահամ բաժակ բերցէ ճարտարապետին, և մի՛ քացախուտ: Եղի՛ք էք աստուածային անդոյս. աշխատասէր մտօք և հնազանդ սրտիւ պարտիք վաստակել, զի բերցէ հաց սուրբ և կենդանական: Ամոլք էք պատուական սայլիս, որ դատարկացեալ մնայ 'ի շրջեցուցանելոյ զկտակարանս Աստուծոյ. արագ այսր ժամանեցէք, զի յառաջ եղեալ հանգիցէ 'ի տուն Աբիաթարայ 'ի բլուրս հաճելիս Աստուծոյ:

Զայնէ առաքեալն Պաւղոս, թէ Զայսգիտասջիք վասն ժամանակիս, զի ժամ իսկ է 'ի քնոյ զարթնուլ. զի այժմ մերձ է մեզ փրկութիւն, քան յորժամ հաւատացաք: Լցաւ երկիր ամենայն գիտութ̃ե Տեառն իբրև զբազում ջուրս որ ծածկեն զծով. և գիշեր տգիտութեանն մերժեցաւ և էանց. պարտիմք շրջել զգաստս և արթունս, և զգենուլ զզէնն լուսոյ: Զի չէն և պայծառ են եկեղեցիք Տեառն, որ ըստ օրէ աճեն և ճոխանան ՚ի Քրիստոս. և ագիտութիւն հեռի է յամենայն ազգաց քրիստոնէից. և վաղ ուրեմն տեսին զլոյս մեծ գիտութեան ժողովուրդն որ նստէին ՚ի խաւարի և ՚ի ստուերս մահու. և ամենայն ոք ծարաւի է խաղաղութեան և սիրոյ աստուածային, Փռանկք, Յոյնք, Ասորիացիք, Նեստորականք, և Խամայելացիք որ և Հաշիշեք: Յարաժամ դիր և բանն նոցա ոչ դադարէ առ ՚ի մէնջ վասն խնդրոյ մեր, և բազումք կան յարկեղս գրոց մեր:

Բայց մեր է անկարութիւնն առ բարի գործս յայս, զի հատ մանանխոյ անգործ մնայ ՚ի մեզ. ոչ եռացուցանէ զսիրտս ջերմութեամբ, և ոչ տայ հեղուլ զսիրոյն արտօսր յաչաց: Մանաւանդ ասելի է, թէ և ինքն իսկ ոչ գտանի ՚ի միջի մերում. ապա թէ ոչ, զլեռնացեալ անհաւատութիւնն փոփոխէաք և հարթէաք, զցաւալից թթենին խլէաք և ՚ի ծով ընկենուաք. որչափ և նուաստ թուխք յաչս՝ բուսանէաք յաստուածային պարտէզն և լինէաք ծառ մեծ, մինչ գալ վայրենի Թռչնոց և հանգչել յոստս մեր։ Մոռացեալ եմք զանզաւակութիւն կամօք և յօժարութեամբ, և անկեալ կամք կենդանւոյն մեռեալ․ կէս ննջեմք, կէս յօրանջեմք, և ասեմք յանձինս մեր թէ ընդ երեկս է․ և ոչ լսեմք Պաւղոսի ձայնին, որ ասէ թէ Ահա ժամանակ ընդունելի, ահա օր փրկութեան․ մի և մի իւիք տայցէք պատճառս, զի մի արատեսցի պաշտօնն։ Այլ զի ընծայեցայք 'ի պաշտօնն Աստուծոյ, պարտիք ընդդէմ կալ ամենայն յօժարութեամբ, և ոչ 'ի հարկէ։

Յամենայն Հայոց ազգաց եկեղեցիքս որ յայդ կողմանքդ են, մանաւանդ թէ 'ի բոլոր սեռս՝ խաղաղութիւն, անդորրութիւն ձեզ է պարգևեալ 'ի վերուստ։ Թագաւոր քրիստոսասէր, և իշխանք բարեպաշտօնք, պարգևք գաւառաց և անդոց՝ հոգևոր և մարմնաւոր հանդերձ ազատութեամբ․ և դու՛ք կամաւ անփութայք և անտես առնէք զբեկումն ազգիս, և ստայօղ պատճառօք հրաժարէք 'ի գլխոյս կոչմանէ և ասէք՝ թէ գիշեր է և ոչ տիւ· տկար եմք մարմնով և ծերք ժամանակաւ· և վերնագիր նամակի ձերոյ ընթերցցի առ 'ի մէնջ, եթէ 'ի մայրաքաղաք և 'ի նշանաւոր ուխտիս Հաղբատայ: Մայրաքաղաքացին Պաւղոս զայս ոչ ասաց· այլ թէպէտ և յԵրուսաղէմ մինչև 'ի Լիւրիկիա ելից զաւետարանն Աստուծոյ, բայց յետոյ սրով գլխատեցաւ, և ասաց թէ ծառայ անպիտան եմ: Պետրոս թէ ուրացաւ՝ ապաշխարեաց, և թէ փախեաւ՝ դարձեալ խաչեցաւ: Փիլիպպոս թէ անիծեաց և խորոց մատնեաց, անձամբն ելից զպարտսն, և անարատին արեանն կարօտացաւ: Վարդապետ և տեսուչ՝ գործոյն է անուն և ոչ մարմնոյն· երբ դուք հրաժարէք, յառաջ զո՞վ կոչեմք, զԱյրարատեա՞նդ եթէ զԿարնեցիք, եթէ զՏարօնեցիքն՝ որ նեղեալ և զզուեալ են 'ի հարկապահանջ բռնակալացն, և կարօտին միայն աւուրն պարենի:

Հրաւէր կոչման մերոյ այսու աղագաւ ծանուցի ձեզ, զի 'ի միասին եկեալ խորհեսցուք զորժանն ամենայն 'ի պէտս լրութեան եկեղեցւոյ ներքոյ և արտաքոյ, յանձինս և յօտարս լեզուաւ: Յառաջ կոչեն զմեզ Յոյնք մի անգամ և երկիցս. արդ ո՞չ է պարտ արիաբար ընդդէմ կալ նոցա, կամ հաւանել կամ հաւանեցուցանել: Եթէ երկու բնութիւն ասեն չարաչար, ըմբերանեսցուք և յանդիմանեսցուք. եթէ դարձցին՝ ընկալցուք և շահեսցուք զեղբարսն. եթէ լուծան 'ի պէսպէս աղտեղի գործս մարմնոյ, լիցուք պատճառ զղջման նոցա. եթէ ներքինեօք և ներքինապետօք վարին, խրատեսցուք զաղտեղի գործս նոցա, թերևս զկծեսցին սրտիւք և հայեսցին յանձինս: Թէ և ոչ այլ ինչ՝ գո՛նեայ զմերս լաւութիւն և առողջութիւն ծանուսցուք նոցա: Գոն և յոլովք ընդ իշխանութեամբ նոցա 'ի մերայինս ազգէ քրիստոնեայք, և էին 'ի մեծի տարակուսանս՝ յայս հարցափորձութիւն և տղմուկ· և թէ և փոքր ինչ թեթևացաւ այժմ, բայց կատարեալն ոչ է բարձեալ։ Թէ և նոցա օգնեմք, չգտանիմք անբաժին ինչ 'ի ճշմարիտ վարձատուէն Քրիստոսէ, որում փառք, իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից· Ամէն։

ՏՆ· ՆԵՐՍԵՍԻ
ԼԱՄԲՐՈՆԱՑՒՈՅ
ՏԱՐՍՈՆԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԱՏԵՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ
ԵՒ
ԹՈՒՂԹ ԵՒ ՃԱՌՔ

ՅԱՍՏՈՒԱԾԱԽՈՒՄԲ

ԵՒ

Ի ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՆ

ՏԱՐՍՈՆԻ

ՈՐ ԵՂԵՒ Ի ՀԱՄԱՀՐԵՇՏԱԿ
ԿԱԹՈՂԻԿՈՍԷՆ ՀԱՅՈՑ ԳՐԻԳՈՐԷ
ՅԵՂԲՕՐՈՐԴՒՈՅ
ՍՐԲՈՅՆ ՆԵՐՍԵՍԻ ԿԼԱՅԵՑՒՈՅ,
ԵՒ Ի ՔՐԻՍՏՈՍԱՊՍԱԿ ԱՐՔԱՅԷՆ
ՀԱՅՈՑ ԼԵՒՈՆԷ
ՍԱԿՍ ՄԻՈՒԹԵԱՆ

ԱՏԵՆԱԿԱՆ ԽՕՍՔ

ՄԵԾԻ ԵՒ ՍՐԲՈՅՆ ՆԵՐՍԵՍԻ

ԱՅՆՄ ԱՍՏՈՒԱԾԱՊԱՀ ՔԱՂԱՔԻ
ԱԹՈՌԱԿԱԼԻ
ԵՒ
ԱՍՏՈՒԱԾԱԽՕՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ

ՏԵԱՌՆ
ՆԵՐՍԵՍԻ ԼԱՄԲՐՈՆԱՑՒՈՅ
ԱՏԵՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Ո՛վ հարք սուրբք և վարդապետք ճշմարտութե՟ն. ո՛վ Քրիստոսի ժողովրդեանն գլուխք և հովիւք. ո՛վ տանն Աստուծոյ վերակացուք և մատակարարք, զոր տեսանեմ այսօր գումարեալ 'ի մի հունձ և 'ի մի մարմին, և առ գլուխս հանուրց պատկանեալ։ Ո՞վ զձեզ ած 'ի մի՝ 'ի խաղաղասնաւահանգիստ, խաղաղարարք տիեզերաց. բայց թէ որ յերկնիցն տուաւ մեզ խաղաղութիւն Հոգին սուրբ։ Եւ ո՞ր աղագաւ, բայց թէ առ սկիզբն առնել շինութեան քակեալ և կործանեալ տաճարին Աստուծոյ, զոր սկզբնա-

չարին Նաբուգոդոնոսոր տապալեաց: Այն որ երբեմն 'ի վաղ ժամանակս յաւար էառ զսորա սրբութեանն մաքուր և սուրբ սպաս պաշտամանն, զոսկեղէնն ասեմ և զարծաթեղէնն, և ետ որդւոց իւրոց և հարճից՝ անմաքուր խրախճանութեանցն ըմպելիս: Անդ էաք և մեք գերեալք արդարև, 'ի մէջ ուռեացն անպտղութե կախեալք զկտակարանս Աստուծոյ մերոյ, որդիքս Սիոնի, և հառաչէաք արտասուօք 'ի յանողորմ տառապանսն: Լռեցեալ էին և լեզուք մեր 'ի հաճոյական Աստուծոյ փառաբանութենէն. քանզի ոչ արժէր վերին խաղաղութեանն Երուսաղեմի որդւոց՝ յօտար երկիր խառնակութեան երգել զԱստուծոյ մերոյ օրհնութիւնսն:

Բայց արդ լցաւ ժամանակ բարկութեանն, և չափ մեղանացն՝ որոյ փոխանակ պանդխտէաք 'ի ծառայութեանն՝ տեղի ետ: Կատարեցան ամքն եօթանասներորդ, զոր խօսեցաւ Աստուած բերանով Երեմիայն մարգարէի։ Հնչեցին նախ քան զայս հոգւոյն Աստուծոյ Անգէաս և Զաքարիաս. եղեն աւետարանիչք մեզ դարձին և վերստին փրկութեանն. զփառս վերջին տաճարիս՝ որոյ հանդերձեալ էք լինել նորոգիչք, առաւել քան զառաջնոյն գուշակեցին արտափայլեալ։ Նորա այս Յեսու Յովսեդեկեայ առ 'ի գլուխ զգեղազարդն պսակ. զարթոյց հոգին Աստուծոյ զԶօրաբաբէլն Սաղաթիէլի. և ահա եղեն մեզ գերեդարձք և առաջնորդք յԵրուսաղէմ։ Ուստի և տեսանեմ պայծառ զամենեցուն ձեր զդէմս. քանզի ահա հասեալ են ոտք մեր առ դրունս Սիոնի. սակայն չև ևս զկատարեալն ունիմք ուրախութին սեպհական։ Զի ո՞րպէս այս, մինչդեռ տուն Աստուծոյ մերոյ քակեալ և կործանեալ տեսանի. զիա՞րդ ցնծութիւն անվթար, յորժամ փոխանակ զարդուցն շքեղից տաճարին՝ միայն ըղխանձողսն տեսանեմք 'ի ճարակմանէ հրոյն մնացեալ 'ի Նաբուզարդանոյ: Սակայն մի՛ վհատիք, քաջս լերուք, ճարտարապետք իմաստունք, բուռն հարէք նորոգել ըզբնակութիւն Աստուծոյ ձերոյ. ինքն զձեզ ած, և ինքն զայս գործ հրամայէ բերանովք սրբոցն մարգարէից կատարել: Ըստ որում և եկեալ Զաքարիաս խօսի առ մեզ բանիւն Աստուծոյ:

Ասա, ով երանելի մարգարէ, է՞ մեզ կարելի սակաւաւորացս և նորոգ զերծելոցս՝ զճշմարիտ Սողոմոնի զտաճարս գործեալ ըստ առաջին փառացն իւրոց նորոգել: Պատասխանէ մարգարէս. Այսպէս ասէ տէր ամենակալ. զօրասցին ձեռք ձեր, որ լուէք զբանս զայսոսիկ յաւուրս յայսմիկ՝ 'ի բերանոյ իմոյ. և եղիցի որպէս էիք յանէծս 'ի մէջ ազգաց տունդ Յակոբայ և տունդ Իսրայէլի, նոյնպէս ապրեցուցից զձեզ, և եղիջիք յօրհնութիւն: Քաջալերեցարուք, և զօրասցին ձեռք ձեր. զի այսպէս ասէ տէր ամենակալ. Որպէս 'ի բարկացուցանել զիս հարցն ձերոց չար-

չարեցին զձեզ, այսպէս և այժմ զղջացայ․ և նոյնպէս պատրաստեալ եմ և խորհեալ եմ բարի առնել յաւուրս յայսմիկ՝ Երուսաղէմի և տանդ Յուդայ․ քաջալերեցարուք։ Եւ այս բանք են զոր առնիցէք․ խօսեցարուք զճշմարտութիւն իւրաքանչիւր ընդ ընկերի իւրում, և դատաստան արդարութեան և խաղաղութեան դատեցէք 'ի դրունս ձեր։ Եւ իւրաքանչիւր ընդ ընկերի իւրում զառաջին չարիան մի՛ խորհիք դուք 'ի սիրտս ձեր․ և զերդումն սուտ մի՛ սիրէք․ զի զայս ամենայն ատեցի, ասէ տէր ամենակալ։ Այլ դիք զսիրտս ձեր 'ի ճանապարհս ձեր, ելէք 'ի լեառն, հարէք փայտ և շինեցէք զտունդ․ և հաճեցայց դովաւ և փառաւորեցայց, ասէ Տէր։

Արդ ահա լուայք դուք ամենեքեան ձայնի տեառն Աստուծոյ ձերոյ․ այնմ՝ որ ժողովեաց զձեզ 'ի չորից հողմոց երկնից։ Սիոնի դստերք, որք մնայք 'ի Բաբելոն խառնակութեան և խռովութեանն

Քաղան, և զարթեայք ահա 'ի կամս սրբոյ մեր քահանայապետին, մնացորդք ամենայն ժողովրդեանդ, սկսեալք գործել զգործ տան Աստուծոյ մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Եւ թէ բարւոք թուի յաչս ձեր, նախ քան զայս ընկալարուք զխորհըրդակցութիւն ուրումն Եղբօր օրէնսգիտի. զմանկունս ծնեալ մեզ 'ի Քաղդէացւոց սերմանէն՝ զվլմի հարցուք. զխղճս երանութեան հարցն մերոց՝ մեք սեպհականեսցուք, զի մի՛ բարկասցի Աստուածն մեր, դեռ ևս տեսեալ զմեզ յօրինաց Նորին խոտորեալս։ Մանաւանդ զի մի՛ սատան լիցին մեզ 'ի բարւոք գործառնութեան սրբոյ տաճարիս շինութեան՝ ծնունդք օտարացն։ Եւ ապա լինիցի մեզ վայելչապէս զշինուածոյ տաճարիս բուռն հարկանել։ Յետ այսորիկ առատ գտցուք զպաշտպանութիւն ամենաբաւական ձեռինն՝ 'ի տան իւրոյ Նորոգութիւն։

Այլ թերևս ոք ընդարձակութե ապացուցիս բամբասէ զմեզ արտաքոյ արշաւել խորհրդոյս զօրութեան։ Ինձ ոչ բնաւ այս կարծիք, որ հաւանեալս եմ ճշմարտութեանն՝ որ 'ի Պաւղոսէ վերաձայնի․ Այն ամենայն օրինակաւ, առէ, լինէր առ նոսա, և գրեցաւ 'ի մեր վարդապետութիւն։ Քանզի թէ հաւատամք զերծանել արեամբ ճշմարիտ գառինն յաներևոյթ փարաւոնէ՝ որպէս և նոքա 'ի զգալոյն, և անցանել ընդ ծով մեղացն՝ որպէս և նոքա ընդ Կարմիրն, և ունել առաջնորդ զհոգևոր վէմն՝ որպէս և նոքա զմարմնաւորն, և մտանել Քրիստոսիւ Յիսուսիւ յերկիրն՝ որպէս և նոքա Յեսուաւ Նաւեայ յերկիրն աւետեաց․ և եղև այս ամենայն ընդ մեզ սիրով և հաւատով, որպէս եղև ճշմարտապէս․ և աղաղակեն ամենայն գիրք աստուածաշունչք, թէ զստուեր հանդերձելոց բարեացս նկարագրեցին օրէնքն․ ապա և տաճար չլինեցաւ 'ի մէջ մեր Աստուծոյ՝ որպէս և առ նոքօք․ և զխորան վկայութեան շրջեցուցանէաք ընդ մեզ յառաջ քան զնոյն՝ մինչդեռ յանապատան պանդխտէաք :

Եւ ընդէ՞ր է ինձ պատրուակաւ զընթացս բանիս 'ի յառաջ ձգել, և ոչ մաքուր հաւատոյ ձեր առաջի զայն մերկացուցանել: Կանգնեցին մեզ առաքեալքն սուրբք հրամանաւն Քրիստոսի, մինչդեռ յանապատ հեթանոսացն հալածանաց շրջէաք, խորան վկայութեան մաքուր հաւատոյ. ըստ որում ասէ առաքեալ. Ես հիմն եդի զՅիսուս Քրիստոս. արդ իւրաքանչիւր ոք զգոյշ լինիցի 'ի շինելն. զի դուք էք տաճար Աստուծոյ կենդանւոյ, և հոգի Աստուծոյ բնակեալ է 'ի ձեզ: Եւ Քրիստոս իբրև զորդի իշխէ 'ի վերայ տան իւրոյ. որոյ տունն մեք իսկ եմք, և տանս քահանայապետ՝ Քրիստոս: Զայս տուն հաւատոյ, զոր 'ի վերայ Քրիստոսի շինեցին նոքա, և Քրիստոս 'ի վերայ նորեանց. Ի վերայ այդր, ասէ, վիմի շինեցից զեկեղեցի իմ, շըրջեցուցին հարքն մեր բազում ժամանակս յանապատ կռապաշտութեանն հալածանաց փառօք և պատուով: Եւ տատ և 'ի ներքոյ այսր հաւատոյ իմանալիս տան, յորում էր տախտակ աստուածագիծ մարմնոյն Քրիստոսի, և զաւազան նորին ծաղկեալ, վկայքն պատարագեցան, մարտիրոսքն նահատակեցան, քահանայապետքն սուրբք զառաքինութիւն նոցա Աստուծոյ նուիրեցին, մինչև կամքն Աստուծոյ քաղցրացաւ. և որպէս զնոսա յերկերն պարգևաց՝ ած զմեզ 'ի խաղաղութիւն եկեղեցւոյ առ բարեպաշտ թագաւորօքն: Վասն այսորիկ որպէս Սողոմոն զդիւրաշրջելի տաճար խորանին կանգնեաց, և յարձանաց տուն Աստուծոյ հաստատեաց, այսպէս և բարեպաշտ արքայն Կոստանդիանոս զայսր անդր տարբերեալ տուն հաւատոյ եկեղեցւոյ Քրիստոսի՝ 'ի ձեռն տիեզերական ժողովոյն Նիկիոյ՝ անխախտելի ամրութեամբ ընդեալ հաստատեաց. և գրե՛ թէ նոր ձևացեալ պայծառացոյց զաղաւաղեալն 'ի պանդխտութեան հալածանացն անապատի, առաջին գեղոյն շքեղազարդեալ: Եւ շինեցաւ այս տաճար մեր ճշմարիտ հոգւոր առ Կոստանդիանոսիւ 'ի ձեռն սուրբ երեքհարիւր ութեւտասն հարցն, որպէս նոցայն զգալի առ Սողոմոնիւ. և գիրն եղծաւ, իսկ ճշմարտութիւն 'ի նոյն ձեւերանգոյ անվթար գեղեցկացաւ: Եւ խորանն վկայութեան շնորհացն Քրիստոսի՝ զոր առաքեալքն կանգնեցին և հետեւողքն շրջեցուցին, առ սովաւ անխախտելի պնդութեամբ 'ի ձեռն սրբոյ Ժողովոյն Նիկիոյ հիմնեցաւ: Եւ արկաւ ապա յայս տաճար գահոյք Աստուծոյ. ոչ սեղան ոսկեղէն քաւութեան, զոր Մովսէս հրամայեաց և Բեսելիէլ շինեաց, այլ հեզութիւն խոնարհութեան և սէրն նորա, զոր Քրիստոս հրամայեաց, և առաքեալքն նորին գործեցին և մեզ աւանդեցին: Հանգչէր 'ի սա նա՝ որ երբեմն չունէր տեղի ուր ըզգլուխն դնէր. հաճեցաւ 'ի սմա բնակել, քան 'ի կառս քերովբէականս: Իսկ յորժամ տեսին մարդիկ թէ տաճար Աստուծոյ եղեաք, և հոգին նորա սուրբ բնակեաց 'ի մեզ, փոխանակ անշունչ տարերաց իմաստնացեալք խորհրդով, որպէս յայնժամ ցեղքն Իսրայէլի, տային նիւթ խորանին Աստուծոյ, ոչ ոսկի, կապուտակ, կամ ծիրանի զգալի, այլ զանձինս իւրեանց. ոմն մաքրութեամբ, ոմն խոնարհութեամբ, ոմն վկայական արեամբ: Անուին ճարտարապետքն իմաստունք և գործէին սրբոց զառագաստ և զխորան վկայուե՟ աստուածութեանն Քրիստոսի: Ոչ զոք 'ի նոցանէ խոտրեալ մերժէին, թէ և յանպատկան նիւթոյ, թէ պղինձ, թէ մազ այծեաց, ըստ իւրում չափոյ և շնորհացն պատկանէին զնոսա 'ի նիւթ խորանին հաւատոցն. այսինքն, զի և պոռնիկք զղջացեալք՝ եղեն 'ի տուն Քրիստոսի զարդք, և մարդասպանք՝ ողորմութիւն գտեալք, և ուրացութեամբ սխացեալքն՝ և դարձեալ զղջացեալքն: Քանզի պիտոյ է ամենայնն 'ի զարդ խորանիս հասարակաց, թէ խուժթէ դուժ, թէ սկիւթացի. և ամենայնի 'ի Քրիստոս, և յամենայն Քրիստոս յարմարէր: Ոչ թէ յԵգիպտոսէ միայն խաբեցին և առին զայս նիւթս, այլ յԵրուսաղեմէ մինչև 'ի Լիւրիկէս, և 'ի հարաւոյ մինչև յԸռինիկուրս. և 'ի ժառանգութենէն Սեմայ՝ մինչև 'ի ծագս հիւսիսոյ տանն Յաբեթի հետխոսս ընթացեալ, զամենեսեան աշակերտեցին հոգւով զօրացեալքն և մարմնով տառապեալքն: Զհաւատոյ խորանս յերկրի կանգնեցին. որպէս զի ներգործութիւն գործոյն Աստուծոյ՝ տացի Աստուծոյ, և մի մարդկային մարմնոյ: Եւ զիա՞րդ մարդկան կարելի, որ 'ի հոգիացելոցն սրբոց կատարեցաւ հրաշալի. նոքա, որ զչորս անգիւն աշխարհի մարդ մի և անձն մի և շունչ մի և մարմին մի և տաճար մի Աստուծոյ իւրեանց արարին: Ո՛վ սքանչելեաց. գործ՝ առ որ ակարանայ բանութիւն թագաւորաց և ուժգնութիւն իշխանաց, վհատացեալքն և չարչարեալքն զօրեցին աւարտել.

նոքա՝ որք մեռեալ էին աշխարհի և կենդանիք Աստուծոյ , նոքա՝ յայս զարմանալի միակրօնութ՟իս ածեալ զամենեսեան փակեցին . նոքա՝ որք խաղաղարարք եղեն ոխեղերաց և յօդակապք'ի Քաղանբաժանելոցն:

Ի՞ր վասն այսպէս զօրացեալք . յայտ է , վասն զի անստգիւտ հաւատով 'ի գործն Աստուծոյ կանխեցին , զի առ հանդերձեալ փառսն միշտ արթնութեամբ հայէին : Ուստի և առհաւատչեայ փրկեցելոցն զանձինս յօժարութեամբ դնէին . Ըստ այնմ զոր գրէ առաքեալ . Նուիրիմ 'ի վերայ պատարագի և պաշտամանն ձերոյ , ուստի և խնդամ և ուրախակից եմ ամենեցուն ձեր: Եւ որպէս հի՟ն եկեղեցւոյ Պետրոս ասէր . Զանցս չարչարանաց եղբայրութ՟ե ձերոյ յանձինս կատարեալ: Այսպէս եղեալ պատկեր Քրիստոսի երկնաւոր խաղաղարարին արեան և խաչի , ապա կարացին հաստատել զնոյն 'ի յերկրի , աշակերտք սիրոյն սիրելի : Եւ խնդրեմք , զի՞նչ պտուղ խաղաղութ՟են յայնժամ՝

զոր ետուն աշխարհի. զի՞նչ այլ՝ բայց եթէ երկիրս երկին եղև, և փառքն որ 'ի բարձունս էր Աստուծոյ՝ և յերկիրս տարածեցաւ, և սրբաբանութիւնն սրովբէից 'ի բերանոյ հասարակաց մարդկութեան ելից զայս տաճար հաւատոց հոգևոր՝ անհանգիստ աղաղակաւ: Վկայքն զինէին և զօրագլուխքն մարզէին, առարկուքն պնդէին և վարժիչքն քաջալերէին. Ճգնութեամբն ժուժկալ լինէին և զողորմութիւնն առատացուցանէին. զսէրն տարածանէին և զծնեալն 'ի նմանէ որդիս յարգեալ պատուէին. միշտ երկնային մանանայիւն պարարեալք կերակրէին, և յաւետարանական վիմէն առոգեալք ծաղկէին:

Ետես բարձրեալն Աստուած և հաճեցաւ. հայեցաւ 'ի Նորն Հաբէլ՝ 'ի միածինն իւր որդի և 'ի պատարագ մարմնոյ իւրոյ յեկեղեցի, և հաստատեցաւ 'ի հոտ անուշից: Եհան զնոսա այնուհետև յանապատէ կռապաշտ իշխանացն հալածանաց, ևած 'ի Սաղիմ հոգևոր և մարմնաւոր խաղաղութեան 'ի ձեռըն բարեպաշտ Թագաւորաց: Ա՛ռ 'ի ձեռս զգաւազանն երկաթի, և սկսաւ նովաւ հովուել զեկեղեցի իւր, ոչ սաստկութեամբ որպէս զիսրայէլ, այլ քաղցրութբ և ողորմութեամբ· զի որ սաստիւն փշրեաց զնոսա, քաղցրութեամբն պնդեալ միացոյց զսոսա. և զի խրատն վարժեաց զորդիսն 'ի հնազանդութի, յետ այնորիկ և զսէրն նոցա սկսաւ Աստուած ցուցանել: Ամփոփեաց զսուր բարկութեանն և զբաժակն պղտոր՝ զոր արբոյց դստեր Սիոնի, և փորձեաց և ետ նոցա ընդ հոգևոր խաղաղութեանն և զմարմնոց անդորրութիւնն: Նկուն արար զանուրն կռապաշտից տէրութեն 'ի պարանոցէ նոցա, և արդար իրաւամբքն յարոյց զԹագաւորս արդարս և աստուածապաշտս: Ետ 'ի ձեռս նոցա զվրան ժամու հաւատոց իւրոց, զի անտաշ 'ի մարդկային հնարից արձանօքն հոգեւոր վիմաց զնոյն շինեսցեն: Ած 'ի ձեռն բարեպաշտն Կոստանդիանոսի, նոր մեր Սողոմոնի, 'ի չորից եղերաց աշխարհի զճարտարապետս իմաստունս, և շինեաց նորօք զտաճար հաւատոյ եկեղեցւոյ իւրոյ վայելուչ. որ գրուագրեցին զաս անապական իմաստից ոսկւոյ, և նըկարեցին զոմանս զքրովբէս երկնային յերկրի, և արարին զամենայն տիեզերս մի տուն միոյն Քրիստոսի, և եկեղեցի։ Ոչ ոք էր աղքատ յայնժամ 'ի բարեգործութենէ. այլ իբրև զքարինս էր ոսկի և արծաթ յերկրի մերում, զմաքրութիւնն իմա և զսրբութիւնն։ Նըստան ապա համարձակ քահանայապետք յաջորդք Քրիստոսի 'ի վերայ տանն իւրոյ. հովիւք իմաստունք սկսան զհօտն արածել. բժիշկք լինել, և զփտեալ անդամն յապաւել. քահանայքն արթունք՝ զխունկ ժողովրդեանն նուիրել։ Եւ յայնժամ իբրև զփեսայ չքեղազարդեալ էր տեսանել զձեմեալն յառագաստ իւր Քրիստոս։ Զայն արձակէր քաղցր առ կոյսն ողջախոհ՝ Ընդարձակեա զտեղի խորանի քո և զսրահից քոց, կանգնեա, մի՛ խնայեր· երկայնեա զապաւանդակս քո, հաստատեա զցիցս քո· յաջ և յահեակ թռուսջիր, և զաւակ քո զհեթանոսս ժառանգեսցէ, և զքաղաքս աւերեալս 'ի կռապաշտիցն շինեսցես: Մի՛, ասէ, երկնչիր, թէ մինչև ցայժմ նոքօք յամօթ արարի զքեզ· զի երդուայ, և ոչ ևս զղջացայց 'ի քեզ բնակել հաճութեամբ, որ ես հանգիստ իմ յաւիտեանս յաւիտենից:

Յայնժամ որ վարանէրն գաղտնի սկզբնաչարն թշնամին, ծանուցեալ թէ մեքենայքն իւր խայտառակեցան, տիեզերք աստուածպաշտութեամբ ծաղկեցան, պատրեալքն դարձեալ փրկեցան, ժառանգորդք դրախտին 'ի հայրենիսն փութացան· երկրաքարշ հեշտութիւնն տեղի ետ, և երկնային սըրբութիւնն պայծառացաւ· գործի ատելութեանն խորտակեցաւ, և պտուղ սիրոյն սկսաւ բազմանալ· յոյս ամենեցուն 'ի ստորնայնոցս վերացաւ, և յերկնային կայանն հանդեսաւ, արտաքս սողէր յորջէն չարութեան. իբրև զառիւծ գոչելով շրջէր բացեալ զկոկորդ չարութեանն, ջանացեալ առ 'ի կլանել զեկեղեցին փրկեալ Քրիստոսիւ: Սակայն տկարն նկուն լինէր 'ի սկզբանն. և մի շունչն և մի մարմինն 'ի գլխոյն զօրացեալք՝ անգործ զմեքենայս թշնամւոյն առնէին: Թէ ձգէր 'ի սովորական նետիցն 'ի վերայ ումանց՝ պոռնկութեամբ կամ սպանութեամբ կամ այլով ախտիւ հարեալ զնոսա, երագէին բժիշկքն իմաստունք և յառաջին առողջութիւնն հաստատէին: Ապա տեսեալ թէ որով սովոր էր պատրել՝ ձախակողմեան մարան խայտառակի, զաջակողմեան զինուցն բուռն հարկանէր: Եւ զի՞նչ այս. այս ինքն զի որպէս 'ի սկզբանն հերձուածողական մարտիւ, ամենապատիրն խաբէութեամբ, նենգողն կարթիւ հատուածեալ՝ 'ի բաց հերքեաց զմարդիկ 'ի դրախտէն, այսպէս և այժմ ընդ ամբակուռ սպառազէնս մեր՝ սովաւ 'ի հանդէս մտանէր.

Զի՞նչ է ինձ, ասէ, մանաւանդ նետիւք զձեզ խոցանել և 'ի յաղթութենէ 'ի դերևս ելանել. համակործան կարօտանամ մեքենայից. պիտոյ է ինձ գործի առ ամուր արձանս ձեր ազգող: Արդ՝ սէր առէք օրէնս, և զմիմեանց վէրս այնու բժշկէք. յաւելուածն զայն փոխանակեմ և իսպառ կործանեմ: Խաղաղութեան առէք պատուիրան, և 'ի մի մարմին զօդեցայք. 'ի թըշնամութիւն զայն դարձուցանեմ, և զմիութիւնդ 'ի բազում հերձեմ:

Տես զամենաչարին թէ զի՞նչ ասէր անզեղջ մախանօքն. գործի, ասէ, այսմ մարտիս և անհնար՝ ոչ յիմոցս աստի զոր իմաստնացայք ճանաչել՝ պատրաստեմ. ոչ զմեղս՝ զոր ապաշխարութեամբ ջնջէք, և ոչ զատելութիւնն՝ զոր սիրով նուաճէք, ոչ զտարապարհակ վարելն՝ զոր յօժարընթաց լինելովն կոխեցէք, և ոչ զնախատելն կամ զապանանելն՝ զոր յուսով խոստմանցն արհամարհեցէք: Այլ զի՞նչ. ամենեցուն ձեր աչք 'ի յոյսն և 'ի գլուխըն ձեր Քրիստոս հայր · ինձ չէք այլ հնար զձեզ քակտելոյ, բայց թէ այլ և այլ զառ նա հայելն ուսուցից առնել։ Եւ որպէս զուղիղ բանն Աստուծոյ՝ նախահօրն ձեր թիւր մեկնեալ գթեցուցի, այսպէս կարելի է և այժմ զբանս գրոց ոմանց 'ի ձէնջ այլ և այլ ցուցանել, և նոքօք զամենեսեան խռովեցուցանել · թերևս կարացից զմիջնորդն խաղաղութեան՝ խաւարեցուցանելով զմիտս ձեր, ատելութեան տալ պատճառ տեսանել։ Միթէ կարացի՞ց զկենաց ծառն որպէս նախահօրն ձեր, և ձեզ մոլորութեամբ մտաց՝ չարի գիտութիւն ուսուցանել։ Արդարև այս է ինձ հաճոյական մեղք, հակառակութիւնն, առ որ՝ ոչ զղջումն տեղի գտանէ · ամբարտաւանութիւնն է ինձ խաւար ըղձալի, զոր ոչ լոյս գիտութեանն փոխանակէ։

Զայս ոչ միայն խորհեցաւ, եղբարք, այլ և արար · ոչ միայն կամեցաւ, այլ և կատարեաց։ Արձակեաց զռմբաքարսն, և զտաճարն

Քրիստոսի խախտեաց, լարեաց զաղեղն, և զընտիրսն վիրաւորեաց։ Ո՛վ աղէտիցս. 'ի տանէն զչարսն բուսուցանէր, և զվերակացուս խորանին՝ քակտիչս և քայքայիչս առագրէր. զմատակարարսն 'ի տապալելն կցորդ իւր ընդունէր, և զհովիւսն հօտիցն օձատողս զինէր. զՄակեդոն՝ Հոգւոյն պարգևաց թշնամի յարուցանէր, և աստուածութե̃ Նորին զժխտելն խրատէր. զՆեստոր՝ Միածնին փառաց և անճառ խորհրդոյ տնօրէնութեանն զըլացող լինել յորդորէր. զԵւտիքէս՝ զխաւար խաւարաւ բժշկել վարդապետէր, և զներմարդութե̃ն ունայն ցուցանել յորդորէր։

Եւ ապա զի՞նչ. ողբոց է այսուհետև ճառ բանից պատմութեան. զի տապալէր այնուհետև զմիութիւն եկեղեցւոյ 'ի մասունս բազումս։ Քակէր տաճարն Աստուծոյ, զոր շինեաց ճշմարիտն Սողոմոն'ի ձեռն իմաստուն ճարտարապետացն. եղծանէր գործ երջանիկն առաքելոց։ Արբուցանէր մեզ զքաժակ բարկութեանն Աստուծոյ աներևոյթն Նաբուգոդոնոսոր· մինչև իսպառ 'ի գերութիւն վարէր զքարինս տաճարին Աստուծոյ 'ի խառնակութեան և 'ի հակառակութեանն Բաբելոն: Եւ ոչ միայն զքարինսն, այլ և զսպաս սրբութե տաճարին յափշտակեալ տարաւ 'ի տուն կուռ յերկիրն Սենաար: Մի՛ կարծէք վայրապար զասացեալս, այլ հայեցարուք յընթացս մեր հոգևոր` ըստ նոցա մարմնոցն յարացուցի: Զունին զպատամն մեր մանկունքն Բաբելոնի, և հարճքն Նաբուգոդոնոսորայ աներևութի: Ըզբաժակ սիրոյն, որով մեքն պաշտէաք միմեանց` թերևս ո՞չ տեսանէք այժմ 'ի ձեռս նոցա: Զխնկանոցն ոսկի, այս ինքն զաղօթիցն ասեմ փոյթ, մի՛ թէ ո՞չ առին նոքա և ունին: Զարդարութիւն իրաւանց և դատաստանի, որով զարդարէր տաճարս Աստուծոյ, տեսէք, և տեսեալ էք, զի որդիք օտարացն առին 'ի մէնջ և ունին: Այնոքիկ մեր էր երբեմն, եղբարք, սեպհական·

այնոքիկ՝ մինչև էաք խաւարութ՟ն գերեալք, մերոյ տաճարիս էին գործիք պաշտաման. զայս սպաս մերն հարք ետուն մեզ ՚ի պատիւ սրբութեանցն: Նոքա ուսան ՚ի Քրիստոսէ զհեզութիւն, և մեզ աւանդեցին. նոքա առին ՚ի նմանէ զնոր օրէնս սիրոյ բաժակին, և մեզ ընձեռեցին: Աղօթք և նորայն բանական պտուղ՝ մեր էր, զոր այժմ տեսանեմք ՚ի ձեռս անիմաստիցն: Արդարութիւնն եկեղեցւոյ քրիստոնէից էր հաց, որով նոքա լցեալ էն, և մեք սովամահ մեռանիմք:

Այսպէս զմի տաճարս իմանալի՝ իմանալին թշնամի կործանեաց ըստ յարացուցի զգալւոյն, և զպաս սորա գերեաց, բայց ՚ի տապանակէն Աստուծոյ, ՚ի հաւատոցն ասեմ. և բայց յաստուածային հրոյն՝ ՚ի սրբութենէն ասեմ, զորս թագոյց իմաստութիւնն Աստուծոյ ՚ի ջրհորս խորս գրոց սրբոց վարդապետութեան, աստուածեղէնս իմն գոլով և հրեշտակականս, զորս ոչ գտաւ թշնամին արժանի՝ ապիղծ ձեռօքն շօշափել. այս միայն թագեաւ 'ի նոցանէ՝ վերնականն խնամօք։ Ապա թէ ոչ՝ տաճարն, այսինքն միութիւն ազգաց քրիստոնէից, և խաղաղութիւնն որ առ իրեարս՝ տապալեցաւ 'ի թշնամեացն արուեստից. և շինեալքս 'ի վերայ միոյ հիմանն՝ կործանեցաք, միայն անձանց գոլ զհիմն Քրիստոս, և ոչ եղբարցն. ուստի և քակտեցաւ յառ միմեանս մարտէն աներևոյթ թշնամւոյն ներգործութեամբ. պարիսպք դստեր Սիոնի խախտեցան, և ոչ դադարեցին. միոյ տաճարին քարինք 'ի զանազան ազգաց՝ առ իւրաքանչիւր յօդ անտաշ դարձան, և ըզփառս տանն կործանեցին։ Մաշեցան 'ի սրոյ բարկութեանն, և 'ի սովոյ տգիտութեան. և առ գետս Բաբելացւոց սովեալ նստէաք արդարև 'ի լաց և 'ի յողբս նոցա, որք զհայրենին աշխարհի պայծառութիւն զմտաւ ածէին։ Իսկ անմըտիցն և երկրաքարշիցն, որպէս Եգիպտոս նախ՝ նոյնպէս և այժմ

Բաբելոն եղև ըղձալի· Նոքա որք խստութեամբ սրտի որպէս խստորով ցանգան զիմանալին իւրեանց մարդ սնուցանել: Այլ իմաստունք լացին և լային և լան միշտ կենդանի բանիւքն իւրեանց, և զայս թըշուառութիւնս աշխարհին· որպէս քարինք տանս Աստուծոյ ցրուեալ են որպէս աղբ զճանապարհաւ՝ 'ի ցեղ ընտրութեան, և 'ի միմեանց դարձեալ յարհամարհութ՟ի· տեսին զի զանպտղութենէ կախեցան այնուհետև մերն կտակարանք: Քանզի թէպէտ և ունէաք 'ի գերութեանն ընդ մեզ զօրէնս Աստուծոյ մերոյ իւրաքանչիւր ոք, սակայն դանդաղէաք զ'ի նմանէ յանձինս մեր արկեալ զսերմանիսն բուսուցանել: Զի զիա՞րդ կարելի՝ ոչ ունելով զտաճարն Աստուծոյ, զխաղաղութիւնն սեմ՞, զերգ Տեառն երգել: Սակայն ծանիք, զի այս յետ գերութեանն եղև, և քակելոյ թշնամւոյն զտաճար խաղաղութեան մերոյ: Ապա թէ ոչ՝ զպտուղն, որ նախ քան զայս 'ի միաշնչութեան անդ, և մինչդեռ 'ի տաճարին խաղաղութեան էաք՝ տայր ամենայն աշխարհ, ձեզ թողումք իմաստասիրել, քան թէ բանիւ զանճառն ճառել. զի մի յոլովութեամբ ճառից նախընթացութեան՝ 'ի ստորև մնասցուք խորհրդոյս զօրութեան։

Յերիս բաժանեալ աշխարհ, այսինքն, Ասիա, Եւրոպիա և Լիբիա, յորժամ 'ի վերայ միոյ վիմի հաւատոյ խաղաղութեամբ էին պնդեալ, զի՞րդ ոչ է ամենեցուն յայտնի, թէ անտանելի պաղախայծութե առաքինութեանցն առատանոյին։ ՅԵգիպտոս քաղաք Սեդեկ, ըստ կանխագուշակ մարգարէութեանն էր Աստուծոյ յայնժամ. և Հռոմայեցւոցն տէրութիւն իբրև զգաւազան երկաթի՝ նեցուկ պնդութե և ամրութեան հանուրցս լինէր։ Աքայիա, Ելլադա, Մակեդոնիա՝ թեւակոխեալ առ Ասիաւ, առաքելովքն վարժեալք, 'ի Պաւղոսէ առօգեալք և արմատացեալք, և ըդ նորա սերմանն շնորհիւն Աստուծոյ աճեցուցանէին: Մանաւանդ տայր և Հայաստանեայցս աշխարհ, մինչ դեռ 'ի միութեան եկեղեցւոյ վէմն անդեալ էր՝ պտուղ Աստուծոյ առատ և բազում. և յերկիր մեր իբրև զաստեղս երկնից բազմացան սեղանքն Աստուծոյ ըստ տեսլեան սրբոյն Գրիգորի. հօտքն լուսակիզն, արօտքն դալարի, հովիւքն արթունք, և սուլիչքն քաղցրալուրք. զի ել հիւսսի խստութեանն, և շնչեաց հարաւ սիրոյ հոգւոյն Քրիստոսի:

Բայց յորժամ միութիւն տիեզերաց պառակտեցաւ, պատահումն ո՞րպէս. յորժամ 'ի վերայ զանազան վիմի կարծեցաք զհաւատս մեր շինել, և ընդ միմեանս սկսաք մարտնչել, կործանումն ո՞րքան: Յորժամ մարմինն Քրիստոսի քակտեցաւ 'ի միմեանց, վէրն անտանելի. յորժամ անդամքն՝ միմեանց թշնամիք դարձան, վիրաւորեալքն անչափ. յորժամ զմիջնորդն խաղաղութեան զտէր մեր Յիսուս Քրիստոս՝ թշնամութեան առաք նիւթ, պտուղ նորին փոխանակ սիրոյն՝ ատելութիւնն: Յորժամ փոխանակ յերկնից մեզ բերեալ նոր օրինաց վարդապետին՝ զաշխարհականս առաք զօրէնսն, վատթարացեալք բթեցաք յամենայն առաքինութեանց: Ինձ թուի այնքան զօրեալք, մինչ զօրհնութիւն Տեառն՝ գերչացն չերգել· այսինքն զհաւատս և զխոստովանութիւնս, զոր 'ի գերելոցն իւրաքանչիւրքն ամբողջ պահեցին:

Ապա թէ ոչ՝ թշուառութիւնք բազումք փոխանակեցին զբարօրութիւն մեր· և ոչ միայն ըստ ներքին, այլ և ըստ արտաքին կրից՝ այնուհետև վտանգեցաւ ազգ քրիստոնէից: Այն զի զոր ըստ նախայօժար կամաց ատեցաք զհոգևորն խաղաղութի՛, զրկեաց Աստուած և 'ի մարմնով զնոյն ունելոյն: Զի այս է սովորութիւն նորա· յորժամ հոգւով կործանիմք զբօսեալ, անտես առնէ և զմարմնոց վրդովմունս· Էր վասն, զի թերևս 'ի խթելոյ մարմնական նեղութեանցն զարթուցեալք՝ ընդ թմբրութիւն ոգւոց զղջասցուք։ Զոր օրինակ է տեսանել բազում անգամ յԻսրայէլի եղեալ. ըստ որում և Նախագիծ յարացուցիւդ պատուհասեցան։ Ոչ անխայեալ Աստուծոյ 'ի տաճարն և ոչ 'ի ժողովուրդն, այլ մատնեաց զնոսա 'ի Բաբելոն 'ի ծառայութիւն. մինչև զարթուցեալ պատուհասիւ մարմնոցն՝ անձամբ զանձինս 'ի ծառայութենէ մեղացն զերծուցին. և փրկեալք այնուհետև Աստուծով 'ի մարմնոց վտանգից, զառաջինն ժառանգեցին հայրենիս։ Այսպէս տեսանի և մերս յայտնապէս ճըշմարիտ քննողաց. և որք ընդ ամենայն տիպ ապացուցի նոցա ճանապարհ արարաք, հարկաւորապէս և ընդ այս շաւիղ հոլովեցաք։ Ուստի և յետ կամօք մեր գերելոյ 'ի հակառակութեանն խորխորատ՝ գերեցաք անագան ուրեմն և ըստ մարմնոյ. զի զայրացաւ վէրն, և ոչ կամեցաւ բժշկել քաղցրութեամբ։ Յոտից, ասէ, մինչև ցգլուխս չէք առողջութիւն. վասն այնորիկ երկիր ձեր աւերակ, քաղաքք ձեր հրձիգք. զաշխարհն ձեր առաջի ձեր օտարք կերիցեն, որպէս զի ակամայ առողջասջիք:

Եւ զի՞նչ էր յանցանքն այսքան սաստիկ պատուհասի արժանի: Յայտ է անաչառ մտաց իմաստնոց. զի ոչ էր մեղք ըստ մարմնոյ՝ որ ներելի էր տկարութեանն, այլ ըստ հոգւոյ՝ որ տկարանոյ առնուլ ապաշաւանաց ժամանակ. զոր սակաւուք թուել՝ ոչ է անպատշաճ: Այսինքն, զի դարձայք միմեանց թշնամիք, ոչ ըստ մարմնոյ՝ այլ ըստ հոգւոյ: Ատեցայք զիրեարս, ոչ վասն առ միմեանս դրժելոյն, այլ վասն զԱստուած կարծել սիրելոյ. շրջեցայք զառիթ խաղաղութեանն զՔրիստոս՝ հակառակութեան մերոյ պատճառ: Ծանուցայք աշակերտք Նորա, ոչ զմիմեանս սիրելովն, այլ ատելութբն: Եդաք հիմն իմաստից մեր՝ ոչ զհաշտութեանն Հօր պատարագ, այլ զնախանձն՝ որ ՚ի Կայենէ սերմանեալ: Դարձաք հոգէկիրքս 'ի լինելոյ հոգևորս, և ախտացեալք ըստ մարմնոյ՝ գտաք շնչաւորս: Ցաղագս որոյ և զօրէնս կենաց լքեալ՝ որ 'ի հոգւոյն, հպատակեմք օրինաց մարմնոյ փոխանակ նորա: Եւ զիա՞րդ ոչ այսպէս. Զի ամենեքեան, ասէ Պաւղոս, եթէ հրեայք և եթէ հեթանոսք, մի հոգի արբաք, և 'ի մի հոգևոր էութիւն փոխեցաք, և 'ի մի գլուխն զանազան անդամք՝ և 'ի մի մարմին պատկանեցաք: Իսկ մեք այժմ ազգքս մարմնով բաժանեալք, և հոգւով միացեալքս՝ հակառակ սահմանի և օրինացն առաքելոյ ընթացաք: Պահեմք զընտանութիւն մարմնոյ և զգութ առ իրեարս, և 'ի կցորդութենէ հոգւոց հրաժարեմք. 'ի ճաշս մարմնոյ և յըմպելիս հաղորդիմք միմեանց, և 'ի Քրիստոսի սեղանոյն խորշիմք. 'ի տունս բարեկամաց սիրով ընթանամք այլասեռքս քրիստոնեայք, և 'ի տունս Աստուծոյ՝ ժողովարանս այլ և այլ ազգաց մի քրիստոնէից՝ դժուարաւ. 'ի հաւատս բանից և 'ի պատմութիւնս խօսից հաւատարիմք իրերաց, և 'ի հաւատն որ առ Աստուած՝ միմեանց անհաւանք ։ Մի քրիստոնեայք անուանիմք, և 'ի մի շաւղաց վերայ հետևիմք, և յիրերաց ճանապարհակցութենէ խելագարեալ զարհուրիմք։ Զորոց տեսեալ Աստուծոյ զանմտութիւնս մեր՝ լէք եթող զմեզ 'ի խնամելոյ ըստ մարմնոյ, որպէս և երբեմն զդուստրն Սիոնի, մանաւանդ թէ ևս առաւել։ Զի որում շատ տըւաւ, շատ՝ առէ, խնդրեսցի 'ի նըմանէ, և որ մեծամեծաց շնորհացն յանցեաւ, և մեծամեծ գանիւք պատժեցաւ․ զի ոչ երբէք զրկէ ողորմութիւն զարդարութե̃ն Աստուծոյ, յորժամ ոչ ունիցի նիւթ զզղջումն մարդոյ ։

Արդ․ քանզի մեղաք օրինաց սիրոյն և յանցեաք ընդ խաղաղութեանն պատուէր և ոչ զղջացաք, յաղթեցաւ ողորմութիւնն յարդարութենէն, և եբարձ 'ի խռովելոցս հոգւով իրաւունքն և զմարմնոց խաղալութն։ Եւ զի այս այսպէս է, հաւասիկ առձեռն պատրաստ տեսանեմք զգործն բանիցս վկայ։ Թերևս ոչ դարձաւ դրախտն Աստուծոյ յառաջինն իւր բնութիւն՝ եղեալ հնոց երկաթի․ ոչ նկուն եղեալ պարտեցաւ բազում անգամ անպարտելի զօրութիւնն Հոռոմոց։ ԱՅԼ զՀայաստանեայցս դիպուածք յետ այսորիկ՝ 'ի ձեռդ ապաստան առնեմք քննութիւն, թէ ո՛ւր պարտ էր մեզ զայս հանդէս գումարել, և յորում վայրի վտարեցաք՝ միայն ածել զմտաւ։ Եւ այս է՞ր վասն, եղբարք․ աղաչեմ անաչառ կամօք դիտեցէք․ զի քակտեցաք զմի մարմինն Քրիստոսի 'ի բազում մարմինս․ զի բաժանեցաք զմի եկեղեցի նորա 'ի բազում մասունս․ զի քրիստոնեայք ոչ պաւղոսեան կամ կեփայեան անուամբքն պանծամք, այլ ևս վատթարացն և գազանաբարոյիցն։ Թողեալ զանունն Քրիստոսի՝ Հայկին և Արամայ, Հոռոմոց և Ելլենացւոց անուամբքն մեծաբանեմք 'ի վերայ իւրեանց· և առ կշտամբանսն Պաւղոսի ընդդէմ մեր առ այս՝ հեղգալուր լինիմք ։

Ո՛վ անմիտք, ասէ, Հա՞յկն 'ի խաչ ելեալ է վասն ձեր, կամ յԱրամա՞յ անուն մկրտեցարուք· ապա թէ ոչ՝ զիա՞րդ երկրորդ համարեալ զանունն Քրիստոսի, որ 'ի վերայ ձեր մեռաւ, նախնեօքն հեթանոսօքն պարծիք ։ Թերևս ո՞չ է այսպէս· քանզի յորժամ հարցմանն պատասխանեմք իւրեանց՝ զդաւանութիւն անուան յուսոյն մերոյ Քրիստոսի 'ի վերայ մեր, ոչ բաւականանայ այնու լոկն չինել, այլ կարօտիմք զհեթանոսական անուանսն 'ի վերայ յաւելուլ ։

Զմեղս առ 'ի մահ մեղաք անապաշաւս թշնամութեամբ· զի ժխտեցաք պատուիրանին որ աւանդէ մեզ՝ թողլոյն զթողութիւն դաւանել· զի ոչ զմի Հոգի սուրբ, այլ բովանդակ ազգ՝ զազգ, և եկեղեցի՝ զեկեղեցի, և օրէնք՝ զօրէնսն նախատեն ։ Յանցանք՝ որում չէք ներումն թողութեան, ասաց անսուտն բերան, այն զի անզեղջ է 'ի չարիսն: Զի թողաք զսէրն՝ որ է գլուխ պատուիրանին և աղբիւր բարեաց, և բուռն հարաք զթշնամութենէն՝ գտաւք եղեալ ամենայն չարեաց: Եւ ահա զի սէր ոչ նախանձի, ատելութեան օրինօք վարժեալքս նախանձեցաք: Սէրն ոչ գրգռի, մեք զօրհանապազ երկնեցաք և երկնեմք առ միմեանս զչարութիւն: Սէր ոչ նախանձի, մեք նախանձելով յաչաղեմք զոլս առ միմեանս ուղղութիւն: Սէր ոչ խնդրէ զիւրն, իսկ մեք ոչ թէ միայն խնդրեմք, այլ անիրաւութեամբ զընկենումք զիրաւունս իրերաց և զմերն կացուցանեմք՝ վերջացեալք 'ի խաղաղութենէ: Ոչ ջանամք զյանցանս միմեանց բժշկել, այլ վէրս 'ի վերայ վիրաց կուտել և իւրաքանչիւրոցս յաղթող և արդար երևել: Այս է խոտորնակ ճանապարհ և մոլար, ընդ որ այսօր հետևիմք, և զգործով աստուածատեցութիւն՝ պիտակ բանիւ աստուածսիրութիւն ագնեմք. ըզճշմարտութեամբ մարտնչելս ընդ Քրիստոս՝ ստայօդ խօսելք խաղաղութիւն առ նա համարիմք : Այս է մոլորումն չարաչար՝ որ ընդ զղջումն պատերազմի. և ամբարտաւանութիւն կործանող՝ որ հեզութիւն զրկողացս թուի : Այս է խաւար՝ տգիտութեան աղջամուղջ, որ լոյս 'ի մէնջ մեծարի. և մեռելութիւն անկենդան՝ որ զկենդանութիւն խնդրել հրաժարէ : Յայսմանէ եկն մեզ լոյսն Քրիստոս և լուսաւորեաց. և յայտնի մահուանէս կեանքն՝ և կենդանացոյց. քանզի կենդանացոյց յառանց զղջանալոյ 'ի մեղսն վարակելոյ, և լուսաւորեաց ճառագայթիւք ս՟ պատուիրանին, որում մեղաք մեք և հարքն մեր, անօրինեցաք և յանցեաք. և խոստովանիմք՝ արդարութեամբ և յիրաւի ածեալ զայսոսիկ Աստուծոյ 'ի վերայ մեր վասն մեղաց մերոց : Զի ոչ պահեցաք և ոչ արարաք՝ որպէս և պատուիրան ընկալաք. վասն այսորիկ և մատնեաց զմատնողս զանձինս աներւոյթ նեղչաց՝ մարմնով, տերանց խստասրտաց, ոչ ամն եւթանասներորդ, այլ մանաւանդ հարիւրեակս եւթներորդ, յորս տառապեցաւ 'ի Բաբելոն խառնակութեան եւ թշնամութեան՝ գերեալ եկեղեցի Քրիստոսի. անդր՝ ուր ծերքն դատաւորք ոչ զարդար դատաստանն, այլ զանօրէնութի̃ բղխէին։ Քանզի եւ զայս գտանեմք եղեալ առ մեզ ըստ մարգարէութեանն. Եւ էր անօրէնութիւն 'ի Բաբելոն 'ի ծերոցն դատաւորաց։ Եւ զի՞ ես յայտնեցից զբանս՝ բուռն հարեալ զանաչառութեան գաւառանէ. ո՞չ տեսանէք զիւրաքանչիւր ազգի առաջնորդս եւ դատաւորս՝ գլուխս եւ կանոնս հաստատեալ՝ ոչ խաղաղութեան այլ թշնամութե̃. եւ օրէնք զի՞նչ. բարեացն որ առ միմեանս ներհակս, եւ միոյ հասարակաց Ճշմարիտ հաւատոյ ընդդիմաբանս։ Զան՝ ո՛չ այլ ինչ 'ի բանն, քան զմի եկեղեցի Քրիստոսի 'ի միմեանց պառակտել. եւ որ արդեամբք հերձուածող լինի, ալիտակ զանունն նախատանօք 'ի վերայ եղբօրն առնու :

Ո՛վ ծեր և դատաւոր, եթէ չար է հերձել զՔրիստոսի անդամն և վասն այսորիկ եղբայրն 'ի քէն նախատի, դու ընդէ՞ր դուն գործեալ՝ առ 'ի նոյնդ ջանաս տալցդ գրութեամբ. Թերևս ո՞չ ուսար, թէ Մի՛ յաղթիր 'ի չարէն, այլ յաղթեա բարեաւն չարին. Թերևս ոչ լուար, մի՛ լինել բանակռիւ յոչ ինչ պէտս և 'ի կործանումն լսողացն: Զսրտնութիւնդ դարձուցեալ 'ի սատանայէ՝ ընդդէմ եղբօ՞րն կազես. և զայս ոչ բանիւ լոկով, այլ արձանագրութեամբ. և հիմն ունիս քեզ ոչ զսէրն՝ որ 'ի Քրիստոսէ, այլ զմախանսն որ 'ի բանսարկուէն: Ո՞չ երկնչիս՝ դուցէ և քեզ տացէ վա՛յ՝ Տէրն, որ փակես զփականս խաղաղութեան. դու ոչ մտանես, և զորս մտանեն՝ ընդդէմ կացեալ արգելուս: Գովիս, և 'ի քեզ զգովութեան բանդ սահմանես. և թերևս աւատանաս յազգ քո և 'ի ցեղ. և զայլ ամենայն տխեղերս բռնադատես բաժանել 'ի Քրիստոսէ, և ծանր թուի քեզ լուր նոցա բարեպաշտութեանն: Ի նախատելն քրքրիս, և զբարիոք լուրն ոչ կարես տանել: Ո՞յդպէս ուսար 'ի տեառնէն քումմէ. ո՞յդպէս վարդապետեաց որ ասացն. Եթէ սիրէք զսիրելիս ձեր, ո՞ր շնորհ է ձեր. զի և մաքսաւորք զնոյն գործեն: Այլ դու մանաւանդ և զսիրելին ատես, թէ ընդէ՞ր յայլմէ ազգէ և ոչ յիմմէ ես: Աստուծոյ մեղադրեա որ բաժանեաց զլեզուս: Ո'վ թշուառութեանս, ո՞ր բան կարէ զայսր կեղծ չարի ընդարձակութիւն պարունակել: Նախատինք եղաք Քրիստոսի քրիստոնէայքս, և ամօթ նորա առաջի Հօր և հրեշտակաց սըրբոց. զի թէ Աստուած փառաւորեալ է 'ի խորհուրդս սրբոց իւրոց, որպէս և է, ապա և նախատեալ է 'ի չարութիւն մտաց մերոց, և հայհոյեալ է անուն նորա 'ի մէջ այսոցն չարաց:

Եւ արդ զի՞նչ. խապառ մնացաք

'ի նոյնն, և մինչև ցյաւիտեան անտես եղեալք 'ի տեառնէ, և դեռ ևս ոխապահէ մեզ բարձրեալն: Ոչ երբէք. ել 'ի գլուխ ամացն թիւ, զոր խօսեցաւ Աստուած 'ի ձեռն Երեմիայ մարգարէի, ծառայութեան մերոյ ժամանակ և սահման: Յայտնեցաւ սէրն Քրիստոս 'ի վախճան յաւիտենից՝ յանարգութիւն առաջին մեղացն անելութեան: Ետես զի ոչ կարաց ձեռն մարդոյ կատարել զօրութիւն, արար աջ տեառն զփրկութիւն անբաւ զօրութեամբն: Աւետարանեն այսուհետև մարգարէքն զդարձ փրկութեան. քանզի ոչ անձանց՝ այլ մեզ մատակարարք լինէին, ասէ երջանիկն առաքելոց Պետրոս:

Խօսեցաւ Զաքարիաս. ուստ դարձելոցս վհատեալ սրտիւք՝ յոյս· ասէ. « Այսպէս ասէ տէր ամենակալ, եթէ տկարանայցէ ինչ առաջի մնացորդաց ժողովրդեանդ այդորիկ յաւուրս յայսմիկ, մի թէ և ա՟ջ իմ տկարանայցէ, ասէ տէր ամենակալ: Այսպէս ասէ տէր աամենակալ. ահաւասիկ ես փրկեմ զժողովուրդ իմ յերկրէ արևելից, և յերկրէ արևմտից. ածից զնոսա և բնակեցուցից ՚ի մէջ Երուսաղէմի. և եղիցին ինձ ժողովուրդ, և ես եղէց նոցա Աստուած՝ ճշմարտութեամբ և արդարութ̅բ̅: Եւ արդ զօրացիր դու Զօրաբաբէլ, ասէ Տէր. և զօրացիր Յեսու Յովսեդեկեայ քահանայ մեծ, և զօրասցի ամենայն ժողովուրդ երկրին, ասէ Տէր. գործեցէք, զի ես ընդ ձեզ եմ, ասէ Տէր ամենակալ: Եւ բանն զոր ուխտեցի ընդ ձեզ յելանելն յերկրէն Եգիպտացւոց, և հոգին իմ որ կայր ՚ի միջի ձերում. քաջալերեցարուք, զի այսպէս ասէ Տէր ամենակալ. դարձեալ միւսանգամ շարժեցից զերկինս և զերկիր, զծով և զցամաք, և միանգամայն շարժեցից զամենայն ազգս, և եկեսցեն ՚ի միասին ՚ի փառս անուան իմոյ, ասէ Տէր ամենակալ »:

Լուա՞յք, եղբարք, զնախաճառ մատակարարութիւն մարգարէիս:

Առ ձեզ է ասացեալս, ցեղապետք նորա Իսրայէլի։ Քեզ տայ զքաջալերութիւնս, ո՛վ Յիսուսի փոխան 'ի մէջ մեր՝ նորա պատուոյն բազմեալ. և նորոյ Զօրաբաբելի՝ որ յարևմտից յարևելս ձգեաց զընդարձակութիւն ձեռինն առ 'ի շինուած տաճարիս. և դուք համապատիւ եղբարքդ՝ հաւատացէք մարգարէիս, թէ ոչ յանձանց, այլ յԱստուծոյ աստանօր գումարեալ ածայք։ Ապա մի՛ ոք վարկցի զայս սինհոդոս մեծ՝ մարդկային խորհրդոյ. մի՛ զաստուածայինն խորհրդածութիւն՝ մարմնաւոր յաջողուած, այլ բարձրացեալ աջոյ կարողին. առ որ քաջութեամբ խրախուսելն արժան է ամենեցուն, որպէս և հրամայեաց մարգարէս։ Քանզի անհնարինքն 'ի մէնջ կարծեցեալք՝ նմա դիւրահնարք, և կամքն գործ կատարեալ, և իմաստն գլխաւորեալ. ուստի և զաւորականն նորա այս խորհուրդ տեսանեմք. նա որ 'ի վերջանալ մարդկային հնարից՝ ապա զառատութեան շնորհան զեղու ։ Տկարացաւ մինչև ցայսօր իմաստ մարդկեղէն՝ զհաստատեալն վաղուց խռովութիւն նուաճել 'ի խաղաղութիւն ․ իմաստութիւնն Աստուծոյ Քրիստոս զօրութեամբ կատարեաց ․ մի՛ ոք ընդդէմ դարձցի , զի մի՛ աստուածամարտ գտանիցի ։ Դարձոյց տէր զգերութիւն Սիոնի 'ի խռովութեանն ծառայութենէ 'ի հայրենին իւր 'ի խաղաղութիւն ․ մի՛ ոք 'ի Բաբելոն հեշտութեամբն՝ փոխանակ մխիթարութեանն 'ի սուգ փոխեսցի ։ Եհաս ժամանակ՝ զի լցցին բերանք մեր խնդութեամբ և լեզուք մեր ցնծութեամբ ․ մի՛ ոք ծառայելով մախանաց յետնեալ գտցի յուրախութենէ ։ Մարգարէացան զայս հարքն մեր երանելիք ․ մի՛ ոք բարբառոյ Նոցա ապառումն պատասխանեսցէ ։ Մի՛ այպանեսցի մարգարէութիւն 'ի վըտանգելոցն անհաւատութեամբ , մի՛ ընդ խաղ արկցի առ Նոսա Հոգւոյն Աստուծոյ ազդումն ․ մի՛ անաչառ վարդապետութիւնն այլ ևս լիցի աչառանօք մարդկան պատրուակեալ: Մի՛ այլ լոյս ընդ գրուանաւ լիցի թագուցեալ. մի՛ կարծեսցի տկար Աստուածն զօրութեանց կատարիչ խորհրդոյս: Ոչ եմք անարժան քրիստոնեայքս քան զհարս մեր զհեթանոսս, որք զգեղումն նորին պարգևացն այնչափ առատութեամբ ընկալան: Որ երբեմն օտարացն ետ զայս շնորհս սիրոյ և խաղաղութեան, յիւրոցս ոչ արգելու, յորժամ զգաստացաք առ 'ի զնոյնն խնդրել: Այնչափ էր փակեալ դուռնն, մինչ ոչ բախէաք. յորժամ սկսաք 'ի բախել՝ և մտանելն է համարձակելի:

Ո՞չ շարժեաց զայս խորհուրդ, ո՜վ եղբարք, ո՛ր մարդկեղէն իմաստութիւն եղև սատար առաջադրեալ աստուածայինս գործոյ: Ոչ զոք ունիմք ասել, բայց թէ զԱստուածն և զՏէր մեր Յիսուս Քրիստոս՝ զաղբեւրն խաղաղութեան. որ ետ մեզ զնոյն, և միշտ ծաղկեցուցանէ յեկեղեցւոյ իւրոյ անդաստան: Արդարև հաւատասցուք, զի որ եհարն՝ նոյնն և բժշկել է կարող. որ փորձեացն՝ նոյն այսուհետև և զելսն կամեցաւ առնել. և որ կործանեացն՝ կամի զի կանգնեսցէ. և կանգնէ ո՞րպէս. մեզ անհասանելի է խոր խորհրդոցն ընդարձակութիւն, այլ միայն զայժմուս տեսանեմք առաջարկութիւն: Իսկ թէ յո՛րքան բարիս հանդերձեալ է աւարտել, տնօրէնն և ուղղիչն ըղչափն գիտէ: Յուսասցուք թէ որպէս ՚ի խռովելն՝ զբաժակ բարկութեանն լցեալ մրրով ՚ի ձեռաց նորա արբեալ գերեցաք, այսպէս և ՚ի խնդրելն զխաղաղութիւն, զքաղցրութեան ողորմութեան ուխտն ճաշակեմք:

« Բայց լո՛ւր դու Յեսու քահանայ մեծ, լուր դու և ամենայն մերձաւորք քո, որ նստին աւադիկ ամենեքեան առաջի քո: Այսպէս ասէ տէր ամենակալ. յաւուր յայնմիկ կոչեսջիք իւրաքանչիւր զընկեր իւր ընդ որթով և ընդ թզենեաւ: Լուր, զի ձեռք քո՝ առաց

Տէր՝ հիմն արկցեն տանս այսմիկ, և ձեռք քո կատարեսցեն զսա: Ո՞վ է այն այր կիւսահմայ և թերահաւատ, որ անգոսնէ առաջի քո զաւուրս փոքրկունս և զժամանակս յետինս. և խանդայ ընդ փրկութիւն ժողովրդեանս Տեառն: Ահաւասիկ զարթուցեալ է Տէր յամպոց սրբոց իւրոց 'ի սրսկել 'ի վերայ քո զցօղն շնորհաց, զգեցուցանել քեզ զպճնաւոր, և դնել 'ի գլուխ քո խոյր սուրբ, դնել ընդ քեզ վկայութիւն: Զի եթէ 'ի ճանապարհս իմ գնասցես, և 'ի խաղաղութիւն առաջնորդեսցես ժողովրդեան իմոյ, դու դատեսցես զնոսա մինչև 'ի սպառ:

Լուարուք և դուք նահապետք ազգաց մերոց 'ի ծագաց երկրէ, որ հասէք ընդ դիմա 'ի Սիոն քաղաք փրկութեան մերոյ, ահա հասեալ են ոտք մեր առ դրունս երկնաւորն Երուսաղեմի. և հանդերձեալ եմք շինել զիմանալի տաճարն Աստուծոյ, որ հիմնեցաւ 'ի վերայ Պետրոսի, և քակտեցաւ 'ի բազում մասունս 'ի Նաբուգոդոնոսորայ: Առցուք թէ ախորժէք, նախ զօրէնս Աստուծոյ 'ի ձեռս մեր և ընթերցցուք. վայելուչ է առ 'ի նմանէ խրատով զաստուածային գործոյս բուռն հարկանել. քանզի յԵրուսաղէմ եմք, և ոչ թէ յերկիրն Բաբելացւոց. ուր անմարթ էր զսըրբութիւնն շանց առաջի արկանել: Ի Սիոն եմք, ճաշակեսցուք յաղբերացն Իսրայէլի. զերծաք 'ի մախանացն գերութենէ, ապրեցաք 'ի ծառայեցուցչին ոխակալութենէ, զինջուցաք զհպարտութիւնն. այսուհետև ոչ յօտարաց, այլ 'ի սիրոյն Քրիստոսի մեք գերեալ լինիմք: Մաշեցաք զամենայն բարձրութիւն մոլորութեան մնաց 'ի վերայ գիտութեան օրինացն նորա, և քաղցեալ տեսանեմք զձեզ կենացն մանանայի: Առցուք զօրէնս նորա, ընթերցցուք, և նովաւ հանդերձ 'ի շինուած հաւատոյ տանս բուռն հարցուք: Տուք ինձ հրաման գեղեցիկ յանդգնութեամբս, և օրինացն Աստուծոյ վրէժխնդրութեամբ՝ լինել Եզր 'ի միջի ձերում. ունկն դիք քաղցրութեամբ, և լուարուք զընթերցուած օրինացս: Յերկիրն ասէ՝ յոր մտանես 'ի մէջ այլազգեացն օտարաց, այսինքն դիւաց փորձանաց, զդուստր խորհրդոց քոց մի տացես դստեր նորա. յայտ է թէ զբանն և զարութիւնն՝ չար խոհեմութեանն և թիւր բարկութեանն. և զդուստր նորա մի առնուցուս ուստեր քում. այսինքն զանիրաւ ցանկութիւն՝ բնաւորականիս բարւոյ առաքինութեան: Զայս ես, եղբարք, որպէս երբեմն Եզր, տեսանեմ գըրեալ յօրէնս Աստուծոյ մերոյ. ուստի և փղձկիմ արտասուօք, բուռնհարեալ զօձիս սրտի պատառեմ, որպէս և նա զգեստուցն:

Ո՞ ոք գտանի 'ի մէջ մեր ոչ այս օրինացս դրժող. քանզի արդարև ամենեքեան արարաք խաղաղութիւն ընդ գերիչս մեր. կոխեցաք զօրէնս Աստուծոյ մերոյ, և ամուսնացուցաք զորտնութիւն մեր ընդ դեն բարկութեան, և զխմաստ մեր ընդ երկրային յիմարութե՟ս ։ Ուստի և ծնաք 'ի նոցանէ՝ այս ընդ երկար ժամանակ՝ զոխակալութիւն առ եղբարս, զյաչաղանս բարեաց նոցա, զատելութիւն առ նոսին, զանուանն Աստուծոյ մերոյ հակառակութեամբ 'ի մէջ մեր զհայհոյութիւն ։ Արդ զինչ․ մնասցե՞ն կենդանի, կամ լիցին այլոց համանմանից հարք և սերմանիչք ։ Ո՛չ, եղբարք․ առէք զբարուք խորհրդակցութիւնս․ զսերմն Քաղդէացւոց զքարի հարցուք, և զողայս Բաբելացւոց վիմօք փշրեսցուք ։ Սատակեսցին սպանցին, որպէս զի մի՛ սերմն օտարոտի ապականեսցէ ըզմերս բարեպաշտութիւն ։ Մի՛ և մի՛ ոք պահեսցէ կենդանի զմախանս 'ի նախնեացն 'ի մեզ սերմանեալ ։ Մի՛ ոք առցեալ զգիրս նոցա թշնամութեամբ՝ ճշմարտութեան վարկցի ջատագով, որ ոչ է ճշմարտութիւն, այլ հակաճառութիւն․ և ամենայն ոք որ հակառակամարտն է, զյաղթողն լինել՝ որքան կարէ՝ ախորժէ ։ Արկցուք զնոսա 'ի բոցն

Քրիստոսի, և նովաւ փորձեսցուք զընտրութիւնն. Ծառ բարի, ասէ, պտուղ բարի առնէ. և ծառն 'ի պտղոյն ճանաչի. և մարդ բարի զբարին բղխէ, և ոչ զչարն. զսէրն, և ոչ զատելութիւնն. զխաղաղութիւնն, և ոչ զթշնամութիւնն. ըզյաղթելն սիրէ՝ որով և նուաճէ, և ոչ զյաղթելն՝ որով զմարտն գրգռէ: Քանզի որպէս սիրոյն ընութիւն է պարտելն, և ոչ խնդրել զիւրն, զի մի 'ի հակառակութենէն բարետոհմութիւնն աղաւաղեսցի, ընդդէմ սորա զէն թշնամութեանն միշտ 'ի մղել զընկերն ատելութեամբ՝ ներգործէ: Սա թէ գիտէ զանձին ստութիւն, ըզփոյք հպարտութեանն յանդուցանել խուսափէ: Բազում անգամ և տկարանայ առ ճշմարտութեանն ընտրութիւն 'ի նախանձուն խաւարէ կուրացեալ:

Յայսմանէ յառաջ բերին ոմանք բանս, և թշուառական մտօք առ թշնամութիւնն զմեզ մարզէին, որ թէպէտ 'ի գիտնոց՝ սակայն սիրոյն քաղցրութեան տգէտ եղելոց ։ Զի այսչափ ասել բաւական է, և ոչ յայտնել զառականս ծնողաց, որպէս և խրատ ընկալաք ։ Բայց զայս միայն յաւելումք, թէ երկրորդին յայտնեցաւ՝ առաջինն լռեսցէ. և ոգիք մարգարէից՝ մարգարէից հնազանդին ։ Մանաւանդ զի և Աստուած ոչ է խռովութե̃, այլ խաղաղութեան, զորոյ մեք բուռն հարաք, և ոչ նոքա ։ Պտուղ հոգւոյն զմերս առէ առաքեալ, որ է սէր, խնդութիւն, խաղաղութիւն. և ոչ թէ զնոցայն, որ էր հեռ, նախանձ, բարկութի̃ և հակառակութիւն ։ Քանզի ո՞չ է կարող ճանաչել, թէ և ’ի աղայաբարոյիցն իցէ, զայս կուրացուցիչ պղտուղ նախանձու, որ գրէ մեզ զհրաժարելն ’ի բազմութենէ ազգաց քրիստոնէից ’ի սիրոյ, և որոշել յօրինաց նոցա, յեկեղեցւոյ և ’ի միաբանութենէ, և ’ի հաղորդութենէ ։ Ո՛վ յանդգնութեան օրինադրին, զի մի՛ այլ յաւելից՝ յաղթել ’ի թշնամանաց. և զինչ այդքան ժպրհութ̃ես ունիս նիւթ, ո՛վ դու տիեզերաց բամբասող, և ոչ զչափ անձին ճանաչող, եթէ զՔրիստոս Աստուած համանգամայն և մարդ դաւանեն:

Դարձեալ և նոքա առ իւրեանցն այսու ախտիւ զգածեալք՝ 'ի մէնջ հրաժարեն, եթէ զՔրիստոս Աստուած և մարդ խոստովանիմք: Ո՛վ թշուառութեանս, ո՛ չար բանսարկուին որսողի, թէ ո՛րպէս պատրեալ զմեզ մնոտիւք 'ի ցանց ատելութեանն պաշարեաց. և 'ի միոյ Քրիստոսի վերայ միով խորհրդով օրինաց նորա ներհակս զինեաց: Բառս իմն և քննութիւնս ընդդէմ միմեանց ուսոյց բաղբաղել, և ըղձերն մնոտի աստուածսիրութ̃ն կոխել: Ողբասցէ զմեզ Երեմիա, կամ թէ այլ ոք իբրև զնա ցաւակից մարգարէ: Մարգարէքն քո, ասէ, ո՛վ Իսրայէլ, տեսանէին քեզ զուր տեսիլս, և առեղծուածս մարգարէանային: Զմիջնորդ խաղաղութեանն զՔրիստոս՝ հիմն ատելութեան և հակառակութեան աուաք, և զի՞րդ ոչ եմք արտասուաց արժանի: Զգլուխ անգեան որմոցն միութեան՝ բաժանման խտրոց արկին 'ի մէջ մեր մարգարէքն յիմարեալք. և զի՞րդ ոչ լացցեն զմեզ Ճշմարտութեանն աշակերտք: Զի ո՞ ոք 'ի ծագս աշխարհի եկեղեցի Քրիստոսի, որ ոչ զՔրիստոս Աստուած և մարդ դաւանէ. և թէ այս այսպէս է, ապա ընդէ՞ր այսքան հակառակութիւնք 'ի մէջ մեր բռնացեալ: Ո՞ր ազգ զլացաւ զերախտիս տեառն իւրոյ մարդկութեանն, կամ ժխտեաց փառաց նորին և աստուածութե՟ն 'ի քրիստոնեայս անուանելոց. և ոչ ոք: Քանզի ոչ եթէ լեզուօք միայն ըզսոյն դաւանեն, այլ և զանշունչ տարերս անուն բազկակից և ջատագով հաւատոցն. և զզանազան տնօրէնութիւնս աստուածացեալն Յիսուսի գծագրութեամբ կերպարանեն, և գունովք երանգոց Ճըշմարտեն: Ճգնին և աշխատին 'ի վերայ սորին յուսոյ. յիշեն զխոնարհութիւնն 'ի սիրոյն. և սքանչացեալ շնորհ ունէին պարգեւացն. նոյին 'ի փառս աստուածութեանն և բարձրանան յերկրէ յերկինս։ Եւ այսպէս շնորհօքն Աստուծոյ՝ տիեզերք յուսումն առ Քրիստոս աստուաղին, ամենեցուն յուղին կալով պողոտայ՝ յիւրաքանչիւր ազգս և աշխարհս։ Եւ մի գլխոյն է անդամ՝ Սպանիա և Արեւելք, Յոյնք և Բարբարոսք, Հայք և Վիրք, Ասորիք և Եգիպտացիք. 'ի նա են յաւեալ ամենեքեան հոգւով, և զնա զգեցեալք հաւատովք։ Եւ զայս մասնաւորապէս յայտնէ ներգործութիւն շնորհաց Հոգւոյն յիւրաքանչիւրսն արդեամբք զօրացեալ. յորոց որք զանձինս տաճարս Աստուծոյ արարին, վայելեցին 'ի շնորհս նորա, պաշտպանելով ձեռին նոցա 'ի նշանս և 'ի բժշկութիւնս և 'ի գործս զարմանալիս, քննողացն յայտնի։ Նա և ոչ թէ միայն մարդիկն, այլ և անշունչ տաճարքն, և նշանքն 'ի նոցանէ յանուն Քրիստոսի արարեալք՝ զորս անկար է անկատար հաւատոց կատարել: Քանզի ուր ոչ հաւատ՝ զիա՞րդ հոգի, և ուր ոչ հոգի՝ զիա՞րդ զօրութիւն:

Բայց որ թշնամին է սիրոյ և օրինադրին նորին Քրիստոսի, քննութիւնս բայից ուսոյց, զնոսա առնուլ նիւթ հակառակութեան, զոր և ես բազում անգամ քննեցի՝ զհակաճառութիւն երկուց կողմանցս գրով և անգիր, և գտի ոչ ընդ միմեանս, այլ ընդ հերձուածողս որ ոչ են այժմ 'ի միջի՝ մարտուցեալս. և կեղակարծութեամբ առ իրեարս՝ զթշնամութիւնն միջնորդ 'ի միջի անմատչելի հաստատեալ, հարկանեն զօտարս, և միմեանց 'ի վէր համարին: Զոր օրինակ թէ ոք զօդ վիրաւորելով, ընկերին կարծիցէ ազդել զխոցուածսն, և նա որ ոչ հարկանի, ընդ վայրապար հարուածն օդոյն դժուարի, և այսպիսի անոտեօք 'ի թշնամութիւն յարուցեալ, ոճիրս մեծամեծս գործեսցեն: Այսպէս է տեսանել այսօր՝ զազգաց քրիստոնէից առ իրեարս կիրս: Քանզի մերս է հակաճառութիւն ընդդէմ այլ ազգաց 'ի կարծիս, թէ զՔրիստոս յերկուց բնութեանց անճառաբար միացեալս 'ի խոստովանել՝ զյատկութիւն անուանց բնութեանցն և զգոյութիւնսն որոշեն, և զէութիւնսն ոչ թէ միացեալ՝ այլ բաժանեալս խոստովանին: Եւ բովանդակն թէ Դըւնի ժողովն, թէ Մանազկերտի, թէ որ Սիւնեցւոյն Թուղթ, թէ Շիրակացւոյն, թէ Տարօնացւոյն, կամ թէ այլ ումեք, առ այսպիսի դաւանութիւն մարտնչին ընդ բաժանմամբ Աստուած և մարդ դաւանողսն: Եւ այս Նեստորի է կարծիք, և ոչ թէ մեծի Աստուծոյ եկեղեցւոյն, և տիեզերաց արքունական աթոռոյն: Քանզի նոքա անարգելք բաժանմանն եղեն և լինին. և տան զերկուց բնութեանցն կոչումն Քրիստոսի՝ ոչ այլ ինչ խորհրդով, բայց զի Աստուած զնոյն և մարդ խոստովանեսցեն, և զԵւտիքէսի չար աղտն տապաստ արկեալ տապալեսցեն: Զմի Քրիստոս յերկուց ճանաչէն բնութեանց, վասն զի Աստուած է և մարդ. և ոչ թէ 'ի ճանաչելն՝ զանճառ խառնումն բաժանեն: Մտաց աչօք տեսանեն զԲանն մարմին եղեալ՝ և 'ի մարմնի բնակեալ. և ոչ թէ մարմնոյ աչօք քակտելով զնոյն զննեն: Եւ այսմ ամենայն աստուածաշունչ գիրք և մեք վկայեմք, զմին Քրիստոս՝ Աստուած և մարդ դաւանել: Արդ միոյ Քրիստոսի՝ որում մեք աստուածութիւն տամք, նորա բնութիւն 'ի վերայ յաւելեալ զէութեանն հաստատութիւն յայտ առնեն. և որում մեք մարդկութիւն՝ նորա դարձեալ յաւելուածով բնութեանն անուան, զէութի մարդոյն ստուգեն. և զմիութիւնն 'ի վերայ սոցին՝ հաւասար մեզ ամբողջ հաւատան, չունելով անաչառ քննութեամբ՝ առ այս ինչ մեզ նիւթ հակառակութեան: Զի նոյն է Աստուած և մարդ ասել զՔրիստոս, և երկու բնութիւն. մանաւանդ առաջինդ ոչ միայն զէութիւնն, այլ և զսահման էութեանն յայտնապէս մակագրէ. իսկ երկրորդս՝ լոկ զէութիւնն առանց սահմանի: Ապա յայտ է, թէ որ Աստուած և մարդ դաւանեաց, զայլ և այլ բնութիւնս 'ի վերայ միոյ անձինն ստուգեաց: Իսկ չար առ այս՝ ընդ ստոյգ տեսութեանն և յանձնաւորութիւն բաժանել, յորմէ հեռի ամենևին զատնիմք և մեք և նոքա. Նեստորի գոլով այս չարափառութիւն, որ նզովեալ է յեկեղեցւոյ:

Դարձեալ հակաճառեն և նոքա ընդդէմ մեր ևս առաւելապէս, սակայն 'ի կարծիս սնոտիս վարանեալ, իբր թէ զմիութիւնն խոստավանելով 'ի վերայ փրկչին Քրիստոսի, ընդ նմին և զյատկութիւն աստուածային և մարդկային բնութեանցն չփոթեմք. և յետ միութեանն համարեալ՝ թէ ոչ խոստավանիմք զնա Աստուած և մարդ, այլ 'ի յատուկ բնութիւն Աստուծոյ փոխեալ ասեմք զմարդոյն: Յորմէ ախտէ չարէ շնորհօքն Աստուծոյ հեռի գտան եկեղեցիք

Հայաստանեայց 'ի սկզբանէ և այսր · և յայտնի ամենայն գրութիւնք հարցն մերոց՝ Աստուած և մարդ զնա դաւանեն։ Եւ ոչ ունայն ցուցանի առ մեզ իմաստութիւն խորհրդոցն Քրիստոսի, որ պահեալ էր առ Աստուծոյ 'ի սկըզբանէ, և յայտնեցաւ 'ի յետին ժամանակս 'ի փառս մեր։ Այլ գիտեմք ստոյգ, և հաւատամք ճըշմարիտ, զի թէ էր ծանուցեալ զերեւալն մարմնով Աստուած՝ իշխան աշխարհիս, ոչ արդեօք զտէրն փառաց 'ի խաչ հանէին՝ ըստ առաքելոյ։ Այլ լոյսն 'ի խաւարի անդ մարմնոյն լուսաւորէր անճառաբար, աստուածութիւնն · և խաւար բանսարկուն որ հալածէր ըզմարմինն 'ի ժամանակի անդ անօրէնութեան՝ ոչ եղև նմա հասու նախ քան զյարութիւնն։ Գիտեմք ընդ սմին և զխորհրդոյս զօրութիւն, թէ ո՞ր եղև այս՝ 'ի յայտնութենէ Հոգւոյն Աստուծոյ · և համեմատեմք ընդ հոգևորս՝ զհոգևոր ձայնս։ Այսինքն զի մարդումն

Աստուծոյ մարդն փրկեացի. զի միոյ մարդոյն արդարութեամբ լցի յամենայն մարդիկ արդարութիւն, որպէս միոյն յանցանօքն՝ դատապարտութիւն: Զայս գիտեմք և դաւանեմք, և ոչ զշնորհ լինելոյ Բանին մարմին՝ զլանամք: Սակայն առնումք զՄի բնութիւն ասել Բանին մարմնացելոյ՝ անճառ խառնմանն հռչակ՝ ընդդէմ Նեստորի. և Բան ասելով և մարմնացեալ, ըզյատկութիւն այլ և այլ բնութեանցն հաստատեմք՝ ըստ սրբոյն Կիւրղի: Եւ ոչ ասեմք 'ի վերայ Բանին մարմնացելոյ զմի բնութին, զյատկութիւն էութեանցն չփոթելով, որպէս Նոքայն կարծեն. այլ ըստ անճառ միաւորութեանն երկուցն 'ի մի անձնաւորութիւն, և յաստուածութեան և մարդկութեանն յատկութիւն: Եւ մի բնութիւն՝ է բացասացութիւն 'ի վերայ Նորին ըստ միութեանն, և ոչ թէ էութեանցն սահման. զի այսմ անկար է լինել: Այլ որպէս և ինքն երբեմն զանձն միայն որդի մարդոյ առէր, երբեմն հաց յերկնից իջեալ, երբեմն մարմին տեսեալ, և 'ի Փիլիպպոսէ Աստուած ծանուցեալ: Արդ յորժամ զայս ասեմք, ոչ թէ յորդի մարդոյ ասելն՝ մոռանամք գիտել զնա որդի Աստուծոյ. կամ 'ի յերկնից խոստովանելն Աստուած՝ զլանամք զ'ի յերկրէ լինելն, այլ միոյն զմիւսն հետևեցուցանեմք. այսպէս և զայս է տեսանել. զի ասելն մի բնութիւն բանին մարմնացելոյ՝ ըստ անձնաւորութեան անճառ միաւորութեանն է հրատարակիչ, և ոչ թէ բնութեանցն կորուստ. բացայացութիւն անուան, և ոչ էութեանն սահման: Զոր օրինակ սովորութիւն է զԱստուած վասն մաքրութեանն հուր անուանել, և վասն պարզութեանն լոյս. նա և բազումս առնումք 'ի վերայ Նորա այսպիսի անուանք: Սակայն ոչ թէ մի ոք 'ի սոցանէ զէութիւն Նորա ըստուգէ, որ անհաս է, այլ միայն զներգործութ՟ի կամաց Նորա մեզ յայտնի ցուցանէ: Արդ մեղանչե՞մք զանհասն հասանելի անուամբ պարագրել, ոչ երբէք. այլ յասելն զայս՝ և այնպէս զանհասութիւնն հաւատամք և գիտեմք։ Այսպէս և մի բնութիւն ասացեալն 'ի վերայ Քրիստոսի՝ ոչ թէ զէութիւն նորա հաստատէ, որ յերկուցն էր անշփոթ և յայտնի, այլ զներգործութիւն անճառ միաւորութեանն բացաձայնէ ։ Իսկ յորժամ 'ի քննութիւն մտեմք սահմանել զասացեալ անունն 'ի վերայ իւրն, որպէս զԱստուած՝ որ հուր անուանեցաք, ոչ ստուգեմք հուր լինել, այլ ա՛յլ անհաս էութիւն. սակայն վասն մաքրողական ներգործութեանն այսպէս կոչեցաւ ։ Ըստ այսմ և զՔրիստոս զոր մի բնութիւն ասացաք, ոչ կարեմք 'ի քննելն այսպէս ստուգել, մանաւանդ և ոչ կամիմք. այլ անճառ միութեանն քարոզ՝ զայս բացաձայնեցաք։ Եւ 'ի սահմանելն գտանեմք զմիացեալսն, և յետ միութե՟ն զանշփոթ գոյացութիւնս՝ մարդկութեանն և աստուածութեանն : Եւ զիա՞րդ խելագարի մարդ, և կամեցի զԱստուծոյ որ առ մարդկութիւնս շնորհն՝ ունայն ցուցանել, և ամենայն աստուածաշունչ գրոց ընդդէմ կքրել : Մի՛ լիցի զայս զմտաւ ածել որ առ մեզս Աստուծոյ եկեղեցւոյ : Այլ որպէս է սովորութիւն գրոց, երբեմն ասել զնա Աստուած միայն, և երբեմն մարդ միայն. սակայն յասելն պարզ բանիւ զմին՝ զօրութեամբ և զմիւսն ընդ նմին՝ ի ներքս փակէ. ըստ այսմ և յասել մի բընութիւն Բանին մարմնացելոյ, մի ասելով՝ զանձառ միաւորութիւնն ճշգրտէ. իսկ Բան մարմնացեալ ասելով, զայլ և այլ բնութիւնս հաստատէ : Ահաւասիկ յայտ եղև, հա՛յրք սուրբ, թէ չէք ինչ 'ի մէջ մեր վասն առ Քրիստոս խոստովանութեանս հակառակութիւն, որք 'ի մի շաւղաց վերայ ընթացաք և ընթանամք :

Այլ ընդէ՞ր, ասեն, ոչ ոք զայս մինչև ցայսօր յայտնեաց, այլ մանաւանդ և զնորին հակառակն : Ատուծոյ է այս քննելի· մանաւանդ թէ և բազումք ասացին 'ի մերոցս՝ առաջնոց սրբոցն եղեալ հետևողք։ Սակայն բարք մարդկան հակառակասէր է· զայնս որ ճշմարտութե՟ն էր ջատագով և խաղաղութեանն՝ անգոսնեցին, և զառ թշնամութիւն մարդիչ բանին՝ սիրեցին և գրեցին ։ Ապա թէ ոչ՝ ո՞ւր դիցուք զբանս Յովհաննու իմաստասիրին և հայրապետին, որ զայս առ մեզ վկայութեամբ հարցն սրբոց ստուգէ· զԵզրի հայրապետին, և զիւրոյ ժողովոյն զհաւանութիւնն· զՎահանայ հայրապետին զհամաձայնութիւնն առ մեծ եկեղեցին Հռոմայ, և զնորին հետևողաց թագաւորացն և վարդապետաց ։ Յորոց մի էր և իմն աստուածաշնորհ և յոգունց գերազանց՝ հրեշտակն 'ի մարմնի Գրիգոր Նարեկացի։ Ո՞ւր և զորոյ աչօք տեսէք, և բանիցն աշակերտ էք, և հիմանն արկելոյ շինիչք, զսրբոյ հօրն մերոյ Ներսիսի՝ զայսմ հետևողութիւն։ Սոքա ամենեքեան զայս երկնէին զխորհուրդ. և ծնամ, զոր դուք հանդերձեալ էք կատարել, և սովաւ զեկեղեցին Աստուծոյ կերակրել. և այլ բազում ընդ սոքօք, որ ուսումնասիրացն է յայտնի, և աշխատելոցն առ 'ի բանից նոցին աշակերտութիւն. մեր հարք և մերոյ տոհմիս նահապետք: Քանզի ոչ ներէ ինձ ոմանց տկարութիւն՝ մերոյս արտաքոյ ելանել. ուստի և զօրացեալ շնորհօքն Աստուծոյ, սոքօք զասացեալս հաստատեցաք:

Ապա թէ էին ոմանք դարձեալ որ սոցա ընդդէմ զինեցան, գիտեմ և ես զնոսա. ճանաչեմ և զբանիցն զօրութիւն, և չեմ անտեղեակ: Ուստի և գտանեմ զնոսա՝ թէպէտ սուրբս և իմաստունս, սակայն ոչ 'ի սիրոյն օրէնս ճշմարտութեամբ վայելուչ. որք ոչ վարկանէին իւրեանց յանցանս՝ զմիութեան եկեղեցւոյ Քրիստոսի մնոտի խորհըրդովլ քակտումն. ուստի և յանդըգնաբար 'ի նոյն մխեցան: Որոց ներեսցէ Աստուած աղօթիւք ձեր, ըստ մեծի այս մասին յանցանաց սխալման, և մի՛ յիշեսցէ զաճեցուցանելն զայսր չար ախտի ճարակումն: Որոյ պտուղ ոչ այլ ինչ տեսանեմք, բայց միայն զանարգութիւն անուանն Քրիստոսի: Որով տեսանեմք այժմ զբազումս վարժեալ, և ողբամ արտասուօք, զի յառաւել սովորութենէն բնութի լեալ է իւրեանց առ ազգս քրիստոնէից և յեկեղեցի նոցա ատելութիւն. և զախտ չար թշնամութեանն՝ հայհոյութեան չար յաչաղանօքն յագեցուցանելով, Քրիստոսի համարին լինել վրէժխնդիր: Ո՛վ թշուառութեանս. նա թէ և առ հաւատոյ բան լսեն հաւանական խոստովանութիւն յայլ ազգաց, ոչ կամին 'ի սէրն խոնարհել· այլ բուռն հարկանեն զայլ կարծեաց, թէ նոքա զմերս առեն ազգ, վասն այսորիկ և 'ի մենջ առեսցեն· կափեն և կեղեքեն և հայհոյեն ըզմեզ, յաղագս այսորիկ և 'ի մենջ հայհոյեսցեն:

Ո՛վ մոացի դու, և ո՞ւր ուսար վիրօք զվէր բժշկել: Պաւղոս բամբասելոյն ընդդէմ օրհնեաց, զհալածիչն յանձն առ, 'ի հայհոյելն աղաչեաց, և այնպիսի մաղթանօք զոխերիմս աշակերտեաց. զքեզ հետևող նորին՝ ո՞ւսոյց չարի չար հատուցանել: Ո՞չ գիտես թէ ընդհուրն՝ ջուր շիջուցանէ, և ոչ հուրն. զըմբոստանալն՝ խոնարհութիւնն նուաճէ, և ոչ ընդդիմահարութիւն. չարն՝ բարեաւն յաղթի, և ոչ չարաւն: Ապա թէ դու առ այս հեղգաս, հեզ լինել տկարանաս, սիրել վերջանաս, զիա՞րդ 'ի հակառակամարտէն զնոյն պահանջես. Թերևս զնմանէ զանց արար բանսարկուն, և առ քեզ միայն ներգործէ: Նոյն մարմին է՝ որում դուդ ես վիճակեալ. և նոյն մախանացն ծառայ, որով դուդ վարակիս. մանաւանդ թէ ըստ այսմ խորհելով, ևս առաւել. զի դու 'ի նմանէ, և ոչ թէ նա 'ի քէն հատաւ. դու զնա, և ոչ թէ նա զքեզ անդոսնեաց 'ի սկզբանէ: Դու ձիթենի վայրենի՝ պատուաստեցար յանբուն քո 'ի բարի ձիթենւոջն, զի զՊաւղոսին յիշատակեցիս· ոչ թէ դու զնա, այլ նա արմատ գոլով երբեմն՝ զքեզ կրէր ՚ի վեր ունելով։ Եւ զի այժմ ոչ եմք այսպէս, ակարացաւ և նա առ օրէնս սիրոյն· առեալ զայսսիկ նիւթ՝ մախացաւ, առաւել ըզպատուոյն պարտն պահանջելով։ Եւ ոչ բարեաւն ջանացեալ զչարն յաղթահարել՝ ժխտեաց հայրենի գթոյն· և ստահակութե որդւոցս՝ թշնամի ընդդէմ կքրեցաւ· և երկոքին կողմանքս յայսմ վերէ վըշտացաք։

Արդ մնասցո՞ւք ՚ի սպառ· պըտղաբերեսցո՞ւք առ յապա զհայհոյութեանն պտուղ· թողցո՞ւք զորոմնս չարին ՚ի մէջ մեր, մինչև հնձեն և յայրել պատրաստեն հըրեշտակք։ Գիտելով զուղիղ դաւանութի, միայն սովորութեամբ՝ սիրո՞յն վերջասցուք։ Մի՛, եղբարք իմ, աղաչեմ մի՛ զայս խորհել· բարի է խոնարհելն· մեք ջանասցուք նախ յափշտակել զշնորհն· կամի՞մք զի սիրեսցուք, մեք նախ ըղսէրն առատացուսցուք․ մերոյն լուիցուք վարդապետին Քրիստոսի՝ որ ասէ․ Որպէս կամիք թէ արասցեն ձեզ մարդիկ, այնպէս արարէք և դուք նոցա։ Նախ դուք արարէք և այնու զնոցայն կամս սատար և հաւասար ձերոյն ժառանգէք։ Յառաջեսցուք ապա մեք լինել աղբեւր խաղաղութեան․ կանխեսցուք մեք զգրախտ միաբանութեան առնել։ Ո՞չ որ ըզբեռն ընկերին բառնայ՝ կատարէ զօրէնսն Քրիստոսի․ ո՞չ որ նախ խոնարհի՝ նախապատիւ բարձրացի․ ո՞չ որ զկատարեալն ունի սէր՝ ոչ խնդրէ զիւրն։ Զհայրենեացն օրէնս պահեսցուք ամբողջ․ մի՛ ջանասցուք լուծանել զօրէնսն Աստուծոյ, և զմերս հաստատել զաւանդութիւն։ Բարձցուք զգայթակղութիւն եղբարցն յանձանց, և լիցուք նոցա բժիշկք․ տացուք յանձինս կամաց նոցա տեղի, և տիրեսցուք նոցա։ Լինի բազում անգամ պատահումն հիւանդի՝ առ 'ի յոչ ճանաչել զվէրն․ Եթէ ճանաչէն՝ խոնարհեսցուք զի բժշկեսցեն. ապա թէ անձամբ յանձինս բաղդատանիմք, ընդէ՞ր յայտնել դըժուարիմք։ Համամայր եմք որդիք, մի՛ կարծեսցուք հրապոյրս պղտոր մեզ արբուցանել. եղբարք են և ոչ 'ի թշնամեաց. ծանիցո՛ւք զթըշնամոյն զբանսարկութիւն 'ի մէջ եղբարցս արկեալ՝ զոխակալութի՛ն հաստատող։ Պատուիրան ընկալաք, արեգականն ոչ մտանել 'ի վերայ բարկութեանն. յիշեսցուք զորքանութիւն յանցուածոյ օրինացս՝ և զղջասցուք։ Հրապարակեսցուք զներգործութիւն չարախօսին, և խայտառակեսցուք զնա։ Զիա՞րդ թողութիւն կարող եմք խնդրել յԱստուծոյ, որ նախ զմեր թողուլն ուսաք առաջի նորա ցուցանել. և առ այս յապաղեմք։ Եւ այն զի հրաման ընկալաք, ոչ քրիստոնէից եղբարց, այլ և հեթանոսաց ցուցանել զայս։

Մի՛ երբէք կացցես յարդարութեան քում, վարդապետէ մեզ ոմն 'ի հարցն, որ Ճշգրիտ գիտէր զՄեքենայս չարին. մինչև ցե՞րբ յաջակողմեանն գթեմք անզղջականապէս: Միանգամ նշաւակեալն վերստին խայտառակեսցի. հաղբ բազմահնար վարմին 'ի լոյս եկեալ՝ մի՛ ստուերասցի: Ի պատուիրանս Աստուծոյ մերոյ, քան զթշնամիսն՝ մեք յառաջեսցուք իմաստնանալ: Քան զթշնամիսն իմ, աղօթէր մարգարէն, զիս արա 'ի պատուիրանս քո իմաստուն: Յոյժ կարևոր տեսանեմ այսօր զայս աղօթս մեզ. զի մի՛ աստուածսիրութեան կարծեօք՝ յաստուածատեցութեան հաղբս լիցիմք կործանեալ: Բաւական լիցի մինչև ցայժմ ըստ պատուիրանին մոլորեցուցանելն, և ընդ խաւար՝ որպէս 'ի լոյս ընթացուցանելն: Դատապարտեսցի այսուհետև զրպարտիչն մեր, որպէս 'ի սկզբանն. իշխան աշխարհիս դատապարտեալ է, եղբարք, և սէրն և խաղաղութիւնն 'ի փրկչէն մերմէ նորոգեալ. սէրն ոչ ազգի առ իւրն ազգ, այլ ամենեցուն քրիստոնէից լինել 'ի Քրիստոս մի ազգ:

Այսպէս յօդէ խաղաղութիւնս, որ զշնորհսն 'ի գլխոյն յանդամսն իջուցանէ: Մի գլուխ ունիմք զՔրիստոս. միոյ գլխոյ անդամոց զիա՞րդ հնար է 'ի միմեանց պառակտել. վէ՞րս ունիմք, 'ի միմեանց բժշկեսցուք. առողջութիւն, 'ի փառս իրերաց զուարճասցուք. մի՛ անհաւանք լինիցուք առ 'ի վշտակցելն միմեանց. մանաւանդ թէ մի՛ և զանդամոց նախապատուութե՛ արհամարհեսցուք: Թէ ախորժէք՝ և այսմ լինիցուք անաչառ ընտրութե̃ որոշիչք. բաղդատութեան աչաց զեղբարսն համեմատեսցուք. ունկն գոլով մեր, մի՝ զի չեմք ակն, ասասցուք, եթէ չեմք 'ի մարմնոյ անտի. քանզի ոչ եթէ զներգործութիւն իւրն վայրապար բանս լուծանէ: Նոքա տեսին, և մեք լուաք. զոր տեսին՝ զնոյն և մեզ ուսուցին. յառաջ եղեն 'ի Քրիստոս, և ընդ նմա իշխանութեամբքն յաջողեցան: Քանզի և զայս ոչ կարծեմ ասել վայրապար. Պաւղոս անկեալ զորթն, և հոգւով նորա լցեալ հարքն՝ յիւրաքանչիւր ժամանակս զջուրն արբուցին, և Աստուած աճեցոյց: Մի 'ի բարունակացն և մեք՝ 'ի նոցա որթոյն սաղարթ ծաղկեցաք. կարգս և օրէնս նախ անձանց հաստատեցին, և ապա մեզ աւանդեցին. գրովք սրբովք նախ զինքեանս կրթեցին, և ապա զմեզ վարժեցին. նա և շնորհքն Աստուծոյ՝ զնոյն քաղաքաւ և աշխարհաւ անշարժ զնոսա պահեաց:

Արդ, եղբարք, աղաչեմ, առ որս մեք կարծիմք ունել թերութիւն, և նոքա ջանան յուղղութիւն, մի՛ երբէք զանզգամս 'ի մանկանց՝ ընդդէմ պատասխանեսցուք: Իսկ յորս ըստգտանեմք զնոսա թշնամութեամբ, և գրոց սրբոցն խորհրդակցութեամբ, լիցուք սիրով վիրացն բժիշկս: Բազում գիտէ փափկութիւն գործել դանդաղութիւնս, որով յօրանան. դիւրաւ որսայ գոռոզութիւնն 'ի մոռացութիւն պատուիրանին, որով պանծանան: Գիտէ վանել արծաթն ծառայէցուցիչ, որով խրոխտանան: Հըպարտս առադրէ գիտութիւնն, զոր մայր ունելով 'ի նոյն ապաստան եղեալ ճոխանան: Արդ կրիցն լիցուք մի աղճատիչք, այլ ցաւակիցք· մի եպերիչք, այլ առողջացուցիչք· մի կսկծեցուցիչք, այլ դարմանիչք· մի երգիծանիչք, այլ մխիթարիչք: Քանզի զայս գիտեմ անդամոց սովորութիւն, որով և մեք անուանիմք և պանծանամք 'ի գլուխն մեր Քրիստոս: Խոնարհեսցի ակն առ ունկն, և ունկն՝ աչացն լիցի ուսուցիչ· եթէ սխալեսցին՝ յորմէ աւանդեսցին՝ վերստին ուսցի· և եթէ ամբողջ պահեաց զհայեցուածն՝ զկաղակարծութիւնն հաստատեսցէ: Մի դանդաղեսցուք՝ մանաւանդ և փութասցուք բժշկել և բժշկիլ: Առ Քրիստոս ամբառնայ շնորհ բժշկութեանն· նորա գոլով մարմին երկուցս կողմանց, զՔրիստոս բժշկել մի դըժուարեսցուք: Եթէ մեզ և եթէ նոցա լիցի առողջութիւն՝ փրկչին մերոյ է անուանն սրբութիւն, ըստ որում և հիւանդութեամբն հայհոյութիւն։

Ո՛վ մեծի շնորհի խաղաղարարացդ, Աստուծոյ տիրապէս որդիութիւն. « Երանի՛, ասէ, խաղաղարարաց, զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին »։ Լուա՞յք ըզՏեառն անուստ ձեզ խոստմունս. խրախուսեցէք առ այս բարբառոյ յոյս՝ փողք տիեզերաց։ Ելէք ՚ի վերայ աւետարանական բարձր լերինն՝ աւետարանիչքդ Սիոնի։ Բարձրացուցէք զբարբառս ձեր աւետարանիչքդ Երուսաղեմի. բարձրացուցէք, մի՛ երկնչիք յաւանդութեանցն երկեղէ։ Խաղաղութեան էք աւետարանիչք, ընդէ՞ր ամաչէք. Քրիստոսի բերէք զնմանութիւնն և զվկայութիւնն, մի՛ պատկառէք. Պաւղոս զայս ձեզ հրամայէ. Ո՛վ Տիմոթէէ, մի՛ ամօթ համարիր զվկայութիւն տեառն Յիսուսի։ Եւ զի՞նչ այլ Քրիստոսի ճշմարիտ վկայութիւն, քան եկեղեցւոյ նորա լինել յօդ միաբանութեան։ Զի՞նչ այլ մեծ առաքինութիւն, քա՛ն նմա՛նել Քրիստոսի, և զխաղաղութիւ՛նն՝ զոր նա արեամբ հաստատեաց, բերանոց բարբառով վերստին ուղղել: Աշակերտք առաքելոցն, առաքելական հետոցն զկնի փութացէք: Ի բաց փոխեսցուք 'ի սրտից մերոց զչար գանձն՝ որ բղխեաց մեզ զա՛նազան չարչարանս. և ո՞յք են նոքա, ո՞վ կարէ թուել:

Աստի սկսաք լի՛նել առա՛նց թագաւորի և իշխանութեան. յայսմ հետէ եղաք ստրուկք հեթանոսաց տէրութեանն. կարգ մեր 'ի բաց հատեալ հաղբիւք չարին յարմատոյն՝ սկսաւ սին սաղարթիւքն լինել: Ժողովուրդք անիմաստք և առաջնորդք տգէտք, և մա՛նկունք իշխա՛նք՝ գողակիցք գողոց, և եկեղեցիք պանդոկք և մաքսատու՛նք օտարաց. և այլ բազում՝ զորս դըժուարի բա՛նս թուել, և ընդ ա՛նձին ոգորել: Սակայն առաջի բժըշկացդ է վիրացս խայտառակելն. ոչ թէ վայրապար մերկանամ ըզվէրս, այլ որպէս զի հնարիւք ձեր առողջ 'ի նմանէ լինիցիմ։ Ո՛վ թըշուառութեանս· այնքան յաչաղանքն գրաւեալ զառաջնորդական զմիտս, որպէս զի զայսքան իմ ըզվէրս թողեալ առանց ջանի բժըշկութեան, զայլս անդուռն բերանով նախատեմ· մոռացեալ ըզՏեառն երգիծանել զայնոսիկ՝ որք գերանովք ջանային զշիղս դատել։ Ո՛վ չարաչար կուրութեանս այսմիկ, զոր ագէտքն և անիմաստքն՝ բուռն և կատարեալ տեսութիւն առնեն, և զչարն որպէս բարի ողջունեն, և զթիւրն որպէս զուղիղ։

Եւ զի՞նչ է այս· մոռադիւրութեամբ լուարուք, և յայտնեցից ձեզ զծածուկ ախտս՝ որով տառապի եկեղեցի քրիստոնէից։ Հաց արար Աստուած առ 'ի կերակուր մարմնոյ, և գինի առ 'ի յարբումն նորին· զայն հացն և զգինին՝ առ Քրիստոս յոյն մեր օրհնեաց և սրբեաց, և իւր մարմին և արիւն անուանեաց, և մեզ փրկութեան յիշատակ աւանդեաց։ Արդ սովորութիւն ունիմք զայն հաց միշտ 'ի փառս և 'ի յիշատակ Քրիստոսի օրհնել. և մի օրհնութիւն է, և մի անուն Քրիստոսի, զոր իւրաքանչիւր ազգս զանազան լեզուօք 'ի վերայ նորին անուանեմք: Եւ 'ի ներս անկեալ թշնամութիս, զնոյն հացն մինչև եմք օրհնեալ անուամբն Քրիստոսի, առնումք յերերաց և ուտեմք համարձակ: Իսկ յորժամ զՔրիստոսի անունն 'ի վերայ յիշատակեմք, և նորա մարմին զնոյն կատարեմք միով օրհնութեամբ, Հայն 'ի Հոռոմին խորշի հաղորդել յօրհնեալ պատարագն, և Հոռոմն 'ի Հայոյն: Եւ զհաց՝ զոր մի աղօթիւք, միով օրհնութեամբ, մի Քրիստոս անուամբ անուանեմք, միոյ Հոգւոյ շնորհիւ իւրաքանչիւրքս կատարեցաք, յետ այնորիկ անգոսնեմք զերերաց. Նախ քան զօրհնելն առանց գարշելոյ ուտէաք, և յետ Քրիստոսի անուամբն օրհնելոյն՝ գարշիմք: Եւ լեռնացեալ չարեացս նիւթ արարաք զատուերս անհաստատս. և զոր միութի՛ն քրիստոնէից խրատեցուք՝ հեթանոսաց ընդդէմ ցանդ արկանել, զայն միմեանց անջրպետ ձգեմք։ Եւ փակեցին գիրք սուրբ հարցն ոչ զօտարս, այլ զմեզ ընդ մեղօք · զի նոքա յանհաւատից հրաժարեցուցին զայս խորհուրդ · իսկ մեր մի հաւատ ունելով առ նոյն, և մի աղօթս սակս նորին խորհրդոյ, զնոյնն առ իրեարս նախատեմք յանդգնութեամբ, անգիտացեալք թէ յանձինս դառնայ վէրն և թշնամութիւնն · մանաւանդ թէ զճշմարիտն ասել, առ Քրիստոս՝ առ որ և դիտաւորութիւնն է երկուցս խորհրդոց։ Այս է ատելութեան պտուղ՝ և սորին հետևողքն · սոքա մանկունք դըստերն Բաբելացւոց, զորս զքարի հարկանել թախանձեմ։ Արդ ըսպանցուք զվաղուցն ծնեալս, և սկսցուք այսօր երկնել՝ զոր Քրիստոս արկ սերմն յարգանդ մտաց մերոց, զմեծ սէրն, զանչափ գութն, զդնելն զանձինս 'ի վերայ իրերաց։

Արդ եթէ ոչ զանձն՝ գէթ ըզկամսն· չէք քան զխաղաղութիւնն բարի 'ի կեանս մեր, թէ ախորժեմք· ոչ այն զոր աշխարհս տայ, այլ այն զոր Քրիստոս եբեր յերկնից· վասն այսորիկ և աւանդեցաւ յեկեղեցի հանապազ զնոյն աղերսել։ Բողբոջ է առ Աստուած խաղաղութեանն առ եղբարսն խաղաղութիւն· չէք հնար ումեք ընդ Աստուած առնել խաղաղութիւն՝ մինչև առ մարդիկ զնոյն ուղղեսցէ։ Արդ զի կարօտ եմք ամենեքեան առ Աստուած խաղաղութեանն, հիմն արկցուք նմին զառ եղբարսն միաբանութիւն· աղաչեցաք վասն խաղաղութեան զԱստուած, և աղաչեմք· արդ պարգևէ, ամփոփեսցուք։ Հաստատել զեկեղեցի իւր սուրբ 'ի տեառնէ խնդրեցաք· այսուհետև կամեցաւ կատարել ըզնոյնն· ելցուք 'ի լեառն աւետարանական հաւատոց, հարցուք փայտս անփուտս, և նեցուկս սմին կառուսցուք։ Այսպէս ասէ Տէր ամենակալ, հաճեցայց դովաւ և փառաւորեցայց 'ի ձեզ։

Մի՛ ոք ասիցէ, թէ ոչ է ժամանակ ամփոփելոյ զքակեալ քարինս Տեառն տանն, և դարձեալ զնոյն չլինել. մի՛ եթէ ձե՞զ միայն իցէ բընակել 'ի տունս գմբեթեայս, և տունս իմ աւերակ կայ, ասէ Տէր։ Տեսանե՞ս, թէ ո՛րպէս մարգարէս տրտնջէ 'ի դիմաց Աստուծոյ։ Եւ արդ զի՞նչ. պարզ տեսանես զասացեալս, և ոչ խորհրդաբար և հոգեպէս։ Ո՞ւր ապա յայնժամ դիցուք զՆոայեան աւելն. Երկինք աթոռ իմ են, և երկիր պատուանդան ոտից իմոց. և ես յո՞ հանգեայց, բայց թէ 'ի հոգիս մարդկան հոգեպէս։ Արդ զաւերեալ զայս տունս իւր 'ի խռովութենէ՝ չլինել թախանձէ մարգարէիւս։ Այսպէս ասէ Տէր. Կարգեցէք զսիրտ ձեր 'ի ճանապարհս իմ, զի մինչև ցայժմ վարէիք բազում, և ժողովէիք սակաւ. ուտէիք և ոչ յագէիք. ըմպէիք և ոչ լինէր յագուրդ. զգենուէիք և ոչ ջեռնուէիք նոքօք. և որ զվարձս իւր ժողովէր՝ 'ի ծրարս ծակոտեալս ժողովէր։

Իսկ այսուհետև ողորմութեամբ և գթութեամբ խօսեցայց ընդ ձեզ, ասէ Տէր. և եղիցի յայսմ հետէ՝ լուայց ես երկնից, և երկինք լուիցեն երկրի, և երկիր լուիցէ ցորենոյ և գինւոյ և ձիթոյ, և նոքա լուիցեն ժողովրդեանդ իմոյ:

Ահա հնչեցին ձայնք աւետեաց յականջս ձեր. այսուհետև զարթիք, և սկիզբն արարէք շինել զեկեղեցի Աստուծոյ կենդանւոյ: Տուք 'ի ձեռս Ճարտարապետիդ այդորիկ իմաստնոյ, ոմն զոսկեղէն զսրտի հնազանդութիւն, ոմն զարծաթեղէն համակամութիւն, այլք բազմերանգ քարինս սիրոյ, համաշունչ լինել՝ միախորհուրդ: Մի՛ ինչ ըստ գրգռութեան, մի՛ ինչ ըստ սնապարծութեան. այլ զմիմեանս լաւ համարել առաւել քան զանձինս. յաղթիլ, և ոչ յաղթել. զրկիլ և ոչ զրկել. զի ընդ սիրելեացն է միաբանութիւնս և ոչ ընդ թշնամեաց հակառակութիւն: Որոյ աղագաւ գրէ առաքեալ. Ընդէ՞ր ոչ դուք զրկիք, և ոչ դուք առաւել նեղիք: Արդ Պաւղոսի հաւանիմք՝ զրկելովս և խոնարհելովս զսէրն հաստատել, և ոչ ումեւպէտ մարդոյ: Մարտ մեր հասարակաց՝ լիցի առ հասարակաց մեր թշնամին սատանայ. իսկ առ եղբարս՝ հանդարտք ուսաք լինել հանապազ. մանաւանդ զի և նա բազում անգամ 'ի խոնարհութենէն պատկառէ. եթէ զարմատ չարին սա յաղթահարէ, քանի՞ առաւել զոմբռնեալսն 'ի նմանէ զմիտս մեր նուաճէ: Մի՛ ինչ մարմնական 'ի հոգևոր գործս խառնեսցուք, մի՛ յաչաղանք, մի՛ լիցուք զուր դատաւորք, որք անաչառն եմք մանեալ ատենի: Նովին չափովն որով մեք աստ չափեմք՝ չափելոց է մեզ անդանօր անսուտ դատաւորն: Եթէ սիրեմք և զայն չափեմք, 'ի սէր վայելեմք. եթէ ոխս և ատելութիւն, զկշիռն ընդունիմք: Երկեցուցանէ և զիս առակաւոր բանն՝ որ յաղագս ծառայիցն. նոքն 'ի տեառնէն բազում ընկալաւ, և առ ծառայակցին տկարութիւն ն՛երել ոչ կամէր · ելեալ, ասէ, խեղդէր զն՛ա · և ն՛ա զերկայն՛մտութիւն՛ աղերսէր · իսկ զի ոչ կամեցաւ՝ պատժեցաւ ։ Ն՛ոյնպէս, ասէ, արասցէ և ձեզ հայրն իմ՛ երկն՛աւոր, եթէ ոչ թողուցուք իւրաքան՛չիւր եղբարց ձերոց 'ի սրտից ձերոց զյան՛ցան՛ս ն՛ոցա ։ Ո՛վ զարհուրելի վճիռ · քանի՛օն եմք 'ի ն՛երքոյ այսմ՛ դատապարտութե՛ս, որք յան՛ցան՛ս ոչ ուն՛իմք առ մեզ զեղբարցն՛ 'ի ձեռս, և 'ի կարծիս զն՛ոսա դատապարտեմք ։ Չեմք մեք Աստուծոյ նախան՛ձարկու կամ վրէժխն՛դիր · Մի է դատաւոր, ասէ Յակովբոս առաքեալ · ն՛որայն՛ ամեն՛եքեան ակն՛ կալցուք ատեն՛ի ։

Տօ՛նք և աւանդութիւն՛ք 'ի սիրոյ յառաջ եկեալ հաստատեցան՛, և ոչ թէ սէրն՛ 'ի տօ՛նից · անվայելուչ է ապա զվասն՛ որոյ եղեն՛ սոքա՝ եղծանել, առ զոսին՛ հաստատուն պահելոյն՛ պատճառաւ ։ Քանզի զեղման՛ 'ի վերայ մեր փրկչին՛ շն՛որհաց՝ տուան՛ ն՛շանակք գոհութիւն՛ն սուրբ, և մեռոն՛ն սրբարար ·

տօնք տէրունականք, և որ 'ի սոսա յարմարին: Արդ զի՞նչ կարծէք վայելուչ. 'ի նիւթոց նիւթ և 'ի ժամանակէ ժամանակ զսոսա՞ փոխել, եթէ զնոյն յամառութեամբ պահելով զխաղաղութեամբ միաւորութիւն եկեղեցւոյ Քրիստոսի լուծանել: Թերևս ո՞չ զտէրունական կամս ախորժէք առնուլ օրինակ, որ զշաբաթ՝ սահմանեալ վասն մարդոյն հանգստեան՝ իրաւունս վարկաւ լուծանել 'ի պէտս նորին առողջութեան. ուրեմն 'ի հրէականն եմք առասպելաբանութիւն կործանեալք: Զգոյշ լիցուք, եղբարք. մի՛ գուցէ և զմեզ Բանն կոչիցէ կեղծաւորս և քակտիչս օրինացն Աստուծոյ, 'ի պէտս զմերն հաստատելոյ աւանդութիս: Գուցէ և առ մեօք Տէրն 'ի մէջ ածցէ զԵսայեայ յանդիմանութին. կեղծաւորք, ասէ, բարիոք մարգարէացաւ 'ի վերայ ձեր Եսայի և ասէ. Ժողովուրդս այս շրթամբք պատուէ զիս, և սիրտք իւրեանց հեռացեալ մեկուսի են յինէն. ու-

ուսուցանեն վարդապետութիւնս ըզմարդկան պատուիրեալս ։ Թողեալ ասէ, զպատուիրանն Աստուծոյ՝ զձերդ կամիք հաստատել զաւանդութիւնս ։ Եւ զի՞նչ է պատուիրանն Աստուծոյ, ասիցէ ոք, զորով զանց առնեմք մերով աւանդութեամբս ։ Սէրն, եղբայր, որ առ միմեանս ․ զի զայս ասաց Քրիստոս, թէ Պատուիրան նոր տամ ձեզ ․ և այսու զմեզ իւր աշակերտս ճանաչել՝ ետ տարացոյց ․ զոր թողումք 'ի պէտս աւանդութեանց տօնից յօրէ 'ի յօր փոխելոյ, զորս ոչ ընկալաք 'ի Քրիստոսէ օրէնք ․ այլ մեք վասն զնա սիրելոյն սահմանեցաք ․ որ թէպէտ է գեղեցիկ, բայց և ոչ յայնժամ՝ յորժամ ըզմեծ օրէնն՝ փոքրս տապալեալ քակտէ ․ զի 'ի Քրիստոս Յիսուս, ասէ առաքեալն Պաւղոս, ոչ այլ ինչ՝ բայց միայն հաւատք սիրով յաջողեալք ։ Զի՞նչ ասես, ո՛վ աստուածային Պաւղոս ․ ապա ուրեմն ոչ ժամանակք տօնից, և ոչ նիւթք խորհրդոց, ոչ խորութիւնք կերակրոց: Եւ ոչ երբէք, ասէ. վասն զի թէ հաւատով և սիրով խորաքանչելեացդ կատարին, որպէս և ընկեցին՝ և յորոց նիւթոց և իցեն, հաճոյ են Աստուծոյ: Իսկ ապա եթէ յայսցանէ կատարողքն վրիպին, զինչ և գործեն 'ի նանիր դանդաչեն. զի նա ոչ թէ 'ի տարրն հայի կամ 'ի նիւթն՝ աննիւթն բնութիւն, այլ 'ի հոգին և 'ի սէրն՝ որով տարրն ընծայի:

Ահա յայտ է ապա, թէ ոչ ըստ որում մեք խորհիմք՝ խմորուն հացն ապականութիւն է 'ի Քրիստոս, և ոչ որպէս նոքա՝ բաղարջն մաքրութիւն. ոչ ջուրն ևս՝ խորհըրդոյ առաւելութիւն, և ոչ անջուրն՝ նուազութիւն: Գինին՝ նոր ուխտին արեան նշանակ: Ոչ 'ի միւս ամիսն տօնելն միայն հաճոյ, և ոչ 'ի միւսն այլ՝ անարգեալ: Ապա թէ ոչ՝ թողեալ զամենայն ինչ, և զոր վասն այսր 'ի գրոց բաղմապատիկ զվկայութիւնս, եկ և զքննութիւն իրին քննեսցուք: Այս ինքն, զի յամենայն ամ շրջանակ տարւոյ յառաջ խաղացեալ՝ զիւրաքանչիւրան 'ի տօնիցն յօրէ յօր փոփոխէ· և որ յայսմ ամի օր ծննդեանն, 'ի միւս այլն՝ ո՛չ հանդիպի լինել օր ծննդեան, այլ յառաջ փոխի օր ըստ օրէ, և ոչ է հնար յօր կամ 'ի ժամանակ ծննդեանն Քրիստոսի զնոյն կատարել, որպէս կարծեն ոմանք, 'ի հալովման և 'ի փոփոխման ժամանակիս՝ որ զամենայն տօնս յօրէ յօր շրջեալ խաղացուցանէ· նա և զմեծ զփրկագործն պասքա՝ ոչ միայն յօրէ յօր, այլ յամսոյ յամիս: Բայց յորժամ հաւասար զնոյնն կատարեմք, ոչ երբէք խտրութեամբ թերեհաւատեմք յիրերաց: Այսպէս ունէր լինել և ծննդեանն օր, եթէ 'ի հաւասարութիւն եկեղեցւոյ խոնարհէաք: Զի՞նչ պարտ է և զսրբոյն բանս 'ի մէջ առնուլ առաջի իմաստնոցդ՝ մեզ 'ի կշտամբութիւն· զի Աստուածաբանն այլ և այլ խորհուրդս և աւուրս նոցին ցուցանէ· և սուրբն Եփրեմ, յամսեան յորում արեգակն բարձբանայ, ասէ, զՔրիստոս ծնեալ. և Պրոկղ զՍտեփաննոս ընդ արեգականն արուսեակ ասէ ծագեալ. և այլք բազումք, որ սոցա համաձայնին ։

Նա և զգինի, որոց որպէս հաձոյ թուեցաւ՝ քննեցին, և ոչ այլ ինչ զբնութիւն նորին սահմանեցին, բայց միայն ջուր 'ի ձեռն որթոյն յայլ ինչ որակութիւն փոփոխեալ յեղյեղմամբ տնկոյն ։ Իսկ եթէ սկիզբն էութեան նորա ջուր է՝ որպէս և ցուցաւ, նա դարձեալ խառնելոյն զխառնուրդ գործէ 'ի նմա ապականութիւն ։ Տղայոց մնաց արդարև այս կարծիք . և զի համեութիւն տարերք են, որպէս յոչ խառնելն՝ նուազութենէ ։ Քանզի ամենայն նիւթ 'ի չորից տարերցս է բաղկացեալ, 'ի հողոյ, 'ի ջրոյ, 'ի յօդէ և 'ի հրոյ . և մի գոլով 'ի նիւթոցս գինին, հարկաւորապէս ունի զչորս տարրն ընդ ինքեան խառնեալ, յորոց մինն է ջուրն ։

Դարձեալ զհաց խմորեալ, ոչ

եթէ մեք իբրև զապականեալ անարգեմք, կամ զանխմորն իբրև զմեռեալ համարիմք։ Արդ եթէ մեք ոչ խտրեմք, Աստուած զարարածս իւր որպէս զպիղծս անարգէ՞. մանաւանդ ո՛չ իմանաս, թէ և խմորունն և անխմորն է ապականելի՝ նիւթ գոլով զգալի։ Զի ամենայն նիւթոյ որ մարմին է՝ ապականութիւն հետևի. և երկոքեանն են մեռեալք, ոչ ունելով հոգի կենդանի, այլ տարր գոլով անշունչ. և չէ մին քան զմին պատուական կամ նուաղ, այլ մի հաց են և անուանին. և գիտեմք վկայութեամբ մտաց զստացեալս։ Ապա ուրեմն ապականացու նիւթ՝ խմորեալն և անխմորն. սակայն եդեալ 'ի նոցանէ զիւրաքանչիւրան առաջի Աստուծոյ՝ Քրիստոսի մարմնոյն յիշատակ, և աղօթիւքն սըրբեալ, հաւատամք 'ի ձեռն ներգործութեան Հոգւոյն՝ լինել ապականացուին միութե̃ Հոգւոյն Աստուծոյ մեզ անապականութե̃ խորհրդոյ կերակուր. և մեռելոյն՝

խառնմամբ սրբոյ Հոգւոյն՝ կենդանի։ Նա զի թէ երբեւ զՀրեայսն հայք՝ մինչեւ 'ի մարմին եւ 'ի մարմնական նշանակսն եւեթ հայեցողս, գոյր այսոցիկ տեղի քննութեան. ապա թէ յայնցանէ ամբարձաք, եւ ամենայն մարմնական մեր անշունչ տարերց նշանակք Հոգւոյն կենդանանան, զիա՞րդ ուր հոգի՝ մեռելութեան գոյ կարծիս կամ ապականութեան։ Ապացոյց առցուք ասացելոցս եւ զոր 'ի մեզ մարդս. քանզի ապականեալ յայնժամ կոչի՝ յորժամ հոգին 'ի մարմնոյն որոշի։ Այսպէս եւ ամենայն խորհրդածութիւնք որ առ մեզ Քրիստոսի, ապականութեան լուծակից եւ թերի յայնժամ են, մինչդեռ ոչ է Հոգին հաւատոյն եւ աղօթիւք ընդ նմա միացեալ։ Իսկ յորժամ սովաւ դրգի մարմին նիւթոյն, եւ զհոգին կենդանի 'ի նմա պատուորէ, եւ իմացականապէս խառնէ՝ յորոց եւ իցէ նիւթոց, կատարեալ լինի 'ի Քրիստոս։

Առ այս առցես ինձ եւ զմիւռոնն

տուրք՝ ոչ 'ի նիւթոյն անուշահոտեալ, այլ 'ի հոգւոյն սրբոյ քահանայական աղօթիւք իմանալի անուշահոտութեամբն լցեալ։ Ուրեմն արդարանայ 'ի բանս իւր առաքեալ, թէ Ի Քրիստոս Յիսուս ոչ այլ ինչ, բայց միայն հաւատք սիրով յաջողեալ։ Զի սա է՝ որ յանկատար նիւթն զհոգին խոնարհեցուցանէ․ սէրն առ Աստուած, որոյ աղօթքն է պտուղ, և հաւատն է՝ որ զհիմն նորին արկանէ․ թէ Աստուած մարդոյ աղաչանաց՝ իմանալի բնութիւն իմացականին լսէ, նոյն և զօրհնելն ընդունի։

Հաւատա թէ որ զինչ և է հաց, յորժամ աղօթքն նուիրեցաւ՝ մարմին է Քրիստոսի, և է ճշմարտապէս։ Ապա թէ ոչ հաւատաս, թէ անխմոր լինի, և կամ իբրև զձիւն սպիտակ՝ չհամարիս․ զի ոչ եթէ օրհնութիւնն զտարրն յայլ էութիւն փոխէ զգալի աչացդ 'ի տեսութիւն հաւանութեան, այլ միայն իմանալի զօրութիւն նմին ընձեռեաց․ և իմանալին հաւատովք տեսանելի· և հաւատոյն կա՛ր է և զխմորուն և զբաղարջն սրբեալս օրհնութեամբն՝ ընդունել մարմին Քրիստոսի: Ապա թէ կարող ես զայս առնել, ընդէ՞ր դժուարիս կամ հակառակիս· ո՞չ ապաքէն զի հեռ և նախանձ ատելութեամբ ունիս առ եղբայրն: Եւ ուր սոքա բնակին՝ ամենայն իրք չար և անկարգ է՝ ասէ առաքեալ: Զի թէ վասն զեղբայրն անգոսնելոյ, և ըզնորա պատարագն որ 'ի խմորեալ հացէ, առնես զքոյդ պատարագն բաղարջ, թերի ես 'ի հաւատոցն, և նախանձուն ծառայ: Իսկ ապա թէ պահես զքոյդ աւանդութիւն 'ի փառս Աստուծոյ, և ընդունիս զնորայն 'ի նորին փառս, միոյ Քրիստոսի մարմին Ճշմարիտ զ'ի խմորուն օրհնեալ հացէն և զբաղարջէն, այդ է գովելի կարծիք: Եւ զայս ետ մեզ Տէրն և սրբոց իւրոց առաքելոցն՝ կատարիչ խորհըրդոց, զհաւատոն և զսէրն, և ոչ այլ ինչ: Վասն այսորիկ ո՛չ ինչ կարևոր համարեցան գրել զոք 'ի նիւթոյն ընդունելի, կամ անարգեալ. քանզի զի՞նչ պիտոյ էր նոցա զկեանս ունելով պաշտօնեայ, էութեան նիւթոյն առնել ընտրութիւն:

Բայց տես առ այսոքիւք զիսրայէլ, որ ոչ եհաս այս շնորհի պաշտպանութե՟ սուրբ Հոգւոյն, այլ մինչև 'ի նիւթքն մարմնաւորք միայն էր նշանակք խորհրդոց նոցա. թէ զիա՞րդ զամենայն նիւթոյն ճշգրտութիւն որոշեաց նոցա Աստուած օրինօքն. այլ և այլ պատարագք, և այլ և այլ կերպարանք յօշելով. զոմանս միայն բոլորովին ողջակիզեալ, և զայլս ոչ այնպէս. զկէսս միայն 'ի խորանն, և զայլսն 'ի սեղանն ընկալեալ: Բայց մեզ և ոչ մի ինչ 'ի սոցանէ, այլ միայն հաւատ և սէր սուրբ մըտօք: Ինձ թուի այսպէս մեր և նոցա խորհրդոցս 'ի միմեանց անջատութիւն. զոր օրինակ թէ ախորժէ ոք գծագրութե՟ գեղոց պատկեր նկարագրել, զպէսպէս երանգս գեղոյն 'ի կիր ածէ. և ջանայ ուշիւ իմաստիցն զնա 'ի տիպ և 'ի հասակ և 'ի ձև կենդանեաց յօրինել, զի հաճելի և ցանկալի որպէս զկենդանի թուեսցի տեսողացն՝ անկենդանին: Իսկ մարդ կենդանի՝ որ կրի հոգւով մարմինն, ոչ այսոցիկ ճշգրտութեան երանգոց կարօտի՝ առ 'ի հրապարակել զիւրն կենդանութիւն. այլ բաւական է միայն հոգին ներգործող զշարժումն անդամոցն՝ զայս հռչակել: Արդ զի Իսրայէլ էր անկենդան յարացուցին գծագրողն, որք 'ի մեղացն Ադամայ տկրեալք ոչ զօրեցին առնուլ պաշտօնեայ քահանայագործութեան իւրեանց զհոգին Աստուծոյ, այլ կերակրովք և ըմպելեօք և պէսպէս մկրտութիւք մարմնոյ արդարութեամբքն ջանային զճշմարտութիւնս գծագրել: Իսկ ապա եկեալ Քրիստոս քահանայապետն հանդերձելոց բարեացս՝ մեծաւն և կատարելաւն և անձեռագործ խորանաւն, այս ինքն՝ որ ոչ էր յայսց արարածոցս, անդր եմուտ իւրով արեամբն 'ի սրբութիւն սրբոցն, որ է ծոցն հայրենի. և անտանօր նաւթձեաց մեզ զյաւիտենական փրկութիւնն: Եւ փրկելոցս պաշտպան առ 'ի Հօրէ և առաքեաց զՀոգին սուրբ. Ընդ ձեզ, ասէ, բնակեսցէ և ընդ ձեզ եղիցի յաւիտեան: Զոր ունելով ընդ մեզ, ոչ կարօտիմք այլ և այլ նիւթոց. այլ զոր և կնքեմք Հոգւովն, Քրիստոսի պատկեր և մարմին կերպացուցանեմք: Եւ զի Հոգին է ընդ մեզ՝ ընդ ամենայն քրիստոնեայս, յայտ է յանսուտ խոստմանէն որ ասաց. Ընդ ձեզ բնակեսցէ մինչև յաւիտեան վախճանի աշխարհիս:

Արդ ուր Հոգին է կենդանարար, ձեռք և նիւթք մարմնականք նմա առ ի՞նչ պիտոյանան. և եթէ էին կարևորք՝ ընդէ՞ր ոչ գրեցան մեզ 'ի մերոց օրինադրացն, որպէս և հրէական ժողովրդեանն 'ի Մովսեսէ: Այլ թէ՝ զՀոգին մի՛ շիջուցանէք, և մի՛ տրտմեցուցանէք զՀոգին սուրբ Աստուծոյ: Եւ ո՞ զնա տրտմեցուցանէ. դատարկաբանութիւնն։ Արդ եթէ 'ի դատարկաբանութենէն տրամի, քանի՞օն առաւել 'ի բամբասելոյն և 'ի նախատելոյն զՔրիստոսի խորհուրդն՝ որ 'ի մէջ այլոց ազգաց քրիստոնէից կատարի, զոր անխտիր առնեմք։ Իսկ յորժամ այսու զնա տրամեցուցանես, և ես յաճախելով զարհամարհանսն՝ չկչռուցանես, քեզ զի՞նչ օգուտ է անկենդան նիւթոցն պատիւք կամ ընտրութիւնք։ Աւա՜ղ տգիտութե̃ս, և արտասուելի մեր թշուառութեանս. յաղթեցաք որդւոցն Իսրայէլի չարեօքս. զի՞նչ արդեօք լինիցիմք, եղբարք։

Սակայն ասեն ոմանք. ահա զայս այսպէս հաւատամք, թոյլ տացեն մեզ 'ի մերս աւանդութիւն մնալ անփոփոխ, և ինքեանք զինքեանցն պահեսցեն։ Եւ արդարև այսպէս. և իւրաքանչիւր ոք 'ի ձէնջ մնաց դիտակցութեամբ ճշմարտութե̃ բանիցս վկայէ։ Բայց սակայն նուազեցոյց զխմաստն նախապատութիւնն. և զսէրն՝ հակառակութիւնն· Թշնամութեան հանդէս յարուցեալք՝ իւրաքանչիւր ոք ըդյաղթողն լինել տենչայր։ Դարձեալ և այլ պատճառս· զի հիմն և սկիզբն են հաւատոց քրիստոնէից և կարգաց, և զնոյն յառաքելոյն և այսր ունին անշարժ աթուով· և մեք զորս ունիմք՝ 'ի նոցանէ ունիմք։ Մայր անուանեցան իմաստութեան, և յետ այնորիկ 'ի Պաւղոսէ ուղղեալ ծաղկեցան· գիրք որ առ մեզ աստուածաշունչք՝ նոցա է սեպհական, և հարց նոցին ասացեալ· նեցուկ և սիւն հաւատոյ քրիստոնէից՝ զաթոռ թագաւորութեան նոցա ետ Քրիստոս ըստ վկայութեան առաքելոյ· յորժամ նոցա վախճանելի իշխանութիւնն դրդուի, Քրիստոսի մշանջենաւոր արքայութին տիրէ։ Մինչև, ասէ, բարձցի հռոմայեցւոց տէրութիւնդ, ոչ եկեսցէ մարդն անօրէնութեան, որդին կորստեան, որ 'ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ սատակեսցի։ Տեսանե՞ս թէ ո՛րքան վկայէ առաքեալ նախապատութեանն: Զայս ասելով՛ ո՛չ եթէ ըղմարմնական իշխանութիւնն յարգեմ 'ի մէջ հոգևորաց, և Քրիստոսի տէրութեամբն պարծելոցս, այլ ցուցանեմ իմաստնոց՝ թէ և զմարմնականն աթոռ ունին ընդ հոգևորին՝ կամօքն Աստուծոյ: Սակս այնորիկ և զկարգս եկեղեցւոյ վայելչութեանն անփոփոխ, և զփոփոխմունս 'ի փառս Աստուծոյ. զի միշտ հաւանին ասացելոցն, եթէ երկրորդին որ նստիցի՝ յայտնեսցի, առաջինն լռեսցէ: Իսկ մեք թէ ո՛րքան անիմաստ թագաւորաց վիճակեցաք, կամ՛ ո՛րպէս յանմիտ իշխանաց ապականեցան կարգք եկեղեցւոյ, անդուստ 'ի սկզբանէ տեղեակ էք 'ի պատմութեանցն. և չէ ամօթ զգրեալսն առ 'ի պէտս ուղղութեան՝ և ոչ թէ նախատանօք՝ երկրորդել: Զի զսուրբն Սահակ՝ Բրքիշոյի իրաւունս վարկան ընդ ձեռամբ կարգել, և զյաւէտ նախախնամող հովիւն այնպէս անգոսնեցին: Յորոց անիմաստութենէ միանգամ և երկիցս գրեանք աշխարհիս 'ի Պարսից այրեցան, եկեղեցիք քանդեցան: Ինձ թուի ապա, եթէ նախատեղեակութիւն նոցա, և աթոռոյն անշարժութիւն՝ վկայէ աւանդութեանցն ճշմարտութեան:

Արդ յառաջի եդեալ գլխոցս՝ զորս ախորժեմք, և կարող եմք բառնալ, ընկալցուք սիրով իբր ըդնախահարցն օրէնս, և ոչ որպէս զօտարաց. հեզութեամբ և ոչ դժուարութեամբ. 'ի փառս Աստուծոյ հաւատացեալ՝ և ոչ յանարգանս: Ոգիք մարգարէից, լուայք՝ զի մարգարէից հնազանդին. և ոչ է Աստուած խռովութեան, այլ խաղաղութեան, ապա ուրեմն ամենայն ինչ որ զխաղաղութիւն նիւթէ՝ է նմա հաճելի: Ոչ է արտաքոյ բանիս և զայս ասել. յեցուսցուք զգրգռեալ եկեղեցի մեր 'ի գաւազանն երկաթի. սաստացուք զօրավիգն գերութեան մերոյ զնըպատակն աշխարհի: Տառապանքս հաւատամք զի մխիթարի 'ի շտեմարանացն արքունի, և տարբերութիւնս՝ 'ի նաւահանգիստն անմատոյց։ Տեսցուք թէ հաստուածեալն 'ի մէնջ ազգ Վրաց 'ի նոսա յեցեալ, ո՛րքան օր ըստ օրէ 'ի Քրիստոս պայծառանան. արդ գոնեա անապան և մեք զնոյն խոկասցուք։ Ոչ ասեմ փրկանս տալ մարմնոյ զհոգի. մի՛ ոք զբանս այսուծէքեսցէ. այլ առ ոմանց տկարութիւն հայելով, Քրիստոսի աշակերտս վարդապետին ջանամ նմանել, որ զհոգւոց բժշկութիւն ընդ մարմնոցն խառնեաց. և ես երկոքումբք վրդովելոցս՝ երկոցունցն խաղաղութեան հաւատամ, և ջանիւ լինիմ աւետաբանիչ։

Ընդէ՞ր այսչափ զայլս խօսեալ՝ խորշիմք և խուսափեմք 'ի միմեանց քրիստոնեայքս, որ այլ ազգաց վիճակեցաք կենակիցս։ Մինչև յե՞րբ անդամքս՝ լեզուօք զիրեարս խոցոտեմք՝ թունիւք իժին լցեալ զբերանս. այսքան յերկար ժամանակս անխնայ զմիմեանս հարաք։ Քննեցէք, եղբարք, և զայս. թէ այս թշնամութիւն՝ օրէնք Աստուծոյ էր, Թերևս այսքան արձանացեա՞լ էր հաստատուն ։ Վա՜յ ինձ, և զո՞ր զայլըս 'ի Նոյանէ տեսանեմք կացեալ հաստատուն. 'ի վաղուց հետէ սկըսաւ որոմն մեղաց յերկրի մեր ատըքանալ, և սաղարթ օրինացն Քրիստոսի թառամել ։ Սակայն այս ոչ եթէ ընդ բարեացն նուազի, այլ ընդ չարեացն օրըստօրէ աճեալ զարգանայ ։ Ուրեմն ապա յորոմանցն է և ոչ 'ի ճշմարիտ սերմանցն ։ Կարող է իմաստունն և 'ի պտղոյն զարմատն ճանաչել՝ զի պտուղ սորա է կամքն սատանայի, հեռն, բամբասանքն, ատելութիւնն, զանձն արդարացուցանելն, և զայլս խոտել, և այլ որ ընդ սոքօք բերին ։ Զի իւրաքանչիւր ոք 'ի մէնջ փարիսեցի եղև աստանօր ։ Հայն միշտ աղաղակէ, Աստուած իմ գոհանամ զքէն՝ որ չարարեր զիս Հոռոմ. և Հոռոմն զնոյն բան երկրորդէ, թէ՝ որ ո՛չ արարեր զիս Հայ ։ Ո՜վ տմարդութեանս, և անմիտ յանդգնութեանս . և չա՞ր վկայէք լինել 'ի բարւոյ արարչէն.

և այս ոչ զնիւթ միայն, այլ զմարդ զոր ըստ պատկերի իւր արար: Անմի՛տ, կամք չար ստացան ոմանք 'ի մարդկանէ, և ոչ բնութիւն ազգին է չար, Հոռոմին կամ Հայոյն, կամ այլոց սեռից. զի և 'ի Պարսից բազումք հաճոյացան Աստուծոյ, և ընտրին: Արդ՝ քո այնքան կուրացեալ յատելութենէն, մինչ զի ոչ միայն զկարծիս ազգին, այլ և զազգն ողջոյն բամբասես. և 'ի նըմանէ գոհութեամբ հրաժարես: Բայց ո՞ կարէ զայս ախտի չարութիւն թուել. բանս յերկարութեամբ արտաքոյ ելանէ սահմանի, և ախտս դեռևս 'ի սմանէ ոչ պարունակի. այլ միան զանազան չարութիւնքն անճառ 'ի սահմանի:

Է և այս դարձեալ՝ յարբեցելոցս կարծեաց ատելութեամբն, թէ հարքն զհերձուածողսն խոտեցին, յառնէ հերետիկոսէ հրաժարեցուցին: Առաքեալ ասաց. թէ ոք ոչ հնազանդեսցի թղթիս այսմիկ՝ նշանակեսջիք, և մի՛ հաղորդիք ընդ նմա, և այլ բազումս: Առ որս ասացից, թէ գիտեմ՝ և ես զայդ, լուռ լեր. մի՛ ստերիւրեր զճշմարտութիւնն, և քումդ անձնուս ախտի ջատագով. այլ ուղիղ տեսցուք, և զամօթի հարցուք։ Ո՞րպէս առաքեալ և սուրբքն զայս գրեցին. զի խորշելովն 'ի հերետիկոսէն ամենայն եկեղեցւոյն՝ պատկառեսցի, և յայլոցն միաբանութիւն եկեսցէ։ Իսկ այսօր բարձաւ պատկառանքն, և տիրեաց միմեանց արհամարհութիւնն. և եղաք հերետիկոսք ամենեքեան, և ոչ թէ ոմանք 'ի մէջ մեր. զի հերետիկոսն հերձուածող թարգմանի. և ահա տեսանեմք զամենայն ազգս քրիստոնէից 'ի միմեանց հերձեալ և պատառեալ, և իւրաքանչիւր՝ եկեղեցի և ժողովարան և աթոռ հաստատեալ։ Արդ այժմ չէ օգուտ 'ի միմեանց հրաժարելն, կամ ընդ անհնազանդն ո՛չ հաղորդելն. զի եթէ խորշիս, ո՛չ թէ ո՛չ ունի այլ եկեղեցի, և 'ի քոյոյդ արտաքս ելանելն ամաչէ. այլ յանարգելն 'ի քէն՝ գնայ յիւրն եկեղեցի և յազգ. և վասն քո խոստելոյն, ոչ թէ պատկառէ՝ այլ պարծի։ Դարձեալ և դու տես զքեզ. զի ոչ թէ վասն յուղղութիւն ածելոյ ոչ հաղորդիս սիրով և վշտակցութեամբ, այլ մեծապանծութեամբ և արհամարհանօք, խրոխտալովն յանձն, և զիս առ ոչինչ գնելով. որ ոչ է բժշկութիւն, այլ թշնամութիւն չար։ Եւ ևս չարագոյն այդ, զի ջատագով թիւր մտացդ զուղիղն առնուս օրէնս առաքելականս։ Խորշելով և հրաժարելով թերևս 'ի քում ազգէդ և 'ի քո եկեղեցւոյդ՝ կարես զոք յուղղութիւն ածել, կամ քեզ հաղորդ վասն ամաչեցուցանելոյն առնուլ. իսկ զայլ ազգ՝ որ հաւանեալ է թէ քան զքեզ պատուական է և ուղիղ, Ե՞րբ է հնար այլազգ հաղորդ ընդունել, բայց թէ սիրով և խոնարհութեամբ և Քրիստոսի օրինօքն՝ հեզոյն և մարդասիրին։ Նա որ արարիչ էր, զիւր արարածս ոչ կամեցաւ բռնութ՟բ և սաստիւ ուղղել, զի չէր հնար. իսկ դու այլ առաւել խելս քան ըզՔրիստոսին 'ի քեզ խառնես: Կըշտամբանօք կամիս զօք 'ի սէրն կոչել. անձնիշխան մարդ կշտամբանօք նուաճի՞. և ոչ երբէք. այլ մանաւանդ ևս հակառակի. այլ պարտէ զնա և նուաճէ սէր և խոնարհութիւնն:

Այլ ասես, թէ հրաժարեմ՝ զի մի՛ պղծիցիմ 'ի նմանէ որ Հայն է, կամ ես որ Հայս եմ՝ 'ի Հոռոմէն: Ո՛վ յանդգնութեանս. ո՛վ սատանայի կամացն սատարութեանս. քրիստոնեայն զքրիստոնեայն պղծէ: Ի հեթանոսաց ոչ խորշիմք և ոչ պղծիմք, և միմեանց անդամքս՝ վասն ունայն կարծեաց՝ որպէս 'ի պղծոց հրաժարեմք: Եւ զի՞նչ է նորա պղծութիւնն, կամիս քննեսցուք. ոչ վարք, ոչ գործք, այլ զի զՔրիստոս Աստուած և մարդ խոստովանի. 'ի մի հաւատ կալով երկուց կողմանցս, վասն բայից և բառից զմիմեանս պիղծս համարիմք: Վա՜յ մեզ՝ 'ի յանաչառն ատեան աչառանօք ատելութեան՝ օրինաց սիրոյն արհամարհողացս ։ Դարձեալ Թողցուք և զկարծեօք ատելն ընդ գործս իւրեանց․ զգործս իւր կշռեսցէ, ասէ առաքեալ, և ապա անձին իւրում տացէ պարծանս, և մի՛ առ ընկերաւն․ զի իւրաքանչիւր ոք զիւր բեռն բառնալոց է ։ Արդ զբեռնդ՝ զոր ոչ ես դու բառնալոց, ե՞ր վասն հոգաս և դատիս․ և դատել այդպէս՝ ոչ փութակցութեամբ, այլ ատելութեամբ ։ Երկեղ խառնեա 'ի քեզ․ մի՛ գուցէ որպէս 'նա վասն մեղացն, և դու վասն դատելոյդ պատուհասեսցիս․ Որով դատաստանաւ, ասէ, դատիք՝ դատելոց էք ։

Խորութիւն առնես կերակրոց․ և սակս այնորիկ 'նախատես զԱստուծոյ մեծ եկեղեցին՝ Պաւղոսի աշակերտդ, որ ասէ․ Զայս գիտեմ և հաստատեալ եմ 'ի Քրիստոս Յիսուս, թէ ոչինչ է պիղծ 'նովաւ․ և Տէրն՝ Որ ընդ բերանն մտանէ, ոչ պղծէ զմարդ ։ Ապա յայտ է՝ թէ ոչ պղծէ զնա ծովային զեռունքն, որ յորովայն երթայ՝ և արտաքս ելանէ· այլ պղծէ զնա խորհուրդ չար բամբասանացս, որ 'ի սրտէս արտաքս գայ· և սակս այսորիկ զնա 'ի հաւատոյն որ 'ի Քրիստոս՝ տայ բամբասել որպէս թերի։ Այսպէս խօսեցարուք և այսպէս արարէք, որպէս զի ազատութեան օրինօքն դատիցէք, և մի՛ ծառայութեամբ նախանձու։ Սուրբ Հոգին իմաստութեան 'ի թշնամանող և 'ի հակառակող բերանոյ փախչի, իսկ առ խաղաղարարսն բնակէ· ըստ որում գրէ զայն Յակովբոս, թէ «Նախանձ և հակառակութիւն և դառնութիւնք գոն 'ի ձեզ· մի՛ պարծիք սուտ առնել զճշմարտութիւնն· ոչ է իմաստութիւնս այս իջեալ 'ի վերուստ, այլ երկրաւոր, շնչաւոր և դիւական· զի ուր հեռ և նախանձ, անդ և անկարգութիւն և ամենայն իրք չարք»։ Ահաւասիկ դերև արար զհակառակութիւն հակառակողացն· զի այսպիսիք 'ի շնչաւորէն եկին մարդոյ յառաջ և գան։

Յորմէ տեղի առեալ, եղբարք,

և երկնախումբ քահանայապետական սուրբ ժողով, բացցուք զբերան, և ձգեսցուք 'ի պէտս առաջադրեալ աստուածայինս գործոյ՝ զվերին իմաստութեանն զհոգի, որ է ազատ, սուրբ, խաղաղարար, հեզ, դիւրահաւան, լի ողորմութեամբ և պտղովք բարեաց. և խաղաղութեամբ սերմանի այնոցիկ՝ որ առնեն զխաղաղութիւն։ Զայս բարի սերմն, եղբարք, սերմանեալ յանձինս՝ հնձեմք զպտուղ նորա 'ի կեանս յաւիտենից ընդ ամենայն սուրբս։

Արդ տեսանեմ զի ոչ միայն օծութեամբ Հոգւոյն ընտրութիւն առնէք զանազան իմաստից հոգւոյն, այսինքն երկնաւորին և երկրաւորիս, այլ և զպտուղ վերին իմաստութեանն սկսայք տալ այսուհետև։ Զի ահա տեսանեմ ըզձեզ զուարթս դիմօք իբրև զմարգագետինս՝ 'ի ձմերայնոյ կապանացն զերծեալս։ Ո՛վ սքանչելեացս, ահաւասիկ զանազան ծաղիկք սիրոյ յանձինս ձեր փթթեալ՝ սկսան վաղվաղակի զհոտն բուրել: Զգեմս ձեր տեսանեմ՝ ոչ որպէս յերէկն և յեռանդն, այլ նախ քան զբարբառ՝ հեզութեան աւետարանիչս: Աչք ձեր ոչ զեռացումն սրտի արեանց ցուցանեն, այլ զքաղցր արտասուսն ճնշեալ սրտաքս բղխեն: Ոչ ինչ անիրաւլք սուրբ հայրք· արդարև արտասուաց արժանի աւուրքն մեր խռովութեամբ անցեալք· բայց սակայն այսօր է օր զոր արար տէր, օր ցնծութեան և ուրախութեան: Ուրախացի Իսրայէլ յարարիչն իւր, որդիք Սիովնի ցնծասցեն 'ի թագաւորն իւրեանց: Զի բորբոքեցաւ յերկիր մեր ճառագայթն սիրոյ ջահաւորեալ, և ելոյծ զձմեռն նախանձու: Եհաս ժամանակ իմաստուն երկրագործացդ յատելոյ զայգի եկեղեցւոյ Քրիստոսի, և սրբելոյ զնա 'ի սաղարթիցն աւելորդաց: Այսօր ճշմարտութիւն մեր և ողորմութիւնն Աստուծոյ պատահեն միմեանց, յորոց համբուրի ընդ տիեզերս արդարութիւն և խաղաղութիւն:

Մաղթեսցուք այսուհետև, զի տացէ Տէր զքաղցրութիւն ևս առատելապէս, և աճեցուսցէ յերկիր մեր ցօղով Հոգւոյն սրբոյ զայս սերմն· թերևս զօրութեամբ նորա և զպտուղն կարասցուք տալ, որպէս կամօք այսօր՝ և յառաջին ժամանակս արդեամբք նորոգել զխաղաղութիւն եկեղեցւոյ Քրիստոսի։ Զի և ընդ նմա՝ նորին շնորհիւն լիցուք խաղաղարարքս որդիք Աստուծոյ Հօր անվախճան խաղաղութեան, արժանաւորապէս փառաւորել զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգին յաւիտեանս յաւիտենից· Ամէն։

ՆՈՐԻՆ
ՆԵՐՍԵՍԻ ԼԱՄԲՐՈՆԱՑԻՈՅ

ԹՈՒՂԹ

Առ քրիստոսազօր Իշխանն մեր Ինքնակալութեամբ Լեւոն, 'ի նուաստ Ներսիսէ որ 'ի Տարսոն սրբոյ եկեղեցւոյն պաշտօնէայ։

ՊԱՏՐԱՍՏ լերուք տալ պատասխանի հեզութեամբ ամենայնի՝ որ հարցանէ վասն յուսոյն որ է 'ի ձեզ, խրատ տայ մեզ գլխաւոր առաքելոցն Պետրոս․ և մեք 'ի շնորհացն Աստուծոյ, որովք զօրացեալ եմք բանիւ՝ պատրաստ եմք պատասխանատուութեան նոցա, որք 'ի մեր բարւոք ընթացս գայթակղին 'ի ագիտութենէ, և 'ի սնոտի համբաւոց: Իսկ որք 'ի նախանձէ զայրացեալ՝ կամաւ կուրացուցանեն զաչս միտաց առ ճշմարտութեանն տեսութիւն, 'ի Քրիստոսէ խրատիմք՝ լռութեամբ կալ առ այնպիսին և աղօթել զլուսաւորութիւն, զի մի տացուք զսրբութիւն շանց, կամ զմարգարիտն՝ խոզից յերգիծանումն և 'ի կոխումն: Այլ և Պաւղոս խրատէ, յառնէ հերետիկոսէ յետ միանգամ և երկիցս խրատելոյ՝ հրաժարել. գիտելով զի թիւրեալ է այնպիսին, և մեղանչէ, ոչ գիտելով զինչ խօսի, և ոչ վասն որոյ պնդեալն է: Յայսմանէ խրատեալ մեր չափաւորութիւնս, զաղմըկեալ գրերն՝ որ 'ի Զօրոյգետոյ 'ի վերայ մեր կուտեալ զզրպարտութեան կոլթողս, անտես արարաք՝ և ողորմեցաք նոցին անհանճարութեանն. որք ոչ թէ 'ի հոգևոր և յանօսր գիտութենէ հեռի էին, և անկար համեմատել զհոգևորս ընդ հոգևորս, այլ և ՚ի մարմնական իմաստութենէն բաժան ցուցանէ զնոսին՝ նոցին գրերն․ տխմարք և անկարգք, և յիմար բանից շաղակրատողք, որ և բուն ադէպքն կալող են յայս երկրաքարշութիւնս զնոսին ճանաչել․ և մեք տարաք զչարախօսութիւնն նոցա իբրև զայր երկայնամիտ, և բազմապատիկ խորհրդովք․ որք ոչ ունէաք ընդ նոսին հարց և փորձ, և ոչ ծանօթութիւն, և յանդուգն բերանոցն նախատէաք․ զուարճացեալ յայն մասն երանութեան որ ասէ, « Երանի՛ է ձեզ, յորժամ նախատիցեն զձեզ, և ասիցեն բան չար զձէնջ սուտ վասն իմ․ ցնծացէք և ուրախ լերուք՝ զի վարձք ձեր բազում են յերկինս »։

Իսկ յետ այսր չեմք և ոչ զձեր աստուածպաշտութիւնդ ձանձրացուցեալ, և ոչ մերոյ ճշմարտութեանն՝ որում տեղեակ էք ևս յայտարարութեամբ, վրէժխնդրութիւն պահանջեալ յաստուածազօր կարողութենէդ․ Նախ՝ զի բազմահոգս էք, և երկրորդ՝ զի մեք առ բամբասողսն ախորժեմք ըստ Քրիստոսի անյիշաչար լինել. երրորդ զի կարծամիտ էք գրոց բանի ունկնդրութենէ, որով մեր ճշմարտութիւնս փայլէ: Քանզի այլ անգամ եղև այս հարկս, և խնդրեցէք 'ի մէնջ բան՝ որ առ մեզ ուղղութեանս վկայ. տուաք գրոց սրբոց վկայութեամբ, որ զամենայն հակառակողս 'ի հաւանութիւն նուաճէր 'ի սիրելն զուղղութիւնն. և ծանր եղև ձեզ ընթեռնուլն, կամ այլոց զնոյն ցուցանել. որպէս և ունիք հարկ յԱստուծոյ՝ ոչ վայրապար ածեալ սուսեր ընդ մէջ, այլ 'ի վրէժխնդրութիւն այնոցիկ, որ զչարն գործիցեն: Երբ տեսաք զձեզ առ այն քննութիւնն և վրէժխնդրութիւնն տարտամ, ունիմք զլուծ խոնարհութեան, և նստիմք լռութեամբ 'ի տան: Չեմք մուտ և ել 'ի ձեր արքունական ապարանս. և ոչ 'ի յոյզ և 'ի խնդիր հոգևոր ուղղութեանց, կամ մարմնական ձրից: Ոչ պարծիմք ձեր տոհմակցութեամբն, և ոչ մեր հայրենի պայազատութեամբն, ոչ Դրով և ոչ բանիւ. և ոչ քան ըզչափ մեր պատուոյս ձգտեցայք, և ոչ 'ի վերայ ուրուք պատուոյ յարակցեցայք. ոչ ձիօք և ոչ ջորեօք յօրացայք, և ոչ զքահանայութիւնս երկրորդ մարմնոյ աշխատութիւն արարայք. ոչ 'ի քաղաքս ձեր ձեռներէց եղայք, և ոչ զգործակալս ձեր հարստահարեցայք, զրկեցայք 'ի նոցանէ, և տարայք. զզուեցայք, և համբերեցայք. և ուկան ձեր ձանձրութիւն ոչ արարայք: Կատարեալ իմաստութե̄ս զոր ունիմք յԱստուծոյ՝ առաջի ձեր իբրև զախմար մանուկ եմք երևեալ, թեթևութեամբ ոգւոյ և բանի. և զտաղանդս զոր ունիմ առ իս՝ ծրարեալ կայ և թաղուցեալ, խրատեալ 'ի մարգարէէն որ ասէ. Ատեցին 'ի դրունս զյանդիմանիչս, և զբանս սուրբս պիղծս արարին: Վասն այսորիկ որ իմաստունն է՝ 'ի ժամանակին յայնմիկ լռեսցէ, զի ժամանակն չար է:

Այս լռութեամբս կամ դադարեալ, և առ Աստուած խօսակցութեամբ պարապեալ. որոյ կամ առաջի մտաւոր հառաչմամբ, և անմռունչ հեծութեամբ, և միշտ արտասուաց հօսմամբ, ոչ գիտելով զերևելիսս, այլ զաներևոյթսն. և զվերինն խնդրեմ, ուր Քրիստոսն նստի ընդ աջմէ Աստուծոյ, և անդ լնուլ զաղօթս իւր առ իս մաղթեմ, որ ասաց. Հայր, կամիմ զի ուր եմն իցեմ, և նոքա ընդ իս լինիցին. զի տեսանիցեն զփառս իմ, զոր ետուրն ցիս: Այն փառացն և տանն վայելչութեան տռփանօքն զբաղեալ իմ աղքատութիւնս, թեթև ունիմ զՁորոյգետոյ եղբարցն և վարժապետացն անարգանքն, և զձեր փառքն: Եւ ես լուսաւորեալ ՚ի վայելչութիւնն՝ հեղում զարտասուս առաջի Աստուծոյ Հօր՝ միջնորդաւն Յիսուսիւ Քրիստոսիւ, և զձեզ ՚ի նոյն տեսութիւնս լուսաւորել, և այսու գիտութեամբս՝ երևելեացս արհամարհողս առնել:

Եւ մինչ ես յայս ընթացս և 'ի զբաղմունս կամ զեգերեալ, զելանելն և ընդ Քրիստոսի լինելն լաւ համարելով, և զկեալն 'ի մարմնի ոչ կարևոր, որովհետև ոչ եմ յօգուտ ձեր, եկն իշխողդ մեր Հեթում, և եբեր առ իս 'ի ձեռնջ պատուէր հրամանի՝ որպէս առ տհաս մանուկ․ և յայս համառօտեցան բանքն, թէ անկարգ է իմ ընթացքս և անօգուտ․ և չէ ընդ շաւիղս երանեալ հարց մերոց Գրիգորիսի Վկայասիրի, և նորին համանուանն՝ որ յԵգիպտոս, և որ զկնի նորին աստ հայրապետ Գրիգորիս, և նորին եղբայրն Ներսէս․ և ես ստերիւրեալ գնամ 'ի նոցա շաւղաց, և դուք և այլ Հայք՝ նոցին ընթացակիցք։ Եթէ ոչ էի յայս, արժանի էի հայրապետութեան և պատուոյ․ սակայն այս վերջացուցանէ զիս 'ի պատահմանէն պատուոյ․ և ոչ միայն զիս, այլ և ձեզ լինիմ պատճառ նախատանաց 'ի Ձորոյգետացեացն․ որք և անէծս վայրապար խօսին 'ի գլուխս իւրեանց, և դուք աղաչեցէք զմեզ վասն զնոցա գայթակղութիւնն չլինելոյ դառնալ ՚ի մոլորմանէս. ապա թէ ոչ՝ զրկիմք ՚ի պատուոյն, զոր մինչև ցայժմ ՚ի ձէնջ եմք ընկալեալ:

Եւ ես ՚ի վերայ այսպիսի հրամանի ձեր՝ գոհանամ զԱստուծոյ անխտրով կամօք, որ արժանի առնէ զիս վասն իւր Ճշմարտութեանն վկայութեան յանարգութիւն կոչել: Թէ լինիմ արժանի և գործով ՚ի նոյն վայելել, շնորհ ունիմ պարգևողին, որ տայ ինձ ոչ միայն զ՚ի նա հաւատալն, այլ և վասն նորին նախատիլ և չարչարիլ. և պատրաստ եմ զանարգութիւնս՝ յայսմ հետէ ընդունել ՚ի ձէնջ, քան զոր մինչև յայս՝ զպատիւ: Եթէ իրաւացուցանէ քո արքունական ատեանդ առանց քննելոյ և դատելոյ ձգել զիս յանպատուութիւն, ընդգրկեմ զնոյն որպէս զՔրիստոսի աթոռակցութիւն. իսկ ապա եթէ զքննելն իրաւացի համարիք, և ոչ յայդմանէ հրաժարեմ. այլ պատրաստ եմ 'ի պատասխանատուութիւն և Զօրոյգետոյ բնակչացն, և մերոյ աշխարհիս, և ամենայն հակառակորդի, որ չեմ մոլորեալ և ոչ ստերիւրեալ 'ի սուրբ եկեղեցւոյ ուղիղ շաւղացն, ոչ ըստ հաւատոյ, և ոչ ըստ բարեկարգութեան: Ի վերայ այսր և ուղղութեամբս՝ չեմ իւրեանց մոլար ընթացիցն լեալ դատախազ, որպէս զարդարև զճշմարտութեան ուսուցիչ. այլ ընդունեալ եմ զինքեանս իւրեանց անկարգութեամբն 'ի բարեկարգութեանս հաղորդս իբրև զեղբարս. և աղօթեալ միշտ 'ի վերայ նոցին, որպէս ունկնդիրն աղօթից Աստուած վկայէ:

Իսկ այժմ զի կոչէք զիս առաջի դատել, պատրաստ եմ 'ի պատասխանել: Ո՞յք են ոսոխքն, եկեսցեն յանդիման լիցին. տեսցեն և լուիցեն: Ապա թէ առանց քննելոյ փոքրկացուցանէք զիմ բարեկարգութիւնս, և իբր զանօգուտ իրս տայք արհամարհել զուղիղն, և զճշմարիտն իւր զանպիտան, և ըզմեծն որպէս զփոքր, և զճշմարիտն որպէս զսուտ, ոչ հաւանիմ․ և ՚ի վերայ սորին ճշմարտութեան նախատիմ և մեռանիմ․ քանզի կայ Քրիստոս և ասէ առ իւր ծառայս․ Որ ոք լուծցէ մի ինչ ՚ի պատուիրանացս յայսցանէ ՚ի փոքունց, և ուսուսցէ այնպէս զմարդիկ, փոքր կոչեսցի յարքայութեանն երկնից․ և անդ մեծ լինել ցանկամ՝ և ոչ փոքր։ Եւ նորին առաքեալքն պատասխանել ուսուցին այժմու խուժանիս, որպէս նոքին Հրէիցն՝ թէ Հնազանդել պարտ է Աստուծոյ առաւել քան մարդկան։ Եւ Պաւղոս ասէ համարձակ․ Եթէ մարդկան հաճոյ լինէի, ապա Քրիստոսի ծառայ ոչ էի։

Եւ արդ եկ, բարեպաշտ իշխան, և զմեծութիւն և զփոքրկութիւն իրիս քննեսցուք, զոր ասես արհամարհել ՚ի պէտս հաճոյից մարդկան․ թէ մե՞րս փոքր է, թէ այն՝ վասն որոյ Քրիստոսն մեռաւ, և Յովհաննէս գլխատեցաւ, և միւս

Յոհաննէս աքսորեցաւ, և Յուսիկն բրածեծ ջարդեցաւ, և Ներսէս դեղատուութեամբ նահատակեցաւ։ Օրէնք եդ Աստուած շաբաթանալ ոչ յամենայն իրէ, այլ 'ի ծանր գործոյն շաբաթանալ և հանգչել։ Հրեայքն առաւել սիրէին զդատարկութիւնն, և զՔրիստոս վասն բժշկելոյն 'ի շաբաթն՝ օրինազանց ասէին. և նա զի գիտէր թէ ոչ է աստուածադիր օրէնքս այս, բժշկէր 'ի շաբաթու. և ոչ շահեցաւ զկամս նոցին, և յայլ օր փոխեաց. այլ զճշմարտութիւնն պատուեաց, և այս պատճառաւ 'ի նոցանէ խաչեցաւ՝ թէ զշաբաթս ոչ պահեաց։ Արդ ընդէ՞ր ոչ զերծոյց զնոսա յաստուածապանութենէն, և փոխեաց զբժշկութիւնն յայլ օր. բայց զի չէր օրէնք՝ զօրէնքն յիւր չափն պահեաց. և զաւելն խափանեաց։ Իսկ ես ունելով զՔրիստոս վասն իմ օր ըստ օրէ առաջի Աստուծոյ Հօր պատարագ, խափանե՞մ զնորա ըսպասաւորելն քահանայական ո՞ք զգեստուք, և բացաւ գլխով, և պաշտօնէից սպասաւորութեամբ, զոր հրամայեաց Աստուած Մովսէսին զզգեստուցն կարգ, և Պաւղոս զբանալ գլխոյն, և սուրբ հարքն զպաշտօնէիցն դաս· և հագնի՞մ զեշտ որպէս Հաղբատայ եպիսկոպոսն, և երկու թիզ կնկուղ վրացի սաքուլայով, և պատարագե՞մ հաղբատեցի սև փիլոնով, և փակեմ զդուռն 'ի վերայս· և ձրգե՞մ զվարագոյրն, և անհաղո՞րդ առնեմ զժողովուրդն յիւրեանց Աստուծոյն քաւիչ մահուանէն· զինչ կու առնեն ամենայն վանորայքդ 'ի վերն և 'ի վայրս, և չեն պատկառեր 'ի նոյն ինքն 'ի պատարագի խորհրդոյն, որ երբեմն ասէ՝ թէ ընդ սերոբէսն համաձայնեսջիք· երբեմն թէ Տուր մեզ համարձակաձայն բարբառով կարդալ զքեզ հայր։ Երբեմն, թէ Դպիրք սաղմոս ասացէք ձայնիւ քաղցրութեամբ, և զՏէր յերկինս օրհնեցէք։ Հրամայէ և տես զքո վանորայքդ, թէ կատարե՞ն այս օրէնք 'ի մէջ խուրեանց: Արդ ի՛նձ հրամայես, յօրինացս՝ որպէս յանօրէնութենէ հրաժարել, և զնոսա աւանց դատելոյ թողուս յանօրէնութեանն անշարժ մնալ, որ լեղուագարք են, և անդուռն բերանք. և քան զո՞վ ճարտարք: Նոքա սըտութեամբն կարեն զքո պարզամտութիւնդ երկեցուցանել. և ես ճշմարտութեամբս ոչ թէ կամէի այս իմ գլխաւորիս քարշանքն, որ զՔրիստոսի պատարագն բարեզգեստութեամբս հրապարակատես առնեմ, որ է ամենեցուն փըրկանք, և զիւր պատարագին խրատատուութիւնն 'ի տեղի ընում. և զայս ես որպէս զընչին իրս չարհամարհեմ, և ոչ յայս շաւղացս խոտորիմ. այլ յօժարութեամբ առնում վասն Քրիստոսի պատարագին բարեվայելչութեան զմահն, որպէս նա վասն 'ի շաբաթս բժըշկութեանն:

Երկրորդ անկարգութիւն իմ այն է, որ ընդ ամենայն քրիստոնեայս հաղորդիմ: Գիտելի է իմաստուն քննողաց՝ որ քրիստոնէից ազգք բացատրին 'ի միմեանց իւրք իւրք · իսկ շնորհն Աստուծոյ զօրացոյց զիս՝ զայս սնոտի աւանդութիւնս նոցա՝ գիտութեամբ արհամարհել, և զսէրն նախապատուել · և է ինձ Հայն որպէս զԼատինացին, և Լատինացին որպէս զՀելլենացին, և Հելլենացին որպէս զԵգիպտացին, և Եգիպտացին որպէս զԱսորին: Արդ եթէ ես միոյ ազգի ջատագով էի, ընդ այլսն երբեք էր կար հաղորդել · բայց ընդ իւրաքանչիւրսն որ միմեանց թշնամիք են՝ խառնիմ, և զբնաւան շահիմ ըստ Քրիստոսի առաքելոյն · և ունիմ բան՝ որ ամենայն հարցողի կարող եմ պատասխանել թէ ուղիղ ընթանամ, և սիրովն Քրիստոսի զամենայն կրձիմն քակեմ · որով բարեհաշտիմ և 'ի Լատինացւոց եկեղեցին, և 'ի Հելլենացւոց, և յԱսորւոց, և կամ 'ի Հայաստանս · և ընդ սոսա անշարժ, և 'ի նոյն աւանդութիւնն անփոփոխ :

Արդ եթէ չարակնէին, և զնախանձ իւրեանց առ մերձաւորս զայրացուցանէին, ընդէ՞ր ոչ մխիթարէին որ իմ հանճարս զՀայաստանս՝ այս ազգացս հաճոյացոյց, և զնոսին միշտ առ մեզ 'ի սէր ձգէ· որպէս տեսանէք դուք և լսէք, որ աննախանձ ունիք զկամս: Բայց նախանձն 'ի Քրիստոսի լուսոյն նսեմացաւ, յիմոյս չէ զարմանք թէ խաւարի: Եւ յայս ոչ եմք օտար 'ի հարցն մերոց շաւղաց, այլ անստերիւր ընթացակից· զի ոչ եթէ 'ի Զօրոյգետ, այլ առ մեզ են սուրբ հարցն բանք Գրիգորիսի Վկայասէրի, և որ յԵգիպտոս նորին համանուանն, և մերոց տերանցս· ունիմք գրով զնոցին հաւատոյ զդաշն, և ունիմք 'ի լրոյ տեսողացն զնոցին վարուցն և ըզկարգացն ցոյցս· և երբ դամք յատենի՝ կարող եմք ցուցանել, որ մեք 'ի նոցին շաւղացն վերայ գնամք, և 'ի հաւատոց և 'ի կարգաց, և ո՛չ որք զմեզ նախատեն: Եւ ոչ եթէ զնոսա միայն ունիմք առաջնորդս, այլ և զորս նախ քան զնոսա զսուրբսն, որովք թէ գտին զմեզ՝ ոչ լինիմք պապանձեալս· այլ մեծաւ պանծանօք զնոսին պապանձեցուցանեմք· զի ունիմք զնոցին հաւատոյ դաշն· ընդսուրբ պատարագին զարդն, զաղօթից կարգ, զքահանայագործութեան փոյթ, զաստիճանաց բացատրութիւն, զկրօնաւորութեան օրհնութիւն, զնոցին միաբանութիւն, զմիշտ դատելոյն ուղղելն, զաշխարհի երիցանց զկրատ, զքաղաքի եկեղեցւոյ պայծառութիւն, զտօնից վայելչութիւն, զանձին խիղճմտութեան դատ, զօր ըստ օրէ սխալմանց խոստովանութիւն, զերկնային լուսոյն հայեցողութիւնն, զաւ 'ի նոյն տուփմամբն երևելեացս արհամարհութի, զայսու ըղձմամբ արտասուացս առուք· յորմէ սոքա որ զմեզ դատեն 'ի յոլովիցս կամ 'ի ընաւիցս թերի գտանին: Եւ չեմ ես յիմարեալ որ լռեմս, այլ նոքա որ շաղակրատեն զոր ոչն գիտեն· զի

Քրիստոս հրամայեաց թէ ծառն 'ի պտղոյն ճանաչի. մեր պտուղն այս է 'ի մեծատոհմութիւնս, և 'ի ձեր պատիւն և 'ի հայրենի ժառանգութիւնս. և զԱնեցւոյն պտուղն դուք էք լսեր, և զՁորոյգետոյն, և որ անդ Տուտէորդին և Քոբայրեցին, և այլքն իւրեանց տեսողք: Զի Տուտէորդին յանարգութենէ յառաջ եկեալ լեզուագարելովն՝ փառս որսայ առ 'ի մարդկանէ, և զփառս Աստուծոյ ոչ գիտէ. ուտելով և ըմպելով ընդ աշխարհականաց զպորտն պարարէ, և զեկեղեցւոյ դուռն թէ ընդ ո՛ր է՝ բնաւ չգիտէ: Որ առ մեզ ձգտի յուսուցանել, և զթուրք եղբայրն իւր ոչ կամի և կամ թէ ոչ կ՟րէ՝ աշակերտել, և ոչ իւրում տանն բարւոք վերակացու գիտէ լինել. որ յեկեղեցւոյ սրբոյ աստիճան անձամբ զանձն ընծայէ, և յառաջին բարձին ինքնահաճութեամբ բազմի: Իսկ Հաղբատացիք վարժքն՝ այնքան կուրացեալք 'ի միմեանց նախանձուէ, մինչ զի 'ի բան խօսելն միայն և միւսոյն ոչինչ առնելն՝ ամենայն վանականացն կատականք են և ծաղր: Ըզսեամս տաճարին Տեառն ոչ կոխեն երբէք զանարժանս, և զմեր սպասաւորելս՝ առանց ճանաչելոյ երգիծանեն: Սոցա ոչ կամեցաք ոչ խօսակից լինել գրով, և ոչ ընդունելութիւն ունել բանիւ. և ոչ նոցին կայր առ մեզ լեզուագարութիւն, և ոչ տուրևառութիւն 'ի տեառն մերոյ Գրիգորի աւուրսն, յորում նովին կարգաւս երևելի էաք բնաւիցն. և ես առաւելապէս մինչև ձեր աստուածպաշտութիւդ կոչեաց զմեզ 'ի մանուկ կաթողիկոսին ձեռնադրելն. յետ այնր արտաքս հանիք յաթոռոյն, և կոչեցէք 'ի քննել: Հրաժարեցաք, մի և երկիցս և երիցս և չորիցս և հընգիցս գիր հրամանի ձեր զմեզ բռնադատեաց: Եկաք, և զոր ինչ արարիք յայն ժողովն՝ համաձայնեցաք. գիտէաք և մեք զի մարդիկ էին մեռեալ 'ի Կլայն, և արծաթ էիք առեալ անտի և ոսկի. և չէաք տկար լեզուաւ քան զնոսա, և ոչ ձեզ 'ի նոյն խորհրդակից՝ որպէս զոմանս․ ունէաք և մարմնական ժառանգակցութիւն 'ի նոյնն․ բայց երբև Աստուծոյ հրամանին՝ իշխանութեանդ հնազանդեցաք, և հաւատացաք Աստուծոյ՝ տալ քեզ իմաստ առ 'ի նոյն, գիտել զթերութիւն անձին․ զոր և աղօթեցաք, և առաք զպտուղ աղօթիցն, ըստ որում և եսդ բարեսէր: Իսկ եթէ այնր աւուր խաժամուժն 'ի քո իշխանութենէդ զանգիտեցին, և ըզմեզ նպատակ նախատանաց փոխանակ քո արարին, և զամբոխեալ ագխան և զանափառն ընդ ինքեանս շարժեցին, դու զնախատինս նախատչաց քոց յանձն առողս ընդ նոսին նախատես, և ճշմարտութիւնս մեր, զոր դու աչօք ես տեսեալ և վայելեալ, վասն նոցին զըրպարտելոյն երգիծանեօ: Հեռի արասցէ Աստուած 'ի քէն զՊիղատոսի դատողութեան ճանապարհ․ զի այսպէս էր նորայն՝ ոչ ունելով զդաւանութիւն նախանձու, հրէից մնոտի աղաղակաւ խարխալեցաւ, և մեծ չարեացն հաղորդեցաւ: Այլ զքո ատեանդ արասցէ Քրիստոս արդարակշիռ՝ որպէս զբարեպաշտիցն Կոստանդիանոսի և Թէոդոսեանցն · զի Ճշմարտութեանն լեցիս ջատագով, և մի՛ շատախօսութեանն: Առ որ աղաղակեմ, թէ Նախանձեցայ զնախանձ Տեառն ամենակալի, և զմարգարէսն Բահաղու յանդիմանեցի, սակս որոյ և խնդրեն զանձն իմ· և անէծք իւրեանց, զոր կարծես առ քեզ ձգտեալ՝ 'ի գլուխս իւրեանց դարձցի, և 'ի տունս ամբարշտելոցն· և չէ այն քեզ և ոչ մեզ՝ որ քեզ հաղորդիմք՝ անէծք· այլ զնոսին միշտ ածէ յայն պատիժն, զոր տաց Քրիստոս, թէ Որ զՀոգին սուրբ հայհոյէ՝ մի՛ թողցի 'նմա, մի՛ յայսմ աշխարհի, և մի՛ 'ի հանդերձելումն: Զի որպէս Հրեայքն զՔրիստոս պայծառացեալ բժշկութեամբն բէեղզեբուղաւ զրպարտեցին դիւաց հալածիչ, և զայս լուսն գասալճիռ, զնոյն և թանձրապորտ

Տուտէորդին, և ժողովք չարեաց Հաղբատացիքն ոչ քննեցին և ոչ հաւատացիք մեր արդար իրաւամբք զմանուկն նահանջելոյ, և չարակնելոյ իշխանութեանն, որում առընթեր էաք և տեղեակ: Այլ 'ի բացեայ գոլով և 'ի նորին ծանօթութեննէն, և 'ի մեր ճշմարտութեննէն, կամեցան ունել մանուկ հայրապետ և կալ 'ի ներքոյ վայլին, որ ասէ գիրն. Վա՜յ քեզ քաղաք որոյ թագաւոր քո մանուկ է. և իշխանք քո ընդ առաւօտս ուտեն, և զհետ լինին ցքոյն: Յայս խոկացին՝ նոքա անվրդով կալ 'ի գինըմպութիւնն և յորովայնապարարութիւնն, և յայլ չարիսն, յորոց միջի ճախորեն և ընդ կարճօտելն մաղկատեալ, անտես արարին զաստուածահաստատ իշխողից գիր, և զսուրբ ժողովոյ եպիսկոպոսացն՝ որ ընդ քեզ, և զարժանաւոր եպիսկոպոսին հրեշտակութիւնն. և զմանկանն անհանճարի գիր այնպիսի մանկանց պատգամաւորութեամբ պատուեցին, որք 'ի նորա քահանայապետութիւնն իբրեւ զորդիսն Հեղեայ ձեռներէց էին 'ի վերայ Քրիստոսի հօտին, և ասէին. Տուր միս խորովելոյ, ապա թէ ոչ՝ առնում բըռնի. Տիգրանաւ՝ որ վասն իւր 'ի ծառայութենէն զերծանելոյ՝ Հայոց ձայնակից գտան. և զքեզ աստուածասէր և աստուածահաստատ, և զմեզ ընդ քեզ՝ յանգուգն բերանովք զրպարտեցին հրեշտակութեամբ միոյ մանողոնի, որոյ և անունն Աստուծոյ էր անգիտելի: Դու իրաւացի առնես որ զնոցա բանն 'ի գիր ածես, կամ զմեզ զըզուես. արք՝ որոց բերանքն անիծիւք և դառնութեամբ լի են, որ զթոյնս իժից ունին 'ի ներքոյ շըրթանց, որոց երագ են ոտք հեղուլ զարիւն, որք զճանապարհ խաղաղութեան ոչ ծանեան և ոչ գոյ երկիւղ առաջի աչաց նոցա: Զի առանց ստութեան է այս վկայութիւն նոցին, իւրեանց գրերն ցուցանեն, որք զքեզ յայն դատեցին՝ որ չէիր. և զմեզ նոյնպէս. ոչ թէ ոչ գիտելով, այլ կամաւ զհուր զրպարտութեանն զգայուելով:

Արդ թէ քո աստուածպաշտութիւնդ արժանացոյց զնոսա պատասխանւոյ, մեր իմաստութիւնս ոչ բնաւ. զի խրատիմք ոչ տալ անզգամին պատասխանի. և զի յետին են նոքա որ յայս յանդգնին՝ բոլոր հարց, որք մերում ճշմարտութեանս ջատագովք են, նոյն ինքն մեր աշխարհս և սուրբ լեառնս, և որ 'ի սմա հոյլք սուրբք, և բոլոր գաւառն Վասպուրականի, և որ անդ հռչակաւոր ուխտն Վարագ, և երևելի արքն Ստեփաննոս Տիրացուն ուսուցիչն մեր, և Գէորգ Ճգնաւորն, և Ստեփաննոս՝ մեր ուսումնակից, և Քրիստոսատուր և Տիմոթէոս Ճգնաւորք, որք ականատես լեալ են մեզ, և որ առ մեզ ճշմարտութեանս հաւանեալ, և երանեն թէ կարող էին ձայնակցել: Բոլոր գաւառն Տարօնոյ, և որ 'ի նմա իմաստուն եպիսկոպոսն Եսայի, և վարժապետ Թէոդորոս, որ զմերս բարեհռչակեն բարեկարդութիւն, և երանեն զհաղորդեալն: Գաւառն Եկեղեաց, և լեառն սրբոյն Գրիգորի, և որ 'ի նմա հարքն և եպիսկոպոսքն՝ որք գրովք իւրեանց բարեհամբաւեն զմեր Ճշմարտութիւնս, և աւաղեն վասն աղքատութեամբ և անօրինաց բռնութեամբ 'ի սմանէ վերջանալոյ: Իշխանքն Խաչենոյ, և որ անդ վանորայք, որք զաշակերտն մեր զՅովսէփ, և զկարգաց մեր վարժապետ՝ որպէս զհրեշտակ պատուեն, և կաթողիկոսութեանն Աղուանից ընծայեն: Եկեղեցիքն Լատինացւոց, որ աստ յարևելս, և որք յարևմուտս, որոց հաճոյացաւ մեր իմաստութիւնս՝ 'ի գնալն ինքնակալին Հռովմայ ժողովով եպիսկոպոսացն, որք տեսեալ զմեզ հմուտ կարգաց իւրեանց և մերոյս լուսաւորիչ, 'ի վերայ բարեգործութեանն՝ փառաւորեցին զՀայր որ յերկինս: Եկեղեցիքն Անտիոքու, Լատինացւոցն և Հելլենացւոցն, որք Պաւղոսի անուամբն զմեր նուաստութիւնս բարեհամբաւեն, և Նորին աթոռոյն արժանապատիւ լինել յաջորդ վկայեն, որոց դրունքն մեզ բաց են, և ժառանգաւորքն աշակերտեալք: Պատրիարգն Ասորւոց՝ որոյ գրերն առ մեզ, և բարի վկայութիւնն մեր աղքատութեանս մեծահռչակ: Ընծայեալն Թագաւորութեանն Կիպրոսի Գունդստապլն, որ ’ի գալն ’ի կարիս ձեր օգնականութեանն առ մեզ, հաճութեամբ և գոհութեամբ ընկալաւ զմեր բարեկարգութիւնն: Գունդ Հեալի, որ Պաղեստինացւոցն ընծայեալ է արքայութեանն, զոր յայս ամ բերեալ ձեր ’ի Տարսոն, սկիզբն զայս արար առ մեզ խօսելոյ, թէ ոչ զոք գտայ այսօր բարի անուամբ հռչակեալ առ բազումս, որպէս զքո երկիւղածութիւնդ: Առաջին կաթուղիկոսն տէրն իմ Գրիգոր որ առ Քրիստոս փոխեցաւ, ’ի ժամ վախճանին զայս ասաց, թէ հարստահարեալ եմ զքո Ճշմարտասիրութիւնդ մարդահաճոյ կամօք, Ներողութեամբ թող ինձ:

Այժմու հայրապետս որ 'ի բնաւորութենէ և յիմաստութենէ ընթացակից լեալ մեր Ճշմարտութեանն, և նախատինս վասն այսր ընդունի յօժարութեամբ: Ի վերայ այսր արտաքին վկայիցս ունիմք և զմտաց իմոց խիղճ, յոր հաստատեալ եմ թէ բարիոք միտս ունիմ, և յամենայնի կամիմ բարւոք գնացս ցուցանել:

Արդ զայս ամենայն որ 'ի Հայոց և յայլոց ազգաց՝ և 'ի մտաց խղճէ բարի վկայութիւն անտե՞ս առնեմ, և 'ի Զօրոյգետ զերկուց արանց, որք իբրև զշունս լիրբս հաջեն՝ ըղկա՞մս հաճեմ· որք վասն զԱնեցի արբեալն 'ի դուսամնաց և յորովայնամոլութենէ յարբեցութենէ 'ի կաթուղիկոսութիւն քարշելոյ՝ զմեզ նախատեն, և նմա վկայութիւն տան, և մեզ այպանումն· մեք 'ի մերոյն մոլորի՞մք, թէպէտ և նոցա ոչ հաճոյ գտանիմք· զի նոցա կամացն լռումն Բարսղի կաթողիկոսութիւնն է, և ոչ իմ 'ի Ճշմարտութենէ մոլորումն: Վասն որոյ աղաչեմ զքո բարեպաշտութիւնդ, զիս երբեք զոգէս ոք և զանուս յայս հարկ չկոչել: Ես Աստուծոյ կամօք 'ի Ճշմարիտ Ճանապարհի եմ և մեծամեծ ուղղութեանց՝ որք նսեմացեալ էին՝ նորոգիչ 'ի Հայս. թէ ընդունիք՝ զոր գիտեմ, և ձեզ վարդապետեմ, և առաջնորդեմ ձեզ ընդ Ճանապարհն՝ որ առ Աստուած ածէ. իսկ եթէ անտես առնէք, և ոչ այնպէս լսեմ, և ասեմ առ Աստուած. Տէր, դու գիտացեր, զի զվարդապետութիւնս քո ոչ ծածկեցի 'ի սրտի իմում. ասացի և ոչ թագուցի զնոյն 'ի ժողովրդենէ մեծէ՝ և նոքա շուրջ պատեն զինև չարեօք, որոց ոչ գոյ թիւ: Եւ ամենայնին յօժարութեամբ տանիմ, զի զՔրիստոս շահեցայց, և գտայց 'ի նմա. և ընդ այսմ յուսոյ գնամ խնդալով յերեսաց ատենի քո վասն Քրիստոսի անարգեալ: Իսկ եթէ ոչ հետևիս նոցա շատախօսութեանն և նախանձուն, այլ պատուես զմեր որ յԱստուծոյ պատգամաւորութիւնս.

ընուս զՔրիստոսի հրամանն՝ որ ասէ. Որ ձեզ լսէ՝ ինձ լսէ, և որ զձեզ ընդունի՝ զիս ընդունի. և որ զիս ընդունի՝ զառաքիչն իմ ընդունի. և ինքն Տէր մեր Յիսուս Քրիստոս զօրացուսցէ զքեզ 'ի նոյնս, զի 'ի ձեռն մեր լուիցես նմա. և առ չարախօսն տատասցես. Ի բաց կացէք յինէն ամենեքեան, որք գործէք զանօրէնութիւն. զի ինձ քաղցր են բանք Տեառն քան զմեղու խորիսխ, և ցանկալի քան զոսկիս պատուականս. զի պահելով զնոյն՝ հատուցումն առից ընդ երկրաւոր մեծութեանս և զմեծն կոչիլ յարքայութեանն երկնից. որում ժառանգաւոր արասցէ զքեզ Քրիստոս 'ի փառս անուան իւրոյ, որ է օրհնեալ յաւիտեանս. Ամէն:

Դարձեալ և զայս աւելորդ ոչ համարիմ յայտ առնել քում աստուածպաշտութեանդ, զի սէրն գլուխ է ամենայն պատուիրանաց, ասաց սուրբ առաքեալն Պաւղոս: Եւ Տէրն նոր պատուիրան ետ մեզ, զի սիրեսցուք զմիմեանս. և ոչ 'ի նշանաց, և ոչ 'ի բժշկութեան սքանչելեաց եւ տարացոյց իւրոցն, այլ թէ Յայսմ ծանիցեն ամենեքեան զձեզ իմ գոլ աշակերտ, եթէ սիրիցէք զմիմեանս: Այսմ օրինացս դրժօղք ոչ կարեմք լինել․ և ընդ քրիստոնէից ժողովս մախանօք կալ, և զՁորոյգեատացեացն զմիտան հաճել: Այլ թէ և առիմք 'ի նոցանէ, ոչ առեամք զնոսա, այլ փարիմք սիրով և զհայաստանեօքս և զԼատինացւոցն, զհելլենացւոցն, և զամենեսեան մի դիտեմք 'ի Քրիստոս՝ Աբրահամու հաւատոցն զաւակ ըստ առաքելոյ․ և կարող եմք շնորհիւ գիտութեն՝ զոր ունիմք 'ի սուրբ գիրս՝ ափիբերան առնել զՀելլենացին, թէ զՀայն խորշեալ կարծիցէ յուղղափառութէ, և զՀայն՝ թէ զայլ ազգ․ և զի աղբիւր և հիմն հաւատոցս Քրիստոսի նոքա եղեն, և մեք նոցա ծնունդք որպէս ասի յերգ մի՝ որ առ մեզ եղանակի․ Կեցո զորդի ծառայի քո, զոր 'ի Հռովմայ գահիցն վերապատուեցեր, ուր եդին զվէմն հաւատոյ հիման սուրբ եկեղեցւոյ։ Արդ Հայոց վարդապետիս բանքն՝ հիմն զնոսա ասէ, և զմեզ 'ի վերայ նոցին շինեալ․ և 'ի նոցին բարբառն ունիմք բազում բանս 'ի գիրս սուրբս՝ որք չէն շըրջեալ 'ի հայ լեզու․ այլ 'ի պատիւ նոցին հելլէնարէն թողեալ են, որպէս Քրիստոսն՝ որ թարգմանի 'ի հայս օծեալ․ եկեղեցին՝ որ թարգմանի ժողովարան․ կաթուղիկոսն՝ որ թարգմանի ընդհանրական․ եպիսկոպոսն՝ որ թարգմանի այցելու․ Ստեփանոսն, Լէոնն, Գրիգորն, պռոսխումէն, որթին, և այլք բիւր։ Եւ զի այս այսպէս է, կաթուղիկէ եկեղեցւոյ սովորութիւն է որ 'ի մեծամեծ տօնսն՝ 'ի Կոստանդինուպօլսի եկեղեցին՝ զաւետարանն նախ 'ի լատին լեզու կարդան, և ապա 'յիւրեանց․ և 'ի Հռովմայ եկեղեցին, և յԱնտիոքուն և յԵրուսաղեմին՝ նախ 'ի հելլէնացի կարդան, և ապա 'ի լատինացին․ և այսպէս զմիմեանս սիրով պատուեն։ Տարոնի կաթուզնիկէ եկեղեցին՝ եկեղեցի է իբրև զմի 'ի նոցանէ. և դու թագաւոր մեր՝ որպէս նոցայն իւրեանց. և ժողովոյն մեծ բաժինն Հելլենացիք էին, և քահանայքն որ յողոգոմեան օրն՝ մեզ աղօթակցէին. և ցուցաւ 'ի վերոյ որ չէ առ մեզ հելլենացի լեզուն խօսեալ, այլ պատուեալ։ Թէ ես հարցի թէ ընթեռնո՞ւն 'ի նոցա բարբառն աւետարան, և ապա մեք՝ չանօրինեցայ. այլ զկաթուղիկէ եկեղեցւոյն օրէնքն պատուեցի. և այն ոչ քո պատուոյդ փոքրկութիւն էր, այլ բարձրութիւն, որպէս այդ թագաւորացդ, որ 'ի նախայիշատակեալ եկեղեցիսդ պատահէին. և ձեզ պարտ էր զեկեղեցւոյ օրէնքն յիս՝ որ իշխանն էի եկեղեցւոյն՝ թողուլ, և հնազանդութեամբ լըսել. և ապա բարեմիտ կամօք ըզպատճառն քննել։ Նահանջեցիք զիմն, և ես հաւանութեամբ պատուեցի զձեր հրամանն, ոչ իբրև զոգէս, այլ իբրև զիշխանութեան հնազանդ։ Արդ այս Հելլենացւոց ազգս ոչ թէ առ մեզ միայն ունին մուտ և եւ ՚ի սուրբ եկեղեցի, այլ և ՚ի ձեր արքունական ապարանսն: Դուք ընդէ՞ր ոչ վարէք զնոսին ՚ի ձեր գաւթացն՝ իբրև զանսուրբ ազգ և զօտարահաւատ, ըստ Զօրոյգետացեացն կամաց. այլ ունին ՚ի ձէնջ իշխանութիւն և պատիւ և ռոճիկս և սէր և անընտրողաբար հաւասար Հայոց ընդունելութիւն: Արդ եթէ դուք զսիրոյն օրէնս պատուէք, զմեզ յատելութիւն ընդէ՞ր ստիպէք: Զորս ՚ի մըտանելն ՚ի մեր եկեղեցիս՝ տեսանեմք հաւատով երկրպագող, և ըղձեռն լի ընծայիւք, և լապտերովք և խնկովք և ձիթովք, որ Աստուծով ասեմ, ՚ի նոցին ընծայաբերութենէն՝ զոր տան և նուիրեն սըրբուհւոյ Աստուածածնին պատկերին, առնու Տարսոնի եկեղեցւոյն և վանից մեր օր ըստ օրէ պէտքն ՚ի մոմեղէնէ և ՚ի խնկէ. և ունին այսմ ընթացակից և հաւատս և ջերմեռանդն գութ առ Աստուած, և յեկեղեցւոյ պայծաութիւն, զորս ոչ կարեմ տալ 'ի տեսանելն այսպէս. և 'ի գրոց գիտեմք՝ զի ոչ և հաւատոյ ունին թերութիւն։

Դարձեալ և 'ի Լատինացւոց ազգէն՝ ոչ թէ զմեզ միայն խորշեցուցանեն Զօրոյգետացիքն, այլ և զձեզ. և չկամին նոցա սովորութեամբն զվարելն, այլ Պարսիցն՝ յորոց միջի իւրեանք են, և ընտելութեամբն նոցա կրթին։ Արդ հաւատամք մի եմք՝ և իշխանք և Հայոց ազգս, դուք մարմնոյ և մեք հոգւոյ։ Որպէս հրամայեցէք դուք մեզ՝ մեր առաջին հարցն շաւղաց ընթացակից լինել, լե՛ք և դուք ձերոյն։ Մի՛ կայք բացագլուխ ընդ Լատինացւոց իշխանացն և թագաւորացն, զոր Հայք մաղասկաթացն ասեն ձև. այլ դի՛ք շարփուշ՝ որպէս ձեր նախնիքն. աճեցուցէք զհերս և զմօրուս, որպէս ձեր հարքն. զգեցէք դուռայ լայն և թաւ, և մի՛ փիլոն և զապեալ պատմուճանս. հեծէք 'ի սախտեալ երիվարս ճուշանով, և ոչ յանսախտս լատինս լէհլով. տուք պատիւ անուանց՝ ամիրայ և հեճուպ և մարզպան և սպայասալար, և այսպիսիս. և մի՛ սէր և պրօքսիմոս, գունդուստապլ և մարաջախտ և ձիաւոր և լէճ, որ Լատինացւոց է օրէն: Արդ փոխեցէք դուք զայս լատինացի ձեւս, և զանուանսն 'ի Պարսկացն և 'ի Հայոցն ձեւս և անուանս, ըստ ձեր հարցն. և բարեզարդեցէք զձեր արքունիսդ՝ առաջնոցն սովորութեամբքն. և մեք հաւանիմք Ձորոյգետացեացն, և փոխեմք զմերս, և կատարեմք զպատարագն աքուլայով, և երկու կանգուն վեղարով. ծրարեմք զմետաքսեայ զգեստն, և մտանեմք առաջի Աստուծոյ դըշտով և կրօնաւորութեան սքեմով. լինիմք խարազնազգեստ 'ի պատարագին՝ որպէս նոքա կամին, և ոչ քթանազգեստ՝ որպէս Աստուած հրամայեաց առնել Ահարոնի և որդւոց նորա պատմուճանս կըտաւեայս պճղնաւորս, զոր նոքա ագիտութեամբ յաչաղէն: Լինիմք հրապարակաւ մատկեր և Թուրքացն կլթայընկեր, զինչ իւրեանք են և իւրեանց ընտրեալն Անեցին. խմեմք զանկակեայ տօղտօքանով, և հաճոյանամք հանդանակցացն՝ որպէս նոյն առնէ:

Իսկ ապա թէ իշխանութեանդ ձեր ծանր է այսօր՝ զկատեն ազգին, որ են Փռանկք, անօսր և բարակ սովորութիւնն թողուլ, և 'ի հնոց հայաստանեայց թանձրութիւնն դառնալ. և ոչ հերս ժողովէք, և ոչ մորուս երկայնացուցանէք, և ոչ զգեստս լայնացուցանէք, և մեղ ևս ծանրագոյն զկատարեալ բարեկարգութիւնն՝ որ 'ի նոցանէ օգտեցաք 'ի փառս սուրբ եկեղեցւոյ, արհամարհել վասն Զօրոյգետոյ երկու աղուէսուցն հաճութեան: Զի գտաք զհայոց եկեղեցիս առանց քահանայական զգեստուց, և 'ի նոցանէ օգնեալ՝ զհինն սովորութիւն նորոգեցաք. գտաք՝ զի զերրորդ և զվեցերորդ և զիններորդ ժամն 'ի միասին կատարէին. և 'ի նոցանէ զօրացեալ՝ զիւրաքանչիւրան յիւր ժամն կատարեմք, և եօթն անգամ յաւուրն զԱստուած օրհնեմք: Գտաք՝ զի պակասեալ էր 'ի վանորէիցս խաղաղական աղօթքն, և առ նոսա տեսեալ հաստատեցաք, նախ ժողովել յեկեղեցին յաղօթս, և ապա 'ի մահիճս հանգչել: Գտաք՝ զի չունէին օրհնութիւն կրօնաւորաց. այլ քահանայացուցեալ՝ միայն զձեռն տային. զոր տեսեալ առ նոսա՝ նախ օրհնեմք կրօնաւոր, և ապա սարկաւագ, և քահանայ կատարեմք ըստ նոցա: Գըտաք՝ զի սահմանով ունէին ողորմութիւն առ աղքատս, և ոչ ըստ պատահման միայն. զնոյն բարւոք նախանձն բերեալ 'ի մեզ յողորմութենէ ձերմէ՝ որ 'ի Տարսոնի եկեղեցին, սահմանեալ եմք յուրբաթի և 'ի չորեքշաբաթի երկերիւր և երեք հարիւր աղքատաց հաց և բոկլայ բաշխել. և թէ ևս տայ Աստուած և ձեր բարի կամքն՝ ևս աճեցուցանեմք: Գտաք՝ որ զկէս ամին միանգամ յաւուրն ուսեն կրօնաւորքն, ըզնոյն և մեք օրինադրեցաք:

Արդ զայս բարի սովորութիւնս՝ վասն Տուտէորդւոյն հաճութեան, արհամարհե՞մք, և լի՞նիմք պի՞ղծ որպէս զինքն, որ ինքն հանդչի, կամ տգէ՞տ՝ որպէս նայն է, որոյ իմաստն 'ի գրոյն և 'ի բանէն իւրմէ ճանաչի. որ երբ զբուն յետնոյն յիմ ձեռասուն աշակերտացս չէ:

Իսկ եթէ յետ այսր վասն տօնի աստուածայայտնութեանն դասել զմեզ ժպրհին բերելով 'ի Հայոց գրոց վկայս, չեմք և ոչ այսոցիկ պատասխանատուութեանն անվարժ, այլ կարի տեղեակ. բայց զձեզ ոչ կամիմ յաճախութեամբ գրոյս ձանձրացուցանել: Այլ զոսոխն՝ 'ի յաւնելն առարկու՝ աստուածային ճշմարտութեամբն ենթադրեմ 'ի նոյն գրեանցն, և 'ի հարցն բանից որք 'ի Հայս պատուեին: Նոյն և զերրորդ ամուսնութեան հրաման՝ որով զիջաք առ ժամանակիս ծննդոց տկարութիւն, հաւանեցուցանեմք կանոնական գրովք, և ճողոպրեմք 'ի լեզուագարաց թունից: Նոյնպէս և զամենայն որ առ մեզ գայթակղութիւն նախանձաբեկաց և ադխտաց՝ ցուցանել կարող եմք, թէ գրոց սրբոց է ուղեկցութիւն, և ոչ ինքնահաճոյ ճանապարհի գիւտ· և զգիրս ոչ կարեմք թողուլ, և աւանդութեանց սնոտեաց հետևել· զի մի՛ լուիցուք զկշտամբանս 'ի Քրիստոսէ՝ որ ասէ· Թողէք զպատուիրանն Աստուծոյ վասն ձերոյ աւանդութեն, կեղծաւորք: Այլ զսուրբ գրոց օրէնք՝ աւանդութեանց տապալիչ առնեմք, և գայթակղելոյն թոյլ տամք զՔրիստոսին երկրորդելով 'ի վերայ նոցին, թէ կոյրք են կուրաց առաջնորդք որք սխալեն, և 'ի վիհ մոլորութեան մատնին· և մեք վասն Զորոյգեաց մախացողացն լեզուագարութեան՝ յայն վիհն ոչ ընկղմիմք· այլ զլոյս իմաստիցն մեր յաշտանակ իշխանութե ձերոյ բարձրացուցեալ՝ լոյս տամք կուրացելոյն, և կոչեմք 'ի մեր Ճանապարհն և 'ի Քրիստոսին. և 'ի պէտս նոցին լուսաւորութեան, կամօք ձեր՝ յօժարութեամբ և աներկիւղ գնամք 'ի մէջ նոցին. և զոր յունկն ձեր խօսիմք՝ քարոզեմք առաջի նոցա 'ի վերայ տանեաց, ոչ երկուցեալ յայնցանէ, որ սպանանեն զմարմին, և զոգի ոչ կարեն. հաւատացեալ Աստուծոյ՝ թէ կարող է 'ի քարանց յարուցանել որդիս Աբրահամու. և ահա պատրաստ եմ զայս ձեր հրաման կատարել:

Ապա թէ այսմ խափան լիցի ազգականացս գութ, և աշխարհին հեռաւորութիւն, իշխանութեան ձեր հրամանաւ՝ եկեսցեն առաջի ձեր ընդ մեզ 'ի մրցումն. զի ոչ է այս արիութիւն զինուորի՝ յիւր ասպարանան թուր շողացուցանել և զօդս հարկանել, այլ որ 'ի հանդիսի տեղն իջանէ, և ընդդէմ ախոյանին կայ: Նոյնպէս իմն զի չէ ուղիղ մարտ հոգևոր՝ որ 'ի Զօրոյգետ նստի և զիս 'ի Կիլիկիա յաչաղէ. Թող գան 'ի հանդիսի տեղիս, տան վէր և տանուն. և որ յաղթող լինի Քրիստոսի Ճշմարտութեամբն՝ զգովութիւնն ընկալցի: Նոքա ինձ երկու երեք թուղթ են գրեալ նախատինք. ես գիրք մի բովանդակ եմ գրեալ զՀայոց ազգիս անկարգութիւնս՝ որ յետոյ մտեալ են. համեմատեմք իրերաց, թէ ո՞ զօրանայ առ Ճշմարտութիւնն և 'ի գրոց ձայնակցութիւնն, իմն՝ թէ նոցայն: Ապա թէ անդ չառաջէք, և 'ի հանդիսի տեղս զնոսա չկոչէք, թո՛յլ տուք և մեզ՝ մեր բարեկարգութեամբս մրնալ առաջի Աստուծոյ, և տանիմք զնոցա բամբասանսն և զշատախօսութիւնսն՝ որպէս զմանկանց շաղակրատութիւն. 'ի վերայ որոց և աղօթեմք՝ Աստուծոյ շնորհօքն գալ յուղղութիւն: Եւ թէ դուք խորհիք զնիկոդիմոսին՝ զգիշերային աստուածապաշտին, կամ զայն իշխանացն՝ որ 'ի Քրիստոս հաւատացին և ո՛չ յայտնեցին, զի մի՛ 'ի ժողովրդենէն ելանիցեն, սիրելով զփառս մարդկան քան զԱստուծոյն, աղօթեմք Աստուծոյ ներողութեամբ ընդունել և տալ մեզ ժամանակ յառաջանալոյ շնորհի, զի և առ մեզ լուսաւորեսցի ճըշմարտութիւնն, և մեօք յամենայն եկեղեցիս սրբոց. զորս յուղղութեանն և 'ի ճշմարտութեանն դաստիարակելով վարձս ընկալջիք ընդ բարեպաշտ թագաւորացն Դաւթի և Յովսեայ, Կոստանդիանոսի և Տրդատայ, որ յիւրաքանչիւր ժամանակս ուղղիչք եղեն աստուածպաշտութեանն, և ժողովրդեանն՝ որք ընդ նոքօք՝ ուսուցիչք. զորոց գործսն որ 'ի գիրս սուրբս ժողովեալ են, պարապումն առեալ քո բարեպաշտութեանդ՝ ընթերցողացն ունկնդրութեամբ նախանձիս զբարի նախանձն. և հանելով զպատուականն յանարգէն՝ բերան Աստուծոյ կոչեսցիս։ Զնոցա լսելով զգործսն՝ իմանաս, զի ոչ եղեն աւանդապահք այլ օրինապահք՝ որպէս Յովսիա, որ զօրէնս եգիտ թագուցեալ և զաւանդութիւնն զօրացեալ. և մա զօրհնան, պատուեաց զպատմուճանն վասն անարգութեանն, և հաստատեաց զնոյն’ի մէջ Իսրայէլի, և ընդ երանելեան յիշատակի։ Յայս զօրացուսցէ Աստուած զձեզ՝ կանգնել զօրհնան Աստուծոյ’ի մէջ պանդուխտ և նժդեհ ժողովոյ ձերոյ և ազգիս, և Աստուծոյ փութալ հաճոյ լինել, և մի՛ մարդկան. որ և ընկալցի զձեզ հաղորդ փառաց իւրոց ընդ ամենայն սուրբսն ’ի յաւիտենական կեանսն. և նմա փառք յաւիտեանս. Ամէն։

ՆՈՐԻՆ

ԵՐԱՆԵԼԻՈՅՆ ՆԵՐՍԵՍԻ

ՏԱՐՕՆՈՆԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ
ԱՍԱՑԵԱԼ

Բարեբանութիւն ներբողական գովութեամբ 'ի Համբարձումն Տեառն Յիսուսի Քրիստոսի յերկինս ։

ՑՆԾԱ այսօր հարսն ուղղափառ եկեղեցի հեթանոսաց 'ի պատիւ յիշատակի փեսային քո Քրիստոսի խորհրդոյ։ Պարեցէք, ով մանկունք առագաստի, այսօր ուրախութ͞բ, զի հաստատեցաւ սիրտ ձեր 'ի հանդէս փառաց նորա մեծութեան։ Զուարճացեալ խրախոյս խնդութեան հարկէք 'ի մէջ տաճարիս, դասապետք դասուց հանդիու ժողովոյս: Քանզի ահա այսօր լցումն փափաքմանց ձերոց յերկինս երկնից կառուցեալ ամրացաւ: Ո՛վ որեամբ փրկեալ անբիծ գառինն՝ սեպհական ժողովուրդք Քրիստոսի. դուք՝ որ ընդ խաչեալն խաչեցայք յօժարութեամբ, և ընդ թաղեալն մեռայք անձկութեամբ, և յարութեանն հաղորդ եղէք դաւանութեամբ, այսօր եկայք բարձրացէք սլացեալ ընդ նմին թևօք հաւատոց 'ի փառս երկնաւորս, յոր մտեալ նստաւ ընդ աջմէ Հօր, առհաւատչեայ և ճանապարհ ամենեցուն ձեզ:

Այլ ինձ, որ զտարտամութիւնս ընթադրեալ պաշտպան կացի աւուրս մեծի, ո՛վ տայր հաւասարել խորհրդոյս, և զամենեսեան զձեզ սխրացուցանել՝ իմաստութեամբ տօնելոյս: Այն զի վերջացաք 'ի սահեցմանէ իրաց կենցաղոյս՝ նայել 'ի սքանչելի փառս այսր աւուր, յոր հրեշտակք ժողովեալ հպատակեցին, և յեկեղեցի՝ ուսեալք բազմապատիկ իմաստոս Աստուծոյ՝ ժողովքս մեր երգակցին։ Նա և առաքեալքն սուրբք ’ի սպասաւորել խորհըրդոյս՝ պշուցեալք սքանչացան. և մարգարէքն ’ի բացուստ տեսեալ՝ հրաման ետուն ժողովքս երգոց օրհնութեան։ Համբարձաւ, ասէ Դաւիթ, Աստուած օրհնութեամբ, և Տէր մեր ձայնիւ փողով։ Ո՛վ դուք եկեղեցւոյ մանկունք, բարձեալ զձայնս քաղցր եղանակաւ՝ սաղմոս ասացէք Աստուծոյ մերում, սաղմոս ասացէք Թագաւորին մերոյ, սաղմոս ասացէք։

Այլ աւա՜ղ, զի հեղգութիւն մեր ծանրացեալ ’ի զբաղմանէ մարմնոյ՝ հաւանել հրամանիս վերջացաւ. և զճաշակ համեղ գիտութեանս՝ ջամբել անձին երգօք օրհնութեամբ՝ յուլացաւ։ Քանզի որպէս մարմնոյ ոչ է մի՝ տեսանելն զկարգեցուցիչ իւր համադամս՝ և ճաշակելն, այսպէս ո՛չ է հաւասար լսել զբանս Աստուծոյ, և ո՛չ խուզողական հանճարուն որոնել. զի այսու պարարեալ բերկրի, և այնու երբէք ոչ մխիթարի: Յաղագս այսր նախախնամողն Աստուած որպէս մարմնոյ եւ զանազան որակս պտղոց և երանգս կերակրոց, որ բաւական էր մինն առ 'ի կեանս, զի յիւրաքանչիւրոցն առանձինն ձգեսցէ համեղուղութիւն երանգոյ և հոտոյ և զուարճասցի, այսպէս և հոգւոյ եւ առաւել քան զնոյն կերակուր՝ զզանազան տօնս աստուածայինս, իւրաքանչիւրոցն խորհրդոցն որակք գունոց՝ և անուշահոտ բուրմամբ առանձինն: Զի 'ի ճանաչելն զնոսա՝ անյագ լիցի փափաքմամբ խորհրդոյն, 'ի զուարճացուցանել զիմաստս մտացն քմոց: Վասն որոյ և դուք, որդիք Եդեմայ, որոց եւ Աստուած զամենայն ծառ գեղեցիկ 'ի տեսանել, և քաղցր 'ի կերակուր, եկայք կթեսցուք այսօր 'ի ծառոյն կենաց Քրիստոսէ՝ զպտուղ գեղեցիկ նորին համբարձման, և բերկրեալ ցնծասցուք 'ի վերայ գեղոյ նորա վայելչութեան, անմահական համոյն քաղցրութեան, և հոտոյն բերկրութեան: Որպէս զի որք բեւեռօք ընդ նմին խոցեցաք և ՚ի գերեզման մեռեալ երկնէաք, և զխորհուրդ յարութեանն ՚ի գողութիւն համբաւեալն լուեալ վհատացաք, այսօր տեսեալ զնոյն ինքն յերկնից Ճանապարհն ինքնիշխանութեամբ ընթացեալ, հաստատեալ սրտիպարեսցուք, և բարձրաբազուկ ՚ի վերայ թշնամեաց մեր Ճախրեսցուք:

Ո՞ւր ես անզեղջ ՚ի չարիս բանսարկու. ո՞ւր դու զրպարտիչ դատախազ. Եկ այժմ կա՛ց մեզ առընթեր, ոչ իբր զաւրելի, այլ իբրև զթշնամի: Տե՛ս և ողբա՛ յանձն քո. տե՛ս և յամօթ լեր ՚ի գործս քո. տե՛ս. սա այն է՝ որում զխաչն մեքենայեցեր, որում զլեղին արբուցեր, զոր գողացեալ համբաւեցեր. ահա ակներև յանդիման քեզ և ամենեցուն՝ որպէս զհզօր և զկարօղ յերկինս համբառնայ: Յայնժամ մեզ էր տրտմութիւն, այսօր ՚ի վերայ քո ցաւք և եղր բազմացի ։ Յայնժամ 'ի Տեառն մեր մահն՝ ընդ մեզ և տարերքս սուգ զգեցան. այսօր 'ի համբառնալն նորա՝ և օդ և երկիր պայծառացեալ՝ չքնաղ ցնծութեամբ ընդունին զնա. և պարք լուսաւորացդ խոնարհեալք աստիճանք լինին ստեղծողին իւրեանց, որ փոփոխեալ ըզդարշապարս անցանէ վերոյ նոցա 'ի յերկինս ։ Յամօթ եղեր հրապուրող մարդկան 'ի սէր աշխարհի. զի ակներև պշուցեալ զգրաւականն մեր՝ յղարկեմք օրհնութեամբ 'ի յերկինս, և 'ի վերայ նորա ամբառնամք ։ Ոչ ևս այսուհետև գերութեանս դու իշխես. զի գերեդարձն զմեզ յերկնից քաղաքն ածեալ ամրացոյց ։ Տկարացար անհաւատութեան տուամբք զմարդիկ պատրել. զի առհաւատչեայ հաւատոց մերոց 'ի ծոցն Հօր Աստուծոյ ելեալ բազմեցաւ ։ Ոչ ներգործէ այլ՝ դարանակալեդ մեքենայք զյուսահատութիւն. վասն զի բարեխօսն մեր ընդ աջմէ Հօր նստեալ քաւէ զժողովուրդս ։ Ոչ կարես 'ի չարախօսէն այլ զլանալ զիրաւունս. զի որ զփորձն էառ քո հնարիցդ, է փորձեցելոցս օգնական: Զղջացի՛ր գոնէ անագան 'ի չարեացդ, քանզի արտաքս ձգեցար յիշխանութենէ աշխարհի: Տես, մարմին և արիւն է՝ որ յերկինս ելեալ բազմեցաւ. և ա՛ռ իշխանութիւն յերկինս և յերկրի: Այլ գիտեմք զի ամօթով թաքչիս. գիտեմք զի մերկ խայտառակ եղեալ յիշխանութենէդ նշաւակիս. գիտեմք զի նկուն եղև լեզուդ, որ զսքանչելիսն բէեղզեբուղաւ ասել սովորէիր, և զվարդապետութիւնն՝ հակառակ Աստուծոյ կարծեցուցանէիր, և զյարութիւնն՝ գողութիւն հրատարակէիր: Վասն զի այսօր այն գործոյ կատարիչ՝ ո՛չ միայն յերկնից տայ նշան, այլ ինքն ընդ երկինս թեթև սլացեալ, մարմնով համբարձեալ, հրեշտակաց զօրօք յղարկեալ, ընդ աջմէ Հօր նստեալ, նշան լինի հաւատոց և զօրութիւն՝ կոխել զքո խայթոցս: Դիտեա, և զգատակնիք պատուհասին քում հաստատեա· Թո՛ղ տամք և զմեքենայս քո քեզ ժողովել, թէ ախորժես՝ և խորհըրդակից քո զհրեայսն զօրավիգն կոչել· զի՞նչ ունիք առ այս զըպարտութիւն բաջաղել, յայտնեցէ՛ք: Մարդ էր, և զիա՞րդ առանց օգնականի թեթև թռուցեալ ընդ երկինս վերացաւ: Աստուած, և զիա՞րդ ընդ աշակերտան կերակրոցն հաղորդեցաւ: Տես քա՛ջ, Աստուած մարդացաւ, և մարդն աստուածացաւ· դու խայտառակեցար, և հաղբք քո հրատարակեցաւ· խրաւամբք և արդարութեամբ դատեցար, և'ի մարմնոյ յաղթեալ ընկճեցար:

Զայսոսիկ առ բանսարկու թըշնամին'ի դէպ էր մեզ 'ի սկզբանս բարբառել, և զմախանօք յաշաղօղն 'ի ժողովս մեր ամօթով արտաքս վարել, և ապա զհոգևոր սեղանս բարեկամացդ սփռել և զամենեսեան կերակրել:

Եւ արդ զի մի՛ վայրապար լիցի խորհրդոյս տեսութիւն, ժուժկաւել աղաչեմ, և անստուստ 'ի վերուստ իմանալ, թէ զի՞նչ հարկ Աստուծոյ իջմանն 'ի յերկիր, կամ այսօր՝ ուր էնն 'ի յերկինս՝ փառօք համբարձմանն․ որպէս Տէրն ինքն ասաց․ Ոչ ոք ել յերկինս, եթէ ոչ որ էջն յերկնից Որդին մարդոյ, որ էնն յերկինս։ Եւ առաքեալն նորուն գրէ․ Որ էջն նոյն է, և որ ելն 'ի վերոյ քան զամենայն երկինս, զի լցցէ զամենայն։ Բայց թէ ոչ նախ զիջանելոյն պատճառս քննեմք, անկար է մեզ զելանելոյն խորհուրդն ճշմարիտ իմանալ։ Եւ արդ գիտեմք այսպէս․ Ստեղծուած եմք Աստուծոյ, և պատուիրանին զոր առաք՝ եղաք յանցաւորք․ յանցեաք ոչ իբր ընդպատրողն մեր կամաւ, կամ առանց սորջանաց․ այլ զի՞նչ․ յետ պատրանացն ապաշաւ, և յետ խաբէութեամբ յանցուածոցն և մահու դատապարտութեանն՝ 'ի վտարանդի ծառայութիւն նորին զզջմամբ ապաշխարօղք, որպէս այն որ ասէ․ Տառապեցայ և խոնարհեցայ, ուստի և զօրհանապազ տրտում գնացի· և բարկութեան Տեառն համբերից, զի մեղայ նմա, մինչև հանցէ 'ի լոյս զիրաւունս իմ։ Եւ ապա առ Աստուած· Զարթո զզօրութիւնս քո, և եկ 'ի կեցուցանել զմեզ· արի, Տէր, օգնեա մեզ և փրկեա զմեզ· և թէ՝ Հոգի երեսաց մերոց տէր Քրիստոս· ընդ հովանեաւ նորա կացցուք և ապրեսցուք· և Հեթանոսք որ զօրէնս ո՛չ ունէին՝ բնութբ՟ զօրինացն գործեցին։ Վասն այսորիկ տեսեալ Աստուծոյ զաղաղակ 'ի նեղութենէ տարակուսեալ բնութեանս, արդար իրաւամբք կշռեաց զողորմութիւն իւր ընդ կիրս ապաշաւանաց մարդկան մոլորելոց· և նիւթ առեալ զբնական թախիծ մտաց նոցա, ողորմեցաւ։ Որպիսի՞ օրինակաւ· ոչ եթէ զմեղանչական բնութիւնս յայլ էութեան տարազ յեղաշրջեաց, և կամ տկարացեալ զգայութեանցս զգալի պարգևեաց զօրութիւն։ Քանզի թէ այսպէս էր, զպջուն երեւեցուցանէր նմա վասն առաջին արարչութեանն, որում անմարթ է հետեւել նախահայեաց բնութեանն. և զխո՟րդ զոր 'ի բարի ստեղծեաց բարւոյ արարիչն՝ ունէր յայլ ինչ փոխել, բայց թէ զխանդ ախտիցն, ընդ որ յետոյ թաւալեցաւ՝ մաքրել: Եւ զի անհնար եղև այս այլ ումեք, ասէ առաքեալն. Աստուած զորդին իւր առաքեաց 'ի նմանութիւն մարմնոյ մեղաց, և վասն մեղաց: Առ 'ի զի՞նչ կատարել գործ. որպէս զի մարմին զգեցցի, և ըստ իւրում էութեանն՝ անմեղ զնա ցուցեալ զմեղս կոխեսցէ, և զհայր մեղացն դատապարտեսցէ անմեղ մարմնովն, ամենայն մարմնաւորացս մեղաց պարտական. և զակամայ գերեալքս 'ի նմանէ զերծուցեալ յառաջին հայրենիսն վերստին փոխեսցէ:

Այսպէս բարեկամքս ծանեաք զխորհուրդ Տեառն մերոյ, գեր 'ի վերոյ քան զծառայական օրինօքն վարժեալսն: Վասն այսորիկ գաունին Աստուծոյ պատարագելն, և աշխարհի մեղաց քնջելն· որպէս զի անպարտն զպարտականացս մահուպատիժն հատուցեալ, պարտաւորքս որբեալ առ Աստուած բարձրասցուք։ Վասն այսր և բարկութիւն ամենահօրն զիջաւ 'ի հաշտութիւն· զի 'ի մէնջ՝ խաղաղութեան պատարագն։ Այս զիշխան աշխարհիս դատապարտեաց, և արդարութեան իրաւամբքն արտաքոյ ձգեաց· զի 'ի մարմին և արիւն ըստ բնական կրիցն ընթացից ոչինչ եգիտ յիւրոցն սերմանց· յաղագս որոյ ոչ թողաւ ոգի նորա 'ի դժոխս, և ոչ մարմինն ետես զապականութիւն։ Զի յորժամ եհաս 'ի դժոխս, եկն իշխան խաւարին, և ոչինչ եգիտ 'ի նմա յիւրոցն· ծանեաւ ապա՝ թէ ոչ ըստ պարտեաց, այլ ըստ կամաց Հօր մեռաւ փոխանակ աշխարհի։ Վասն այսորիկ զարթուցեալ զարդար դատաստանն՝ ած 'ի վերայ պատրողին զպատրեցելոցս պատիժ· մերկացոյց յիշխանութենէն և 'ի պետութենէն՝ նշաւակեալ զնա անձին իւրոյ անմեղութեամբ: Եւ խորտակեալ զնիգս դժոխոցն՝ արձակեաց զկապեալսն՝ ասելով. Որ 'ի կապանս էք՝ ելէք, և որ 'ի խաւարի էք՝ յայտնեցարուք: Արդ որ ննջեաց 'ի գբի, նախահայր Ադամ, զի խափանեցաւ մահու յաղթութիւն. լուսատու լիցի քեզ Քրիստոս՝ որ յարոյցն զբնութիւն քո այսօր 'ի յանեղծն կենդանութիւն:

Արդ զայս մեծ և փրկագործ աւարտեալ 'ի մահուն իւր Քրիստոս՝ զխորհուրդ, եկն յետ այնորիկ երևեցաւ աշակերտացն իւրոց, և հաստատեաց զնոսա 'ի յոյս յարութեան մարմնոյն իւրով: Ետես զնոսա, և ուրախ արար ըզսիրտս սիրելեացն իւրոց, ուրախութիւն՝ զոր ոչ ոք կարէ հանել 'ի նոցանէ յաւիտեանս: Յարուցեալ՝ թէ այսպէս անըմբռնելի մնայ 'ի մահուանէ նա՝ որ ոչն ըմբռնի յապականութենէ մեղաց. և ըզմեղս մեր ինքն եբարձ 'ի խաչափայտին: Եկաց ընդ նոսա զաւուրս քառասուն, և ուսոյց զարքայութեանն Աստուծոյ անճառ գիտութիւնն: Կեր և արբ, և հաստատեաց զյոյս յարութեան մարմնոյ յետ մահու. շօշափեցաւ և տեսաւ, զի նոյն էր ճշմարիտ՝ որ 'ի խաչին խոցեցաւ: Եւ այն որ էջ 'ի մեռեալս և ազատեաց զնոսա, եկն առ կենդանիսն և մխիթարեաց զնոսա:

Պարտ էր զի ընծայեսցէ այնուհետև զպատարագն՝ զոր առ 'ի յերկրէ, այնմ՝ որ հաճեցաւ ընդ նուիրելն նորա: Պարտ էր զի 'ի ձեռսն որ ստեղծ զմարդն անապականն՝ դիցէ զնոյն, նորոգեալ ըստ առաջին վայելչութեանն: Պարտ էր զի արքայն որ առարկու եղեալ թշնամեացն յաղթեաց, վիճակեսցի նստել ընդ աջմէ Հօր յաթոռ՝ քահանայապետ յաւիտենից, և բարեխօս նմին քաւութե՟: Պարտ էր առհաւատչէի յուսոյն մտանել 'ի յերկինս, որպէս զի մարդիկ 'ի նոյն խարսխեալ՝ 'ի նոյն փութասցին օթևանս: Պարտ էր զի որոց շրջէինք 'ի մէջ օձից և կարճաց, և մահացու թունիւքն խոցիմք, լիցի արեամբն իւրով սրբիչ, և մեծի շնորհաց Հոգւոյն ընձեռիչ։

Յաղագս որոյ 'ի դէպ ժամանակի առեալ ընդ իւր զգունդս աշակերտացն, ել 'ի լեառն ձիթենեաց։ Ի վայրն՝ ուր ուսան զճառս նորին թշնամեաց, և ուր լուան զբանս չարչարանացն և երկեան, ծանուցեալ զփառաւոր համբարձումն՝ բերկրեցան։ Ի լեառն՝ ուր տեսին զնա յաղօթս տարակուսանօք, անտի տեսին զնա սլացեալ ընդ ամպս լուսեղէնս փառօք։ Ի տեղւոջն՝ ուր խոնարհ եդ յերկիր զաստուածային երեսն արտասուօք, անտի վերհամբարձաւ հրեշտակային օրհնութեամբ և փառօք։ Ի պարտիզէն՝ ուր կապեցաւն նախատանօք, անտի սաւառնեալ չքեղացեալ՝ ճանապարհ առնէր ընդ ամպս գարշապարօք։ Ի ձորին՝ ուստի փախեան 'ի նմանէ տառապեալքն վշտօք, անդանօր ժողովեալ օրհնեցան յամէնօրհնեալ աջոյն պանծանօք ։ Ի ձիթաստանիս տրամեալ՝ ոչ կարէին տանել զճառս մահուն զարհուրանօք․ անդ եբաց զմիտս նոցա իմանալ զգիրս, զոր ելից հրաշալի իւր գործովք ։ Ի կեդրոնեան ձորոյն՝ ուստի տարան զնա 'ի խաչ սուսերօք, 'ի նմանէ ամբարձաւ 'ի կառս քրովբէից նուրբ հողմոցն թեւօք ։

Մայրն՝ ուր խոցեցաւ յայնժամ 'ի նախատանացն սայրասուր սլաքօք, այժմ տեսանէ զորդին իւր թագաւոր պճնեալ պսակօք ։ Մարիամ որ ժողովեալ զամենայն բանս՝ խելամուտ լինէր 'ի սրտին խորհրդովք, ետես այսօր զելս ամենայն տարակուսանաց իւրոց հրճուանօք ։ Մեծութէնն՝ որում ակն ունէր որդւոյն հաւատովք, եղեւ ակնարկօղ այսօր զգալի իւր աչօք ։ Զթագաւորութիւնն՝ զոր խոստացաւ նմա հրեշտակն աւետեօք, նայեցաւ ճշմարիտ՝ 'ի նըստել անդրանկին յաթոռ բարձրելոյ Հօրն փառօք ։ Վասն այսորիկ ցնծայր, հրճուէր, և այսպէս ինչ 'ի բարձրանալն որդւոյն զկնի բարբառ արձակէր · Այսօր սիրտ իմ հաստատեցաւ, և բերան իմ յարձակեցաւ 'ի վերայ թշնամեաց, ո՛վ անդրանիկ իմ և Տէր, որ կափուցեալ տատանէր 'ի քո յանճառն խոնարհութենէ : Այսօր բարձրացուցեր զգլուխ մօր քոյ փառօք, որդի իմ և Աստուած, որ լռութեամբ կորանայր 'ի բամբասելն զկուսութիւն իմ յուռթի բժժանօք : Այսօր պայծառացուցեր զդէմս իմ՝ նշուլից հետոց ոտինդ. Ճառագայթիւք, որ 'ի ժամ չարչարանաց քոց զգեցաւ սուգ՝ մթին ստուերօք : Այսօր լցեր ըղկանխասաց բանս աղախնոյ քոյ սքանչելեօք · զի ահա յայսմ հետէ տան երանի ինձ ամենայն ազգք լիով բերանովք : Այսօր շնորհ ունիմ Գաբրիելի ողջունին՝ զոր ետ աւետեօք · զի տեսանեմ զքեզ 'ի հրեղէն նորա դասուցն պաշտեցեալ երգովք :

Զայսոսիկ մայրն Աստուծոյ

զկնի ելից որդւոյն հնչելով, դառնայր ապա 'ի դասս առաքելոցն հաղորդս կոչելով 'ի ցնծութիւն սրտին զնոսա ։ Ո՛վ Պետրէ, ընդէր լռես. ահա հրեշտակք ակումբ առեալ եղանակեն շուրջ զվարդապետաւն քո զօրհնութիւնս. ա՛ռ զգունդս քո, և խառնեա 'ի պարս նոցա, երգակցեա, տալով օրհնութիւն այնմ՝ որ օրհնեաց զերկիր գալստեամբ իւրով, և պայծառացոյց զերկինս ընթացիւք իւրովք ։ Թագաւոր մեծ 'ի վերայ ամենայն երկրի ակնարկեմք զվերացեալն 'ի յերկրէ զԱստուած. շարժեցէք զլեզուս ընդ բանակս զըւարթնոցն զօրաց՝ սաղմոսելով նմա գովութիւն ։ Դաւիթ այժմ զԱստուած տեսեալ համբարձեալ օրհնութեամբ, և զՏէր ձեր ձայնիւ փողոյ հրեշտակաց, խրախոյս տայ ձեզ սաղմոսել նմա քաղցրաձայն. և ահա անփոյթ արարեալ հրամանին՝ պակուցեալ պշուցեալ ընդ գնացմննայիք ։ Օգդ ահա արտափայլէ 'ի փառաց նորա, և երկինք խոնարհի ընդ ոտիւք նորա, և բարապանք նորին բանան զդրունս մտից նորա․ դուք մինչև ցո՞ր վայր պշուցեալ՝ կամիք տեսանել զընթացս նորա։

Այլ նոքա պշուցեալ հայէին ընդ երկինս երթալոյ նորա, սքանչելի իմն հիացմամբ սոսկացեալք 'ի յանձինս։ Զի թէպէտ և տեսողք եղեն սքանչելեացն՝ խորհրդակիցք յարութեանն, սակայն տեսչութիւն կամացն ծածկեաց զորքանութ̅ն փառաց իւր 'ի նոցանէ, առ 'ի համարձակ ընդ իւրև շրջել։ Քանզի այն Պետրոս՝ որ դաւանեաց զնա որդի Աստուծոյ, և ետես զհաւաստ դաւանութեանն 'ի Թաբօր, սասանեցաւ 'ի չարչարանսն, և շաղփաղփ բանս կարծեաց զաւետիս յարութեանն․ և յորոնելն զլոկ կտաւսն հիացեալ՝ գողացեալ զյարուցեալն հաւատաց, առ 'ի յոչ գիտելոյ զգրոց զօրութիւն։ Այլ և յետ տեսանելոյ զնա յարուցեալ, և շօշափելոյ ձեռամբ Թովմայի, զի՞նչ․ զուկանանն առեալ՝ դարձեալ 'ի գործ որսոյ ձկանցն ընթացաւ. մոռացեալ զասացեալն՝ թէ այսուհետև զմարդիկ 'ի կեանս որսայցես: Որոց առընթեր կացեալ՝ մանկունս Տէրն առձայնէր. Մանկունք, միթէ ունի՞ք ինչ ուտելոյ. և ապա աըւեալ զսքանչելի պտուղ վաստակոյն, եկին և ճաշեցին 'ի միասին, գիտելով զի Տէրն է. և ոչ իշխէին հարցանել զի մի՛ որպէս առ Կղէոպեանն՝ աներևութասցի փափաքելին 'ի միջոյ: Եւ այս ո՞րպէս. — զաւուրս քառասուն բազում նշանօք՝ որ ոչ գրեցաւ՝ դաստիարակեաց զնոսա. և առեալ 'ի Գալիլեայ ած յԵրուսաղէմ և աստ. Այս բանք են զոր խօսեցայ ընդ ձեզ նախ քան զչարչարանսն, թէ պարտ է լնուլ գրելոցն յօրէնսն Մովսեսի և 'ի մարգարէս և 'ի սաղմոսն վասն իմ, և բացեալ ըզմիտս նոցա իմանալ զգիրս:

Իսկ յայնժամ որպէս 'ի քնոյ զարթուցեալ դասք առաքելոցն տարածեալ ունելով առաջի իմանալի աչաց զբանս մարգարէիցն մեկն և պարզ գիտութ՟բ՝ սքանչանային հիացեալք յանձինս ընդ զարմանալի իւրեանց պատահումն ։ Զիա՞րդ սա՝ առ որ հայեցեալ Մովսէս ասաց, կեանս մեր կախեալ զփայտէ, մեք որպէս զմահկանացու մարդ համարէաք ։ Ընդէ՞ր ժպրհեցաք զառ 'ի յԵսայեայ բազուկ հօր անուանեալս, և առ մեղս մեր մատնեալ. յԵրեմիայ՝ հոգի երեսաց պատմեալ, և փայտ 'ի հաց Նորա արկեալ. 'ի Մաղաքիայ՝ արեգակն արդարութեան կոչեալ, և բժշկութիւն 'ի թևս բարձեալ, որպէս զընկեր մի դոյզն՝ հասարակաց կերակրոյ և ըմպելւոյ կցորդ ունել ։ Ահա սա է, վասն որոյ ասաց Դաւիթ. Աթոռ քո, Աստուած, յաւիտեանս յաւիտենից. և Քո են երկինք՝ և քո է երկիր. և մեք կենցաղակիցք սորա համարձակեցաք լինել և խօսակից ։ Եւ այնուհետև սկսան յոյլ դէմս կերպարանաց պատիւ Տեառն և վարդապետին առնել. 'ի Նայեն ընդ նա զարհուրէին, յիշելով ըզթեւաքողեալ սերովբէն: Ի խօսելն պատկառէին, զմտաւ ածեալ զպաշտօնեայ զուարթունքն: Նըստել ընդ նմա զիա՞րդ էր յայնմ հետէ ժպրհելի, զոր 'ի ծոց Հօր նայէին յաթոռ փառացն բազմեալ: Սէրն բորբոքեցաւ 'ի սիրտ նոցա նորոգապէս. և երկիւղն խորշեցուցանէր 'ի սիրելւոյն սքանչելապէս. և մինչ ակն ունէին ընդ նմա յերկար ժամանակս լինել, և արժանապէս հպատակութեամբն զառաջին սխալանսն բժշկել, ա՛ռ զնոսա, և ընթանայր 'ի քաղաքէ անտի 'ի Բեթանիա: Նորոգ բորբոքեալ սիրով և տեսութեամբ ընդ նորոգ տեսիլ աստուածութեանն, յայս կոյս յայն կոյս ընթանային ամօթխածութեամբ, և հայէին 'ի դէմս նորա անյագ փափագմամբ: Երանի մեզ այսուհետև, ասէն, յաշակերտութիւնս, և ցնծասցուք 'ի նորոգ գիտութիւնս: Ահա ամենայն մարգարէքն 'ի բանս իւրեանց՝ իմանամք զի սմա ցանկային. և մեք, եղբարք, 'ի փափաքանս նոցին վայելեմք։ Եւ զայս խանդաղակաթ սիրովն ընդ միմեանս 'ի ճանապարհին, հասին մերձ 'ի Բեթանիա։

Յայնժամ համբարձեալ զձեռս իւր օրհնեաց զնոսա, և անդէն փութապէս մեկնեալ՝ սկսաւ վերանալ յերկինս։ Իսկ նոքա սրտաթափ յուսակտուր խոնարհեալ, զերկիր համբուրեալ՝ շնորհ ունելով օրհնութեանն, յարուցեալ փութապէս և երագ պշուցեալ նայէին ընդ երկինս 'ի յերթալն նորա։ Եւ ձայնէին առ միմեանս. Զի՞նչ էր պատահումնս. ո՞րպէս ընդ ճանաչելն զճշմարտութիւն և անծանօթացաք. ո՞րպէս ընդ յայտնելն զորպիսութիւն փառաց իւրոց՝ գտաւ փափաքելին 'ի մէնջ թաքուցեալ. զիա՞րդ յորժամ սկիզբն արարաք զգուշութեամբ պաշտելոյ, գտաւ պաշտեցեալ վարդապետն 'ի մէնջ՝ վերացեալ։ Իբրև զմի օր համարեալ է մեզ ժամանակն, յորս ուրախութեամբ շըրջեցաք ընդ նմա · ահա եկն օրն՝ յորս ցանկամք տեսանել մի յաւուրց քոց, ով որդի Աստուծոյ և մարդոյ, և ոչ տեսանեմք թշուառական աշակերտաքս։ Եւ ապա յիշեալ ոմն զգեղոյն վայելչութիւն, յոգւոց ելանէր · այլ ոմն զբանիցն քաղցրութիւն, և ինքն ընդ անձին իւրում ոգորէր · միւսն զչարչարանսն զոր կրեաց անպարտ, և 'ի յիշատակ նորին հեծեծէր · ոմն ըզչուելն ընդ երկինս աղօտ ակնարկեալ՝ ձեռամբ մատուցեալ ընկերին իւրում ցուցանէր։ Եւ որչափ նա բարձրացեալ 'ի բացեայ 'ի ստորնայնոցս լինէր՝ սոցա յակձիւս եղեալ 'ի նկատելն՝ աղէտ սիրոյն տոչորէր։ Եւ զի ելք փափաքանացն ըստ մարդկային հնարս արտաքս ելանէր, միայն զանթարթափ պշնուլն աչօք իւրաքանչիւր ոք սփոփանս անձին համարէր։ Եթէ միւսն լքանէր 'ի տեսութենէն, յորժամ ընկերն վերստին զնոյն նմա նշանակեալ ցուցանէր, որպէս յանմահութիւն՝ ուրախաթեամբն փոխէր: Թէ այլ ոք ձըկտեալ կորովի բբօք զչուել նորա նշմարէր, ամենեցուն աչք ընդ նորին յուսով ուղերձէր: Քաղցր էր նոցա ակնուլն ընդ երկինս ընդ երկար ժամանակ, թէ ոչ ամպն 'ի սորա մնացեալ զգեր 'ի վերոյ ելեալն ծածկէր:

Այլ զի այս եղև փութապէս, և էր աշխատութիւն նոցա 'ի պըշնուլն ընդ երկինս մեծապէս, եկին հրեշտակքն բարեկամք՝ կրկին երևմամբն յուսով սփոփել զմիտս նոցա. և յաշխատութենէն ընդ երկինս հայելոյն դադարեցուցանել: Արք գալիլեացիք, այժմ զի՞ կայք հայեցեալ ընդ երկինս՝ անջրպետութ̃ ամպոյդ որոշեալք 'ի սիրելւոյն. այս Յիսուս որ վերացաւ 'ի ձէնջ՝ սոյնպէս դարձեալ եկեսցէ: Արդ դարձէք սպասեցէք սորա կրկին գալստեանն, զի հանդերձեալ էք վերստին տեսանել զսա եկեալ փառօք, որպէս և այժմ համբարձեալ: Պատասխանեցին. Եւ զի՞նչ լիցուք աշակերտքս յանկարծ բաժանեալք 'ի վարդապետէն: Եղիսէ՝ զի զգաց կանխաւ զԵղիայի վարդապետին իւր վերանալն, կրկին զհոգին որ 'ի նմա՝ խնդրեալ ընկալաւ: Մեզ զի՞նչ տայք մխիթար, ով զուարթունք, 'ի տրտմութեան և 'ի ցնծութեան միջի վարանեալ աշակերտացս. ցնծութիւն՝ զի տեսաք զնա յայնպիսի փառս ճոխացեալ, և տրտմութիւն՝ զի որբք 'ի նմանէ եղաք սաստ մնացեալ: Սկսան ապա նոքա ափոփել զմիտս նոցա և ասել. Արք գալիլեացիք, մի՛ հիանայք, այլ ցնծացէք, զի գայ համբարձեալս 'ի յերկիր, և պատկէ զամենեսեան զձեզ 'ի նորոգութիւն յարութեանն հրաշապէս: Ոչ է այս սքանչելի, զի տեսէք զայս Յիսուս 'ի յերկինս համբարձեալ, այլ յորժամ տեսանէք զնա յերկնից յերկիր հայրական փառօք սորոջեալ. յորում երկինք գալարին, և երկիր տագնապի, հրեշտակք թափուր թողեալ զերկինս՝ ընդ նմա իջանեն, և դուք 'ի գերեզմանացն թուեցեալ ամպօք ընդ առաջ ընթանայք։ Արք գալիլեացիք, զի՞ կայք հայեցեալ ընդ երկինս․ համբառնալս Յիսուսի զոր տեսանէք՝ ոչ է ըստ աստուածային փառացն, այլ ըստ մարդկային խոնարհութեն։ Քանզի ահա դուք միայն տեսողք ելիցն նորա․ ոչ սպասաւորք յառաջընթացք, ոչ գոչումն փողոյ կարապետ, ոչ կառք քառադէմս, ոչ հրեղէն անիւք պատուանդան․ քանզի ՚ի սեպհական հայրենիսն երթայ։ Այլ երեւումն տեսանելոց էք զնորա սքանչելի, յորժամ գետ հրոյ ելանէ առաջի նորա՝ ընդ իջանելն․ յորժամ պատմեն երկինք զվայելչութիւն նորա, և տեսանեն ամենայն ժողովուրդք զփառս նորա․ յորժամ հազարք հազարաց պաշտեն զնա, և բիւրք բիւրուց կացցեն առաջի նորա․ յորժամ հնչումն զօրաց նորա դղրդէ զերկիր, և ձայն փողոյ աւետեաց նորա զարթուցանէ զմեռեալս․ յորժամ խաչ նախատանաց նորա՝ ճառագայթից արեգական յաղթէ . և վէրք ձեռին նորա զհայեցող թըշնամին սուզէ : Ահա տեսէք թէ որպէս սլացաւ, և զօդս թեթև ընթացիւք իւրովք սքանչելապէս կոխեալ բարձրացաւ . և 'ի մարմնական աչաց ձերոց ստորակայութեամբ անմոյդ ծածկեցաւ : Արդ այժմ բացէք զիմանալի աչս մտաց, և յառեցէք 'ի յերկինս՝ ուսանել խորհուրդս անպատումս : Քանզի ահա իշխանութիւնք հրեշտակաց՝ ցնծութեամբ եկին նմա ընդ առաջ . ոմանք զդրունս աւետարանեն համբառնալ, և ոմանք զթագաւորէն հարցանեն ուսանել : Ներքինքս անուանեն զնա թագաւոր փառաց . և վերինքն տարակուսին, թէ ո՞վ է սա թագաւոր փառաց, որ ընդ երկինս ճանապարհ 'ի յերկրէ առանց օգնականի ինքնիշխանութեամբն հորդեաց : Գաբրիէլեանքն աղաղակէին . Տէր զօրութեամբ իւրով՝ Տէր կարօղ 'ի պատերազմի . և միքայէլեանքն հիանան, և Զիա՞րդ կարմիր ունի հանդերձ զ՚ի գոյն արեան և մարմնոյ :

Այսօր այլայլեցաւ սովորութիւն կարգաց հրեշտակաց․ զի վերինքն ուսանին, և ստորինքս վարդապետեն․ քանզի Աստուած ՚ի ստորնայնոցս ՚ի վեր ելանէ, ձեր փրկութեան աղագաւ խոնարհեալ : Մեծ է առ երկնաւորս այժմ փրկութեան ձեր ուրախութիւն․ զի ահա զխորհուրդն մարդեղութեանն Աստուծոյ, որ ծածկեալն էր յաւիտենից և յազգաց, այժմ յայտնապէս տեսանեն, և շուրջ զնովաւ պարս բոլորեն : Տէր ամենակալ, աղաղակէին, մինչև յե՞րբ ոչ ողորմիս վերինս Երուսաղէմի, և քաղաքացն դրախտին, ուստի արտաքս ձգեցեր գերի զբնակիչն զԱդամ, և անտես արարեր թողեալ ամայի այս եօթնեակ դարուց եօթնից : Եւ լուան այսօր պատասխանի բանս բարեաց և մխիթարութեան, զի ասէ․ Փրրկեաց զնոսա բազուկ իմ, և սրտմտութիւն իմ միայն զդէմ կալաւ :

ցնծան և հրճուին նահապետութիւնք հրեշտակաց՝ յղարկաւորք եղեալք առ 'ի ձէնջ համբարձեալ արքային, և հնչէն առ վեհագոյն իշխանութիւնս և պետութիւնս՝ երագել հորդել նմին ճանապարհ· Համբարձէք զդրունս ձեր 'ի վեր, համբարձէք, ասելով, նահապետութիւնք երկնայնոց, զի մտցէ փառաց Թագաւորս՝ որ արար խաղաղութիւն յերկինս և յերկրի։ Համբարձէք, քրովբէք հրաբերանք, զհրեղէն սրով դրունս առ 'ի ձէնջ պարսպեալս, զի մտցէ Թագաւորս պսակեալ խաչի փայտիւս կենաց։ Համբարձէք, քերովբէք վեցթևեանք, զդրանդիս դըրանց երկնից խորանաց, զի մտցէ նստցի յաթոռն փառաց Որդին ծոցածին սրտի Հօրն սիրած։ Իսկ նոքա հարցանեն· Ո՞վ է սա Թագաւոր փառաւոր դիմեալ յերկրէ, այսինքն յԵդոմայ, շքեղ կարմրազարդ յազգէ բոսորայ· անաղ պատմուճանի մարմնոյն զեղն ցօղանայ, և բուռն զօրութեամբ ընդ երկնիս ընթանայ: Եթէ յօդաւոր բնութն նիւթական, զիա՞րդ միայնակ ընթանայ առաջի ձեր, և ոչ հրեղէն կառօք և հեծելօք օգնեալ: Եւ թէ պարզ բնութիւն անմարմին, կարմրաներկ պատմուճանաւ մարմնոյ որպէս զարդարեալ՝ երբ զփեսայ ընդ առագաստ երկնից սիգալով ընթանայ: Ուսուցէք մեզ, ով վերակացուք մարդկան ազգի՝ դասք հրեշտակաց. ո՞վ է այս Թագաւորս՝ որ ծագեաց իբրև զառաւօտ, գեղեցիկ որպէս զլուսին, ընտիր իբրև զարեգակն, իբրև զհիացումն կարգեալ: Գիտեմք և զայլս 'ի մարմնաւորաց ելեալս 'ի յերկինս, բայց ոչ այսպիսի բուռն զօրութեամբ: Ենովք յորժամ փոխեցաւ առ մեզ՝ դուք եղէք նմա վերբերօղք. Եղիայի 'ի ներքոյ զձեզ տեսաք կառս և երիվարս հրեղէնս լծեալս. վասն զի անկար է մարմնոյ՝ ընդ թեթև շաւիղս անմարմնոցս կոխել: Իսկ այս Թագաւորս ո՞վ է, որ ելանէ յերկրէ զգեցեալ ծիրանիս.

պսակեալ խաչիւ, պաճուճեալ արեամբ, մարմին նիւթական՝ գեղով վայելուչ, բուռն ընթանայ անմարմնոցդ առաջի։ Մարդ է, և առանց օգնականի չուէ. արիւն է զգեցեալ, և զհետս անարեանց համարձակ ընթացիւք կոխէ. յեղոմայ գայ և յերկրէ, և բուռն զօրութեամբ զերկինս դողացուցանէ։ Դրանց ոչ կարօտանայ բանալոյ, զի ահա բանիւ զսոսա տապալէ։ Սակայն թէ ո՞վ է սա՝ ուսուցէք մեզ, ով հրեշտակք, որոց և մեք միշտ զխորհուրդն Աստուծոյ՝ 'ի սորին հեղեալ ցուցանեմք։

Յայնժամ սկսան նոքա զայս ասել. Տէր զօրութեանց և երկնից է սա, թագաւորն՝ որոյ դուք սրովբէքդ աղաղակէիք, Սուրբ սուրբ սուրբ տէր զօրութեանց, լի են երկինք և երկիր փառօք քո։ Տէր փառացն է սա, որում դուք քրովբէքդ երգէիք, Օրհնեալ են փառք Տեառն 'ի տեղւոջէ իւրմէ։ Արքայն է սա յաղթօղ, որում դուք չորեքգլխի աթոռքդ՝ հանգիստ փառացն լինիք։ Սա երեւեցաւ յերկրի մարմնով, և արդարացաւ հոգւով, հաւատարիմ եղև աշխարհի, և դարձեալ գայ յերկինս փառօք. և զի ոչ խոնարհեցաւ յերկիր որպէս զմարդ՝ գոլով մարդ, ոչ կարօտանայ բարձրացուցանողի ընդ երկինս՝ գոլով Ճշմարիտ Աստուած։

Եւ մինչդեռ հրեշտակք և հրեշտակապետք և սերովբէքն և քերովբէք սկսեալ զայսոսիկ խօսէին, ինքն որ առաջի ընթանայր, սկսաւ ընդ առաջ եկեալ վերնոցն դասուց՝ զայս պատասխանել. Ես եմ որ խօսիմ զարդարութիւն, և իրաւունս փրկութեան. ես եմ որ իրաւամբք և արդարութ՟բ յաղթեցի, և կոխան զթշնամին հակառակամարտ արարի. ես եմ որ զգերեալ ազգ մարդկան փրկեցի, և դարձեալ զնոյս նոցին յերկինս ուղղեցի. ես եմ որ զթշնամութիւն՚ի մարմին իմ սպանի, և խաղաղութիւն յերկինս և յերկրի արարի։

Եւ զի կարմիր են, ասեն, պատմուճան քո, և հանդերձ քո իբրև զհնձանահարի լիոյ հնձանի կոխելոյ. այսինքն թէ՝ այդ գործ ոչ էր մարմնաւոր բնութեան կարելի, իսկ աստուածային զօրութեան քոյ ամենայն ինչ հնարաւոր է։ Արդ զի արարեր զայս ամենայն աստուածապէս, հաւատամք. մարմնոյ հանդերձ արիւնոտ ընդէ՞ր ըզգեցեալ ես ՚ի վերայ աստուածութեանդ փառաց, և բոսորատիպ գունովդ զնոյն պաճուճեալ։ Քանզի և մեք բազում պատերազմունս մղեցաք. մինս ՚ի մէնջ հարիւր ութսուն և հինգ հազար անձն յԱսորւոց սատակեաց, և երկուս՝ զՍոդոմայեցւոց քաղաքսն հրդեհեաց. և զի կարելի է՝ սքանչելի գործ յերկրի անմարմնոց զօրութեանց՝ հաւատամք. բայց դու ահա զի տկար պատմուճանաւդ վանեցեր զմեծամեծ մարտս՝ հիանամք, և զյեղանակ բազմապատիկ իմաստից քոց ուսանել ըղձանամք. յայտնեա իշխանութեանց և պետութեանց երկնայնոց զնորոգ արուեստի քոյ իմաստս, Աստուած մեր և տէր։

Ոչ թէ որպէս դուք կարծէք, ասէ, աստուածային զօրութեամբ իմ, ով երկնաւորք, 'ի գլուխ ածեալ զմարդկան փրկութիւն ուղղեցի, և ոչ թէ կառք և երիվարք հրեշտակացդ ինձ 'ի մարտս պաշտպանեցին, և ոչ թէ փրկեալ ինև հեթանոսք 'ի փրկագործութեանն վաստակ օժանդակեցին, այլ փըրկեաց միայն բազուկ իմ, և սըրտմտութիւն արդարութեան մարմնոյս իմոյ միայնակ առանձինն կացեալ ընդդէմ՝ կոխեաց զթշնամին։ Միայն 'ի լեառնն պէսպէս փորձութեանցն յաղթեցի, և զԱդամայ պատրօղն՝ 'ի նոյն հնարս կոխեցի։ Միայն ընդ մաքսաւորսն ճաշակեցի, և 'ի ճանապարհս վաստակեալ քրտնեցի, և 'ի սուգ սիրելեացն լացի, և զմարմինս բնական կրիւքն արդար պահեցի։ Միայն 'ի խաչին չարչարանս գիմեցի, և յերկիւղէ մահուն սարսեցի, և կամաւ զնոյն կրեցի, և զիշխան աշխարհի իրաւամբք դատապարտեալ արտաքս ձգեցի: Միայն 'ի Պիղատոսի յատեանն կացի, և կատականացն արհամարհեալ զամօթ՝ ժուժեցի, և յերկոտասան բիւրուց ձեր՝ զօք ինձ 'ի թիկունս չածի: Միայն 'ի փայտ խաչին հեղուայ, և զգիրս մարգարէիցն լցի, և զպատմուճանս իմ յարիւն իմ թաթաւեցի, և զթշնամին կոխան ոտից իմոց եդի: Զէն ոչ առի 'ի ձեռս զհրեղէն ձեր սուր, այլ ակար մարմին. վահան՝ ոչ զաննիւթ ձեր բնութիւն, այլ արիւն թանձրամած. և այսպէս պատերազմեալ յաղթեցի աշխարհի: Վասն այսորիկ արդարութեամբ իմով և կամաւոր մահուամբ զմեղաց մարդկան զմուրհակն պատառեցի. և այժմ ելանեմ նստել ընդ աջմէ Հօր, բարեխօս և քահանայ հօտին իմոյ, զոր պատուական արեամբ իմով գնեցի:

Զայս լուեալ գունդք հրեշտակացն՝ սքանչանային ընդ անհաս խորհուրդ բազմապատիկ իմաստութեանն Աստուծոյ․ զի մինչև ցայնժամ ոչ տկարութեամբ և խոնարհութ͞բ գիտէին զնա յաղթօղ, այլ կարողութեամբ և փառօք․ իսկ այժմ ուսեալ ոչ միադիմի զիմաստս Աստուծոյ, այլ բազմապատիկ։ Զի ա՛ռ փոխանակ կարողութեանն՝ զտկարութիւն, և փոխանակ զօրութեանն՝ զխոնարհութիւն մարմնոյս, և յաղթեաց սատանայի իրաւամբք և արդարութեամբ։ Սկսան ապա Նոր եղանակաւ զերգս նմին վերերգել, և զմարդիկ 'ի կցորդութիւն օրհներգութեանն իւրեանց ժողովել։ Ծափս հարէք, ասէն, ազգք հեթանոսաց, համաձայն քաղցր երգոցս հրեշտակաց․ և աղաղակեցէք ընդ մեզ փառաց Թագաւորիս 'ի ձայն ցնծութեան գովութիւն օրհնութեան։ Զի Թագաւորեաց 'ի վերայ ամենայն երկրի իրաւամբք և արդարութեամբ, և հնազանդ արար զձեզ ընդ մեզ աւետարանաւն խաղաղութեան․ զի չինեաց յերկինս զհամբառնալ իւր աստուածապէս զօրութբ̃, և հաստատէ յերկիր զաւետիս իւր՝ առհաւատչէիւ մարմնոյն վերացմամբ։ Դարձէք նստարուք յԵրուսաղէմ մեծաւ խնդութեամբ, և սպասեցէք զգենուլ զօրութիւն 'ի գալ Հոգւոյն սրբոյ 'ի բարձանց։ Ահա մտանէ քահանայապետս առ Աստուած պատարագաւն հաշտութեան, և առնէ խաղաղութիւն ընդ ձեզ Հոգւոյն սրբոյ առաքմամբ։ Նստի բարեխօս ընդ աջմէ Հօր հանապազորդ մարդկան քաւութեան, և առնէ խնդրուածս վասն ձեր փրկութեան։ Հայր, կամիմ զի ուր եսն եմ 'ի ծայրագոյն գահոյս վերոյ ամենայն անուան, մտցէ եկեղեցի իմ տեսանել ըզփառս զոր ստացայ՝ ընդ խաչի չափ քեզ հնազանդութեան։ Հայր, կամիմ զի անդամք իմ որ 'ի ստորին վայրս ցնդեալ կան, բարձրացեալ յօդեսցին 'ի հասակ մարմնոյ իմ լրման։ Հայր, զորս ետուր ինձ գինք արեան ժողովուրդ սեփհական, սիրեցի 'ի չափ սիրոյ քոյ ընդ միածնիս հաճութեան, և բարեխօսեմ ածել զնոսա 'ի պատիւ փառացս իմ հաւասարութեան:

Ո՛վ մեծի շնորհիս, ո՛վ անճառ երախտեացս, ո՛վ անկշռելի երախտեացս, որում արժանի գտար, եկեղեցի, 'ի համբառնալս Քրիստոսի. զի Աստուած 'ի մեր կոյս է, և ոչ ոք է մեր հակառակ: Հայր արդարացոյց զքեզ միածնին արեամբ ձրի շնորհօք, և նովաւ հանդերձ այսօր զերկինս ամենայն երկնային փառօքն շնորհեաց քեզ: Ո՞վ դատապարտէ զքեզ, կոյս սուրբ՝ որ խօսեցար հարսն Քրիստոսի և յանդիման կացեր նմին հաւատով, յորժամ Աստուած զքեզ արդարացոյց, և ընդ նմին յարուցեալ յերկինս նստոյց: Յիսուս Քրիստոս մեռաւ վասն սիրոյ քո՝ և յարուցեալ ել այսօր յերկինս, և նստաւ ընդ աջմէ Հօր բարեխօս վասն մեր. զի՞նչ է յերկրային հեշտութեանց՝ որ կարէ մեկնել զմեզ 'ի սիրոյ նորա: Բաց զաչս քո, և տես Թագաւորին քո զփառս. և 'ի նոյն փութացեալ երագես: Արկ 'ի բաց զքօղ տգեղութեան երկրաւոր սահեցման, և մուտ ընդ յոյսն քո 'ի ներքոյ վարագուրին տարածման: Խարիսխ քո յերկինս, դու ընդէ՞ր 'ի ստորինս կորանաս: Թագաւորն քո յաթոռն փառաց և շնորհաց, դու ընդէ՞ր մատչել առաջի նորա հեղգանաս: Կարապետն Յիսուս՝ զերկնից դուռն՝ այսօր մտեալ՝ քեզ եբաց. ժողովուրդ նորա և հօտ, ընդէ՞ր Ճշմարիտ Ճանապարհաւն առ նա հանդչել յուլանաս: Աստի օ՛ն հրաւիրեցար գնալ 'ի յերկրէ յերկինս, յապականութէ յանապականութիւն, 'ի միջոյ կարճաց 'ի հրեշտակաց դասակցութիւն: Դարձիր յունայնութեանց, և կացո զոտս քո յուղիղ պողոտայն. զի գնացեալ ընդ նոյն այժմ հաւատով, արժանի լիցուք յետ ելցն աստի երկնային տանն օթեվանացն՝ հոգւով, և յաւիտենական կենացն 'ի հանդերձեալ գալուստն՝ մարմնով․ շնորհօք և գթութբ̅ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ընդ որում Հօր ամենակալի և կենդանարար սուրբ Հոգւոյն ’ի մի փառս, ’ի բնութիւն և յաստուածութիւն վայելէն պատիւ և իշխանութիւն այժմ և յաւիտեանս յաւիտենից․ Ամէն։

ՆՈՐԻՆ

ԵՐԱՆԵԼՈՅՆ ՆԵՐՍԻՍԻ

ՆԵՐԲՈՂԵԱՆ

Ասացեալ 'ի հրաշափառ գալուստ Հոգւոյն սրբոյ ։

Ստիպիմ 'ի սիրոյ սրտիս բաղձանաց նուիրել զբանս աղքատիմաց մտաց իմոց՝ աւուրս մեծի։ Հանդանակեցէք տկարութեան իմոյ զպարգեւս աղօթից, հանդիսացեալ ժողովուրդք։ Տուք ինձ ընդտուեալն այսօր շնորհս աշխարհի, որպէս զի անվեհեր արկից զանձն իմ 'ի խորս իմաստից գիտութեանն Աստուծոյ, և սեղանաւո, րեցից զանապական կերակուր հոգւոց պարարիչ: Ձեր առատ հեղեալ այսօր յերկրի, մաղթեսցուք նշուլից նորա ճառագայթել 'ի հայեցուածս մտաց մերոց, և առաջնորդել ընդ շաւիղս աստուածայնոց բանից հետևել: Ո՛վ սքանչելեացս. զոր ցանկային ընդ աղօտ ակնարկութեամբ նկատել հրեշտակք, այսօր շնորհօք իջեալ 'ի ստորին գաւառ սփռեցաւ: Եւ ո՞վ ոք ոչ յուսասցի հաւատով 'ի պարգևս նորա վայելել: Հոգին սուրբ, որում բերանաբաց կալով 'ի փափագման դասք սերովբէից և քերովբէից՝ զորքանութիւն նորա ոչ կարացին նկատել, յայսմ աւուր խոկապէս իջեալ յագեցոյց զմարդիկ 'ի գիտութիւն անճառ խորհրդոց իւրոց: Ընդ որս և ես սպասեմ յառատութ՟է նորա կաթիլս իմաստից ընդունել:

Արդարև ձգեաց 'ի փայտն կենաց մարդն զձեռն իւր, որ յառաջն 'ի բաց առաքեցաւ 'ի նմանէ. ա՛ռ եկեր, և զյաւիտենակամն անձին սեպհականեաց զկենդանութիւն : Եւ ո՞ այսր շնորհի միջնորդ և մատակարար· ո՞վ այլ ոք, բայց եթէ Տէր մեր Յիսուս Քրիստոս, կեանքն, լոյսն, ճանապարհն, դուռնն, հովիւն, քահանայապետն, յոյսն, միջնորդն, բարեխօսն և կարապետն : Որ անց ընդ երկինս երկնից ինքնիշխան զօրութբ̃, և եմուտ հրաշափառապէս 'ի ներքին կողմն վարագուրին· և եդ յանդիման Աստուծոյ Հօր զառհաւատչեայն 'ի մարդկանէ բարեխօս վասն մեր· ուստի առեալ փոխարէն զձիր առատ տարածեաց յերկիր : Յորմէ զմայլեալ արբեցաք, և զերկունս տրտմութեան նախամօրն յաւէտ մոռացաք :

Այսօր խաւարաւ պատրանաց աշխարհի ընկլուզեալքս՝ ընկալաք զլոյսն իմանալի, պայծառացուցիչ հոգւոց և առաջնորդ յերկիրն կենդանեաց : Այսօր զզգեստ թախծութեան՝ զոր ընկալաք 'ի հօրէ մերմէ Ադամայ՝ մերկացաք· քանզի նորն Ադամ՝ զարդարեաց զմեզ յոսկեհուռն պաճուճեալ և պսակեալ։ Այսօր հուրն սքանչելի՝ երկնաւոր բոցաճաճանչ նշուլիւք արտափայլեալ 'ի յերկիր՝ այլայլութեամբ արծարծեալ կիզեաց 'ի մարդկանէ զփուշն, և ըզսատակիչ պատիժս պատուհասի մեղացն անիծից։ Այսօր լեզուաց հրեղինաց վիճակի գտեալ արժանի ազգ՝ որ հաւասար էր անասնոց անմտից, դարձեալ ստացաւ վերստին զշնորհն բանի, պատկերակից գտեալ արարչին իւրոյ։ Այսօր հնչիւն սաստիկ հողմոյ և քաղցր ցօղոյ Հոգւոյն որոտաց յերկիր, և զբարբառ անիծիցն որ շարժեցաւ վասն Ադամայ՝ դարձեալ փոխարկեաց յօրհնութիւն։ Այսօր հոտ բուրման անուշահոտ կնդրկի անապականութեան ծաւալեալ՝ զծուխ մահու մառախլապատ թանձրութեան յեղաշրջեալ յանմահութ̅ե հաստատեաց։ Այսօր զգալի պատարագի՝ զոր առաքեաց զգալի աշխարհս 'ի գաւառն իմանալի՝ ընկալաւ առհաւաստչեայ փոխարինի զՀոգին իմանալի, որ նորոգեաց զտաճար սորին զգալի 'ի ձև պատկերի աննիւթն քաղաքի։

Ո՛վ մեծի տուրևառութեանս շահի երկնայնոցն և երկրայնոցս։ Զի սոքա ետուն մարմին, և 'ի նոցանէ առին զՀոգին։ Տուն Ադամայ ընծայեաց զՔրիստոս, և տունն Աստուծոյ հատոյց սմա փոխարէն զմխիթարիչ սուրբ Հոգին։ Մարդիկ ետուն զմարդն Աստուծոյ, և Աստուած ետ զԱստուած մարդկութեանս։ Այս է տուրևառութիւն՝ Աստուծոյ արդարութեանն քարոզ. նախ 'ի մէնջ 'ի ծառայից պատարագ հնազանդութեան, և ապա 'ի Տեառնէն պարգևք խաղաղութեան. նախ 'ի մէնջ խաղաղութիւնն Քրիստոս, որ քակեաց զմիջնորմն ցանկոյն՝ արար զերկոսինն մի, և ապա յԱստուծոյ աւետեաց հնչումն, որ աւետարանեաց խաղաղութիւն հեռաւորաց և մերձաւորաց։ Յառաջագոյն յՈրդւոյ նուաճեալ բնութիւն՝

զկամս Հօրն 'ի քաղցրութիւն դըրդեաց, և ապա Հոգին տկարութեան մերոյ հասեալ 'ի թիկունս՝ առ Հայր բարեխօսեաց: Նախ Քրիստոս մահու խաչի հնազանդեալ՝ զթշնամութիւն յանձն իւր նահանջեաց, և ապա եկեալ Հոգին՝ զերկրաւորքս 'ի հանդէս երկնայնոցն խառնեաց: Խորհուրդ լայն և ընդարձակ. առաւելութիւն գիտութեանն Աստուծոյ տեսանի, եղբարք. զի լերինք են արդարութիւն նորա, և իրաւունքն խորք բազումք, որպէս և վկայեաց մարգարէն: Պաւղոս մաղթէ, զայս իմաստից հոգի՝ աշակերտացն ընդունել, որ հիացուցանէ զքննողս, և յաճախէ զըղձս փափագանաց որ առ Աստուած: Առ ի՞նչ մարմնանալն Որդւոյ, և վասն է՞ր ընդ մարմնանալն ոչ եղև փրկութիւն աշխարհի: Ո՞յր աղագաւ անպարտականին խաչն նախատանաց. և ընդէ՞ր ոչ յետ այնորիկ մարդիկ կատարեալ: Վասն է՞ր ընդ Որդւոյ շրջեալ և բնակեալ աշակերտացն՝ և անիմաստ մնացեալ· և վասն ո՞յր պատճառի միայն ընդ իջանել Հոգւոյն այնքան շնորհիւ զարդարեալ պսակեցան: Առ ի՞նչ Քրիստոսի այնքան մեծամեծ նշանօքն ոչ զոք հաւանեցուցեալ, և Պետրոսի յայսմ աւուր միով բարբառով զթիւ երից հազարացն աշակերտեալ: Զոր քննել արժան է, և զգանձս իմաստութեանն Աստուծոյ յըշտեմարանս սրտից ամփոփել, առ 'ի կարօղ լինել նախ սրտիւ հաւատալ յարդարութի̃, և ապա բերանով խոստովանել 'ի փրկութիւն: Քանզի փրկագործութեանս յեղանակ ոչ է զօրութեամբ, այլ իրաւամբք և արդարութեամբ: Որպէս զի ընդ ամենակարող զօրութեան Աստուծոյ և ամենաբաւական ողորմութիւնն յերկինս և յերկրի հաստատեսցի:

Քանզի այն որ արար զմարդն 'ի պատկեր բարերարութեան իւրոյ բարի, և ետես զնա 'ի նախանձուէ բանսարկուին դաւաճանեալ և մեռեալ, ըստ արդար իրաւանցն ոչ կամեցաւ զպատրանօք ըմբռնեալն թողուլ 'ի ձեռս որսողին։ Ասաց ընդ Բանն համագոյական. Էջ հաղորդեաց ընդ բնութեանն զոր ըստեղծաք 'ի բարի. մի՛ արդեօք բնաւորապէս բղխէ զծուխս չարութեանն՝ որ առաջի իմ բարդի։ Ծանիր, զի թէ ըստ բնական կրիցն տկարանայ առ օրէնս իմ, անմեղադրելի է 'ի պատուհասէն՝ զոր նա սահմանաւն ածէ 'ի վերայ նորին. իսկ եթէ օտար 'ի բնութենէ, և եկամուտ ունի զայն արկածք, զպատրողն յանդիմանեալ դատապարտեա, և զնա ողորմութեամբ և գթութեամբ նորոգեա։

Զայս պատուէր առեալ 'ի Հօրէ Բանն՝ հաղորդեցաւ ընդ մարմինս, և մարմինս խառնեցաւ ընդ Աստուծոյ. խառնումն անճառ, և յատկութիւն էութեանցս անշփոթ, որպէս զի սպառընթաց մարմնոյն՝ անձամբ անձին փորձեալ ծանիցէ։ Եկաց նովաւ զամս երեսուն, և ոչ հաղորդեցաւ օտար 'ի բնութենէն 'ի ներգործութիւն: Եկն 'ի Յորդանան՝ նուիրել զամենակատար մաքրութիւնն Հօր, և դաւանեցաւ 'ի նմանէ հաւասարապատիւ Որդի սիրելի: Վարեցաւ 'ի Հոգւոյն առ բանսարկու թշնամւոյն 'ի մարտն հանդիսի, և ծանեաւ զմեքենայս նետից օձին թունաւորի, որ պատրէր զոսա ըստ բնութեան օրինի 'ի խոտորումն մեղացն վհի: Պահեաց 'ի կերակրոց հաւասար դասուց արդարոցն գնդի. և թոյլ ետ մարմնոյն շարժիլ ըստ հարկաւորն իւր ըղձի: Իսկ թշնամին առընթեր կացեալ սպասէր. և որչափ նա անձնիշխան կամօք 'ի փափաք կերակրոյն ոչ ձգտէր, և ոչ զմեքենայսն ձգել 'ի նպատակն ուժել ժպրհէր: Եւ յորժամ շարժեցաւ, զնետս սրեալս 'ի պատկանդարանէն ձգել 'ի Տէրն յուսացաւ: Հաց, ասէ, արա զքարինդ զօրութեամբ քո, որ զայդչափ ժուժկալութիւն պահոց տոկացեր, և լեր արարիչ հակառակ

Աստուծոյ: Եւ լուեալ, եթէ բանիւ Աստուծոյ կեայ մարդ առաւել քան հացիւ՝ է գրեալ, գրովք զնա հնարէր գողանալ:

Յայնժամ ծանեաւ զհաղբան, խայտառակեաց զմեքենայսն, պատառեաց զպարուրեալ թակարդն՝ որով սովոր էր որսալ զմարդիկ: Մեկնեաց առաջի Հօր իւրոյ և հրեշտակաց. և ինքնիշխանութք 'ի բաց վարեաց զպատրողն, պատրեալ բնութեանս օրինօք: Մանուկն Դանիէլ արդար դատեցաւ դատաստան, յամօթ արար ըղձերսն չար՝ զպատրիչ մարդկութեանս, որք զմեղս իւրեանց սմա համբաւէին: Ա՛յ հնացեալ, ասէ, աւուրբք չարութեան, այժմ եկին հասին մեղք քո՝ զոր գործէիր յառաջագոյն. զի դատէիր դատաստան անիրաւութեան, և զանմեղ բնութիւն մարդկան՝ քեզ կըցորդս դատապարտէիր: Նախանձ քո չար պատրեաց զքեզ. և ախտ մարդատեցութեան շրջեաց զսիրտ քո: Այսպէս խաբէիք զորդիս մարդկան. և նոքա առ երկիւղի հաւաստարէին կամաց ձերոց. բայց ոչ և որդի երկնաւոր Հօրն կալաւ յանձին զանօրէնութիւնս ձեր: Զայս ասելով, և առ ոտն կոխելով զօձն ծերացեալ՝ յոյժ արար զառաջին յաղթութիւնն, և զանմեղութիւն բնութեանս առաջի Հօր իւրոյ և հրեշտակաց: Յայնժամ մատեան հրեշտակքն, և պաշտէին զնա հարկաւորօքն, յորժամ յաղթեաց չարին բնաւորականօքն. և արդարացեալ բնութիւնս՝ տիրեաց 'ի վերայ դիւացն հակառակորդաց՝ զօրաւորն բաղկօք:

Արդ քանզի նա միայն գտաւ անփորձ 'ի չարէն և հաճոյ Աստուծոյ, վասն այսորիկ սկսաւ կոչել զմարդիկ յապաշխարութիւն կենաց՝ արքայութեանն յուսով: Իսկ նոքա խաւարեալք 'ի պատրանացն՝ դժուարէին հետևել կոչողին, և ծանրանայր սահեցելոցն յերկիր՝ նայել ընդ երկինս: Եւ պատրեալքն 'ի ցանկութիւն աշխարհիս՝ ոչ ախորժէին զփառս վերին . և բռնութեամբ ձգել անմարթ էր՝ անձնիշխան զնոսա ըստեղծողին . և նշանօքն և վարդապետութեամբն սակաւք եկին 'ի հաւանութիւն : Ապա զի՞նչ առնէր . ո՛վ սքանչելեացս . քանզի պատժոց պարտական էին մարդիկ , և ապա յարդարութենէն Աստուծոյ ողորմութեան արժանի գտանել, նա՝ որ անպարտականն գտաւ առաջի Հօր իւրոյ և հրեշտակաց, 'ի գործ արկեալ ըզբազմապատիկ իմաստութիւն իւր՝ մեռաւ պարտականացս ամենեցուն փոխանակ . և ջնջեալ պատառեաց զձեռագիր մերոյ յանցանաց : Էջ 'ի դժոխս՝ որում ոչ էր հնար ըմբռնիլ 'ի մահուանէ, և արձակեաց զմեռեալսն : Եկն առ կենդանիս նոյն ինքն՝ և հաստատեաց զնոսա : Եւ զորս յանցանօքն Ադամայ 'ի ներքոյ էին դատապարտութեան մահու, շնորհօք անմեղութեան իւրոյ վերածեաց յարդարութիւն կենաց և յերկիրն պարգևաց : Քանզի այսպէս իմանամք 'ի Պաւղոսէ յայտնեալ զմեծ խորհուրդն աստուածպաշտութեան, որ երևեցաւ մարմնով, արդարացաւ հոգւով, յայտնեցաւ հրեշտակաց, քարոզեցաւ 'ի հեթանոսս, հաւատարիմ եղև յաշխարհի, և համբարձաւ փառօք։ Եւ մտեալ 'ի ներքին կողմն վարագուրին՝ ընծայեաց պատարագ Հօր քահանայն մեծ՝ զպատուական իւր արիւն։ Ծանոյց և զդաւաճանողին զպատրանս, և բարեխօսէր առնել զխաղաղութիւն ընդ մարդկան։ Իսկ Հայրն բարի հաճեալ ընդ գործս սքանչելի՝ Որդւոյն սիրելւոյ, և լուծեալ զկնիք դատապարտութե՟ Ադամայ հօրն նախնոյ, ետ 'ի նա զՀոգին, սփռել 'ի վերայ արեամբ գնեալ իւր հօտին, և լուսաւորել զհայեցուածս մտաց 'ի յոյսն վերին։

Յայնժամ առեալ միածինն զմխիթարիչն՝ ցօղել 'ի Սաղիմ, և ձիւնացոյց 'ի նա զգումարեալ թագաւորսն՝ ըստ նախագուշակ երգողին։ Որ եկն և բնակեցաւ 'ի սիրտս նոցա, և լուսաւոր արար զլայնութիւն և զերկայնութիւն առաւելութեան սիրոյն Քրիստոսի։ Եւ զի շնորհ էր ձրի փոխանակ մահուն Քրիստոսի, յաղագս այնորիկ հաւասարապէս յարժանաւորս և յանարժանս տարածանի։ Ուստի և 'ի միոյ բարբառոյն Պետրոսի անձինք երեք հազարք այսօր աշակերտին։ Ապա յիրաւի վկայեաց բանն՝ սքանչելի գոլ զշընորհ աւուրս մեծի։ Զի որպէս քան զսերմանելն՝ ժողովելն է ախորժելի, նոյնպէս և ամենայն սերմանց Քրիստոսի խորհրդոյն՝ 'ի յայսմ աւուր պտուղն կթի։ Այս է Հոգին սուրբ, որում ինքն վկայեաց՝ ուսուցանել մեզ և յիշեցուցանել զամենայն առ 'ի յինքենէ ասացեալսն։ Այս ցօղ քաղցրութեան զուարթացոյց զբոյս բանիցն Քրիստոսի և օրհնեալ պսակեաց զամս անօրինական իւր գործոցն։ Վասն որոյ աղաղակէ եկեղեցի. Ձմեռն էանց, այգիք մեր ծաղկեցան և ետուն զհոտ անոյշ։ Յայսմ առաւօտու հայեցաւ Հայրն երկնաւոր 'ի յերկիր․ արբոյց զսա յորդառատ գետով սուրբ Հոգւոյն, և փթթեալ ծաղկեցոյց զանազան բոյս առաքինութեան 'ի բազմապատիկ տնկոց արմատոց, որպէս և վկայեաց մարգարէն։ Ահա ձիր՝ որ ոչ չափի․ և պարգև՝ որոյ ոչ կշիռ գործոյ զուգակցի։ Ահա տուր՝ որոյ իսկութիւն բնութեանն ոչ պարփակի, և շնորհ՝ որոյ ոչ զեղումն գերազանց՝ մտաց սահմանի։ Ահա ողորմութիւն առատ՝ որ ամենայն թագաւորութիւն աշխարհիս հաւասարեալ՝ փոքր գտանի․ և մխիթարութիւն՝ որոյ ոչ ուրախութիւն մարմնաւոր լծորդի։ Քանզի ո՞ ոք կարաց ընդ տիրելն աշխարհի՝ և զանապականութի ստանալ․ կամ որո՞ւմ թագաւորի եղև ձեռնարկելի զմահ 'ի կեանս փոխել․ կամ ո՞ր երանութիւն մարմնաւոր՝ կարաց զկեանս յաւիտենականս ընդգրկել։ Իսկ սա յիջանելն այսօր 'ի վերայ դասուց առաքելոցն՝ զօրացոյց ըզբազուկս նոցա, զայսոսիկ հանուրց անեզերացս բաշխել։ Քանզի սովաւ նոցա առլցեալ, ստուերաւ զհիւանդս բժշկեցին, Թաշկինակաւ զցաւս փարատեցին, ձեռօք զմեռեալս յարուցին, զկաղս գնացուցին, զկոյրս լուսաւորեցին, առաւել զհոգւոց աչս քան թէ զմարմնոց յերկինս հրաւիրեցին․ անվախճան փառացն ժառանգորդս զմարդիկ արարին։ Ահա ապա յայտ եղև, եթէ ոչինչ յերկրաւորացս երկնայնոց արեցն գտաւ զուգահաւասար։ Որ ոչ միայն 'ի բանականացս եղև ազգ. սմա ընդունակ, այլ և անշունչ տարերք գեր 'ի վերոյ մարդկան գտան սովաւ զօրացեալք։ Որ և նոյն ինքն յիջանելն՝ նախ զտունն ելից սքանչելապէս, և ապա հանգեաւ 'ի նոսա սիրողապէս։

Քանզի ասէ․ «Եւ 'ի կատարել աւուրցն պենտեկոստէից՝ էին միաբան ամենեքին 'ի միասին․ և եղև յանկարծակի հնչիւն յերկնից եկեալ իբրև սաստիկ հողմոյ, և ելից զամենայն տունն յորում նըստէին։ Եւ երեւեցան նոցա բաժանեալ լեզուք իբրեւ 'ի հրոյ, և նըստաւ իւրաքանչիւր 'ի վերայ նոցա։ Եւ լցան ամենեքեան Հոգւով սըրբով, և սկսան խօսել յայլեւայլ լեզուս, որպէս և Հոգին տայր բարբառել նոցա »։ Միաբան էին ամենեքեան 'ի միասին, ասէ, որպէս զի ցուցցէ՝ եթէ ոչ երկոտասանքն միայն, այլ և Աստուածածին կոյսն ընդ նոսա, հանդերձ կանամբքն որք պաշտէին զՅիսուս 'ի Գալիլեա, և տեսողք եղեն յարութեանն։ Ընդ որս և եօթանասնիցն գունդք հանդերձ ամենայն ծանօթիւք։ Արդ եկն 'ի վերայ նոցա Հոգին սուրբ ըստ նախ խոստմանն Քրիստոսի, որ ասաց· Ահա ես առաքեմ զաւետիս Հօր իմոյ 'ի ձեզ· և դուք նստարուք 'ի քաղաքիդ Երուսաղէմ, մինչեւ զգենուցուք զօրութիւն 'ի բարձանց։ Եւ հնչիւն որոտման հողմոյ եհար, որով ցուցանէր զառաւելութիւն հեղմանն։ Դարձեալ զի և նոյն

Հոգին էր, որ 'ի սկզբան շրջէր 'ի վերայ ջուրցն. ելից զտունն ընդ իմանալի զօրութեանն և զգալի տեսակ հրոյն 'ի սքանչացումն տըղայաբարոյիցն: Եւ ապա բաժանեցաւ 'ի հրոյն յայնմանէ լեզուք, և հանգեաւ 'ի վերայ իւրաքանչիւր ումեք 'ի նոցանէ. որով նշանակէր զպարգևս շնորհի այլատարազ լեզուախօսութեանն: Ուստի և ընդ հանգչելն 'ի վերայ նոցա զգալի մարմնոյն՝ զգայարանացս տեսանելի լեզուքն հրեղէնք, միտք նոցա իմանալի զօրութեամբ իմաստնացեալք՝ սկսան յայլատարազ խօսս զլեզուսն շարժել: Ըստ որում ասէ. Խօսէին յայլ և այլ լեզուս, որպէս և Հոգին տայր նոցա բարբառել: Ոչ եթէ վասն զի լեզուացն շնորհ նախամեծար էր, այլ քանզի առընթեր ոչ գոյր այլ նշանակ՝ զշնորհն որով զօրացանն՝ հրատարակել: Իսկ այլատարազս խօսելով՝ զբովանդակ ամբոխ քաղաքին ած 'ի վերայ նոցա հիացեալ, ըստ որում և ասէ. Եկն միաբան ամենայն բազմութիւնն, և խռնեցաւ. և սքանչանային ամենեքեան զարմացեալք. և այլք վասն սքանչելի այլափոխմանն ասէին, թէ արբեալք իցեն: Արդ վասն ամենեցուն այսպէս գիտելի լինելոյ շնորհիս, ոչ ներգործեաց ՚ի նոսա Հոգին ընդ իջանելն՝ զխոստումն Քրիստոսի, այլ զլեզուսն: Զի նա ոչ ասաց՝ եթէ ՚ի լեզուս խօսիք Հոգւովն, այլ եթէ Ուսուսցէ ձեզ և յիշեցուսցէ ձեզ զամենայն զոր ինչ ասացի ձեզ: Այլ արդ եթէ զայս առեալ էին ՚ի սկզբանն, ոչ այնպէս ամբոխեալ էին և զբազմութիւնն ՚ի նշաւակ տեսութեանն իւրեանց այլատարազ խօսիւքն ձգեալ: Վասն որոյ ամենիմաստն նախ որպէս ըզմանկունս ՚ի խնջոյս խաղուց՝ զարմանալի փոփոխմամբ շփոթեաց զնոսա: Զի որք երէկ և այսօր արք՝ գալիլեացիք գռեհիկք և չինականք՝ ահա ասեն՝ իբրև զիմաստուն Հելլենացիս ճարտարաբանեն. և այլք ՚ի պարթևական տարաշխարհիկ բարբառս նոցա պատասխանեն: Պետրոս որ 'ի Կափառնաում սընեալ, լսեմք՝ զի ընդ հռովմայեցւոց լեզուն խրոխտալով արշաւէ: Եւ Փիլիպպոս որ 'ի Բեթսայիդա գալիլեացւոց՝ արաբացւոց բարբառովն զխօսս իւր յօդէ: Յովհաննէս որ 'ի Նազարէթ սնեալ՝ զհա՞րդ կիլիկեցւոց ձայնիւն զմեզ հարցանէ: Եւ Թովմաս առքալեն, որ յեթովպացւոց լեզուն զբանս մարգարէից յիշեցուցանէ: Թադէոսն այն տխմար՝ տեսէք ո՞րքան վայելուչ մեծաց Հայոց բառիւքն զբանս իւր յօդէ: Եւ Բարթուղիմէոս մանուկ՝ իբր թէ 'ի Մարս ծնեալ՝ զնոյն խօսան հնչեցուցանէ: Ո՛վ սքանչելեացս. 'ի զանազան գաւառս ծնաք, և աշխատութեամբ 'ի բարբառս նոյն վարժեցաք. և ահա սոքին՝ որք ոչ տեսին զայն քաղաքս՝ անաշխատ զնոյն ձայնս հնչեն: Մեծ է, ասեն, արուեստ սքանչելեացս. թէ առ ի՞նչ ունի աւարտել՝ ոչ կարեմք նկատել:

Յայնժամ յարուցեալ Պետրոս հանդերձ մետասանիւքն համբարձ զձայն իւր, և սկսաւ տարակուսանացն լուծումն շնորհել. Արք հրէաստանեայք, և ամենեքին որ բնակեալ էք յԵրուսաղէմ, այս ձեզ յայտնի լիցի, և ունկն դիք բանից իմոց։ Ոչ է արբեցութիւնս այս գինւոյ յերէք ժամու աւուրս, որպէս դուք կարծէք, այլ բաժակ է բերկրութեան, առհաւատչեայ անապականութեան, մարգարէիւք նախագուշակեալ, և յայսմ ապա աւուր խորհուրդն 'ի լրումն աւարտեալ։ Ով օրէնսուսոյցք և մարգարէից աշակերտք, այս այն է 'ի Յովելեայ ասացեալն, զոր միշտ ընթեռնուք՝ կատարեցաւ։ Քանզի ահա յաւուրս յետինս եհեղ Աստուած յոգւոյ իւրմէ 'ի վերայ զանազան հասակաց մարմնաւորացս, և մարգարէանամք։ Այս Յիսուս Նազովրեցի՝ որ երևեցաւ առ ձեզ նշանօք և արուեստիւք, և տարապարտ խաչեցաւ, էլ յերկինս՝ և նստաւ ընդ աջմէ

Աստուծոյ. և զայս պարգևս ընկալեալ Հոգւոյն սրբոյ 'ի Հօրէ, սփռեաց 'ի վերայ մեր: Սա յորժամ համբառնայր յերկինս փառօք՝ մեզ ուխտեաց. և մտեալ յերկինս, Հօր և Հոգւոյն հաւասար նստեալ՝ զայս ասաց. Ես զգործն զոր ինձ հաւատացիք՝ կատարեցի յերկրի. զանուն Հօր իմոյ փառաւորեցի առ մարդիկ. զեղծեալն՝ 'ի մախանաց չարին զպատկերակից մեր՝ ընդ բնութիւն աստուածութեանս մեր խառնեալ՝ սրբեցի սքանչելապէս: Զմահ իմ փոխանակ ողորմելի և տառապեալ ազգի մարդկան տուեալ՝ զերծուցի զնոսա յանիծիցն. և այժմ նովին մարմնով եկեալ՝ առնում զերկրպագութիւն յերկնաւորացս: Այսուհետև քեզ եկեալ եհաս ժամանակ գործոյ, ով փառակից իմ Հոգի. պարտիս և զքոյդ մարդասիրութիւն ցուցանել 'ի յերկրի. այսուհետև քեզ ապաստան առնեմ զանուն աստուածութեանս մեր յարգել առ մարդիկ: Հայր իմ ներեաց և եթող զպարտսն՝ որով դուն խափանեցար 'ի հեղլոյ առ նոսա՝ մարմնոյ իմ պատարագաւն. սա ա՛ռ զիս առհաւատչեայ 'ի նոցանէ, և տայ նոցա զքեզ խաղաղութիւն: Եղ այժմիկ սիրոյ աղբիւր սիրով առ նոսա, և մխիթարեա՛ զորս 'ի պանդխտութեան վայրն՝ նժդեհ և անցաւոր կենօք տառապին: Դարձո զնոսա 'ի նանրութեանցն զոր 'ի զուր խառնեցուցանէ թշնամին, նայել յայս բազմապատիկ օթեվանս՝ զոր պատրաստեցաք նոցա: Բաշխեա նոցա իմաստութիւն առատ, զի մի՛ եղեռնագործն մոլորեցուսցէ զնոսա: Հաղորդեցայ կարեաց նոցա, և ծանեայ փորձիւ, զի տկար և դիւրակործան բնութեան են վիճակեալ. վասն այնորիկ աղաչեմ, անմեկնելի լեր 'ի նոցանէ, և զօրացո զնոսա ընդդէմ ամենայն փորձանաց: Նահանջեա զկամս մարմնոյն, և զօրացո զկամս մտացն: Քեզ տամ զնոսա. քեզ յանձն առնեմ զնոսա. զքեզ խոստացայ նոցա, և այժմ 'ի քեզ ամրափակեմ զնոսա զամենեսեան, որպէս զի մի՛ լիցի 'ի նանիր հեղումն արեան իմոյ՝ որ վասն նոցա: Առատացո 'ի նոսա, ով համագոյակից իմ Հոգի, զշնորհս բժշկութեան, զմարգարէութիւն, զխորհելն զմերինս, զատելն զներքինս: Ես թէպէտ և բազում անգամ խօսէի զճառս արքայութեանն երկնից, ոչ մատուցանէին զունկն սիրով առ 'ի լսել. այլ յորժամ բժշկութիւնս մարմնոյ կատարէի, մեռեալս յարուցանէի, կաղս գնացուցանէի, զկուրաց աչս բանայի, ամենեցուն սէրն առ իս աճեալ առատանայր: Զհաց հոգւոց ըղբանս իմաստութեան տայի, և ոչ ոք զգաստանայր. իսկ յորժամ զհաց մարմնոցն առատապէս ետու 'ի յագումն նոցա, այնչափ յորդորեցան 'ի սէր իմ, մինչև կամէին յափշտակել և թագաւոր զիս կացուցանել: Այս է ճանապարհ մտաց ազգի մարդկան, զոր փորձեցի. անկարացեալ են՝ զայս նոցա խոստացեալ վերին բարեացս խորհել: Ոչ են ծանօթ երկնաւոր փառաւորութեանս, այլ միշտ ընդ երկիր յածին. կարծեօք ունին զայս ճշմարտութիւն, և այն է համարեալ առ նոսա կեանք վայելուչ: Վասն որոյ դու զտղայութիւն մտաց նոցա նախ նշանօք և սքանչելեօք զարմացո, և զկարծիս նոցա 'ի հաւատս հաւանութեան՝ բժշկութեան շնորհիւն ուղղեա: Մի արգելցես զառատութեան քո շնորհս, 'ի փառս և 'ի գովեստ աստուածութեես մեր բաշխել: Մեծ է, զի որպէս երկինս, նոյնպէս և երկիր լցցի փառօք աստուածութեանս մեր. և որպէս զհրեշտակս՝ սոյնպէս զմարդիկ ստասցուք անուանս մեր օրհնաբանիչս: Ոչ է զարմանք եթէ զմեր արարածն մոլորեալ՝ մերով բազմապատիկ զօրութեամբ առ մեզ նուաճեսցուք: Արդ էջ աղաչեմ, էջ, զի պաշարեալ է տարակոյսն զնոսա: Փոքր ինչ 'ի տնօրէնութեան մահուն մեկնեցայ, և երկուք որպէս զծննդականի պաշարեաց զիմ աշակերտս, մինչ երագեալ զյարութիւնն՝ մխիթարեցի զնոսա: Մինն 'ի մետասանիցն ոչ էր անդ, և տասանցն վկայելոյ ոչ հաւատայր վասն յարութեանն. մինչև դարձեալ յայտնեցայ նոցա, և զխոցուած կողիցս՝ հաւատ նմին մրտացն ետու շօշափել: Եւ այժմ իմ ճանապարհ արարեալ ընդ երկինս, մի՛ կարճմտութիւն նոցա գայթակղեսցի 'ի մխիթարութենէ քո յուսոյդ: Վասն որոյ երագեալ մխիթարեա զորդեակսն իմ և զաշակերտսն: Գնա հանգիր 'ի նոսա, որպէս խոստացայ նոցա, և վարդապետեալ յիշեցո նոցա զամենայն առ յինէն ասացեալսն:

Յայնժամ սլացեալ ամենակարն զօրութիւն, փրկականն առատութի, հեղութեան աղբիւրն, մարդասէր շնորհն, բարութեան Հոգին, հեղումն առատութեանն Աստուծոյ, անցանէր ահեղ որոտմամբ ընդ դասակարգութիւնս անմարմնականացն պարուց. և սքանչացեալ պակեան հիացմամբ նահապետութիւնք երկնաւոր զօրացն։ Վասն զի զոր ցանկային ընդաղօտ տեսանել, նայեցան իսկական էութեամբն դիմեալ, 'ի վերայ երկրածին ազգի մարդկան սփռեալ։ Քանզի էջ բոլորովին անձնաւորութիւն Հոգւոյն սրբոյ այսօր 'ի դասս առաքելոցն գնդի, որպէս միածինն 'ի յարգանդ կուսին։ Եւ որ եկն, այլ ոչ մեկնեցաւ․ այլ մնաց յեկեղեցի Քրիստոսի ըստ անսուտ խոստման իւրն փեսայի, որ ասաց․ Ընդ ձեզ բնակեսցէ, և ընդ ձեզ եղիցի յաւիտեան։ Որ և զօրացոյց այսօր զառաքեալսն, և նոցա մատակարարութեամբն՝ զընդհանուր տիեզերս։ Զի և սմա առաւել քաղցրացաւ ճաշակ մարդկան փրկութեան, ընդ որս եկաց և բնակեցաւ։ Ուստի և Պետրոս կրելով յինքեան զՀոգին, զատեն Անանիայի ոչ մարդկան տայր, այլ Աստուծոյ․ Ընդէ՞ր, ասէ, եդիք 'ի մտի ստել Աստուծոյ և փորձել զՀոգին Աստուծոյ, զիս կամելով պատրել. ոչ մարդկան ստեցիք, այլ Աստուծոյ։ Սորա շնորհն՝ 'ի դնելն զձեռս առաքելոցն՝ հանգեաւ 'ի վերայ Ստեփանոսի, որ և անդէն զօրացաւ առնել նշանս և արուեստս մեծամեծս։ Սա որդարև որպէս Թագաւոր եկեղեցւոյ՝ որոշէր զՊաւղոս և զԲառնաբաս 'ի գործ բանին իւրոյ սպասաւորութեանն։ Սա զոմանս ընտրեաց յառաքելութիւն, զոմանս 'ի մարգարէութիւն, զայլս 'ի հովուութիւն և 'ի վարդապետութիւն. որպէս Մատաթեայ զառաքելութիւնն վիճակեաց, և Ագաբեայ և Տիմոթեայ՝ զմարգարէութիւնն, և երիցանցն Եփեսոսի եկեղեցւոյն՝ զհովուութիւն և զվարդապետութիւն. Զգոյշ լերուք, ասէ, հօտին՝ որում եդ զձեզ Հոգին սուրբ տեսուչս և վարդապետս։ Սա արձակեալ համարձակեցոյց զլեզուս նիւթեղէնս կոչել հայր զԱստուած, որ նստի 'ի կառս հրեղէնս, և թևաքողեալ պաշտի 'ի հրեղէն յանմարմնականացն․ Զի առաք զՀոգին որդեգրութեան, որով աղաղակեմք աբբայ հայր․ Նոյն ինքն Հոգին վկայէ հոգւոյս մերոյ եթէ եմք որդիք Աստուծոյ։ Սա ումեմն տայ բան իմաստութեան, այլում բան գիտութեան, միւսումն հաւատք զլերինս փոփոխելոյ, և այլում զօրութիւն սքանչելի գործս կատարելոյ։ Սա օծանէ զմիտս մեր՝ ըստ Յովհաննու, և առնէ քրիստոսընկալս․ և յայսմ օծութենէ զօրանամք գիտել զամենայն։ Սա լուսաւոր առնէ զաչս սրտից մերոց գիտել զյոյս կոչման մերոյ, և զմեծութիւն փառաց ժառանգութեան, և զլայնութիւն և զերկայնութիւն սիրոյն Քրիստոսի։ Վասն որոյ արհամարհեցաք զերևելիս, և փափաքեմք աներևութից։ Եւ Հոգւովս՝ Քրիստոս 'ի մեզ բնակեալ, մեռոյց զզգայարանս մարմնոյ՝ հեշտութեան մեղաց, և կենդանացոյց զբանական հոգիս՝ արդարութեան խորհրդոցն յուսով։ Որով զօրացեալ կոխեցին մարդիկ զնեղութիւն և զանձկութիւն, զհալածանս, զսով և զմերկութիւն, ըզսուր, զոր կանս և զհանդերձեալսն, պայծառացեալ Հոգւոյն 'ի գիտութիւն սիրոյն Քրիստոսի: Սա որ քննէ զխորս Աստուծոյ՝ քննէ և զսիրտս մարդկան. և տեսեալ զտկարութիւն բնութեանս՝ 'ի թիկունս հասանէ տկարութեան մերում, և բարեխօս լինի 'ի հեծութիւնս անմռունչս վասն եկեղեցւոյ առ Աստուած: Եւ ինքն սիրողացն զԱստուած յամենայն գործս բարիս գործակից լինի հանապազ: Ամենեցուն կամի զփրկութիւն, ամենեցուն սպասէ հաւատոց, որպէս զի 'ի նուիրելն՝ զհաւատոյ սերմանեսցէ 'ի նոսա շնորհս և զօրութիւնս հոգևորս:

Կամի՞ս գիտել զչափ սիրոյ սորա առ մարդիկ. յարեաց 'ի կառս ներքինւոյն, որպէս երբեմն Փիլիպպոս. տես թէ ո՛րպէս միով հաւատով հարցմանն տուաւ հոգին փոխանակ. Տէր, ասէ, աղաչեմ զքեզ, վասն ի՞ւր ասէ մարգարէն զայս, թէ վասն այլոյ ուրուք: Դուռն եղև ուղիղ հարցումն մտից Հոգւոյն յանձն ներքինւոյն, և պատրաստեաց տեղի բանիցն Փիլիպպոսի, մինչև եկաց ջրոյն առընթեր. և իջեալ Հոգին ուսուցիչ ներքինւոյն, աւելորդ համարեցաւ այլ աշխատ առնել զՓիլիպպոս: Այս է Հոգւոյն սրբոյ պաշտպանելն աշխարհի. այսքան է նորա մխիթարելն զմարդիկ: Ոչ զեթովպացին խտրէ, ոչ զհեթանոսս անարգէ, ոչ զՀրեայս յարգէ. ամենեցուն զձիրն հաւասար ընձեռէ: Միայն զհաւատս յօժարութեան սրտի՝ նիւթ շնորհին խւրոյ ’ի մէնջ տալ՝ փափագէ. և ’ի նոյն փայլատակեալ ջահս զանազան շնորհի՝ զեկեղեցւոյ մանկունս ճառագայթէ: Եւ գրգեալ զնոսա շնորհօք՝ առ սէր Հօրն ձգէ ’ի հեշտութենէ զբաղմանց աշխարհիս: Զի տղայոց խաղալիկ՝ նշանքն և լեզուախօսութիւնն ’ի Հոգւոյն տուեալ. և կաթն մանկանց՝ շնորհք բժշկուե̃, և յաջողութիւնք զօրութեանց· իսկ կատարելոցն մատակարարէ հաստատուն կերակուր, որ է սէրն Աստուծոյ։ Որպէս աղաղակէ որ ճաշակեացն· Եթէ ունիցիմ մարգարէութի̃, և գիտիցեմ զամենայն գիտութիւն, և հաւատս՝ մինչև զլերինս փոփոխելոյ, և սէր ոչ ունիցիմ, ոչինչ օգտիմ։ Զայն և աշակերտացն ըղձանայ յասելն· Աղօթս առնեմ և ծունր դնեմ, առնուլ ձեզ՝ ոչ հոգի նշանագործութեան, այլ զհոգին իմաստութե̃, որ լուսաւորէ զաչս սրտից 'ի գիտութիւն լայնութեան և երկայնութեան, բարձրութեան և խորութեան սիրոյն Քրիստոսի։ Վասն այսորիկ և նշանաց և լեզուաց ազդումն 'ի Հոգւոյն՝ իբրև զանօգուտս պակասեաց 'ի միջոյ։ Իսկ Հոգին իմաստութեան և հանճարոյ՝ միշտ ներգործէ 'ի մէջ եկեղեցւոյ· և զսէրն Քրիստոսի պայծառացուցանէ յորդւոց սորա հոգիս։ Մի՛ ոք կարծեսցէ Տէր անուանել զՅիսուս, եթէ ոչ 'ի

Նմանէ նախ զազդումն ընկալցի։ Ապա թէ ոք մատչի յառաջ՝ առանց կոչման սորին հրամանի, երբև զկախարդն Սիմոն փորձող սուրբ Հոգւոյն՝ 'ի գաւթէ տաճարիս հերքեսցի։ Կնիք է ամուր 'ի վերայ իւրաքանչիւր անդամոց եկեղեցւոյ սրբոյ Քրիստոսի, որ պարապեալ պահեն սովաւ յիւրաքանչիւր պատիւս շնորհի։ Քանզի որ հաստատեաց զմեզ ձեօք հանդերձ 'ի Քրիստոս՝ Աստուած է, որ ետ զառհաւատչեայ Հոգւոյն 'ի սիրտս մեր և կնքեաց զմեզ։ Վարդապետ է, ուսուցանել և յիշեցուցանել զառ 'ի Քրիստոսէ ասացեալսն ամենայն ճշմարտութեամբ․ որպէս խոստացաւ, թէ Յորժամ եկեսցէ նա Հոգին ճշմարտութեան, առաջնորդեսցէ ձեզ ամենայն ճշմարտութեամբ։ Ճարտարապետ է իմաստուն, որ շինէ զօտարս և զպանդուխտս 'ի վերայ հիման առաքելոց և մարգարէից, առ 'ի լինել զչափ հասակի կատարմանն Քրիստոսի։ Գետ է յորդառատ առոգանօղ մտաց մարդկան, որ արբուցանէ զակօսս իմաստից մերոց, և զուարթացուցանէ ցօղովն իւրով զպանապան բոյս առաքինութեան ծաղկանց, որպէս ասաց Քրիստոս, գետք յորովայնէ հաւատացելոց իւրոց բղխել 'ի Հոգւոյն, ըստ որում նախաճառեաց մարգարէն: Վերակացու է արթուն, հրահանգիչ կարգաց եկեղեցւոյ, և որոշող իւրաքանչիւր աստիճանաց և պատուոյ, որ եդ նախ զառաքեալս, երկրորդ զմարգարէս, երրորդ ըզվարդապետս, ընդ որս զզօրութիւնս և զշնորհս բժշկութեան, ազգս լեզուաց և թարգմանութիւնս լեզուաց:

Հոգիս ներգործութեան՝ յօրինէ զդասակարգութիւն աստիճանաց տաճարին 'ի համանմանութիւն երկնաւորացն պարուց, հոգևոր երգով միշտ Աստուծոյ խոսակցելով ցնծութեամբ: Հոգիս այս ծնանի զմանկունս եկեղեցւոյն Քրիստոսի՝ յորդեգրութիւն Հօրն երկնաւորի՝ յարգանդէ սրբարար աւազանին։ Հոգիս այս սուրբ զօրացուցանէ զձեռս քահանայապետից ’ի շնորհաբաշխութիւն, քահանայից ’ի նուիրագործութիւն, սարկաւագաց ’ի սպասաւորութիւն եկեղեցւոյ սրբոյ։ Սա յարուցանէ ժառանգս աթոռոյ եկեղեցականս պատուոյ· զոմանս կարգէ ’ի պաշտօն բանի, զայլս ’ի հնչումն ձայնից, զկէսս յընթերցումն գրոց։ Ի սմանէ վկայքն զօրացան, նահատակքն զինեցան, կանայքն արիացան, արքն քաջացան։ Սորա զօրութիւնն բղխէ ’ի խաչանիշ փայտից՝ սքանչելեօք, ’ի կառուցեալ յարկաց՝ նշանօք, յոսկերաց սրբոց՝ բժշկութիւն ախտից և ցաւոց շնորհօք։ Լի է ամենայն երկիր ողորմութեամբ սորա, և օդս մաքրեցաւ յիջանել սորա։ Ընդ մեզ է հանապազ, և ամենայն ինչ մեր՝ սորա է շնորհաձիր պարգեւ։ Որոյ առաջի անկեալ ’ի վերայ երեսաց մերոց մաղթեսցուք·

Ո՛վ Աստուած յԱստուծոյ, և

նորոգօղ ամենայնի, սուրբ Հոգի. 'ի քո խնամս պահպանութեան՝ հովիւն քաջ զհօտս իւր արար ապաստան, և սփռեաց զճառագայթ քո յեկեղեցի իւր մինչև յաւիտեան: Ի քէն շարժին լեզուք մեր 'ի պատարագս օրհնութեան, և անձինք մեր կարգեցան 'ի սպաս զանազան շնորհաց քոց պաշտաման: Զքեզ աղաչեմք ամենեքին միաբան, և խօսիմք ընդ քեզ համարձակ՝ որդիք երկանց արգանդի քո ծննդեան: Մի՛ գարշիր 'ի հօտէ քումմէ վասն հոտոյ մեղաց զազրութեան, և մի՛ տրտմիր վասն անպարկեշտ բանի բարբառման. այլ մնա՛ ընդ մեզ հաշտութեամբ մինչև 'ի կէտն աւարտման, և լեր ուղեկից յերկնային քո խորանոդ: Ո՛վ Տէր, և զարտաքսեալքս 'ի վայրս նժդեհութեան՝ պարսպեալ պահեա 'ի թշնամեաց նետից խոցոտման: Չունիմք զօրութ̃ն հանդիմանալ 'ի մարտ ճգնութեան, խնդրեմք հառաչմամբ՝ մի՛ տար զմեզ 'ի փորձանս դարանակալին չարութեան։ Տուր ծարաւեացս զգինի սիրոյ քո արբեցութեան, զմատռուակեալն այսօր ՚ի սուրբ վերնատան։ Զի մխիթարեսցուք ՚ի խշտիս մերոյ տրտմութեան, և ՚ի հանդերձեալ կենացն յոյս կալցուք ապաստան։ Ո՛վ բարերար սուրբ Հոգի, և յոյս նուէրս՝ որ ՚ի քոյոցս քեզ բուրումն օրհնութեան, հոտոտեա՛ քաղցրութեամբ, Աստուած իմ Հոգի հեզութեան։ Եւ քեզ օրհնութիւն ՚ի մէնջ մի բերան, ընդ Հօր և Որդւոյ ՚ի մշտնջենաւոր կեանսդ և անվախճան. Ամէն։

ՑԱՆԿ

Տեառն Գրիգորի կաթողիկոսի Տղայ կոչեցելոյ Պատասխանի թղթոյն վարդապետին Գրիգորի Տուտէորդւոյն՝ 'ի մայրավանն Հաղբատայ 5

Նորին Պատասխանի վարդապետացն Հայոց հիւսիսային կողմանց 53

Տեառն Ներսէսի Լամբրոնացւոյ, Տարսոնի եպիսկոպոսի, Ատենաբանութիւն . . 95

Նորին Թուղթ առ քրիստոսազօր թագաւոր Հայոց Լեւոն. 207

Նորին ասացեալ Բարեբանութիւն ներբողական գովութեամբ 'ի համբարձումն Տեառն Յիսուսի Քրիստոսի յերկինս 249

Նորին Ներբողեան ասացեալ 'ի հրաշափառ գալուստ Հոգւոյն սրբոյ 290

ՑԱՆԿ ԱՆՈՒԱՆՑ

Աբիաթար 85։
Աբրահամ 83։ 235։ 245։
Ագաբոս 317։
Ադամ 35։ 189։ 261։ 277։ 283։ 292-294։ 301։ 302։
Աթանաս 33։ 35։ 42։ 48։ 49։ 60։
Ահարոն 240։
Աղէքսանդր մակեդոնացի 18։
Աղէքսանդրիա 18։
Աղուանք 230։
Ամբակում 79։
Այրարատեան 88։
Անանիա այրն Սափիրայ 316։
Անանիա Շիրակացի 23։ 24։
Անդէաս 97։
Անդրէաս տոմարագէտ 23։
Անեցի․ տես Բարսեղ եպիսկոպոս Անւոյ։
Անեցիք 75։
Անի 59։
Աննա քահանայապետ 21։

Անտիոք 230· 236·
Ասիա 120·
Ասորիք 148· 220· 251· 282·
Արամ 127· 128·
Արիանոսք 39· 40· 62·
Արիոս 41·
Արիստակէս 74·
Արիստոտէլ 28· 29·
Աքայիա 120·
Բաբելացիք 118· 143· 173·
Բաբելոն 99· 116· 119· 125· 131· 137·
Բահաղ 226·
Բառնաբաս 317·
Բասիլիոս· տ· Բարսեղ կեսարացի·
Բարթուղիմէոս 309·
Բարսեղ եպիսկոպոս Անւոյ 75· 223· 232· 241·
Բարսեղ կաթողիկոս Ա 76·
Բարսեղ Կեսարացի 31· 34· 43· 60· 67· 83·
Բեթանիա 270· 271·
Բեթսայիդա 309·
Բեսելիէլ 104·
Բերսաբէ 27·
Բրքիշոյ 193·
Գաբրիէլ 265·

Գալիլեա 268· 306·
Գէորգ Ճգնաւոր 229·
Գրիգոր Աստուածաբան 43· 49· 60· 63· 182·
Գրիգոր եպիսկոպոս Եգիպտոսի 213· 221·
Գրիգոր Լուսաւորիչ 49· 59·73·121·
Գրիգոր կթ· Բ Վկայասէր 76· 213· 221·
Գրիգոր կթ · Գ Պահլաւունի 76· 213·
Գրիգոր կթ · Դ Տղայ 5· 224· 231·
Գրիգոր Նարեկացի 158·
Գրիգոր Նիւսացի 43· 60· 62·
Գրիգոր Սքանչելագործ 49·
Գրիգորի (Սրբոյն-) լեառն 230·
Դանիէլ 79· 299·
Դաւիթ մարգարէ 27· 78· 79· 247· 251· 266· 269·
Դենարքոս 29·
Դէոսկորոս 25· 59· 75·
Դրունեցիք 75·
Դուին 150·
Եգիպտացիք 135· 148· 220·
Եգիպտոս 106· 118· 120· 213· 221·
Եդեմ 252·

Եդոմ 278· 280·
Եզր 100· 142·
Եզր կաթողիկոս 158·
Ելլադա 120·
Եկեղեաց գաւառ 230·
Եղիա 274· 279·
Եղիսէ 274·
Ենովք 279·
Եսայի եպիսկոպոս 229·
Եսայի մարգարէ 78· 175· 177· 179· 269·
Երեմիա մարգարէ 79· 96· 134· 146· 269·
Երինոս 48·
Երուսաղէմ 18· 22· 88· 96· 97· 99· 100· 106· 135· 140· 169· 236· 268· 277· 286· 306· 310·
Եւտիքականք 27·
Եւտիքէս 26· 32· 35· 59· 115· 150·
Եփեսոս 75· 317·
Եփրեմ 49· 182·
Զաքարիա 97· 98· 134·
Զօրաբաբէլ 97· 135· 136·
Ըռինիկուրա 106·
Թաբոր 267·
Թադէոս 309·

Թէոդոս 75·
Թէոդոսեանք 226·
Թէոդորոս վարժապետ 229·
Թովմաս Առաքեալ 24· 267· 309·
Թուրքք 241·
Իսմայելացիք 86·
Իսրայէլ 98· 105· 109· 123· 141· 146·
188· 189· 191· 204· 248·
Լատինացիք 220· 230· 235· 239·
Լեւոն թագաւոր 93· 207·
Լեւոն պապ 22· 23· 50·
Լիբիա 120·
Լիկորգոս 12·
Լիւրիկիա 88· 106·
Խաչէն 230·
Կայէն 124·
Կայիափա 21·
Կարմիր ծով 101·
Կարնեցիք 88·
Կափառնաում 309·
Կեսարիա 74·
Կեսարոս 43·
Կիլիկիա 245·
Կիպրոս 231·
Կիւրեղ աղէքսանդրացի 43· 67· 154·
Կղայ 224·

Կղէոպեանք 268•
Կոստանդիանոս 103• 104• 109• 226• 247•
Կոստանդնուպօլիս 75• 236•
Հաբէլ 108•
Հաղբատ 5• 50• 51• 58• 88• 218•
Հաղբատացիք 223• 227•
Հայաստան 121• 220•
Հայկ 127• 128•
Հայք 5• 25• 53• 57• 68• 74• 87• 127• 148• 153• 170• 171• 196• 197• 200• 213• 220• 233• 235• 236• 238-241• 243• 246• 309•
Հաշիշիք 86•
Հեթում 213•
Հելլենացիք 127• 220• 230• 235• 237• 308•
Հեղի 228•
Հեռի գունդ 231•
Հոռոմք (Հռովմայեցիք) 120• 127•
Հոռոմք (Յոյնք) 57•158•172•196•200•
Հռովմ 23• 74• 230• 231• 235• 236•
Հրեայք 40• 49• 56• 185• 216• 225•256• 320•
Ջորոյգէտ 208• 212• 215• 221• 225• 232• 241• 244• 245•

Ձորոյգետացիք 75·213·235·238-240·
Մակեդոն 75· 115·
Մակեդոնիա 82· 120·
Մաղաքիա 269·
Մանազկերտ 150·
Մատաթիա 317·
Մարիամ Աստուածածին 38· 49· 238· 264· 306·
Մարկիանոս 75·
Մարք 309·
Մովսէս մարգարէ 28· 39· 81· 104· 190· 218· 268· 269·
Յաբեթ 106·
Յակոբ 98·
Յակոբոս Առաքեալ 178· 202·
Յեսու Յովսեդեկեայ 97· 135· 139·
Յեսու Նաւեայ 101·
Յոյնք 68· 86· 89· 148·
Յովէլ 310·
Յովհան Ոսկեբերան 44· 60· 67·
Յովհաննէս Աւետարանիչ 40· 217· 309· 318·
Յովհաննէս Իմաստասէր 30· 76· 158·
Յովհաննէս Մկրտիչ 216·
Յովսեդեկ 97·
Յովսէփ աշակերտ Ն· Լամբրոնացւոյ 230·

Յովսէփ Արեմաթացի 62·
Յովսիա 247·
Յորդանան 298·
Յուդա 99·
Յուլիոս պապ 49·
Յուսիկ 217·
Նաբուգոդոնոսոր 96· 115· 116· 141·
Նաբուզարդան 97·
Նազարէթ 309·
Նեստոր 27· 58· 115· 150· 152· 154·
Նեստորականք 86· Նեստորիանոսք 27· Նեստորիոսք 26·
Ներսէս Լամբրոնացի 95· 207· 290·
Ներսէս Շնորհալի 93· 158· 213·
Ներսէս Պարթև 5· 59· 74· 217·
Նիկիա 68· 74· 103· 104·
Նիկոդիմոս 246·
Նիւսիա 60· 62·
Պաղեստինացիք 231·
Պանդորոս 32· 35· 41·
Պարսք 194· 197· 239· 240·
Պաւղոս 7· 20· 23· 26· 54· 56· 81· 85· 87· 88· 101· 120· 125· 128· 159· 160· 162· 166· 169· 177· 180· 192· 201· 208· 216· 218· 230· 234· 295· 302· 317·

Պետրոս Առաքեալ 20· 23· 25· 82· 88· 107· 134· 140· 207· 266· 267· 296· 303· 309· 310· 316·
Պետրոս գայլ 25· 75·
Պէրփէռլիոս 62·
Պիղատոս 21· 62· 225· 284·
Պրոկլ 49· 183·
Սահակ Պարթև 59· 75·
Սաղաթիէլ 97·
Սաղիմ 108· 302·
Սանահին 58·
Սաւուղ 27·
Սեդեկ 120·
Սեղբեստրոս 74·
Սեմ 106·
Սիմոն կախարդ 322·
Սինաիր 116·
Սիոն 96· 97· 99· 109· 118· 126· 137· 140· 141· 169· 204·
Սիւնեցի (Ստեփանոս) 150·
Սոդոմայեցիք 282·
Սողոմոն 18· 78· 98· 103· 104· 110· 115·
Սողոն 12·
Սուրիացիք 86·
Սպանիա 148·
Ստեփանոս Նախավկայ 43· 183· 317·

Ստեփանոս ուսումնակից՛ Ն· Լամբրոնացւոյ 229·
Ստեփանոս վարդապետ 77·
Ստեփանոս Տիրացու 229·
Վահան հայրապետ 158·
Վաղարշապատեցիք 75·
Վաղենտիանոս 75·
Վասպուրական 229·
Վարագ 229·
Վարդան 57·
Վիրք 148· 195·
Տարօն 229·
Տարօնեցի (Պօղոս) 150·
Տարօնեցիք 88·
Տարսոն 93· 207· 233· 236· 238· 242· 249·
Տիգրան 228·
Տիմոթէոս 82· 169· 317·
Տիմոթէոս կուզ 59· 75·
Տիմոթէոս Ճգնաւոր 229·
Տուտէ 21·
Տուտէորդի 5· 21· 223· 227· 243·
Տրդատ 247·
Րոպխա 120·
Փարաւոն 101·
Փիլիպպոս Առաքեալ 88· 155· 309· 319· 320·

Քաղան 100· 107·
Քաղդէացիք 100· 145·
Քաղկեդոն 50· 57· 62· 75·
Քաղկիդ 28·
Քոբարեցի (Դաւիթ) 225·
Քրիստոսատուր 229·
Ֆռանկք 57· 86· 241·

Qualitätseinband Fr. Löhdorf
Haltbarkeits-
Garantie
Wuppertal-E., Ausblick 93

Ա. ԳՐԻԳՈՐԻՍ ԱՂԹԱՄԱՐՑԻ

Բ. ԳՐԻԳՈՐԻՍ ԱՂԹԱՄԱՐՑՈՒ ՏԱՂԵՐԸ

Գ. ՅԱՒԵԼՈՒԱԾ